



ԱՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԶԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմամշակութային և քարտեզագիտական
ուսումնասիրություն

ՌՈՒԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ

ՌՌԻԲԵՆ ԳԱԼՉՅԱՆ

ԱՌՐԲԵՋԱՆԱԿԱՆ
ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԶԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատմամշակութային և քարտեզագիտական
ուսումնասիրություն



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան 2017

Հրատարակվել է ՀՀ մշակույթի նախարարություն պատվերով

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

Գ 197

Գ 197 Գալչյան Ռուբեն
Ադրբեջանական պատմաաշխարհագրական գեղծարարությունները/
Ռ. Գալչյան. — Եր.: «Զանգակ» հրատ., 2017. — 248 էջ:

«Ադրբեջանական պատմաաշխարհագրական գեղծարարությունները» աշխատությունը հեղինակի «Հորինված պատմություն. Ադրբեջան և Հայաստան. կեղծիքներ և փաստեր» գրքի շարունակությունն է, որը ընթերցողին ծանոթացնում էր Ադրբեջանի վարած կեղծիքի և ստի քարոզչությանը: Սույն հատորը նույն նյութի առավել ամբողջական և գիտական մոտեցումն է, որը տարբեր հավաստի աղբյուրների միջոցով փաստում է ադրբեջանական քարոզչության ամբողջական կեղծ լինելը և այս կեղծիքների դրդապատճառներն ու դրանց համար կիրառված միջոցները:

Աշխատությունը պարունակում է համաաշխարհային կարևորություն ունեցող 47 քարտեզ, որոնց միջոցով փաստվում է, որ նույնիսկ իսլամական տեքստերում և քարտեզներում «Ադրբեջան» անվանումը մինչև 1918 թ. Արաքսից հյուսիս ընկած տարածքում գոյություն չի ունեցել, և որ այն հիմնադրվել և անվանվել է լուկ քաղաքական նպատակներով:

Գրքի անգլերեն տարբերակը հրատարակվել է Լոնդոնում 2012 թ., ուսեբրերնը՝ Մոսկվայում 2013 թ., իսկ պարսկերենը՝ Թեհրանում 2015 թ.: Անգլերեն և պարսկերեն տարբերակները հրատարակվել են «Պատմությունների բախումը Կովկասի հարավում» վերնագրով:

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

ISBN 978–9939–68–594–6

© Ռուբեն Գալչյան, 2017

© «Զանգակ–97» ՍՊԸ, 2017

ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Աշխատանքս պատրաստելիս անգնահատելի օժանդակություն եմ ստացել մի շարք ընկերներից ու մասնագետներից, որոնց ցանկանում եմ հայտնել իմ խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը՝ առանց նրանց անունները մեկ առ մեկ հիշելու:

Գրքիս գիտական խմբագրման և մասնագիտական խորհրդակցությունների համար երախտապարտ եմ հատկապես ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների դոկտոր Հարություն Մարությանին:

Հատորի քարտեզները հիմնականում վերցված են իմ անձնական հավաքածուից և իմ նախկին աշխատություններից:

Գրքիս անգլերեն տարբերակը հրատարակվեց 2012 թ., ռուսերենը՝ 2013 թ., պարսկերեն թարգմանությունը՝ 2015 թ., և այժմ էլ հրատարակվում է հայերեն բնագիրը: Անգլերեն ու պարսկերեն տարբերակները հրատարակվել են «Պատմությունների բախումը Կովկասի հարավում. Հայաստանի, Իրանի և Ադրբեջանի քարտեզների վերագծումը» վերնագրով:

Ռուբեն Գալչյան

Երևան, 2017 թ.

ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Ծնվել է Թավրիզում՝ Մեծ եղեռնին Վանից տարագիր գաղթականների ընտանիքում, որոնք Թավրիզ էին հասել Հայաստանի, Վրաստանի և Ֆրանսիայի ճանապարհով: Թեհրանում միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո կրթաթոշակ է ստացել՝ սովորելու Բրիտանիայի Բիրմինգհամ քաղաքի Աստոն համալսարանում, որտեղ ուսանել է ճարտարագիտություն:

Քարտեզագրական առաջին աշխատանքը եղել է 2004 թ. անգլերենով հրատարակված «Հայաստանի պատմական քարտեզներ» մեծադիր գիրքը: Երկրորդ գիրքը եղել է 2005 թ. երևանում հրատարակված «Հայաստանը համաշխարհային քարտեզագրություն մեջ» աշխատությունը, որը վերոհիշյալ հատորի վերափոխված տարբերակն է հայերեն և ռուսերեն:

Հաջորդ աշխատությունը անգլերեն և հայերեն է և կոչվում է «Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում: Հայաստան, Վրաստան և Ադրբեյջան»:

2009 թվականին հրատարակվել է նրա «Հորինված պատմություն» գիրքն անգլերենով, իսկ 2010–ին՝ նույնի հայերեն և ռուսերեն տարբերակները:

Նրա հաջորդ աշխատությունն է «Ադրբեյջանական պատմաաշխարհագրական գեղծարարությունները»՝ հրատարակված ռուսերեն, որն անգլերեն ու պարսկերեն հրատարակել է «Պատմությունների բախումը հարավային Կովկասում» վերնագրով:

2015–ին լույս տեսավ նրա «Հայացք Հայոց պատմությանը՝ քարտեզագրական փաստաթղթերով» անգլերեն հատորը:

2008 թ. Հայաստանի քարտեզագրությունը նվիրված իր ծառայությունների առթիվ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան նրան շնորհել է պատվո դոկտորի կոչում: Իսկ 2013–ին նա պարգևատրվել է «Մովսես Խորենացի» մեդալով:

Նրա վերջին աշխատությունը՝ «Հայ քարտեզագրության պատմությունը մինչև 1918 թվականը», լույս է տեսել 2017 թ. անգլերեն և հայերեն՝ առանձին հատորներով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն7

Գլուխ առաջին

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ19

1.1. Արաքսից հյուսիս Ադրբեջան երկրի ձևավորման գործընթացը19

1.2. Խորհրդային գաղափարախոսությունը և խեղաթյուրման քաղաքականությունը29

1.3. Պատմության խեղաթյուրումը և ադրբեջանական ինքնության կայացման գործընթացը33

1.4. Պատմության խեղաթյուրման ադրբեջանական մեթոդաբանությունը39

Գլուխ երկրորդ

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ55

2.1. «Ադրբեջանցի» էթնանվան և ադրբեջաներենի ձևավորման գործընթացի արտացոլումը ադրբեջանական պատմագրության մեջ55

2.2. «Արևմտյան», «Հյուսիսային» և «Հարավային» Ադրբեջան հասկացությունները70

Գլուխ երրորդ

ՀԱՅԵՐԻ ԵԿՎՈՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ

ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ77

3.1. Հայերի եկվորություն տեսության հիմնադրույթները78

3.2. Հայերի առկայությունը տարածաշրջանում՝ ըստ հունա-հռոմեական աղբյուրների86

3.3. Հայերի առկայությունը Կովկասում՝ ըստ իսլամական աղբյուրների91

3.4. Հայերի առկայությունը Կովկասում՝ ըստ միջնադարյան քրիստոնյա ճամփորդների և պատմիչների110

Գլուխ չորրորդ

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆ ԳՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՈՒ

ՈՉՆՉԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....127

4.1. Պատմամշակութային կոթողների յուրացումը կամ ոչնչացումը.....128

4.2. Գրավոր մշակույթի և մշակութային գործիչների յուրացումը134

4.3. Ոչնչացման համար կիրառվող ազդեցիկան և պրոյեկտումը136

Գլուխ հինգերորդ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ

ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ139

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ166

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ170

ՀԱՎԵԼՎԱԾ

Քարտեզների ցանկ.....185

Քարտեզներ.....187

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ237

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետագարձ հայացք ձգելով 20-րդ դարի սկզբի քաղաքական անցքերին՝ Կովկասի և Առաջավոր Ասիայի պատմությունն ուսումնասիրություններով զբաղվող մասնագետներն ակամա ստիպված են հաստատել, որ այն օրերից ի վեր, երբ քաղաքական նկատառումներով Արաքսից հյուսիս ընկած տարածաշրջանում հիմնադրվեց «Ադրբեջան» անվանված հանրապետությունը, այդ երկրի իշխանությունները Հայաստանի և հայերի նկատմամբ որդեգրեցին երբեմն քողարկված, հաճախ էլ անթաքույց թշնամական քաղաքականություն: Նման դիրքորոշման ակունքները թերևս հայրենիքի նկատմամբ օսմանյան Թուրքիայի կողմից իրականացվող ազգայնամոլ և ծայրահեղական քաղաքականության մեջ են: Ադրբեջանական նմանատիպ դիրքորոշումն իրեն զգացնել էր տալիս թե՛ 1920-ական թվականներին, թե՛ 20-րդ դարի մյուս տասնամյակներին՝ առանց էական փոփոխությունների շարունակվելով նաև 21-րդ դարի սկզբին: Սկսած 1930-ական թվականներից, բայց 1960-ականներից ի վեր առավել մեծ ծավալներով, նման քաղաքականությունը մուտք գործեց ադրբեջանական ակադեմիական գիտություն, ինչպես նաև պարբերական մամուլի ոլորտ՝ դրսևորվելով տասնյակ ու հարյուրավոր հակահայ ուղղվածություն, պատմություններ խեղաթյուրող հրապարակումներում: Դա էջը խանգարում, սակայն, որ Ադրբեջանական ու Հայկական ԽՍՀ ղեկավարները միմյանց կոչեին «եղբայրական հանրապետություններ»՝ թերևս այդ կերպ չհակասելու համար ԽՍՀՄ և ԽՍԿԿ «պրոլետարական ինտերնացիոնալիզմի» գաղափարախոսությունը:

Հայոց պատմության նկատմամբ ադրբեջանական պատմագրության հերյուրանքներին ու կեղծիքներին ժամանակին անդրադարձել են Հայաստանի պատմաբանները, գրականագետներն ու մտավորականները, սակայն նրանց հոգվածներն ու քննադատական աշխատությունները գերազանցապես ներկայացվել և հրատարակվել են Հայաստանի հայալեզու և ռուսալեզու պարբերականներում, որոնք հասկանալի պատճառներով մատչելի չեն եղել արևմտյան, նաև իսլամական աշխարհի գիտաշխատողների ճնշող մեծամասնությանը:

Անկախությունից հետո և հատկապես 21-րդ դարում օգտվելով նավթային եկամուտների ընձեռած մեծ հնարավորություններից՝ Ադրբեջանի այսօրվա ղեկավարությունը հսկայական տեմպերով խթանում է նույն ծայրահեղական հակահայ տեղեկատվությունն ու գիտական ներկայացվող, սակայն քարոզչական բնույթ ունեցող հրապարակումների քաղաքականությունը: Իրենց քարոզչություններն ավելի արդյունավետ իրականացնելու համար ադրբեջանական իշխանությունները սկսել են հեռարձակել անգամ հայալեզու հաղորդումներ, նաև հիմնել են հատուկ հեռուստաալիք, որի հաղորդումներն ուղղված են Իրանի Ատրպատական նահանգի բնակչությանը՝ նրանց մեջ նույնպես հակահայ և հակաիրանական տրամադրություններ սերմանելու նպատակով:

Վերջին 15 տարիների ընթացքում Ադրբեջանը հակահայ ուղղվածություն անդլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, արաբերեն և այլ լեզուներով մի քանի տասնյակ աշխատություններ է հրատարակել ու տարածել աշխարհով մեկ: Ադրբեջանական իշխանությունները չեն խորշում անգամ օտարերկրյա «օբյեկտիվ» պատմաբաններ վարձելուց՝ նպատակ ունենալով նրանց միջոցով շարադրելու և տարածելու իրենց հակահայ քարոզչությունը: Վերն ասվածի ցայտուն օրինակ է գերմանացի պատմաբան Յոհաննես Ռաուի շարադրած Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ գրքույկը՝ հրատարակված գերմաներեն և ապա անգլերեն ու արաբերեն¹: Ներկայումս «աղբյուրագիտական գրականություն» անվան տակ, սակայն իրականում հայոց պատմության խեղաթյուրումներով լի, հաճախ արտաքուստ գեղեցիկ, գունազեղ ու պատկերազարդ տեսքով քողարկված նման գրքերն ու «գիտական» աշխատությունները մեծ քանակով տեղ են գտնում արևմտյան և իսլամական աշխարհի համալսարանական, ազգային և գիտական գրադարաններում ու գիտահետազոտական կենտրոններում: Արդեն առկա են օրինակներ, երբ նոր սերնդի ամերիկացի, անգլիացի և այլ օտարազգի պատմաբաններ, օգտվելով ադրբեջանական կեղծված աղբյուրներից, անում են մեջբերումներ և հղումներ՝ այդ կերպ անուղղակիորեն հաստատելով ադրբեջանական հորինվածքներն ու կեղծիքները. ի վերջո, արտաքուստ դրանք կարող են թողնել պատմական իրողություններն օբյեկտիվորեն արտացոլող աշխատությունների տպավորություն²:

Նման բնույթի գրականությունը մասնագետների շրջանում կարող է և ոչ մի հետաքրքրություն չառաջացնել, նույնիսկ հակառակը՝ դառնալ քննադատության առարկա, սակայն չպետք է բացառել այն հանգամանքը, որ երիտասարդ ուսանողն ու հետազոտողը, գրադարաններում տեսնելով և կարգալով բազմաթիվ և տվյալ նյութի մասին նույնանման «փաստերով» լի գրականություն, վաղ թե ուշ դրանք կընդունի որպես իրական փաստ և ճշմարտություն, հատկապես եթե բացակա են նույն լեզուներով հրատարակված, բայց հիշված «փաստերին» դեմ և հիմնավորված կերպով հակադրվող, դրանք հերքող լուրջ գիտական աշխատություններ և հոգվածներ:

Սույն աշխատությունն ուղղորդված է հետազոտելու հայոց պատմության նենգափոխման ուղղությամբ ադրբեջանական պատմագրության առաջադրած հիմնախնդիրները, դրանք կիրառելու մեթոդաբանությունը, «գիտական» կարևոր խեղաթյուրումներից մի քանիսը, բացահայտելու կեղծիքները և աշխատանքի սահմանափակ ծավալի սահմաններում ներկայացնելու Հայաս-

¹ Մեր գնահատմամբ՝ նման բնույթագրական օրինակ է գերմանացի պատմաբան Յոհաննես Ռաուի շարադրած՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ գրքույկը՝ հրատարակված գերմաներեն, անգլերեն և արաբերեն: Stü Johannes Rau, *Der Berg-Karabach-Konflikt zwischen Armenien und Aserbaidschan*, Berlin, 2007:

² Stü Audrey Altstadt, *The Azerbaijani Turks. Power and Identity under Russian Rule*, Stanford, 1992:

տան-Ատրպատական-Ադրբեջան տարածաշրջանի պատմական և ազգային իրողությունների գեթ մի մասը: Աշխատանքի հիմնական բովանդակությունը կազմում է խնդրո առարկա տարածաշրջանի հին և միջին դարերի քարտեզագրության վերլուծությունը:

Աշխատության գլխավոր նպատակները և ներկայացնել և վերլուծել ադրբեջանական գիտական և մերձգիտական շրջանակների միջոցով տարածվող և հակահայկական ուղղվածություն ունեցող պատմական, պատմամշակութային և քարտեզագրական քարոզչությունը, որն իրականացվում է պետական իշխանությունների բարձր հովանավորությունը ու քաջալերանքով:

Աշխատանքի երկրորդ նպատակն է բացահայտել վերոնշյալ ծրագրերն իրականացնելու ընթացքում կատարված պատմական ու քարտեզագրական խեղաթյուրումները, որոնք առաջին հերթին ուղղված են Հայաստանի Հանրապետության դեմ, սակայն ելնելով տարածաշրջանի աշխարհագրական առանձնահատկություններից՝ ներառում են նաև Իրանի Ատրպատական նահանգը: Գիտական հենքով մատուցվող ադրբեջանական այս քարոզչությունն ունի մի շարք բաղադրիչներ, այդ թվում՝ հետևյալները.

- Խեղաթյուրել ու կեղծել հարևան երկրների պատմությունն ու մշակութային ժառանգությունը:
- Որպես միասնական ամբողջություն ներկայացնել Ադրբեջանի Հանրապետությունն ու Ատրպատականը, դրա գիտական հիմնավորման նպատակով հորինված «Հյուսիսային և Հարավային Ադրբեջաններ» անվանումները մատուցել որպես պատմականորեն ընդունված եզրույթներ՝ միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության տարածքի մեծագույն մասը վերանվանելով «Արևմտյան Ադրբեջան»:
- Գիտական աշխարհի համար ընդունելի դարձնել «ազվաններ-ադրբեջանցիներ» եզրույթը՝ ադրբեջանցիներին սերված համարելով ազվանական ցեղերից:
- Տարածաշրջան ներմուծված թրքերենը ներկայացնել որպես նախապատմական ժամանակներից Ատրպատականի բնիկների գործածական լեզու:
- Հայերին ներկայացնել որպես տարածաշրջանի նորեկներ, իսկ ադրբեջանցիներին՝ որպես հնագույն բնիկներ:
- Տարածաշրջանում գոյություն ունեցող բոլոր պատմամշակութային հուշարձաններին տալ ազվանա-ադրբեջանական պատկանելություն և անցյալ:

Վերոհիշյալ բոլոր խեղաթյուրումներն ու կեղծիքները ներկայումս իրականացվում են պետական մակարդակով տարածվող հրատարակչական և տեղեկատվական ռազմավարություններով, որը կարելի է կոչել «տեղեկատվական պատերազմ»։ Հրատարակչական ու տեղեկատվական ուղղակիորեն իրականացվող միջոցառումներից գատ ձեռնարկված այլ քայլերից է բացասական ինֆոտեղեկատվությունը, այսինքն՝ հաքերային միջոցներով հայկական տեղեկատվական կայքերն ու աղբյուրները ոչնչացնելու փորձերը։

Աշխատություններից և կարևոր նպատակներից է հունա—հռոմեական, արևմտյան, ինչպես նաև իսլամական աշխարհի պատմիչների, պատմաբանների ու աշխարհագրագետների, նաև «ադրբեջանցի» անվանված պատմաբանների բերած գիտական ու պատմական փաստերով ու փաստաթղթերով հիմնավորել այն, որ․

1. Շուրջ երեք հազարամյակ է, ինչ հայերն Անատոլիայից արևելք տեղակայված տարածքի և Կովկասի հարավային շրջանի բնիկներն են։
2. Այն տարածքում, որտեղ այժմ Ադրբեջանի Հանրապետությունն է, վաղ միջնադարում գոյություն է ունեցել Կովկասյան Ալբանիան (հայերեն՝ Աղվանքը, արաբերեն՝ Առուանը/Առանը), իսկ Բուն Աղվանք երկիրը, բացառություն մի քանի դարերի, տեղակայված էր Կուրից հյուսիս ընկած տարածաշրջանում։
3. Ադրբեջանը, որ հայերը կոչում են նրա հնամենի Ատրպատական անվանումով, հնուց եղել է Արաքսից հարավ տեղակայված Պարսկաստանի հյուսիսարևմտյան նահանգը, հետևաբար Աղվանքն ու Ադրբեջանը միշտ եղել են երկու տարբեր և առանձին երկրներ։ Աղվանքի բնակչությունն իր ծագումնաբանություններով բնավ նույնը չէ, ինչ այսօրվա Ադրբեջանին։
4. «Հյուսիսային և Հարավային Ադրբեջան» անվանումները նորօրյա հորինվածք են և չունեն պատմական որևէ հիմք։

Վերը նշված կետերի փաստարկումը կարող է ի դերևս հանել Ադրբեջանի իշխանությունների կողմից հովանավորվող գիտական աշխատանքների մեջ տեղ գտած պատմական և քարտեզագրական հորինվածքն ու գեղծարարությունները։

Աշխատության վերջնական նպատակն է պարզաբանել և առանձնացնել իրականությունն ու ճշմարտությունը կեղծիքներից ու գեղծարարություններից, որի արդյունքը կլինի բացահայտումն այն իրողություն, թե ինչպես և ինչի վրա են հիմնված ներկա Ադրբեջանի հակահայ քարոզչությունը, հորինված պատմությունը, մշակութային գեղծարարություններն ու նորաստեղծ կեղծ գիտական այլ տեսությունները։

Աղբբեջանական կեղծիքներն ու խեղաթյուրումները բազմաթիվ են և բազմազան, այդ իսկ պատճառով անհնար է դրանց բոլոր դրսևերումներին անդրադառնալ ներկա աշխատության մեջ, հետևաբար քննարկվել են կեղծիքների հիմնական ուղղությունները և դրանց բնութագրական օրինակները:

Աշխատության մաջ մեր ուշադրության կենտրոնում են եղել պատմամշակութային և քարտեզագիտական բնույթի այն աշխատությունները, որոնց հիմամբ հնարավորություն է ստեղծվել բացահայտելու հակահայ ուղղվածություն ունեցող և գիտության անվան ներքո մատուցվող կեղծիքներն ու հորինվածքները:

Քննարկվել են Հայաստանին ու Հայոց պատմությանն առնչվող Հին աշխարհի և միջնադարի քարտեզագրական աշխատանքները, ինչպես նաև հին ու նոր ժամանակների քարտեզներում ներկայացված պատմական տեղեկություններն ու նյութերը, ներկայացվել են դրանց աղբյուրագիտական ճշգրտության ու վավերականության վերաբերյալ փաստարկներ:

Ուսումնասիրվել է այն հայ հեղինակների մասնագիտական աշխատությունների մեծ մասը, որոնք ժամանակին շարագրվել են ի պատասխան աղբբեջանական հետազոտողների «գիտական» ներկայացվող խեղաթյուրումներին:

Կովկասից հարավ «Հայերի եկվորության» աղբբեջանական տեսության կեղծիքը բացահայտելու նպատակով ուսումնասիրվել են հայ, հույն, բյուզանդացի և մահմեդական բազմաթիվ պատմիչների աշխատանքներ, օտար ճամփորդների ուղեգրություններ և հուշագրություններ, այդ թվում՝

1. Անտիկ աշխարհից Հերոդոտոսի, Քսենոփոնի, Ստրաբոնի, Մելայի, Պլինիոսի, Պտղոմեոսի և այլոց պատմական ու աշխարհագրական երկերը,
2. արաբ և պարսիկ պատմիչներից ու աշխարհագրագետներից Բա՛լազորիի, Իբն Խուրդադբեհհի, Բա՛լխիի, ա՛լ-Մա՛սուդիի, ա՛լ-Իսթա՛խրիի, Մոսթոուֆիի, Իբն Հա՛ուբալի, ա՛լ-Մուկա՛դդա՛սիի, Իբն Բա՛թու՛այի աշխատությունները (մասամբ՝ պարսկերենով, մասամբ էլ՝ թարգմանաբար),
3. Հարավարևելյան Կովկասի բնիկ պատմիչներից Բաքիխանովի, Միրզա Ջավանշիր Ղա՛րաբաղիի և Ադիգյոգալ Բեկի աշխատությունները՝ բնագրով և արդի աղբբեջաներեն կամ ռուսերեն թարգմանությամբ,
4. միջնադարի օտարերկրյա պատմիչների ու տարածաշրջանով անցած ճամփորդների և այլ մասնագետների ուղեգրությունները, պատմական աշխատությունները, հուշագրությունները, այդ թվում՝ Տիլբուրցի Ջերվազի և Ռանուլֆ Հիգդենի ժամանակագրությունները, Ռուբրուկի,

Մարկո Պոլոյի, Շիլտբերգերի և Կլավիխոյի ուղեգրությունները, ինչպես նաև Զենկինսոնի, Քարթրայթի, Օլեարիուսի, Շարդանի, Մորիեի, Օուսլիի գեպի Հայաստան կատարած ճամփորդությունների վերաբերյալ շարադրած աշխատությունները:

Տարածաշրջանի էթնիկական և լեզվաբանական խնդիրները քննարկելիս օգտագործվել են արևելագետներ Լը Ստրենջի, Մինորսկու, Բարտոլդի և ուրիշների մասնագիտական աշխատությունները, ինչպես նաև պարսիկ լեզվաբաններ Աբդուլալի Քարանգի, Ահմադ Քասրավի Թաբրիզի և Քավե Բայաթի ու այլոց հետազոտությունները: Հատկապես հիշատակելի են իրանցի պատմաբան և արևելագետ էնայաթոլլահ Ռեզայի՝ Աղվանքին (պարսկերեն՝ Առան կամ Առուան) վերաբերող երկու մանրակրկիտ մենագրությունները, որոնց բուն նյութն է փաստել Աղվանքի և Ադրբեջանի՝ միմյանցից արմատապես տարբեր երկրներ ու ժողովուրդներ լինելու պարագան:

Ադրբեջանական կեղծված պատմական, նաև քարոզչական գրականությունն ուսումնասիրվել է հնարավորության սահմաններում, քանի որ դրանց մի մասն ընդհանրապես հայերի համար հասանելի ու մատչելի չէ ու նույնիսկ վաճառքի էլ չի հանվել, այլ միայն նվիրվել է եվրոպական ու ամերիկյան քաղաքական կազմակերպություններին ու գիտական հաստատություններին: Պետք է, սակայն, նշել, որ ուսումնասիրված ու քննարկված են այս շարքին պատկանող կարևորագույն աշխատությունների մեծամասնությունը:

Ուսումնասիրված գրականության թվում են պարսիկ պատմաբանների և այլ մասնագետների պատրաստած միջնադարյան հեղինակների բնագրերը, որոնք հիմնականում վերաբերում են Ադրբեջանի Հանրապետությանը, Պարսկաստանի Ատրպատական նահանգին և «Հյուսիսային ու Հարավային Ադրբեջաններին» հիմնախնդրին:

Աշխատության աղբյուրագիտական հիմքում մեծ թիվ են կազմում տարածաշրջանին վերաբերող, հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարը պատրաստված հունա-հռոմեական, արևմտաեվրոպական ու իսլամական քարտեզագրական ու քարտեզագիտական նյութերը և փաստաթղթերը: Սրանց մի մասն արդեն իսկ քննարկված է մեր նախորդ աշխատություններում, սակայն ներկա աշխատության պարագայում շեշտը դրվում է քարտեզագրական նյութերի մեջ մեզ հետաքրքրող տարածաշրջանին, այն է՝ Հայաստանին ու Ադրբեջանին վերաբերող տեղեկություններին ու շարադրանքին:

Դեռևս 1930-ական թվականներին եվրոպացի ճամփորդների ուղեգրությունների՝ Հայաստանին ու հայերին վերաբերող մասերը թարգմանվել և հրատարակվել են Հովհաննես Հակոբյանի աշխատասիրությունում, սակայն ինչ-ինչ քաղաքական պատճառներով գործը մնացել է անավարտ: Եվրոպացի և իսլամական աշխարհի պատմիչների և աշխարհագրագետների աշխատությունների

ևս մի ծավալուն խումբ հետազայում թարգմանվել է հայերեն և հրատարակվել «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մինչ այժմ 16 հատորը լույս տեսած մատենաշարով: Աշխատությունը շարագրելիս մենք մեծապես օգտվել ենք նաև այս հրաշալի աղբյուրագիտական ժողովածուից՝ դրանում տեղ գտած տեղեկատվությունը ծառայեցնելով ազդեցիկ և անկասկածաբար պատմագրության խեղաթյուրումների բացահայտմանը, հաճախ դիմելով և օգտագործելով նրանց բնագրերը:

Այստեղ պետք է նշել, որ մեզ հասած դասական հունական պատմագրության մեջ առկա են բազմազան աշխարհագրական ու քարտեզագրական տեղեկություններ, սակայն այս հսկայական ժառանգության մեջ որևէ պատառիկ, որը կարող է քարտեզ համարվել, չի պահպանվել: Ներկա քարտեզագիտական գրականություն մեջ հին հունական աղբյուրներին վերագրված բոլոր քարտեզներն ավելի ուշ ժամանակաշրջանի մասնագետ աշխարհագրագետների և քարտեզագիրների վերականգնումների արդյունք են: Այդ մասնագետները մանրակրկիտ ուսումնասիրել են դասական հեղինակների աշխատությունները և, հիմնվելով դրանցից քաղած տեղեկություններին, վերականգնել են քարտեզները, որոնց նմանները, հավանաբար, ժամանակին պատրաստվել և կցվել են ձեռագիր ուսումնասիրություններին:

Հնագույն քարտեզները մեզ չհասնելու պատճառներից առաջինն ու ամենաբնականն այն է, որ դրանք հավանաբար գծված են եղել մագաղաթի կամ թղթաման մակերեսի վրա, որոնք ժամանակի ընթացքում քայքայվել ու ոչնչացել են: Նույնը կարելի է ասել գրությունների մասին, սակայն գրվածքն ընդօրինակելը դյուրին է եղել, և հայտնի իրողություն է, որ Հնագույն ժամանակներից մեզ հասած գրականության նմուշները մեծ մասամբ բնօրինակների ընդօրինակումներ են և ոչ բնագրերը: Քարտեզների պարագայում, սակայն, խնդիրը տարբեր է: Քարտեզները հավանաբար ժամանակին չեն ընդօրինակվել, քանի որ գրիչների համար նման աշխատանք կատարելը համարյա թե անհնար էր: Գրիչը, ամենայն հավանականությամբ, քարտեզագրության մասին պատկերացում էր կարող ունենալ, և քարտեզների ընդօրինակման համար կարիք կար գտնելու մասնագետ և տեղյակ անհատներ, ինչը, թերևս, դյուրին խնդիր չէր:

Աշխատության համար օտագործվել են միջնադարյան աշխարհագրական ու քարտեզագրական մի շարք աղբյուրներ:

Վերականգնված քարտեզներ

- Հեկատոսի, Հերոդոտոսի, Էրատոսթենեսի, Պերիգետեսի, Ստրաբոնի, Մելալի և Պլինիոսի աշխարհացույց քարտեզները՝ վերականգնված քարտեզագետներ Չարլզ Մյուլլերի և Կոնրադ Միլլերի կողմից:

- Պտղոմեոսի աշխարհացույցը և Միջին Արևելքի շրջանին վերաբերող քարտեզները՝ վերականգնված տարբեր քարտեզագետների ձեռքով:

Հնագույն ու վաղ միջնադարյան քրիստոնեական քարտեզներ/ընդօրինակումներ

- Սբ Հիերոնիմոսի աշխարհացույցը, 4-րդ դար
- Պաուլոս Օրոսիոսի աշխարհացույցը, 5-րդ դար
- Իգիդոր Սելիուսի աշխարհացույցը, 7-րդ դար
- Բեդա Երանելու աշխարհացույցը, 7-րդ դար
- Լիբենացի Բեատուսի աշխարհացույց քարտեզները, 8-րդ դար
- Անգլո-սաքսոնական «Կոտտոնյան» աշխարհացույցը, 1050 թ.
- «Սաուլի» աշխարհացույցը, 1110 թ.
- Ջերվազ Տիլբուրեցու «Էբսթորֆյան» աշխարհացույցը, մոտ 1232 թ.
- Բրիտանական «Սաղմոսային» քարտեզը, մոտ 1265 թ.
- Բարհեբրեոսի աշխարհացույց քարտեզը, 13-րդ դար
- «Հերեֆորդի աշխարհացույցը», մոտ 1290 թ.
- Ռանուլֆ Հիգդենի աշխարհացույց քարտեզները, 1350-ական թթ.

Իսլամական քարտեզներ, 9-15-րդ դդ.

Ուսումնասիրություն մեջ հատուկ ուշադրություն են արժանացել իսլամական աշխարհում պատրաստված քարտեզները և աշխարհագրական ու պատմական գրականությունը, որոնցից ամենավաղ օրինակները, հակառակ Զիյա Բունիաթովի պնդումներին, ոչ թե 6-րդ դարից են, այլ պատկանում են 9-րդ դարի կեսերին: Այդ շրջանից ավելի վաղ ժամանակաշրջանից արաբական և իսլամական աշխարհից որևէ գրական աղբյուր մեզ չի հասել:

Ուսումնասիրություն մեջ քննարկվել են ներքոհիշյալ ցուցակում նշված իսլամական աշխարհագրագետների ու քարտեզագետների աշխատանքները, որոնց միջից ընտրված են ամենակարևոր և հանրահայտ աղբյուրները.

- Իբն Խուրդադեբհ, 9-րդ դար
- Յա'կուբի, 9-րդ դար
- Իսթա'խրի, 10-րդ դար
- Իբն Հա'ուքալ, 10-րդ դար
- Ա'լ-Մուղա'դա'սի, 10-րդ դար
- Ա'լ-Մա'սուդի, 10-րդ դար
- Իդրիսի, 12-րդ դար
- Յադութ Հա'մա'ուլի, 13-րդ դար
- Ղա'զվինի, 13-րդ դար
- Մոսթոուֆի, 14-րդ դար
- Հաֆիզ Ա'բու, 15-րդ դար

15-19-րդ դարերի եվրոպական քարտեզներ

Այս ժամանակաշրջանից ընտրվել են սահմանափակ թվով քարտեզներ, քանի որ այդ դարերում քարտեզագրությունն ապրեց իրական մի վերածնունդ, որի արդյունքն էին հազարավոր տարատեսակ և բազմալեզու քարտեզներն ու ատլասները, հետևաբար սրանց բոլորի ուսումնասիրությունը խիստ որոշակի խնդիրներ հետապնդող սույն աշխատության համար անհնարին է: Սրանցից ընտրվել են հանրահայտ քարտեզագետների աշխատանքներից սահմանափակ, սակայն հույժ կարևոր քարտեզների օրինակներ, որոնցից են.

- Ֆիլիպ դե Լա Ռյու, «Հայաստան», 1653 թ.
- Նիկոլաս Սանսոն, «Մեծ Հայք», 1658 թ.
- Յոհանես Բլաու, «Թուրքական Կայսրություն», 1664-65 թթ.
- Պիեռ Դյու Կալ, «Հայաստան», 1670 թ.
- Յոհան Կոչեր, «Արևելյան աշխարհը մ.թ.ա. 5-րդ դարում», 1718 թ.
- Գիյոմ Դելիլ, «Կասպից ծովի քարտեզը», 1730 թ.
- Յոհան Բատիստ Հոմանն, «Թուրքական կայսրությունը», 1737 թ.
- Ռ. Վոգոնդի, «Հին աշխարհի արևելյան միապետությունները», 1779 թ.
- Սանկտ Պետերբուրգ, «Ասիական Թուրքիայի քարտեզը», 1793 թ.
- Ֆոն Բիբերշտայն, «Թերեք և Կուր գետերի միջև գտնվող երկրները», 1800 թ.
- Ուիլյամ Ֆեյդըն, «Ասիական Թուրքիայի քարտեզը», 1803-1804 թթ.
- Կոնրադ Մալտե-Բրյուն, «Փոքր Ասիան, Հայաստանը, Կովկասը և Սիրիան», 1812 թ.
- Կառլ Ֆոն Սպրունգեր, «Հայաստանը, Միջագետքը, Բաբելոնը և հարակից երկրները», 1855 թ.
- Օսմանյան ռազմական նախարարության հրատարակած «Ռուս-օսմանյան պատերազմի ռազմական քարտեզը», 1877 թ.
- Մի քանի այլ կարևոր քարտեզներ

Աշխատությունը շարադրելիս օգտագործվել են նաև այլ մասնագետների աշխատություններ և տարբեր հավաքների ու համագումարների որոշումներ, դրանցում արված պաշտոնական հայտարարություններ և այլ նյութեր:

Ադրբեջանական իշխանությունների ու հետազոտողների պատմագիտական բնույթի հորինվածքներն ու պատմական դեպքերի խեղաթյուրումները հիմնականում սկիզբ են առել 1960–ական թվականներին: Այդ տարիներից սկսած՝ լույս են տեսել Ա. Ալեքսանդրովի, Ջ. Բուենիաթովի, Ֆ. Մամեդովայի, Ռ. Գեյուշևի և այլոց աշխատությունները, որոնցում առկա են հակահայ ոգով և քարոզչությամբ լի բազմաթիվ պնդումներ, «բացահայտումներ» և հայտարարություններ:

Ինչպես վերը նշվեց, չնայած հայ պատմաբանները, գրականագետներն ու այլ մասնագետներ ադրբեջանական հրապարակումների դեմ գրել են մեծ թվով աշխատանքներ, սակայն դրանք համարյա առանց բացառություն եղել են հայոց և ռուսաց լեզուներով, որոնք հրատարակվել են հայալեզու կամ, լավագույն դեպքում, ռուսալեզու պարբերականներում: Հանուն արդարություն պետք է նկատել, որ այդ ժամանակներում ռուսալեզու հրապարակումները ներկայացվում և ընկալվում էին իբրև միջազգային մակարդակի ապահովում, ինչն իրականում այնքան էլ իրական չէր, առավել ևս այդպես չէ մեր օրերում: Ադրբեջանական պատմագրություն մեջ տեղ գտած կեղծիքներին անդրադարձող և հակառակը փաստող, այսինքն՝ դրանք հերքող հայ հեղինակները՝ արևմտաեվրոպական լեզուներով հրատարակված ծավալուն աշխատություններ հիմնականում չկան, կամ էլ եթե այդպիսիք առկա են, ապա գերազանցապես սահմանափակվում են լոկ մի քանի պատմական, արվեստագիտական, ազգագրական բնույթի խեղաթյուրումներով ու հորինվածքներով: Հիմնականում չկան նաև ադրբեջանական «գիտական» ներկայացվող քարոզչությունը հակադրվող քարտեզագիտական հետազոտություններ, ինչպես նաև քարտեզագրական ու աշխարհագրական բնույթի փաստաթղթերից և հին քարտեզներից ձեռք բերված նյութերի հիման վրա ներկայացված աշխատություններ:

Աշխատության մեջ առաջին անգամ քարտեզագիտական ուսումնասիրությունների հիման վրա բացահայտվում են ադրբեջանական քարտեզագրական և այլ հենքով կատարված տարածքային խեղաթյուրումները:

Աշխատության մեջ ներկայացված իրողությունները գերազանցապես հենվում են Հին աշխարհի և միջնադարյան քարտեզների, նաև հատկապես այն տվյալների վրա, որոնք շարադրված են հին հունական, եվրոպական և իսլամական աղբյուրներում:

Ներկա ուսումնասիրությունների նորույթներից է նաև այն, որ թարգմանությունների շնորհիվ արդեն իսկ առկա աղբյուրներին ավելացվում և գիտական շրջանառության մեջ են դրվում նոր աղբյուրներ, որոնք թարգմանաբար ներկայացվում են առաջին անգամ, կատարվում են դրանց մանրակրկիտ քննարկումները՝ նպատակ ունենալով փաստել հայոց պատմության ադրբեջանական կեղծիքներն ու հորինվածքները:

Աշխատութեան գործնական նշանակութիւնն այն է, որ համակարգված ձևով բացահայտվում են ադրբեջանական պատմագրութեան մեջ տեղ գտած խեղաթյուրումների, կեղծիքների ու հորինվածքների պատճառները, դրանց ձևավորման գործընթացը և թիրախների ընտրութիւնը, քննարկվում են դրանցում օգտագործված տեսական և մեթոդաբանական սկզբունքներն ու կիրառված միջոցները: Հաջորդաբար՝ թյուրքական, պարսկական, արաբական, ինչպես նաև արևմտաեվրոպական և այլ վստահելի աղբյուրներից քաղված նյութերով, որոնք հաճախ ընդունված են նույն ադրբեջանական մասնագետների կողմից, պարզաբանվում են վերոնշյալ խեղաթյուրումները և կեղծիքները:

Աշխատութեան մեջ ներկայացվող մանրամասն տեղեկատվութիւնը կարող է օգտակար լինել համապատասխան գնահատական տալու հայոց պատմութեան խեղաթյուրումներին՝ այդ կերպ ամրագրելով այն իրողութիւնը, որ պատմութեան կեղծարարութիւնն, ի վերջո, վաղ թե ուշ անպայման բացահայտվում է ու ստանում իր արժանի գնահատականը:

ԱՌՐԲԵՋԱՆԻ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1.1. Արաքսից Հյուսիս Ադրբեջան երկրի ձևավորման գործընթացը

Երբ 1918 թվականին Կովկասյան լեռներից հարավ ընկած տարածաշրջանում հիմնադրվեցին երեք պետություններ, դրանցից երկուսի անվանումներն ունեին դարավոր անցյալ, մինչդեռ երրորդի՝ Արաքսից Հյուսիս և Կասպից ծովի արևմտյան ափին տարածվող նորաստեղծ պետության անունն իր երկրի նման նորություն էր: Նորաստեղծ այս պետական կազմավորման անունն իրականում Պարսկաստանի Հյուսիսարևմտյան՝ վաղնջական ժամանակներից օգտագործվող Ատրպատական նահանգի կամ պարսկերենով Ադրբեջան անվան ընդօրինակումն էր:

Լոնդոնի Համալսարանի սոցիոլոգ, նացիոնալիզմի հանրահայտ մասնագետ, պրոֆեսոր Էնթոնի Սմիթն իր «Ազգերի էթնիկ ակունքները» աշխատության մեջ նշում է.

Որոշ ազգեր ունեն լավ պահպանված անցյալ, մինչդեռ ուրիշները դրա փնտրտուքի մեջ են, քանի որ նրանց անցյալը կամ գոյություն չունի, կամ էլ մնում է քողարկված այլ կարևոր իրադարձությունների շղարշի ներքո³:

Վաշինգտոնի Զորջթաուն Համալսարանի պրոֆեսոր, Օքսֆորդի իսլամագիտական հետազոտությունների կենտրոնի անդամ, ԱՊՀ երկրների մասնագետ և բազմաթիվ գրքերի ու հոդվածների հեղինակ, Թավրիզում ծնված քաղաքագետ և պատմաբան Շիրին Հանթերը, իր «Անդրկովկասն անցումային շրջանում. ազգակերտում և կոնֆլիկտ» աշխատության մեջ հարցը դիտարկելով ավելի որոշակի հարթություն մեջ, նկատում է.

Խորհրդային շրջանում Ադրբեջանի ծագման վերաբերյալ սկսեց զարգանալ մի առասպել, որը վերջերս կատարելագործել են ադրբեջանցի ազգայնամոլները: Ադրբեջանի ծագման այս տեսակետը չունի պատմական որևէ հիմք և պարունակում է հակասական դրույթներ⁴:

³ Տնյու Anthony D. Smith, *The Ethnic Origins of Nations*, Oxford, 1987, էջ 178:

⁴ Տնյու Shireen T. Hunter, *The Transcaucasus in Transition. Nation-building and Conflict*, Washington DC, 1994, էջ 59:

Ադրբեջանի պատմութեան վերաբերյալ արդի ադրբեջանական պատմագրութեան ձևավորած առասպելի հիմնական կետերը հետևյալն են.

1. Ադրբեջանի ժողովրդի պետականութիւնն ունի մոտավորապես 5000 տարվա պատմութիւն⁵:
2. Ադրբեջանը որպէս անկախ երկիր, գոյութիւն է ունեցել ավելի քան 2000 տարի⁶:
3. Ադրբեջանի թուրքացումը սկսվել է մեր թվարկութեան առաջին դարերից:
4. Տարբեր կայսրութիւններ, այդ թվում՝ Արաբական խալիֆատը, Իրանը և Ռուսաստանը գաղութացրել են Ադրբեջանը՝ ամլացնելով նրա թրքական մշակութիւնը: Սրանով է պատճառաբանվում այն, որ ադրբեջանական գրականութեան գոհարները շարադրվել են պարսկերէնով:
5. 1813 և 1828 թվականներին ռուսական և պարսկական համատեղ դավադրութիւնը Ադրբեջանը բաժանեց երկու մասի՝ Հյուսիսայինի և հարավայինի:
6. 1918 թվականին հիմնադրված Ադրբեջանի Հանրապետութիւնը պատմական Ադրբեջանի վերածննդի վկայութիւնն էր. այն Արևելքի առաջին ժողովրդավարական պետութիւնն էր:

Հայոց հնագույն անցյալի և հայ ազգի ծագումնաբանութեան և ձևավորման խնդիրների շուրջ Ն. Ադոնցի, Ի. Դյակոնովի, Ստ. Երեմյանի, Ռ. Իշխանյանի և ուրիշների աշխատութիւններին և ոչ մեկում, առկա տարածայնութիւններով հանդերձ, երբևէ չի հերքվում այն, որ հայերն ունեն ավելի քան 3000 տարվա անցյալ և պատմութիւն, մինչդեռ «ադրբեջանական ազգի» և ներկայիս Ադրբեջանի Հանրապետութեան տարածքում եղած քաղաքական կազմավորումների պատմութեան վիճակը հիմնովին տարբեր է, քանի որ այս երկիրը՝ որպէս այդ անունը կրող պատմաաշխարհագրական և քաղաքական միավոր, ստեղծվել և «Ադրբեջան» է անվանվել 1918 թվականին, իսկ ժողովուրդը «ադրբեջանցի» է կոչվել 1936 թվականից հետո քաղաքական որոշման արդյունքում:

Երբ Արաքսից Հյուսիս՝ Արևելյան Անդրկովկասի տարածքում, հիմնադրվեց «Ադրբեջան» կոչվող քաղաքական միավորումը, Ատրպատականի, այսինքն՝ պարսկական Ադրբեջանի մտավորականութիւնն ու քաղաքական դեմքերն այս անվանման դեմ բողոքներ ներկայացրին, սակայն նրանց պահանջները մնա-

⁵ Տնւ Յ. Մախմուտով, *Ազերբայձանցի (վզլյադ նա էտնոպոլիտիչեսկույու ւստորիու)*, Բակու, 2009, էջ 4-10: Ավելի մանրամասն տնւ Սերգեյ Րյւմյանցեւ, *Ունացիոնալիզմ և կոնստրուցիւրուոնա յուր տէրիտորիոն*: Օբուչենիե նացիոնալնույու ւստորիույու վ յուրախոս յուրախոս Կաւկազոյու. *Ab Imperio* (4/2010), էջ 419:

⁶ Տնւ Տալե Հեյտարով և Տալե Բագիյեւ, ed., *Azerbaijan: 100 Questions Answered*, Baku, 2008, էջ 21:

ցին անպատասխան: Երկու տարի անց Անդրկովկասի նոր անկախացած երեք երկրները դարձան «խորհրդային», «սոցիալիստական»՝ կորցնելով փաստացի անկախությունն ու պահպանելով միայն երկու-երեք տարվա կյանք ունեցող քաղաքական կազմավորումներից ժառանգած իրենց անունները: Պահպանվեց նաև նորաստեղծ «Ադրբեջան» անվանումը, որը կոմունիստական ղեկավարությունից համար անհրաժեշտություն դեպքում կարող էր ծառայել իբրև հարմար միջոց ու պատրվակ՝ ընդլայնելու իրենց ազդեցությունն ու իշխանությունը դեպի Իրան՝ պարսկական Ադրբեջանը միացնելով Ադրբեջանական Խորհրդային Հանրապետությանը:

Երկրի նոր անվանումն ամրապնդելու նպատակին էր ծառայում նաև 1930-ական թվականներին տեղացի ժողովրդին «ադրբեջանցի» վերանվանելը, որին հետևեցին նրանց ազգային ինքնությունից հետ կապված մշակույթի և պատմության հորինվածքները, իսկ 1960-ական թվականներից ի վեր՝ Ադրբեջանի իշխանությունների ակտիվ միջամտությամբ սկսված, անթաքույց հակահայկական բնույթ ունեցող, նաև Իրանի Ատրպատական նահանգի պատկանելությունից հարցերը շոշափող «գիտական» աշխատությունների հրատարակումները:

Կովկասյան լեռներից հարավ և Արաքսից հյուսիս տեղակայված՝ ներկա Ադրբեջանի Հանրապետության գրաված տարածքը ներառում է Կուրից հյուսիս՝ Կասպից ծովի և Վիրքի միջև տեղադրված պատմական Կովկասյան Աղվանքը (Ալբանիան) կամ Բուն Աղվանքը, որտեղ բնակվում էին Կովկասի աղվանական ցեղերը: Կովկասյան Աղվանքին/Ալբանիային սահմանակից էին Մեծ Հայքի Արցախ, Ուտիք և Փայտակարան աշխարհները:

Աղվանական ցեղերը 4-րդ դարում ընդունեցին քրիստոնեությունը, իսկ 5-րդ դարում տարածաշրջանն անցավ Մասսանյան Պարսկաստանի գերիշխանությունից ներքո: 7-8-րդ դարերի արաբական արշավանքներից հետո, հակառակ այն պարագային, որ այդ տարածաշրջանում բնակվող հայերը մնացին քրիստոնյա, աղվանական ցեղերի մեծամասնությունն աստիճանաբար կրոնափոխ եղավ և ընդունեց իսլամը: 9-րդ դարից սկսած՝ Կենտրոնական Ասիայի թյուրքական ցեղերը, սելջուկներն ու ապա մոնղոլները, հասնելով Կովկասի հյուսիսային ու հարավային շրջանները, այդտեղ հաստատեցին ցեղական փոքր ու մեծ իշխանություններ ու կիսանկախ խանություններ: Կովկասյան լեռներից հարավ-արևելք գտնվող տարածքների մեծ մասը 15-րդ դարից սկսած հիմնականում անցավ Պարսկաստանի գերիշխանությունից ներքո: Այստեղ հետագայում ստեղծվեցին մուսուլմանական խանություններ, որոնց կարողացան դիմադրել և որոշ չափով անկախ մնալ միայն Արցախի հայ մելիքությունները: 11-12-րդ դարերից սկսած՝ Աղվանքը որպես երկիր, իսկ աղվանները/աղվանական ցեղերը որպես միասնական ժողովուրդ այլևս չեն հիշատակվում ո՛չ եվրոպական, ո՛չ իսլամական պատմական և քարտեզագրական նյութերում⁷: Եթե որոշ դեպքերում

⁷ St' u The Cambridge History of Iran, Vol. 4, Cambridge, 1975:

հայկական աղբյուրներում հիշատակվել է Աղվանք անունը (բացառությամբ «Բուն Աղվանք» ձևակերպումը), ապա դա հաճախ վերագրվել է Արցախին ու Ուտիքին⁸:

1813 թվականի Գյուլիստանի պայմանագրով Շիրվանի, Շաքիի, Դերբենդի, Ղարաբաղի և մի քանի այլ խանություններ, ինչպես նաև Սյունիքի կենտրոնական և հարավային տարածքները (ներկայիս Սյունիքի մարզի Սիսիանի, Գորիսի ու Կապանի շրջանները) անցան Ռուսաստանին, իսկ 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Երևանի ու Նախիջևանի խանությունները նույնպես միացվեցին Ռուսական կայսրությանը:

Երբ Սյունիքի որոշ շրջաններ 1813 թվականին միացվեցին Ռուսաստանին, ռուսական իշխանությունները որոշեցին դրանք ներառել վարչական մի նոր միավորի՝ Ելիզավետպոլի նահանգի մեջ: Հայկական հողերն աղբբեջանական հայտարարելն Աղբբեջանի ներկայիս իշխանություններն այսպես են հիմնավորում. քանի որ 1813 թվականից Սյունիքը և Ղարաբաղը Ռուսաստանի կազմում էին, և 19-րդ դարում նրանք Ելիզավետպոլի նահանգի մաս էին կազմում, ապա խորհրդային շրջանում դրանք պետք է ընդգրկվեին Աղբբեջանական խորհրդային Հանրապետության կազմում, որի իրավահաջորդն իրենք են, հետևաբար Սյունիքը և Ղարաբաղն աղբբեջանական տարածքներ են: Աղբբեջանյան նույն տրամաբանությամբ շարունակելու պարագայում կարելի է պնդել, թե քանի որ Երևանի ու Նախիջևանի շրջանները Ռուսաստանին միացվեցին միայն 1828 թվականին և Ելիզավետպոլի նահանգի մաս չէին կազմում, հետևաբար Նախիջևանը չի կարող 1920 թվականին հիմնադրված Աղբբեջանի Հանրապետության կազմի մեջ լինել նույնիսկ որպես կիսանկախ Հանրապետություն, որը, սակայն, նրանք պնդում են:

1890 թ. հրատարակված ռուսական հանրագիտարանի առաջին հատորում «Աղբբեջան» անվան տակ կարդում ենք.

⁸ Այս նյութին անդրադարձել է Պ. Չոբանյանը իր կազմած Մակար Եպս. Բարխուտարեանցի *Աղուանից երկիր և դրացիք. Արցախ* (Երևան, 1999) աշխատության նախաբանում, էջ 14: Նույն աշխատության մեջ (էջ 280) Բարխուտարեանցը նշում է, որ Գանձասարի ինքնակոչ կաթողիկոս Սիմեոնը 1691 թ. արձանագրության մեջ իրեն կոչում է «կաթողիկոս Աղուանից»: Նշենք նաև, որ Գանձասարի Եսայի Հասան-Ջալալեանց կաթողիկոսն իր պատմական երկր, որտեղ ներկայացվում են նաև Արցախում և Ուտիքում տեղ գտած իրադարձությունները, անվանել է *Պատմություն համառոտ Աղուանից երկրի*: Հարցի շուրջ տես նաև Բ. Ուլուբաբյան, ««Ալբանիա», «Աղվանք» և «Առան» տեղանունները», *Պատմա-քանասիրական հանդես*, Երևան, 1971, համար 3, էջ 115–126:

Ազերբեյջանը կամ Ադրբեյջանը (ազերի — պահլավերեն՝ կրակի երկիր, Ատրոպատկան կամ Հայերեն՝ Ատրպատական) Պարսկաստանի Հյուսիսարևմտյան և արդյունաբերությամբ հարուստ նահանգն է: Ադրբեյջանի սահմաններն են հարավում պարսկական Քյուրդստանը (էրդյալ նահանգը) և Իրաք-Ալժամին (Մարաստանը), արևմուտքում՝ Թյուրքական Քյուրդստանը և Հայաստանը: Հյուսիսում՝ Արաքսի մյուս ափից, նրան սահմանակից են ռուսական Հայաստանը և Հարավային Կովկասը: Կասպից ծովի ափին պարսկական Գիլան նահանգը տեղակայված է նրանից արևելք... Ադրբեյջանի տարածքը 104 840 քառակուսի կիլոմետր է... 17-րդ դարում օսմանյան թուրքերը Ադրբեյջանում, որի Արդաբիլ քաղաքը պարսից արքայազների (ինչպես, օրինակ՝ Աբբաս Միրզայի) բնակավայրն էր և Պարսկաստանի կարևորագույն նահանգներից մեկը, մեծ ավերածություններ գործեցին⁹:

Նույն հանրագիտարանում «Ալբանիա» երկրի վերաբերյալ տրված է հետևյալ բացատրությունը.

Ալբանիա: Հնադարյան սակերն այսպես էին կոչում Կովկասից հարավ տեղակայված տարածքի արևելյան մասերը, որոնք գտնվում էին Սև (Pontus Euxinus) և Կասպից ծովերի միջև՝ Հայաստանից Հյուսիս [որից սահմանազատվում էր Կյուրոս՝ ներկա Կուր գետով]: Ներկա Շիրվանին ու Հարավային Դաղստանին համապատասխանող այս երկրի բնակիչները հնում նկարագրվում են որպես պարզ բարքերի և արդար բնավորության տեր մարդիկ, միաժամանակ որպես արտակարգ նետաձիգներ և հեծյալներ... Պատմական դերակատարում նրանք պատահամբ ունեցել են միայն Հայաստանի դեմ Պոմպեոսի արշավանքի ժամանակ (մ.թ.ա. 65 թ.), երբ իրենց երկիրը, որը 12 ցեղերի միություն էր թագավորի ղեկավարած ժառանգական իշխանների գլխավորությամբ, ստիպված ժամանակավորապես ընդունեց Հռոմի գերագույն իշխանությունը¹⁰:

Հանրաճանաչ «Բրիտանական հանրագիտարանը» (Encyclopaedia Britannica) իր 1911 թ. հրատարակված 29 հատորներում «Ադրբեյջան» անվանման համար տալիս է հետևյալ բացատրությունը.

⁹ Энциклопедический словарь, под ред. И. Е. Андреевского и др., С.-Петербургъ и Лейпцигъ, 1890, һашոր 1, էջ 212-213:

¹⁰ Անդ, էջ 359:

Ազրբայջան կամ Ադրբեջան, միջին դարերի Ազերպատկանը և Հին պատմիչների Ատրպատականը՝ Պարսկաստանի Հյուսիսարևմտյան ամենակարևոր նահանգը: Հյուսիսում բաժանված է ռուսական տերիտորիայից Արաս [Արաքս] գետով՝ իր արևելքում ունենալով Կասպից ծովը, Գիլանը և Խամսեն-Չանջանը, Քյուրդիստանը հարավում և Ասիական Թուրքիան արևմուտքում: Տարածքը մոտ 32 000 քառ. կմ է և ունի 1,5-ից 2 միլիոն բնակչութուն, որոնք բաղկացած են բուն պարսիկներից, թուրքերից, քրդերից, ասորիներից, հայերից և այլն¹¹:

Տարբեր աղբյուրների և մշակույթների պատկանող այս երկու լուրջ և կարևոր աշխատությունները փաստում են՝ հաստատելով այն, որ մինչ այդ Արաքսից Հյուսիս Ադրբեջան անունով որևէ երկրամաս գոյություն չի ունեցել, ինչը նույնպես բազմիցս պնդել և պնդում են պարսիկ մտավորականները: Սակայն Ադրբեջանի արդի պատմաբանները և հատկապես դիվանագետները պնդում են, որ իրենց երկիրը, ներառյալ Արաքսից Հյուսիս ընկած շրջանը, նույն անունն է կրել առնվազն 2000 տարի:

Մեր աշխատությանը կից տրվող հավելվածում վերատպված հնագույն, իսլամական և եվրոպական բոլոր քարտեզներում (քարտ. 8-38) կարելի է տեսնել, թե Հին և միջին դարերում հույն, արաբ, պարսիկ և եվրոպացի մասնագետներն ինչպես էին ներկայացնում Կովկասից հարավ ընկած տարածքները (սրանց մանրամասն բացատրությունների համար տե՛ս Գլուխ հինգերորդ):

Ինչպես վերը նշվեց, աղվանական ցեղերը և Աղվանքը որպես երկիր քարտեզներից վերացան 11-12-րդ դարերի ընթացքում: Աղվանքի վերանալուց մոտ մեկ հազարամյակ հետո՝ 1911 թվականին, Բաքվում հիմնվեց «Մուսավաթ իսլամական դեմոկրատ» կուսակցությունը, որի նպատակներից էր Կովկասի հարավային հատվածում ձևավորել զուտ թյուրքաբնակ գոտի՝ այդ կերպ վերացնելով թյուրքախոս երկրները բաժանող տարածքի քրիստոնյա բնակչությանը: Պանթյուրքական գաղափարախոսության հիմնադիրներից Շամսեդդին Սամին հայտարարում էր.

Թյուրք անունը մի կարևոր անվանում է այն ազգի, որը տարածվում է Ադրիատիկ ծովի ափերից մինչև Չինաստանի մատույցները և ներքին Սիբիր¹²:

¹¹ *Encyclopaedia Britannica*, in 29 volumes, 11th edition, Cambridge, 1911, հատոր 3, էջ 80-81:

¹² Jacob Landau, *Pan-Turkism. From Irredentism to Cooperation*, London, 1995, էջ 31:

Այս գաղափարախոսությունը հետևորդն էր թուրքական «Միասնությունը և առաջադիմությունը կոմիտե» (Իթթիհազ վե թերեկի) կուսակցությունը¹³: 1917 թվականին «Մուսավաթը» միացավ «Թուրքական ֆեդերալիստ» կուսակցությանը և անվանափոխվեց՝ կոչվելով «Թուրքական ֆեդերալիստ Մուսավաթ կուսակցություն», ճանաչված առավելագույնս «Մուսավաթ» անունով, որի ղեկավարն էր պանթյունը չհաստատված նպատակներ հետապնդող Մուհամմադ Ամին Ռասուլզադան¹⁴: Այս անձնավորության և նրա ղեկավարած կուսակցության ջանքերով էր, որ տարածաշրջանում 1918 թվականին հիմնադրված երկիրը կոչվեց «Ադրբեջան»¹⁵: Այս անվանման նպատակն էր ապագայում Ատրպատականը միացնելով նորաստեղծ Ադրբեջանին՝ լրացնել պանթյունը չհաստատված գոտին, որն ամբողջականացնելու միակ խոչընդոտը կամար Հայաստանը՝ իր աշխարհագրական դիրքով ու քրիստոնյա ժողովրդով:

Երբ 1918 թվականին Արաքսից հյուսիս գտնվող այս երկիրն անկախություն ստացավ, որոշված էր այն կոչել «Արևելյան և Հարավային Անդրկովկասյան Հանրապետություն», սակայն Մուսավաթին հաջողվեց այս որոշումը բեկանել և երկրի անվանումը դարձնել «Ադրբեջանի Հանրապետություն»¹⁶: Մուսավաթի այս որոշումով տեղաբնակ ժողովուրդը, որը մինչ այդ կոչվում էր «Թուրք», «թաթար» կամ «մուսուլման» ընդհանուր անուններով, 1918 թվականին հանկարծ պաշտոնապես դարձավ «ադրբեջանցի»¹⁷: Այսպիսով՝ մի անուն, որը դարեր շարունակ պատկանում էր Արաքսի հարավային ափին գտնվող Պարսկաստանի հյուսիսարևմտյան նահանգին՝ Ատրպատականին, դրվեց 1918 թվականին ծնունդ առած մի երկրի վրա, որը նույն գետի հյուսիսային ափերին էր¹⁸:

Իրանի քաղաքական և մտավորական շրջանակներում այս անվանումը զարմանք առաջացրեց, և ազգային ակտիվիստները՝ Շեյխ Մուհամմադ Խիաբանին, Իսմայիլ Ամիրխիզին և Ահմադ Քասրաբադին, ընդգնդեցին դրա դեմ՝ հայտարարելով, որ «Կովկասի այս երկրամասը, որի ժողովուրդը խոսում է թրքերեն, ունի այլ անվանում և երբևէ Ադրբեջան չի կոչվել»¹⁹: Ստամբուլի պարսկական դեսպանությունն այս անվանման դեմ բողոքի նամակ ուղարկեց Բաքու, սա-

¹³ Անդ, էջ 37:

¹⁴ Անդ, էջ 55:

¹⁵ Firuz Kazemzadeh, *The Struggle for Transcaucasia (1917–1921)*, New York, 1951, էջ 20–22: Տե՛ս նաև Ահմադ Մոհամադ, *Որտեղ է իրական Ադրբեջանը*, Բոնն, 2008, էջ 37–43, պարսկերեն:

¹⁶ В. В. Бартольд, *Работы по истории Кавказа и Восточной Европы*, Москва, 1963, հատոր 2, էջ 703: Տե՛ս նաև Richard G. Hovannisian, *Armenia on the Road to Independence, 1918*, Los Angeles, 1967, էջ 189:

¹⁷ А. К. Алекперов, *Исследования по археологии и этнографии Азербайджана*, Баку, 1960, էջ 71;

¹⁸ Քավե Բայթաթ: *Փոթորիկը Կովկասում, 1917–1921*, Թեհրան, Ա, 2002, էջ 45–47, պարսկերեն:

¹⁹ Touraj, Atabaki, *Azerbaijan. Ethnicity and the Struggle for Power in Iran*, London and New York, 2000, էջ 2 և 25: Տե՛ս նաև Մոհամադ, նշվ. աշխ. էջ 38, պարսկերեն:

կայն դրանից ավելին քայլեր չձեռնարկվեցին²⁰: Հանրահայտ քաղաքական գործիչ Շեյխ Խիաբանին այս կեղծ անվանումից այնքան էր մտահոգված, որ նույնիսկ առաջարկեց պարսկական Ադրբեջանի անունը փոխել Ազադիստանի (Ազատ երկիր), որպեսզի անունների մեջ շփոթ չառաջանա, և ապագայում խնդիրներ չհարուցվեն²¹: Այս միտումնավոր և սխալ անվանակոչումը կարելի է նմանեցնել նախկին Հարավսլավիայի Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության փլուզումից հետո ստեղծված անկախ երկրներից մեկի՝ Մակեդոնիայի պարագային: Վերջինս նույնպես անկախութան հռչակումից հետո իրեն անվանեց Մակեդոնիա՝ առանց հաշվի առնելու, որ դա իր հարևան երկրի՝ Հունաստանի սահմանամերձ նահանգներից մեկի անվանումն է: Այս առթիվ Հունաստանի բողոքների ու պահանջների արդյունքն այն եղավ, որ նորաստեղծ երկրի անունը պաշտոնապես դարձավ «Նախկին Հարավսլավական Մակեդոնիայի Հանրապետություն»: Իհարկե, այս երկար անվանումն այսօր քչերն են օգտագործում, և, այնուամենայնիվ, այս երկիրն աշխարհին առավելապես հայտնի է իբրև «Մակեդոնիա»:

Այսպիսով՝ Կովկասյան լեռներից հարավ ընկած տարածաշրջանում՝ Արաքսի հյուսիսային ափին, հայտնվեց մի նոր երկիր, որի անունը Արաքսի հարավային ափին գտնվող Իրանի հյուսիսարևմտյան նահանգի անվան ընդօրինակումն էր: Մի երևույթ, որը, ինչպես Բարտոլդը գուշակել էր, արդեն Իրանի և Ադրբեջանի իշխանությունների միջև լուրջ հակասությունների պատճառ է դարձել²²:

Վաղ միջնադարում Հարավային Կովկասում գոյություն ունեցող ազնական ցեղերի բնակեցման մոտավոր տարածքում 1918 թվականին հիմնված նոր երկիրն իրեն աշխատում էր ներկայացնել նաև որպես «Պատմական Ադրբեջան»²³, իսկ մոտ երկու տարի անց Ադրբեջանի Հանրապետությունը, ընկնելով կոմունիստների ձեռքը, ի վերջո դարձավ «Ադրբեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն», որի պատմագրությունը տասնամյակներ շարունակ է՛լ ավելի «հիմնավորեց» տարածքի «Ադրբեջան» կոչվելու «իրավունքները»: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո պարսիկ պատմաբաններն ու քաղաքագետները հույս ունեին, որ վերստին անկախություն ձեռք բերած երկիրը կհրաժարվի «Ադրբեջան» անունից և իրեն կանվանի այլ կերպ, սակայն քանի որ այս անվանումը երկրի համար կարող էր լինել շահավետ քաղաքական խաղաքարտ, այն նույնությունը պահպանվեց²⁴:

²⁰ Քավե Բայթաթ, նշվ. աշխ., էջ 66–67:

²¹ Touraj Atabaki, նշվ. աշխ. էջ 50: Տե՛ս նաև Ահմադ Քալաբադի, *Ադրբեջանի 18-ամյա պատմությունը*, Թեհրան, 1978, հատոր 2, էջ 872, պարսկերեն: Նաև Ալի Ազադի: *Շեյխ Մոհամմադ ղ Սիաբանիի պատմությունը*, Թեհրան, 1970, էջ 299, պարսկերեն:

²² Бартольд, նշվ. աշխ., հատոր 2, էջ 703:

²³ Քավե Բայթաթ, *Ադրբեջանը պատմության ելևջներում*, Թեհրան, 2000, էջ 6–11:

²⁴ Ս. Աղաջանյան, Իրականություններ Ադրբեջանի և Հայաստանի պատմության մասին, *Քեյհան* օրաթերթ, հատուկ համար 447, Լոնդոն, 1993, էջ 28–30:

Բարտողլի այն կանխատեսումը, որ 1918-ին Արաքսի հյուսիսային ափի տարածքին Ադրբեջան անվանում տալու նպատակը Պարսկաստանի Ադրբեջանն իրենց կցելն էր, բացահայտվեց, երբ 1941 թ. խորհրդային օկուպացման ընթացքում Ստալինն Ադրբեջանի կոմկուսի առաջին քարտուղար Միր Զաֆար Բադիրովի ձեռքով Իրանի Ադրբեջան նահանգում ստեղծեց «Դեմոկրատ» կուսակցությունը, որին ապա միացավ կոմունիստական գաղափարներով առաջնորդվող Իրանի «Թուրե» կուսակցության Ադրբեջանի մասնաճյուղը²⁵: Այս կուսակցությունը կազմակերպեց հանրաքվե, որի նպատակն էր Իրանի պատմական Ադրբեջան (Ատրպատական) նահանգը անկախ հռչակել և ապա կցել խորհրդային Ադրբեջանին²⁶:

Վերոնշյալ նյութին վերաբերող փաստաթղթերը երևան եկան, երբ խորհրդային Միություն և Ադրբեջանի 1939-1947 թթ. վերաբերող արխիվները հասանելի դարձան հետազոտողներին: Ադրբեջանցի պատմաբան Զա'միլ Հա'սա'նլին, հիմնվելով գերազանցապես Ադրբեջանական ԽՍՀ պետական արխիվների նյութերի վրա, պատրաստել է երկու աշխատություն²⁷, որոնցից երկրորդը նաև հրատարակվել է ռուսերեն²⁸: Այս երկու գրքերում բացահայտված են խորհրդային Միության տարածքային ընդարձակման նպատակներն ու դրանց համապատասխանումն Ադրբեջանական ԽՍՀ ծրագրերի հետ, որն էր՝ պարսկական Ադրբեջանն Իրանից առանձնացնել և միացնել խորհրդային Միությանը: Այդ գրքերը ի մի են բերված և պարսկերեն հրատարակվել են Թեհրանում²⁹:

Պարսկական Ադրբեջան (Ատրպատական) նահանգի և Ադրբեջանի Հանրապետության «վերամիավորման» մտահղացման հիմքը դրվել էր 1918 թվականին «Մուսավաթ» կուսակցության կողմից³⁰, և այս նպատակը կրկին աշխարհի համար պարզ դարձավ 1992 թ., երբ արդեն անկախ Ադրբեջանի Հանրապետության նախագահ Ա'բուլֆա'զ էլչիբեյը, նյութն արժարժեցնելով, հայտարարեց, որ նպատակ ունի միացնելու տարիներ ի վեր «պարտադրաբար իրարից բաժանված այս երկու եղբայրներին»: Իր այս քաղաքականությունը նա մեկ անգամ ևս չեղտեց «Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցության» (ԱԺՃԿ) 1998 թ. հունվարի 30-31-ի համագումարի ընթացքում՝ հայտարարելով:

²⁵ Ֆերեյդուն Քեշավարզ, *Ես մեղադրում եմ*, Թեհրան, 1980, էջ 61, պարսկերեն:

²⁶ Бартольд, նշվ. աշխ., հատոր 2, էջ 703:

²⁷ Ջամիլ Հասանլի, *Թեհրանի, Բաքվի և Մոսկվայի պայքարն Ադրբեջանի համար, 1939-1945*, Բաքու, 1998 և *Ստոր պատերազմի սկիզբն Ադրբեջանում, 1945-1946*, Բաքու, 1999, ադրբեջաներեն:

²⁸ Джамиль Гасанлы, СССР—Иран. Азербайджанский кризис и начало холодной войны. 1941-1946, Герои отечества, 2006.

²⁹ Ջամիլ Հասանլի, *Ադրբեջանի դեմոկրատ կուսակցության վերելքն ու անկումը, թարգմանությունը՝ Մանսուր Հասմամիի, Թեհրան, 1383 [2004]*, պարսկերեն:

³⁰ Brenda Shaffer, *Borders and Brethren*, Cambridge, MA, 2002, էջ 37:

Անկախ Հյուսիսային Ադրբեջանի ստեղծումը մեր շարժման մեծ հաղթանակն էր, որի հաջորդ փուլն է միացյալ Ադրբեջանի ստեղծումն ու վերականգնումը³¹:

Մեկ անգամ ևս՝ 1999 թ., ԱժձԿ-ի ղեկավար էլչիբեյը հայտարարեց.

Բաժանված Ադրբեջանի խնդիրը գոյություն ունի, և մեր պատմական առաքելությունն է այն լուծելը³²:

Վերոհիշյալ նպատակով ծրագրված գործունեությունը դեռ շարունակվում է, և այս ուղղությունում Ադրբեջանի իշխանությունները «Հարավային Ադրբեջան» անունով հեռուստատալիք են հիմնել, որի նպատակն է գովազդել ու քաջալերել անջատողական քաղաքականությունը Իրանի հյուսիս-արևմուտքում: Ադրբեջանի Հանրապետության ղեկավարությունը կողմից աջակցվող այս գործունեությունը հանգեցրել է Իրանի հետ նախկինում ունեցած արտաքուստ սերտ և բարեկամական հարաբերությունների վատթարացման³³:

Ի հակադրում նման քաղաքականության, Իրանի իշխանությունները երկրի հյուսիսարևմտյան Ադրբեջան-Ատրպատական նահանգը (որը նախկինում տարածվում էր Արաքսի ամբողջ հարավային ափին, Թուրքիայից մինչև Կասպից ծով) 1937 բաժանեցին երկու նահանգների՝ նրանց տալով Արևելյան Ադրբեջան և Արևմտյան Ադրբեջան անվանումները, իսկ 1993 թվականին նույն տարածքը վերաբաժանվեց, այս անգամ՝ երեք մասի, որոնցից յուրաքանչյուրն ուներ առանձին նահանգի կարգավիճակ: Թուրքիային սահմանակից մասը անվանվեց «Արևմտյան Ադրբեջանի նահանգ», կենտրոնական մասը՝ «Արևելյան Ադրբեջանի նահանգ», իսկ Կասպից ծովին ու Ադրբեջանի Հանրապետության հարակից մասը դարձավ «Արդաբեյլի նահանգ»՝ ընդհանրապես վերացնելով Ադրբեջան անվանումն Ադրբեջանի Հանրապետության անմիջապես կից իր այս նորակոչ նահանգից, որի մայրաքաղաք Արդաբեյլը Սեֆյանների իշխանության օրերին Իրանի Ատրպատական-Ադրբեջանի նահանգի մայրաքաղաքն էր:

Ներկայումս Ադրբեջանի իշխանությունները, չլացած իրենց հարստությունում, տարածաշրջանային նկրտումները հասցրել են անընդունելի մակարդակների և սկսել են խաղալ քաղաքական խաղեր՝ բացահայտելով իրենց հավակնությունները և խաթարելով տարածաշրջանի կայունությունն ու խաղաղությունը: 2012 թ. փետրվարի 1-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի մի

³¹ Cameron Brown, Wanting to Have Their Cake and Their Neighbour's Too: Azerbaijani Attitudes towards Karabakh and Iranian Azerbaijan, *The Middle East Journal*, Washington DC, 2004, Volume 58, No. 4, Autumn, էջ 587-588:

³² Անդ, էջ 588:

³³ Iranian Azerbaijan: Brewing hotspot or future separatism? Today-Az internet newspaper, 11 November, 2010, Baku. Website <http://www.today.az/news/analytics/76478.html>.

քանի պատգամավորներ առաջարկեցին երկրի անունը պաշտոնապես փոխել «Հյուսիսային Ադրբեջան»-ի՝ պատճառաբանելով, որ Ադրբեջանի տարածքի երկու երրորդ մասը՝ «Հարավային Ադրբեջան»-ը, այժմ գտնվում է Իրանում, և այս տարածքը պատկանում է իրենց երկրին՝ Ադրբեջանին, և որը պետք է ազատագրվի³⁴:

1.2. Խորհրդային գաղափարախոսությունը և խեղաթյուրման քաղաքականությունը

1922 խորհրդային Միության ձևավորումից հետո (մինչև մերձբալթյան երկրների բռնակցումը) նրա կազմում կային երկու երկիր, որոնք կրողներն էին հնագույն դրսևորումներ ունեցող պատմամշակութային և պատմաքաղաքական ժառանգության, սրանք էին Հայաստանը և Վրաստանը³⁵: Խորհրդային Միության թյուրքալեզու և իրանալեզու միջինասիական հանրապետությունների ժողովուրդների համար նորաստեղծ պետական-քաղաքական միավորումները նորություն էին, քանի որ տարածաշրջանի բնակչության գերակշռող մեծամասնությունը քոչվոր ցեղախմբեր էին, իսկ համեմատաբար վաղ շրջաններից մնացել էին միայն մի քանի հին քաղաքներ՝ Բուխարան, Սամարղանդը, Մերվը, Խոբանդը, Խիվան, Կաշգարը, որոնք ժամանակին սելջուկների, մոնղոլների և հիմնականում պարսիկների գերիշխանության ներքո գիտություն, գրականության ու հոգևոր դպրոցների կենտրոններ էին: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա վերին արդեն նշվեց, որ սա մի նորաստեղծ երկիր էր՝ ծնունդ առած 1918 թ., որի բնակիչների համար որպես էթնանուն մատուցվող «ադրբեջանցի» եզրույթը նորություն էր ու դժվարընկալելի, այն աստիճան, որ «ադրբեջանցի» անվանումը բացակայել է անգամ 1926 թ. ԽՍՀՄ մարդահամարից: Կարևոր է նաև նշել, որ նախքան խորհրդայնացումն Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում բնակվում էին մեծ թվով պարսիկներ, թուրքեր, մոնղոլների, սելջուկների ու աղվանական ցեղերի ժառանգորդներ, հայեր, ռուսներ, հրեաներ և Իրանից ու Ատրպատականից եկած Պարսկաստանի բնիկ ադրբեջանցիներ:

Ի տարբերություն Ռուսական կայսրության (որը 1840-ական թթ. բնութագրվում էր իբրև «ժողովուրդների բանտ», և որի տարածքի մեծագույն մասի վրա էր ձևավորվել ԽՍՀՄ-ը) քաղաքականության՝ 1917 թվականից իշխանությունը տիրացած բուլշևիկները հայտարարեցին, որ նոր երկրին առաջնորդվելու է պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության գաղափարախոսությամբ, ինչը ենթադրում էր նաև պետության տարածքում

³⁴ Տե՛ս <http://en.trend.az/news/politics/1986820.html>, Տրենդ գործակալություն, Մ. Ալիևի հոդվածը:

³⁵ Հայաստանը որպես երկիր քարտեզներում առկա է սկսած մ.թ.ա. 600 թ., մինչդեռ Վրաստանը՝ որպես Արիագիան, Վիրքը, Միգրելիան, Իմերեթիան և այլ շրջաններ համախմբող երկիր, քարտեզներում և գրականության մեջ երևացել է 12-13-րդ դդ.:

բնակվող բոլոր ժողովուրդների իրավահավասարություն, համերաշխություն և նոր՝ սոցիալիստական ազգերի ձևավորում: Եվ քանի որ սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման տեսանկյունից ԽՍՀՄ կազմի մեջ մտնող հանրապետությունները հապես տարբերվում էին միմյանցից, նոր գաղափարախոսություններ փաստորեն խնդիր էր դրվում զարգացման տարբեր աստիճաններ ունեցող ժողովուրդներին հասցնել միևնույն մակարդակի:

Ասվածի վկայությունը հանդիպում ենք Հոկտեմբերյան հեղափոխությունը հաջորդած առաջին իսկ դեկրետներում: Այսպես՝ արդեն 1917 թ. նոյեմբերի 2(15)-ին Խորհրդային Ռուսաստանի Ժողովուրդները ընդունեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների ղեկավարացիան», որտեղ հայտարարվում էր, որ իր գործունեության մեջ նորաստեղծ կառավարությունն առաջնորդվելու է Ռուսաստանի ժողովուրդների հավասարության և ինքնիշխանության, նրանց ազատ ինքնորոշման (ընդհուպ մինչև անջատումը և ինքնուրույն պետության ձևավորումը), ազգային և ազգային-կրոնական բոլոր խտրականությունների և արտոնությունների վերացման, Ռուսաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների և ազգաբնակչության խմբերի ազատ զարգացման սկզբունքներով³⁶:

Հարցի զարգացումը և կոնկրետ խնդիրների ուղենշումը տեսնում ենք հատկապես ՌԿ(Բ)Կ 10-րդ համագումարի (8-16 մարտի, 1921 թ.) նյութերում: Այստեղ ազգային հարցի վերաբերյալ կուսակցության խնդիրների մասին գեկուցման մեջ Ի. Ստալինը հայտարարում էր.

Ազգային անհավասարության էությունն այն է, որ պատմական զարգացման արդյունքում անցյալից մենք ստացել ենք մի ժառանգություն, երբ մի ազգ, մասնավորապես վելիկո-ռուսականը, քաղաքական և արդյունաբերական առումներով ավելի զարգացած է մյուս ազգերից: Այստեղից էլ գալիս է փաստական անհավասարությունը, որը չի կարող հաղթահարվել մեկ տարում, սակայն որը պետք է հաղթահարվի հետամնաց ազգերին ու ազգություններին քաղաքական, տնտեսական, մշակութային օժանդակության տրամադրման ճանապարհով³⁷:

Եվ ապա շարունակում.

ՌՍՖՍՀ ազգային հարցի էությունն այն է, որ հարկ է վերացնել որոշ ազգերի այն փաստական անհավասարությունը (տնտեսական,

³⁶ Տե՛ս http://cccp.narod.ru/work/book/prava_nar.html.

³⁷ Դեռևս 1913 թ. ձևակերպված ազգի ստալինյան բնութագրումը ենթադրում էր, որ այն «մարդկանց պատմականորեն ձևավորված կայուն ընդհանրություն է, առաջացած լեզվի, տարածքի, տնտեսական կյանքի և հոգեբանական կերտվածքի ընդհանրության հենքին և դրսևորվող մշակույթի ընդհանրության մեջ»: Տե՛ս Ի. Ստալին, *Մարքսիզմը և ազգային հարցը*, Երևան, 1952, էջ 22:

քաղաքական, մշակութային), որը նրանք ժառանգել էին անցյալից, որպեսզի հետամնաց ժողովուրդներին հնարավորություն տրվի հասնել կենտրոնական Ռուսաստանին թե՛ պետական, թե՛ մշակութային, թե՛ տնտեսական առումներով: ... Մեր խնդիրն է գործի դնել բոլոր ուժերը՝ օժանդակելու համար այդ ազգերին, նրանց պրոլետարական, աշխատանքային տարրերին, զարգացնելու խորհրդային պետականությունը ազգային լեզվով³⁸:

Այս մոտեցումների իրականացման ճանապարհը դեռևս մինչև համագումարը (10 փետրվարի, 1921 թ.) արդեն իսկ արտացոլվել էր «Պրավդայում» լույս տեսած հիմնադրույթներում, որտեղ առաջ էր քաջվում հետևյալ կոնկրետ քայլերի իրագործումը.

ա) տեղերում [ոչ վելիկոռուսական տարածքներում] զարգացնել և ամրապնդել խորհրդային պետականությունը այդ ժողովուրդների ազգային կերպարին համապատասխանող ձևերով,

բ) հաստատել ազգային լեզվով գործող դատարաններ, վարչակազմ, տեղական բնակչության կենցաղն ու հոգեբանությունը ճանաչող մարդկանցից՝ տնտեսության և իշխանության մարմիններ,

գ) տեղերում՝ մայրենի լեզվի կիրառմամբ զարգացնել մամուլը, դպրոցը, թատրոնը, ակումբային գործը և ընդհանրապես կուլտուրա-լուսավորական հաստատությունները³⁹:

Փաստական անհավասարության վերացման այս քաղաքական կուրսը (ստալինյան իրականացմամբ), որը հայտնի է նաև «արմատավորում» կամ «բնիկացում» (коренизация), շարունակվում էր 1920–1930-ական թթ., որոշ հետագործողների կարծիքով՝ շատ ավելի երկար ժամանակ⁴⁰:

Վերոնշյալ քաղաքականության և նրանց վերաբերյալ տրված որոշումներին մանրամասնորեն անդրադարձել է Յուրի Սլեզկին իր «Խորհրդային Միությունը որպես կոմունալ բնակարան» հոդվածում⁴¹: ԽՍՀՄ-ում ազգերի ու մշակույթների խնդիրներն ու նրանց զարգացումները մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո նա գալիս է հետևյալ եզրակացություն.

³⁸ Տե՛ս <http://magister.msk.ru/library/stalin/5-1.htm>

³⁹ Десятый съезд Российской Коммунистической партии: Стенографический отчет, Москва: 1921, էջ 101: Նույն բանաձևը կարելի է տեսնել Խորհրդային իշխանությունը և ազգային հարցը Ռուսաստանում: Թարգմանությունը Եր. Մելիքեանի, Ռուստով, 1920, էջ 8–12: Տե՛ս նաև <http://petrograd.biz/stalin/5-20.php> :

⁴⁰ Մանրամասն տե՛ս Галина Литвинова, К вопросу национальной политике. http://www.hrono.ru/libris/lib_l/litvinova_nac.html :

⁴¹ Yuri Slezkine, “The Soviet Union as a Communal Apartment, or How a Socialist State Promoted Ethnic Pluralism”. *Stalinism. New Directions*, Sheila Fitzpatrick, ed., London, 2000, էջ 313–347:

Կուսակցությունն ուր ուղին էր խորհրդային ազգութունները պաշտոնական դարձնելը, դրանց տալով իրենց ազգային բնորոշիչ արժանի մի մշակույթ, որը պետք էր պահպանել և կատարելագործել: Կարիքի դեպքում պետք է նաև օգտագործել հատուկ մասնագետներին և նույն նպատակին ծառայող հատուկ կազմակերպությունների կողմից շարադրված հորինվածքները⁴²:

Հիմնականում վերորերյալ գործոններով է պայմանավորված, որ խորհրդային իշխանություններն իրենց գոյությունն առաջին իսկ տարիներից սկսած քաջալերում էին «հետամնաց ժողովուրդներին», այդ թվում՝ Ադրբեջանի ու Միջին (Կենտրոնական) Ասիայի նորաստեղծ հանրապետություններին, ստեղծել իրենց ազգային ինքնությունը, պատմությունը և մշակույթը, այդ թվում նաև ազգային թատրոնը, օպերան, ժողովրդական ու դասական երաժշտությունը, արվեստն ու գրականությունը: Այս գործընթացներն են դրվում նորաստեղծ հանրապետությունների հետազոտողներին (թերևս՝ իշխանությունների աջակցությամբ) ձեռնարկելու քայլեր այնպիսի «գիտական» աշխատություններ ստեղծելու ուղղությամբ, որտեղ կհիմնավորվեն նրանց (հնագույն) ազգ լինելը, հնագույն մշակույթն ու պատմությունը «վերագտնելը»: Այս կերպ են ձևավորվել «գիտական» ներկայացվող պատմական հորինվածքների, գեղծարարությունների, կեղծիքների, խեղաթյուրումների պատճառները:

Մեկ անգամ ևս Ստալինը 1930 թ. կոմկուսի 16-րդ համագումարի մասնակիցներին զգուշացրեց՝ հայտարարելով.

ԽՍՀՄ-ի բոլոր ազգերին ... ընդհանուր Մեծ ռուս ազգի հետ միավորելն ու ռուսերենը ընդհանուր լեզու դարձնելն ազգային շովինիզմ է և հակառակ է լենինյան տեսություններին, ըստ որոնց՝ մոտ ապագայում ազգային տարբերությունները չեն վերանալու և կհարատևեն նույնիսկ համախարհային պրոլետարիատի հաղթանակից հետո⁴³:

⁴² Անդ, էջ 335:

⁴³ И. В. Сталин, *Сочинения*, Москва, 1952, հատր 13, էջ 4:

1.3. Պատմութեան խեղաթյուրումը և ազրբեջանական ինքնութեան կայացման գործընթացը

Կովկասյան լեռներից հարավ ընկած երկրների ժողովուրդների պատմութեան, հիշողութեան և ինքնութեան հարցերի ճանաչված մասնագետ Վիկտոր Շնիրելմանը եզրակացնում է.

Ցանկացած նորաստեղծ երկիր իր գոյութիւնն օրինականացնելու համար կարիք ունի պատմութեան, որով նա կարող է փաստել իր խոր արմատներն ու սեփական անընդմեջ պատմական մշակույթը⁴⁴:

Ապա նա շարունակում է՝ մեջբերելով Օդրի Ալթշտատից, և անում հետևյալ դիտարկումը.

Նորաստեղծ երկրի [Ազրբեջանի] պատմաբանները ևս հիմնադրման օրվանից հետևողականորեն ցուցադրել են իրենց անհազուրդ հետաքրքրութիւնը դեպի Ազրբեջանի վաղեմի և միջնադարյան պատմութիւնը այնտեղ փնտրելով իրենց ազգի և պետականութեան արմատները⁴⁵:

Սակայն Ազրբեջանի պարագայում իրական պատմագրութեան բացակայութիւնը պատճառ դարձավ ոչ այնքան այն բանի, որ տեղի պատմաբանները զբաղվեն երկրի պատմութեան հետազոտմամբ, որն առաջադրում է Ալթշտատը, որքան որ ուրիշի պատմութիւնը յուրացնելու և դրա հաշվին (այսինքն՝ նենգափոխումներ կատարելով) իրենց համար նոր պատմութիւն շարադրելու գործով:

Երբ պատմագրութեան վրա ազդում են քաղաքական գործոնները և քաղաքական պատվերը, ապա այդ կերպ ստեղծված պատմութիւնը դառնում է մի հզոր ուժ, որն ուղղակիորեն ազդում է ազգի ձևավորման գործընթացի և դրանից բխող քաղաքական գործելակերպի վրա: Ներկայումս Ազրբեջանի գիտական և քաղաքական շրջանակներում պատմագրութիւնը դարձել է ամբողջովին քաղաքականացված մի գործիք, որը կիրառվում է նախ և առաջ էթնիկ համախմբման (կոնսոլիդացիա) նպատակով:

Կարելի է նկատել, որ ազրբեջանական պատմագրութեան որդեգրած «չեղածը որպէս իրողութիւն» ներկայացնելու գործելակերպի համար մեթոդաբանական ուղեցույցի դեր է կատարել մեկ այլ նորաստեղծ պետութեան՝ ԽՍՀՄ-ի՝ որպէս հնուց ի վեր բազմաթիվ ընդհանուր գծերով կապված «մեկ ամբողջական երկրի» պատմութեան վերաշարադրման անհրաժեշտութիւնն անուղղակիորեն մատնացույց անող մոտեցումը: Այսպէս՝ Բորիս Պոնոմարյովի խմբագրած «ԽՍՀՄ

⁴⁴ Victor Shnirelman, *The Value of the Past; Myths, Identity and Politics in Transcaucasia*, Osaka, 2001, էջ 93:

⁴⁵ Տէն Նուս Ալտստադ, նշվ. աշխ., էջ 173–174:

պատմութիւնը» (1966 թ.) աշխատութեան մեջ Սովետական Միութեան կազմում գտնվող ազգերն ու ազգութիւնները որպէս միատարր ամբողջութեան մասեր ներկայացնելու, դեռևս անցյալում նրանց փոխադարձ կապերը կարևորելու, շեշտելու նպատակով հայտարարվում էր.

Անհնար և սխալ է [ԽՍՀՄ] երկրի պատմութեանը նայել որպէս առանձին հանրապետութիւնների պատմութիւնների հավաքածուն ներկայացնող մի խճանկարի⁴⁶:

Նման մոտեցումը, ինչպէս կերևա ստորև, ամբողջովին համապատասխանում է նախորդ ենթադրուած վերհանված այն իրողութեանը, երբ քաջալերվում էր պատմութեան կերտումը: Որպէս նման մոտեցման դրսևորում՝ ազրբեջանցի պատմաբանները սկսեցին հետազոտել իրենց հանրապետութեան տարածքում նախկինում ապրած ժողովուրդների և գոյութիւն ունեցած քաղաքական կազմավորումների պատմութիւնը՝ դրանք վերափոխելով և ներկայացնելով որպէս իրենցը՝ Ազրբեջանին: Արդյունքում երևան եկավ «Ազրբեջանի պատմութիւն» եռահատոր ծավալուն ակադեմիական աշխատութիւնը, որին նաև հետևեցին բազմաթիւ պատմաբանների նորանոր «գիտական» աշխատութիւններ⁴⁷:

Այս հարցերի քննութեանն է անդրադառնում նաև ԱՄՆ Բերկլիի համալսարանի պրոֆեսոր Ստեփան Աստուրյանը «Նախնիների որոնումը. ազգային ինքնութիւնը և հայերի ու ազրբեջանցիների էթնոգենեզի պատմագրութիւնն ու քաղաքականութիւնը» հոդվածում: Այստեղ Ֆարիդա Մամեդովայի աշխատանքներից մեկը քննարկելիս նա, մասնավորապէս, գրում է, որ իր նպատակն է գիտարկել, թե.

Ինչպէս է կովկասյան աղվանների օրինակով նոր կազմակերպվող մի ազգի՝ Ազրբեջանի մտավորականութիւնը փորձում կերտել երևակայական անցյալ⁴⁸:

Ազրբեջանի իշխանութիւնները 1960-ական թվականներից լրջորեն լծվեցին իրենց նորաստեղծ երկրի համար պատմական անցյալ և հնագույն մշակութի յիմունքները գործին: Այս նպատակին հասնելու համար կատարվելիք մեծ աշխատանք կար, առկա էին դժվարին խոչընդոտներ: Ամենաբարդ խնդիրը,

⁴⁶ История СССР: С древнейших времен до наших дней: В 2-х сериях, в 12-ти томах, главный редактор Б. Пономарев, Том 1, Москва, 1966, էջ xxviii.

⁴⁷ Stiu Audrey Altstadt, նշվ. աշխ., էջ 172-173:

⁴⁸ Stephan Astourian, "In Search of their Forefathers. National Identity and the Historiography and Politics of Armenian and Azerbaijani Ethnogeneses", in *Nationalism and History. The Politics of Nation Building in Post-Soviet Armenia, Azerbaijan and Georgia*, D. Schwartz and R. Panossian, ed., Toronto, 1994, էջ 85:

Թերևս, Ադրբեջանի հարևան ժողովրդի՝ ի դեմս հայերի, անցյալն ու մշակույթն այնպիսի փոփոխություն ենթարկելն էր, որ հարուստ պատմություն ունեցող «Հնագույն» կամ «Մեծ Ադրբեջան» անվանման տակ իրենց նորաստեղծ և նպաստավոր պատմական վարկածն աստիճանաբար դառնար իրականություն: 1915–1923 թթ. օսմանյան փորձը փաստել էր, որ հայերին կամ ընդհանրապես որևէ ժողովրդի Ֆիզիկապես ոչնչացնելն ու անհետացնելը հնարավոր չէ, հետևաբար պետք էր գործադրել նոր մեթոդաբանություն, այն է՝ փոփոխել և խեղաթյուրել պատմությունը և այդ կերպ հայերին տարանջատել Ադրբեջանի և անգամ Հայաստանի Հանրապետության տարածքում առկա քրիստոնեական մշակութային կոթողներից ու հուշարձաններից:

«Ադրբեջանցի» կոչվող նորաստեղծ ժողովրդին հնագույն էթնիկ ընդհանրություն ենրկայացնելու նպատակով անհնար էր դիմել նախքան 1918 թվականը գոյություն ունեցող աղբյուրներին և գրականությանը, քանի որ, ինչպես վերը նշվեց, ո՛չ պարսկական, ո՛չ արաբական և ո՛չ էլ եվրոպական աղբյուրներում ու հատկապես ոչ մի տեղաբնակ պատմիչի աշխատության մեջ⁴⁹ Արաքսից հյուսիս «Ադրբեջան» անունով երկրի և այդտեղ բնակվող «ադրբեջանցիների» վերաբերյալ փաստեր գոյություն չունեին, ուստի այլ ճանապարհ չկար՝ բացի կեղծիքներով ու չեղած «փաստերով» նոր պատմություն հորինելը կամ էլ ուրիշինը յուրացնելը: Հաջորդ քայլը այդ նորաստեղծ պատմությունը իբրև իրենց «հնագույն ազգային ժառանգություն» ենրկայացնելն էր: Նույնը պետք է արվեր նաև այս տարածաշրջանում գոյություն ունեցած մշակութային կոթողների ու հուշարձանների հետ, քանի որ կարիք կար դրանց կերտումը նույնպես վերագրելու այդտեղ ստեղծված երկրին՝ Ադրբեջանին:

«Բարեբախտաբար», Ադրբեջանի տարածքում գտնվող պարսկական, սելջուկյան և այլ մուսուլմանական հուշարձանները դյուրությամբ կարելի էր հռչակել «ադրբեջանական», քանի որ դրանք պատկանում էին Ադրբեջանի բնակչության մեծամասնության կրոնին: Ինչ վերաբերում էր Ադրբեջանի տարածքում գտնվող բազմաթիվ մյուս՝ քրիստոնեական հուշարձաններին, ապա անհերքելի էր, որ դրանց մեծամասնությունը պատկանում էր հայերին, իսկ փոքր մասն էլ քրիստոնյա աղվանների մշակութային ժառանգության դրսևորումներն էին: Սակայն այս իրողությունը Ադրբեջանի իշխանությունների համար բնավ ընդունելի չէր և կարիք կար իրականությունը փոխելու այնպես, որպեսզի եղածն ինչ–որ ձևով կապվեր Ադրբեջանի բնիկների նոր հայտնաբերված «նախահայրերին», աղվաններին: Այս ծրագիրն իրականացնելու համար կարիք կար առաջին հերթին «փաստելու», որ Ադրբեջանի այսօրվա բնակիչներն իրապես կովկասյան աղվանական ցեղերից սերվածներն ու նրանց ուղղակի ժառանգներն են, իսկ հայերին կարիք կար դարձնելու տարածաշրջան

⁴⁹ Սրանց շարքում են Աբբաս Ղուլի Աղա Բաքիխանովը, Միրզա Ջամալ Ջավանշիր Ղարաբաղին, Միրզա Աղիգյոզալ Բեգը և Եսայի Հասան Ջալալյանցը:

բերված նորեկներ, օտարներ: Հաջորդ փուլում կարիք կլինեն փաստելու, որ տարածաշրջանում գոյություն ունեցող բոլոր քրիստոնեական հուշարձաններն ու եկեղեցիները ոչ թե հայկական են, այլ աղվանական: Եթե այս կեղծ տեսությունները նույնպես փաստվեն, ապա դրանից կհետևեր, որ Արաքսից հյուսիս գտնվող Ադրբեջանի տարածքում առկա բոլոր քրիստոնեական հուշարձանների, կոթողների, շինությունների ստեղծման փաստը հայերից անջատ տեղ գտած գործընթաց է, և արդեն կարելի կլինեն համարել, որ դրանք ամբողջությամբ պատկանում են աղվանական մշակույթին, հետևաբար նաև «հնագույն և միջնադարյան Ադրբեջանի» մշակույթին, քանի որ իրենք նույնպես սերված են աղվանական ցեղերից:

Աստիճանաբար այս ծրագրերը գործի դրվեցին և 1960-ական թվականներից Ադրբեջանում սկսեցին էլ ավելի մեծ թափով բազմաթիվ տեսություններ, հետազոտություններ, գրքեր, հոդվածներ հրատարակել, որոնք գալիս էին իբր «փաստելու» վերոհիշյալ կեղծ վարկածները: Այս աշխատությունների հեղինակներն էին Զիյա Բունիաթովը⁵⁰, նրա արժանի աշակերտուհի Ֆարիդա Մամեդովան⁵¹, Իղրար Ալիևը⁵², Քամիլ Մամեդզադեն⁵³, Դավուդ Աղա-օղլի Ախունդովը⁵⁴, Ռաշիդ Գեյուշևը⁵⁵ և ուրիշներ: Նույն ընթացքում Ադրբեջանում առկա հայկական հուշարձանների և բնակավայրերի մի մասը վերանվանվում էր ադրբեջանական անուններով, իսկ մի զգալի մասն էլ աստիճանաբար քանդվում էր ու ոչնչացվում:

Ինչպես ցույց են տալիս մեր վերլուծությունները, մշակված այս ծրագիրն իր նպատակին հասցնելու համար կարիք կար առկա աղբյուրներում և զրականություն մեջ մի քանի պատմական, մշակութային և ժողովրդագրական «փոփոխություններ» կատարել, որոնցից, մեր համոզմամբ, հիմնականներն էին (ներկայացվում է ըստ բնագավառների).

Ա. Բնակչության էթնիկ կազմը

1. Արցախի բնիկներին, որոնք հայեր էին, պետք էր դարձնել միայն վերջին երկու-երեք դարերի ընթացքում այդտեղ վերաբնակված ժողովուրդ:
2. Նույն մոտեցումը կիրառել նաև Ադրբեջանի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության տարածքներում բնակվող հայերի հանդեպ:

⁵⁰ З. Буниатов, *Азербайджан в VII–IX веках*, Баку, 1973.

⁵¹ Фарида Мамедова, *Политическая история и историческая география кавказской Албании*, Баку, 1986.

⁵² Играр Алиев, *Очерк истории Атропатены*, Баку, 1989.

⁵³ Камиль Мамедзаде, *Архитектурные памятники Шеки*, Баку, 1987.

⁵⁴ Давуд Ага-огли Ахундов, *Архитектура древнего и ранне-средневекового Азербайджана*, Баку, 1986.

⁵⁵ Рашид Геюшев, *Христианство в кавказской Албании*, Баку, 1984.

3. Փաստել, որ մինչքրիստոնեական ժամանակներից այս տարածաշրջանում բնակված և քրիստոնյա դարձած Աղվանքի բնակչությունը ներկա Ադրբեջանի Հանրապետության ժողովրդի միակ նախահայրերն են:
4. Պնդել, որ այս տարածաշրջանում նախքան 19-րդ դարը աղվաններից ու ադրբեջանցիներից բացի ուրիշ ժողովուրդներ չեն բնակվել:
5. Պարսկաստանի Ատրպատական և Արդաբեյլ նահանգների ժողովրդին ներկայացնել որպես ինքնուրույն Ադրբեջանի, ինչպես նաև ներկա Ադրբեջանի Հանրապետության ժողովրդի անջատված կեսը:

Բ. Գրավոր մշակույթ և մշակութային կոթողներ

1. Փաստել այն պարագան, որ Կովկասի Հարավարևելյան մասում կառուցված բոլոր եկեղեցիները, վանքերը, խաչքարերը և այլ քրիստոնեական կոթողներ կառուցել են աղվանները:
2. Ներկա Ադրբեջանի տարածքում որևէ ժամանակաշրջանում ապրած Հայ և պարսիկ նշանավոր դեմքերին վերանվանել «ադրբեջանցի», նրանց ստեղծած գրավոր մշակութային արժեքները՝ «ադրբեջանական մշակույթի մաս»:
3. Ադրբեջանի Հանրապետության տարածքում գտնվող բոլոր հին մզկիթները կոչել «ադրբեջանական» (չնայած դրանց մեծ մասը կառուցել են պարսիկները):

Գ. Տեղագրական կեղծ անվանումներ

1. «Հյուսիսային» և «Հարավային Ադրբեջաններ» անվանումները դարձնել «պատմական»՝ «Հյուսիսային Ադրբեջան»-ը վերապահելով իրենց, իսկ «Հարավային Ադրբեջան» անվանումը տալով Պարսկաստանի «Ադրբեջան», նախկինում «Ատրպատական» կոչվող նահանգին⁵⁶:
2. Ներկա Հայաստանի տարածքը հռչակել որպես «Արևմտյան Ադրբեջան»:

Եթե ադրբեջանական պատմագրությունը և նրանց պատվիրատուներին՝ Ադրբեջանի նախորդ և ներկա իշխանություններին հաջողվեր վերոհիշյալ տեսությունները «հիմնավորել», ապա, ինչպես նշվեց, մինչև 19-րդ դարը տարածաշրջանում Հայերի բացակայության «փաստի» արձանագրմամբ Հայաստանի Հանրապետության տարածքի մեծագույն մասը, Արցախը, Ադրբեջանի Հանրապետության տարածքը, ինչպես նաև պարսկական Ատրպատականը կդառնար/կդառնա «Պատմական Ադրբեջան», ինչը ադրբեջանական ներկա իշխանություններին իրձն է և բուն նպատակը⁵⁷:

⁵⁶ Ներկայումս այս շրջանը բաժանված է Արևելյան և Արևմտյան Ադրբեջանների և Արդաբեյլի նահանգների:

⁵⁷ Ալիևի այս նյութին վերաբերող հայտարարությունների համար տե՛ս ենթաբաժին 1.4.2:

Հյուսիսային Աֆրիկայի Թունիս քաղաքում ծնված հանրահայտ արաբ պատմիչ և գիտնական Իբն Խալդունը (1332–1406) իր «Ալ-Մուքադդիմա (Պատմության սկիզբը)» աշխատության մեջ պատմիչների համար ներկայացնում է յոթ կարևոր խրատներ ու հորդորներ: Նրա կարծիքով պատմիչները հաճախ կատարում են մի շարք սխալներ, որոնք լրջորեն խոչընդոտում են նրանց աշխատանքը: Նշելով յոթ հիմնական խրատները՝ նա առաջարկում է պատմիչներին դրանք պահել իրենց ուշադրության կենտրոնում, իրենց գործելակերպը պայմանավորել դրանցով, մի հորդոր, որի կարիքն աներկբայորեն ունեն ներկա Ազրբեջանի պատմաբանները: Իբն Խալդունը գրում է⁵⁸.

1. Անհանդուրժողական չլինել ուրիշի մտածելակերպի ու հավատքի նկատմամբ:
2. Ունեցած աղբյուրներին ամբողջովին չվստահել:
3. Հասկանալ կատարված գործողությունների բուն նպատակը:
4. Ճիշտ ընկալել իրականութունը:
5. Իրադարձությունները դիտել և գնահատել անկողմնակալ կերպով՝ նկատի առնելով առկա նախապայմանները:
6. Հեռու մնալ վերադասին հաճոյախոսելուց ու գովաբանելուց, ինչի միակ նպատակը նրանց կողմից գնահատվելն ու պարգևատրվելն է:
7. Եվ ամենակարևորը՝ տեղյակ լինել հասարակության մեջ տիրող օրենքներին ու դրանց վերջին զարգացումներին:

Պատմությունը հորինելու և կեղծելու մեկայլ տարբեր, բայց փայլուն օրինակ է առաջարկում նախկին խորհրդային երկրներից Թուրքմենստանի Հանրապետությունը՝ ձևավորված 1924 թվականին: ԽՍՀՄ փլուզումից և անկախության ձեռքբերումից (1991 թ.) հետո Թուրքմենստանի նախկին ցկյանս նախագահ Սափարմուրադ Նիյազովը (1940–2006) իրեն շնորհեց «Թուրքմենբաշի», այսինքն՝ «Թուրքմենների առաջնորդ» տիտղոսը: Նա շարադրել է «Ռուհնամա» կոչվող պատմության համապարփակ մի գիրք⁵⁹, նվիրված իր ազգին ու նրա «5000–ամյա պատմությանը», ըստ որի՝ մասնավորապես Թուրքմեններն ուղղակի սերված են Նոյ նահապետից: Ս. Նիյազովի կենդանության օրոք գրքի ընթերցումը Թուրքմենստանում պարտադիր էր բոլորի համար: Գրքում մասնավորապես նշվում է, որ օղուղ Թուրքերը, Անատոլիայի բնակիչները, Եգիպտոսի մավուլեքները, սելջուկները, Իրանի սեֆյանները, զաջարները և շատ ուրիշներ՝

⁵⁸ Ibn Khaldun, *The Muqaddimah*, trans. F. Rosenthal and abridged by N. J. Dawood, Princeton & Oxford, 1978, էջ 35–36:

⁵⁹ Տե՛ս www.turkmenistan.gov.tm/ruhnama: «Երևակայական պատմության» այս տիպիկ օրինակը թարգմանվել է աշխարհի 22 լեզուներով և համացանցում տեղակայված լինելու շնորհիվ մատչելի է բոլորին:

բոլորը թուրքմեններ են, և ներկա թուրքիան ու թուրքմենստանը երկու երկիր են, որոնք ունեն միևնույն ժողովուրդը. այսինքն՝ փաստորեն գրեթե նույնը, ինչ այսօր պնդում են նաև Ադրբեջանի ղեկավարութունն ու պատմաբանները⁶⁰:

1.4. Պատմության խեղաթյուրման ադրբեջանական մեթոդաբանությունը

Նախորդ ենթագլխում նշված կետերի նպատակներին հասնելու համար Ադրբեջանի իշխանությունների կիրառած մեթոդաբանությունն ընդգրկում է բոլոր հնարավոր ոլորտներն ու միջոցները, սկսած զանգվածային տեղեկատվական՝ ռադիո– և հեռուստատեսային միջոցներից, պարբերական մամուլից, գիտական հրատարակումներից՝ պատմական, ազգագրական, աշխարհագրական և այլ բնույթի հոդվածներից ու աշխատություններից, մինչև համացանցն ու բազմաթիվ կայքերը: Բազմալեզու հրատարակությունները կատարվում են պետական տարբեր կառույցների անունից, հովանավորված են Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի և տարբեր նախարարությունների կողմից, իսկ դրանց մեծ մասը ֆինանսավորվում է Հեյդար Ալիև հիմնադրամի միջոցով:

Խորհրդային տարիներին նույնպես ադրբեջանցի հետազոտողների պատմական բնույթի գեղծարարությունները հաճախակի էին ու բազմազան: Նախորդ ենթագլխում առանձնացված խնդիրների իրականացման նպատակով, ինչպես նշվել էր, Բունիաթովը, Ախունդովը, մյուս գիտնականները դեռ 1960–ական թվականներից սկսեցին հրատարակել բազմաթիվ հոդվածներ, գիտական աշխատություններ, գրքեր⁶¹ ու դասագրքեր⁶², որոնք ծառայում էին այդ կեղծիքներն ընդունված իրողություն դարձնելու գործընթացին:

Աշխատության մեջ քննարկված ադրբեջանական հակագիտական և հակահայ հերյուրանքների դեմ Հայաստանի պատմաբաններից և բանասերներից շատերը, ներառյալ Պարույր Սևակը և Ասատուր Մնացականյանը⁶³, Կարապետ Մելիք–Օհանջանյանը⁶⁴, Բագրատ Ուլուբաբյանը⁶⁵, Բաբկեն Հարություն-

⁶⁰ Nəriman Qurbanov, *Azərbaycan–Türkiyə: Bir Millət iki Dövlət*, Bakı, 2007.

⁶¹ Այս գրքերից է Алекперов, А. К. *Исследования по археологии и этнографии Азербайджана*, Баку, 1960.

⁶² Ադրբեջանական դասագրքերից կարելի է նշել 5–րդ դասարանի պատմության դասագիրքը:

Y. Mahmudlu, L. Khalilov, and S. Aghayev, authors. *Ata Yurdu (Homeland). History textbook for the 5th grade*, Baku, 2003.

⁶³ Паруйр Севак, Асатур Мнацаканян, “По поводу книги З. Бунятова “Азербайджан в VII–IX вв.””, *Պատմա–բանասիրական հանդես*, Երևան, 1968, համար 1, էջ 177–190:

⁶⁴ К. Мелик–Оганджаниян, “Историко–литературная концепция З. Бунятова”, *Բանբեր Հայաստանի արխիվների*, Երևան, 1968, համար 2, էջ 169–190:

⁶⁵ Б. Улубабян, “Еще одна произвольная интерпретация армянской “Истории страны Агван””, *Բանբեր Հայաստանի արխիվների*, Երևան, 1979, համար 2, էջ 219–232:

յանը⁶⁶, Հենրիկ Սվազյանը⁶⁷, Պավել Չոբանյանը⁶⁸, Հայրապետ Մարգարյանը⁶⁹, Գևորգ Ստեփանյանը⁷⁰ և այլք պատասխան հոգեվածներ են գրել: Սրանց շարքում է Ֆարիդա Մամեդովայի աշխատությունը՝ որպես պատասխան գրված Ալեքսան Հակոբյանի, Պարույր Մուրադյանի և Կարեն Յուզբաշյանի «Կովկասյան Աղվանքի պատմության ուսումնասիրության շուրջ» ուսեսերեն հոգեվածը՝ հրատարակված «Պատմա-բանասիրական հանդեսում»⁷¹, ինչպես նաև Գագիկ Սարգսյանի և Պարույր Մուրադյանի «Գրական թերթում» հրատարակված հայերեն հոգեվածը⁷²: Սակայն այս հոլոթ կարևոր աշխատություններն ընդհանրապես հրատարակվել են հայկական գիտական պարբերականներում և մամուլում հայերենով կամ ուսեսերենով (որն ուներ միջազգային լեզվի համարում) և ունեն մասնագիտական ու հետևաբար սահմանափակ շրջանառություն: Լեզվական գործոնի պատճառով այս հոգեվածների մեծամասնությունն այսօր անծանոթ է մնացել Արևմտյան Եվրոպայի և Ամերիկայի հանրությունը, պատմաբաններին ու բանասերներին, որոնց է ուղղված ներկայիս աղբյուրաբանական հակահայ քարոզչությունը՝ օգտագործելով տպագրված բազմալեզու գրականությունը ցրելու ամենատարբեր միջոցները⁷³:

Մեր օրերում, հետևելով խորհրդային տարիներին ձևավորված մեթոդաբանությունը, «գիտականի» անվան տակ քաղաքական նպատակ հետապնդող նույն բնույթի կեղծիքներն ու քարոզչությունները, շարունակելով զարգանալ և կատարելագործվել, այնքան են ամրապնդվել ու արմատացել, որ աղբյուրաբանների նոր սերունդը արդեն դրանք ընդունում է որպես իրականություն: Նրանք իրապես հավատացած են, որ հայերն այս տարածաշրջանում անկոչ նորեկներ են, իսկ Արցախում ու Ադրբեջանում գտնվող քրիստոնեական բոլոր հուշարձանները ոչ թե հայկական, այլ աղվանական են, որոնք հայերը

⁶⁶ Б. Арутюнян, “Когда отсутствует научная добросовестность”, *Լրաբեր հասարակական գիտությունների*, Երևան, 1987, համար 7, էջ 33–56:

⁶⁷ Г. Свазян, “Пример использования исторической науки в экспансивных целях”, *Պատմա-բանասիրական հանդես*, Երևան, 1989, համար 2, էջ 46–56:

⁶⁸ П. Чобанян, М. Карапетян, “Из истории армяно-русских отношений”, *К освещению проблем истории и культуры Кавказкой Албании и восточных провинций Армении*. Том 1, ред. Л. Хуршудян, Ереван, Ереванский гос. университет, 1991, էջ 94–106:

⁶⁹ А. Маргарян, “Хроника страны Алуанк” Мхитаря Гоша”, *К освещению проблем истории и культуры Кавказкой Албании и восточных провинций Армении*. Том 1, ред. Л. Хуршудян, Ереван, Ереванский гос. университет, 1991, էջ 214–224:

⁷⁰ Գ. Ստեփանյան, “Ընդդեմ Արևելյան Այսրկովկասի պատմության աղբյուրաբանական կեղծարարների”, *Վեհ*, Երևան, 2009, համար 1, էջ 133–143:

⁷¹ Алексан Акоюн, Паруйр Мурадян, Карен Юзбашян, “К изучению истории Кавказской Албании”, *Պատմա-բանասիրական հանդես*, Երևան, 1987, համար 3, էջ 166–189:

⁷² Գագիկ Սարգսյան և Պարույր Մուրադյան, «Հերթական արշավանք ի Հայս կամ թե ինչպես են նենգափոխում պատմությունը», *Գրական թերթ*, Երևան, 1988, հուլիսի 1:

⁷³ Ինչպես արդեն նշվեց, այս նյութի վերաբերյալ հազվագյուտ օտարալեզու հրատարակումներից հատկապես կարևոր է Ստեփան Աստուրյանի հոդվածը՝ հրատարակված անգլերենով 1994 թվականին: Sté et Stephan Astourian, նշվ. աշխ.:

խլել են տեղացիներից ու մի մասն էլ ոչնչացրել՝ տիրելով աղվանների երկրին ու մինչ այդ պահպանված մշակութային կոթողներին: Աշխատութեան հեղինակը 2009 թվականի ապրիլի 22-ին այս նյութով հանդես եկավ Եվրոպական համայնքի Կանաչների կուսակցության Բրյուսելի Հայերի Բյու կոնֆերանսի սրահում, որտեղ նաև ներկա էին հինգ ադրբեջանցի երիտասարդ դիպլոմատներ ու գիտաշխատողներ: Հարցումների ընթացքում պարզ դարձավ, որ նրանք բոլորն էլ ամբողջովին հավատացած են իրենց մատուցված կեղծված պատմութեանը: Այս հարցին անդրադարձել են նաև Սերգեյ Ռուսյանցևն ու Իլհամ Աբբասովը ադրբեջանական պատմութեան դասագրքերի վերաբերյալ իրենց հետազոտութեան մեջ՝ նշելով.

Այն ապագան, որ այս դասագրքերի հեղինակներն են առաջադրում, հարատև մրցակցութուն է «հին» թշնամիների հետ: Եվ եթե ապագա սերունդները սովորեն նման դասագրքերով, ապա սա այն ճակատագիրն է, որը նրանց սպասում է⁷⁴:

Վերջին տասնամյակի ընթացքում Ադրբեջանում հրատարակված պատմութեան դասագրքերի մասին, հատկապես հինգերորդ դասարանի «Հայերնիք» (Ata Yurdu – 2003) դասագրքին անդրադարձել է պարսիկ պատմաբաններից Հոսեյն Ա՛հմա՛դին: Ըստ նրա՝ այս գրքերի մեջ պատմական նենգափոխումների հիմնական թիրախն են Իրանը և իրանյան պատմութունը, և որոնց մեջ Իրանի ղեկավարութունը, պատմագրութունը, մշակույթը և ժողովուրդը համարվում են ադրբեջանցիների առաջնակարգ թշնամիներն ու «պատմական Ադրբեջանը» կործանողները: Իրանին հաջորդող թիրախներն են Հայաստանը և Ռուսաստանը⁷⁵:

Այս բոլորը հիշեցնում են խորհրդային տարիներին դասավանդված պատմութեան կոմկոսի գրաքննութունն անցած տարբերակը, որին շատ շատերը հավատում էին կուրորեն, առանց հարցականի տակ դնելու դրանց ճշմարտացիութունը:

Ինչպես ցույց են տալիս մեր վերլուծութունները, խորհրդային և հետխորհրդային շրջանի ադրբեջանական պատմագրութեան կողմից հայոց պատմամշակութային ժառանգութեան նենգափոխումները, ապա և այդ հենքի վրա իրականացված հորինվածքները կարելի է բաժանել մի քանի խոշոր բնագավառների:

⁷⁴ Ilham Abbasov and Sergey Rummyantsev, “Azerbaijan “. *Contemporary History Books in the South Caucasus*, ed. L. Vesely, Prague, 2008, էջ 55:

⁷⁵ Հոսեյն Ահմադի, «Ադրբեջանի հանրապետության դասագրքերի հետազոտությունը», *Ազգային հետազոտություններ*, 1390, հատոր 12/2, Թեհրան, 2011:

1.4.1. Պատմական բնույթի հորինվածքներ ու նենգափոխումներ

Ազրբեջանցի պատմաբանները, թերևս քաջալերվելով Թուրքիայի իրենց գործընկերների պատմական նենգափոխումներով, շարունակում են նրանցից ընդօրինակված նույնանման քարոզչությունը: Ազրբեջանի պատմաբանների համար Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը հիանալի օրինակ է, որին նրանք հետևում են առանց վերապահումների: Իր ճառերից մեկի ընթացքում Աթաթուրքը հայտարարել է հետևյալը.

Պատմությունը շարադրելը նույնքան կարևոր է որքան դրա կերտելը⁷⁶:

Օրինակ՝ Թուրքիայի 6-րդ դասարանի պատմության դասագրքում գրված է.

Թուրքերը կենտրոնական Ասիայից տարածվեցին աշխարհի տարբեր մասերը և տեղի բնիկներին, որոնք դեռ ապրում էին քարի դարի պայմաններում, օգնեցին անցնելու նեոլիթյան դարաշրջան [մոտ 9500 տարի մ. թ. ա.]: Այսպիսով՝ տեղաբնիկները թուրքերից սովորեցին հողի և մետաղների մշակում: Այս նորաստեղծ երկրներում թուրքերը շարունակեցին առաջադիմել՝ կառուցելով մեծ քաղաքներ և հիմնելով գորեղ պետություններ: Այսպիսով՝ Միջագետքում, Անատոլիայում, Սիրիայում և Եգեյան ծովի շրջանում նրանք ստեղծեցին քաղաքակրթության կենտրոններ⁷⁷:

Պատմական փաստերի ազրբեջանական խեղաթյուրումները նույնպես սկսվում են դպրոցական դասագրքերից, որոնց մեջ Ազրբեջանը ներկայացվում է որպես հնագույն պատմություն և պետականություն ունեցող մի երկիր, որի տարածքում հետագայում հիմնադրվել է Հայաստանը: 6-րդ դասարանի դասագրքերում Ազրբեջանը ներկայացվում է որպես շումերների ժամանակակիցը:

Հին Ազրբեջանի ցեղերի մասին գրավոր վկայությունները ներկայացված են շումերական էպոսներում և վիմազիր արձանագրություններում⁷⁸:

⁷⁶ Mustafa Kemal Atatürk, *The Speech*, tr. & ed. Önder Renkliyildirim, Istanbul, 1985, էջ 4:

⁷⁷ *Milli Tarih I*, Turkish Secondary School History Textbook, 6th grade, Ankara, 1991, էջ 25: St'ü tuşu V. L. Antoniou & Y. N. Soysal, "Nation and the Other in Greek and Turkish History Textbooks", *The Nation, Europe and the World. Textbooks and Curricula in Transition*. Ed. Schissler, Hanna and Soysal, Yasemin, NY & Oxford, 2005, էջ 112:

⁷⁸ R. Aliev, Y. Yousoufov, I. Babayev, I. Jafarov and A. Mamedova, authors. *History of Azerbaijan*, 6th grade textbook, Baku, 2002, էջ 55:

Ապա դասագիրքը բերում է «Ժամանակակից Հայաստանը ծագել է հին Արևմտյան Ադրբեջանի տարածաշրջանի վրա» թեզը⁷⁹:

Դասագրքերում ներկայացված կոպիտ կեղծիքները քննարկելու, դրանցում տեղ գտած խեղաթյուններին անդրադառնալու նպատակով 2008 թ. Ռուսաստանի Դաշնությունում կազմակերպվեցին հատուկ համագումարներ, որոնց մասնակցում էին նախկին ԽՍՀՄ երկրներից հրավիրված պատմաբաններ⁸⁰:

Հորինելու և նենգափոխելու մեթոդաբանությունը կիրառելով՝ Զիյա Բուհիաթովի (1921–1997) խմբագրությամբ 1987 թվականին լույս է տեսել «Ադրբեջանի պատմական աշխարհագրություն» ժողովածուն⁸¹: Վերոնշյալ գրքի տարբեր հեղինակների շարադրած գլուխները վերնագրված են Ադրբեջանի միջնադարյան պատմության տարբեր ժամանակաշրջանները մատնանշող խորագրերով, մինչդեռ տեքստի նյութը վերաբերում է Աղվանքին: Այս կերպ պատմական տեքստերի հեղինակներն Աղվանքի փոխարեն աստիճանաբար սկսում են գործածել «Ադրբեջան» անվանումը, որի բուն նպատակն է կարգացողի միտքը պարզապես այդ ուղղությամբ շեղել և Ադրբեջանն ու Աղվանքը ներկայացնել որպես մեկ երկիր: Ժողովածուի երկրորդ գլխում խոսվում է Ադրբեջանի մասին, որը, ըստ հեղինակների ներկայացման, տեղադրված է Արաքսի հարավային և հյուսիսային ափերին: Սակայն գլուխներից մեկի հեղինակ Վալիխանովը, հավանաբար սխալմամբ, տեղադրել է արաբ աշխարհագրագետ Իբն Հաուքալի՝ 10-րդ դարի քարտեզը, որտեղ Արաքսից հյուսիս գտնվող տարածքի վրա գրված է «Առան», որը պարսկերեն նշանակում է «Աղվանք», իսկ Արաքսից հարավ ընկած տարածքն անվանված է «Ադրբեջան», դրանց հարակից էլ տեղադրված է Հայաստանը⁸²: Քարտեզի գրությունները, սակայն, լինելով արաբերեն, անընթեռնելի ու հետևաբար անհասկանալի են համարյա բոլոր ադրբեջանցի ընթերցողների համար:

Ադրբեջանի և Աղվանքի՝ տարբեր երկրներ ու ժողովուրդներ լինելու մասին դեռ 1928 թ. Կոստանդնուպոլսում հրատարակված իր «Կովկասի թուրքերը» հոդվածում գրել է Ադրբեջանի Հանրապետության հիմնադիրներից և նրան այդ անունը տալու գործում մեծ դեր ունեցած, «Մուսավաթ» կուսակցության հիմնադիր Մուհամմադ Ա՛մին Ռա՛սուլզադան:

... Ադրբեջանն [Ատրպատականը] ու Աղվանքն իրարից տարբերվում են թե՛ լեզվով և թե՛ կրոնով: Ադրբեջանցիները զրադաշ-

⁷⁹ Անդ, էջ 6:

⁸⁰ Մանրամասն տե՛ս А. А. Данилов, А. В. Филиппов, редакторы. *Освещение обшей истории России и народов постсоветских стран в школьных учебниках истории новых независимых государств*, Москва, 2009: Стіх նաև կայքէջ http://nlvp.ru/reports/doclad_hist_02_light.pdf

⁸¹ Зия Буниятов редактор, *Историческая география Азербайджана*, Баку, 1987, էջ 76:

⁸² Այս քարտեզի բնօրինակը պատկերված է սույն աշխատության հավելվածի քարտեզ 27-ում, իսկ դրա մանրամասն բացատրությունների համար տե՛ս 5.15 ենթաբաժինը:

տական էին, որոնք արաբների ներխուժումից հետո ընդունեցին իսլամը, իսկ աղվանները քրիստոնեություն ընդունեցին միջին դարերում⁸³:

Սրանից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ նորաստեղծ երկրին «Ադրբեջան» անվանում տալը, ինչպես Բարտոլդեյ էր նշել, միայն քաղաքական բնույթ է ունեցել:

Ըստ հունա-հռոմեական դասական շրջանի ու միջնադարյան բոլոր քարտեզների և պատմիչների ներկայացրած տեղեկությունների՝ Փոքր Մարաստան երկիրն ու Ատրպատականն այդ նույն անվանումներով տեղադրվում են Արաքսից հարավ ընկած տարածաշրջանում: Չ. Բունիաթովի գրքի վերոհիշյալ հրատարակությունից երկու տարի անց՝ 1989 թվականին, ակադեմիկոս Իզրար Ալիևը շարադրեց «Ակնարկ Ատրոպատենի պատմության» հատորը: Արաքսից հարավ ընկած երկրամասին սկզբում նա տալիս է «Ատրոպատեն» անվանումը, որը համահունչ է գրքի վերնագրին, սակայն գրքի համարյա բոլոր էջերում Ատրպատական-Ատրոպատենի փոխարեն նա գործածում է «Հարավային Ադրբեջան» անվանումը, ինչն ամբողջովին սխալ է և ոչ տեղին, բայց և այնպես պատահական չէ⁸⁴: Ալիևի նույն հատորում ավելի քան չորս տեղ կարելի է հանդիպել նաև Կուրից հյուսիս գտնվող Աղվանքին տրված «Հյուսիսային Ադրբեջան» անվանումը, որը, ելնելով ժամանակի աշխարհագրական գիտելիքներից, օտար և ամբողջովին հորինված անվանում է⁸⁵: Սակայն միանգամայն ակնհայտ է, որ այս խորթ և շինծու եզրույթների գործածություններն ունեն բավականին հստակ քաղաքական և քարոզչական նպատակներ: Նորաստեղծ անունների հաճախակի կիրառման հետևանքով դրանք կամա թե ակամա մնում են կարգացողի հիշողության մեջ, աստիճանաբար նրա համար դառնում են ընդունելի, իսկ որոշ ժամանակ անց հակառակը վկայող տեսություն կամ բողոքների բացակայության պատճառով կարող են նույնիսկ դառնալ «իրականություն»: Բացի այս հոգեբանական մոտեցումից՝ նոր եզրույթներն այն պատմաբաններին, որոնք տարածաշրջանի պատմությունը լավատեղյակ չեն, առիթ են տալիս ապագայում այս աշխատանքներին ու անվանումներին հղումներ կատարելու՝ այդպիսով ինչ-որ չափով նաև «փաստելով» Ադրբեջանի՝ հնադարյան երկիր լինելու պարագան, ինչպես նաև նրա հյուսիսային ու հարավային կեսերի հնագույն պատմություն ունենալը⁸⁶:

⁸³ Muhammad Amin Rasulzada, “Gafkaziya Turklari”, Azarbayjan, Baki, 1990, N. 12, էջ 143: St’u նաև Հենրիկ Սվազյան, «Քրիստոնեության Աղվանք ներթափանցման ուղիներն ու ժամանակաշրջանը», Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2002, համար 2, էջ 131-141:

⁸⁴ Иггар Алиев, Очерк истории Атропатены, Баку, 1989.

⁸⁵ Անդ, էջ 9, 42, 59 և այլն:

⁸⁶ Անդ, էջ 53, 90-94, 139 և այլն:

Անկախությունից հետո Ադրբեջանի Հանրապետության Համար «Մեծ Ադրբեջան» դառնալն այնքան կարևորություն ստացավ, որ ինչպես դեռևս Բարտոլդեն էր 1926 թվականին կանխատեսել⁸⁷, մի քանի փորձ արվեց ու դեռևս արվում է Պարսկաստանի Ատրպատական նահանգը ներկայացնելու որպես «Հարավային Ադրբեջան» և այդ տարածաշրջանը միացնելու 1918 թվականին ծնունդ առած երկրին, որն իրենք հորջորջում են «Հյուսիսային Ադրբեջան»⁸⁸:

2005 թվականի դեկտեմբերի 14-ին Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի 60-ամյակին նվիրված հոբելյանական նիստի իր ելույթում նախագահ Իլհամ Ալիևը ադրբեջանցի գիտնականներին համաշխարհային հանրության առջև կոչ արեց մասնակցելու Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Ղարաբաղի հայության պատմական իրավունքների բացակայությունը հիմնավորելու գործընթացին: Նախագահ Ալիևը խոստացավ ֆինանսավորել ադրբեջանցի գիտնականների ջանքերով իրականացված ծրագրերը, որոնք կգան վերամշակելու և փաստելու՝ իբր «հայերը եկել են Ադրբեջանի անքակտելի մաս կազմող Լեռնային Ղարաբաղ իբրև հյուրեր» և ուստի «բացարձակապես իրավունք չունեն պնդելու, Լեռնային Ղարաբաղը նախկինում պատկանել է իրենց» տեսությունը: Իսկ 2011 թվականի ապրիլի 26-ին Ալիևը Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովի ընթացքում հայտարարեց.

Ուրախ եմ, որ մեր գիտնականները, դրական անդրադառնալով իմ կոչին, կարճ ժամանակամիջոցում այս տարածաշրջանի վերաբերյալ ստեղծեցին հրաշալի աշխատանքներ⁸⁹:

Սա ամբողջովին համընկնում է նորաստեղծ երկրների պատմության հորինմանը, որի մասին գրել են էնթոնի Սմիթն ու Վիկտոր Շնիրելմանը (տե՛ս սույն աշխատության թիվ 3-րդ և 44-րդ ծանոթագրությունները): Նմանատիպ ուղենշային «պատմագիտական» ելույթներ Ադրբեջանի ղեկավարն ունենում է ոչ միայն երկրի մասնագիտական հանրության (վերջինը՝ 2011 թ. ապրիլի 26-ին), այլ նաև երկրի շարքային քաղաքացիների առջև, հատկապես տոնական օրե-

⁸⁷ Бартольд, նշվ. աշխ., հատոր 2, էջ 703:

⁸⁸ Ըստ ադրբեջանական GunAz հեռուստաալիքի 2010 թ. հունիսի 13-ի կայքէջի՝ հունիսի 12-13-ին Բրյուսելում կայացավ արտասահմանում ադրբեջանական միությունների համագումարը, որտեղ հաստատվեց «Հարավային Ադրբեջանի ազատագրման ժողովրդական ձևկատ» հիմնադրելու առաջարկը, որի նպատակն է տեր կանգնել Պարսկաստանի Արևելյան և Արևմտյան Ադրբեջաններ և Արդաբիլ նահանգներին՝ նույն շրջաններում առկա հակակառավարական ակտիվիստների աջակցությամբ:

⁸⁹ Տե՛ս <http://en.president.az/articles/2041> կայքը:

րին: Այսպես՝ 2011 թ. իր ամանորյա ուղերձում Ադրբեջանի նախագահը, ուղղակիորեն սպառնալով Հայաստանին, արել է նաև հետևյալ հայտարարությունը.

Բոլորս տեղյակ ենք, որ ներկա Հայաստանի պետությունը հիմնադրվել է պատմական Ադրբեջանի հողերի վրա: Երևանի խանությունն ու Զանգեզուրի շրջանը և այլ մարզերը մեր պատմական հողերն են: Ադրբեջանի պետությունը երբևէ չի հանդուրժի, որ ևս երկրորդ Հայաստան հիմնադրվի ադրբեջանական հողերի վրա⁹⁰:

Քարոզչությունը սկսվում է 5-րդ դասարանի պատմության «Հայրենիք» անվանված դասագրքից, որտեղ հայերը պատկերված են որպես ադրբեջանցիների դեմ դավեր նյութող «սևագեեստներ»:

Անհավատ հայ սևագեեստները և նրանց հովանավորողները Ադրբեջանի, նրա ժողովրդի ու թուրք մահմեդականների դեմ ծրագրում են ամեն տեսակի ստոր արարքներ⁹¹:

1.4.2. Քարտեզագրական խեղաթյուրումներ

Ադրբեջանական պատմագրություն մեջ տեղ գտած կեղծիքները փաստելու նպատակով ժամանակին նաև հրատարակվել են բազմաթիվ քարտեզներ, որտեղ «պատմական» Ադրբեջանի տարածքը ցույց է տրվում հարավում Պարսկաստանի էքսթրեմա-Համադանից մինչև հյուսիսում՝ Դերբենդը: Աշխատություն հավելվածի քարտ. 1, 2 և 3-ում վերատպված քարտեզները վերցված են 1994 թ. Բաքվում հրատարակված «Ադրբեջանի պատմական քարտեզներ» ատլասից: Պետք է ասել, որ այս քարտեզների աղբյուրը Զ. Բունիաթովի խմբագրած վերոնշյալ «Ադրբեջանի պատմական աշխարհագրություն» ժողովածուն է, որից դրանք ընդօրինակված են: Զիյա Բունիաթովն անձամբ մեծ դեր է ունեցել այս ամբողջ հակահայ քարոզչությունը պատրաստելու, նաև քարտեզագրական աշխատանքներին զարկ տալու մեջ:

⁹⁰ Ալիևի ճառի ամբողջական տեքստը կարելի է կարդալ http://www.isria.com/pages/3_January_2011_114.php կայքում: Իսկ 2011-ի դեկտեմբերին հայտարարվեց, որ նախագահ Ալիևը մասնակցելու է Բաքվում կայանալիք՝ Երևանի ամրոցի հիմնադրման 500-ամյակին նվիրված տոնակատարությանը՝ վերահաստատելու, որ Երևանը կառուցվել է ադրբեջանական հողի վրա: Տե՛ս համակայքի հասցե www.erevangala500.com.

⁹¹ Y. Mahmudlu, L. Khalilov, and S. Aghayev, authors. *Ata Yurdu (Homeland). History textbook for the 5th grade*, Baku, 2003, էջ 295: Տե՛ս նաև İlham Abbasov and Sergey Romyantsev, նշվ. աշխ., էջ 44:

«Ադրբեջանի պատմական քարտեզներ» աշխատությունների և էջերում ներկա Հայաստանի Հանրապետության տարածքը և Պարսկաստանի Ատրպատական նահանգը ցույց են տրվում որպես Ադրբեջանի Հանրապետությանը նախորդող նույնանուն մի երկրի տարածք: Պետք է շեշտել, որ քարտեզների այս շարանի մեջ, որը սկսվում է մեր թվականությունից երկու հազարամյակ առաջ և հասնում է մինչև 20-րդ դար, ամբողջ տարածաշրջանում «Հայաստան» անունը որևէ տեղ նշված չէ⁹²:

Այս բոլորն արվում է Ադրբեջանին «հին և պատմական անցյալ» տալու նպատակով, որի մասին Ս. Ռուսյանցևը գրում է.

Մեծ Հայքը դարեր շարունակ անփոփոխ գոյություն է ունեցել, և դրան նմանվելու նպատակով 1990-ական թվականներից Ադրբեջանի քարտեզներում սկսեց երևան գալ Մեծ Ադրբեջան անվանումը, որն աստիճանաբար մուտք գործեց նաև դասագրքերի մեջ⁹³:

Ըստ ատլասի (Հավելված, քարտ. 1)՝ Ադրբեջանը 9–10-րդ դարերում ներառում էր նաև ներկայիս Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը: Չնայած այն հանգամանքին, որ քարտեզն անվանված է «Ադրբեջանը 9–10-րդ դարերում», սակայն բուն քարտեզի տեղանուններում որևէ տեղ Ադրբեջան անվանումը նշված չէ, քանի որ այդ երկիրը դեռ գոյություն չուներ, իսկ նույն ժամանակաշրջանում գոյություն ունեցող Հայաստանի անվանումը միտումնավոր չի նշվում:

Հավելվածի քարտ. 2-ը ներկայացնում է Ադրբեջանի տարածքը 11–12-րդ դարերում, որը հարավային կողմից փոքրացել է ու միայն հասնում է մինչև Ուրմիա լճի հարավում գտնվող Ուշնե քաղաքը, իսկ 16-րդ դարում (Հավելված, քարտ. 3) տարածքը կրկին ընդլայնվում ու հասնում է Համադանից մինչև Դերբենդ, ինչպես պատկերված է նույն տարածաշրջանի 9–10-րդ դարերի վերը նշված քարտեզում:

Ադրբեջանի պատմության և աշխարհագրության խեղաթյուրումները սկսվում են դպրոցական դասագրքերից՝ պղտորելով մանուկների միտքն ու նրանց մեջ արմատավորելով Ադրբեջանի կեղծված պատմությունը: Սերգեյ Ռուսյանցևը, մանրամասնորեն ուսումնասիրելով Ադրբեջանի պատմության դպրոցական դասագրքերը, Բաքվում հրատարակված 7-րդ դասարանի դասագրքից⁹⁴ անում է հետևյալ մեջբերումը.

⁹² Historical Maps of Azerbaijan, Baku, 1994.

⁹³ Sergey Rumyantsev, “Ethnic Territories Presentation Practice in Historical Textbooks in Post-Soviet Azerbaijan and Georgia”, *Internationale Schulbuchforschung*, 30, Hannover, 2008, էջ 814–815:

⁹⁴ Y. Mahmudlu, Y. Yousufov, R. Aliyev and A. Gojayev, authors. *History of Azerbaijan. Textbook for the 7th grade*, Baku, 2001.

Հնագույն ժամանակներից մինչև այսօր իմ Ազրբեջանը մեծ և հզոր մի երկիր է... Դերբենդի ամրոցը, որը մեր նախնիները «Երկաթե դարպասներ» են կոչել, մեր Հայրենիքի մասն է կազմում: Մեր Հայրենիքը տարածվում է Դերբենդից մինչև Կասպիա, մինչև Ղազվին և Համադան: Դեպի արևմուտք Շիրակը, Հնագույն Բորջալուն, Դիլիջանը, Սևանը, Երևանը և Նախիջևանը մեր Հայրենիքի անքակտելի մասն են կազմում⁹⁵:

1.4.3 Ազրբեջանական այբուբենի փոփոխությունները

Պատմությունն անկաշկանդ կեղծելու համար Ազրբեջանի պատմաբաններն իրենց ձեռքում ունեն ևս մի հզոր զենք. դա ազրբեջաներեն կամ, ավելի ճիշտ, Ազրբեջանի թրքերենի համար օգտագործվող այբուբենն է: Սկսած 16-րդ դարից Շիրվանի ու Դաղստանի, այսինքն՝ ներկա Ազրբեջանի Հանրապետության ու նրա հյուսիսում բնակվող մուսուլմանական ժողովրդի խոսակցական լեզուն հիմնականում թրքերենն էր, իսկ պաշտոնական և գրավոր լեզուն՝ արաբատառ պարսկերենը, որն ընդհանրացած էր պետական և գրական շրջանակներում: Ազրբեջանցի պատմաբաններ Միրզա Զավանշիր Ղարաբաղին, Աբբասղուլի-Աղա Բաքիխանովը և Միրզա Ադիգյոզալ-Բեկն իրենց պատմական աշխատությունները շարադրել են պարսկերենով: Ազրբեջանի արաբատառ թրքերեն գրականությունը սկսել է զարգանալ 18-րդ դարում, նախքան այդ մերօրյա «Ազրբեջան» անվանվող այս երկիրն իր ուրույն գրավոր լեզուն և դրանով ստեղծված գրականություն չի ունեցել:

Սերգեյ Ռոմժանցևն իր աշխատանքներում անդրադառնում է Ռաուֆ Կարաբյոզովի դիտողություններին, որը գրում է.

Ազրբեջանական [ազրբեջանալեզու] պատմական գրականությունը համեմատաբար նոր է. վաղագույն պատմական աշխատանքները գրվել են 18-րդ դարում, բայց ազրբեջանցի հեղինակների գործերի ճնշող մեծամասնությունը 19-րդ դարից են... որտեղ ներկայացվում են տարբեր խանությունների պատմությունները⁹⁶:

Ռոմժանցևն իր աշխատության մեջ նշում է նաև Վիկտոր Շնիրելմանի կարծիքը ազրբեջանական պատմաբանների մասին.

⁹⁵ Sergey Romyantsev, նշվ. աշխ. էջ 817:

⁹⁶ Рауф Карагезов, *Метаморфозы коллективной памяти в России и на Центральном Кавказе*, Баку, 2005 , էջ 148: Պետք է ավելացնել, որ նշվ. պատմական գրականությունը շարադրված է պարսկերեն:

Ադրբեջանի պատմության հիմնադիր Բաքիխանովի «Գյուլ-լիստան-է էրամ. Դաղստանի և Շիրվանի պատմությունը» աշխատությունը սկսվում է վաղ շրջաններից և հասնում մինչև 1813 թվականը: Այդ ժամանակվանից մինչև խորհրդային շրջանը Ադրբեջանում [տեղի բնակչության լեզվով] ոչ մի երևելի աշխատանք չի գրվել: Մինչև 1917 թվականը Ադրբեջանն իր պատմաբանները չունեին⁹⁷:

Ադրբեջանի Առաջին հանրապետության օրոք և դրան հաջորդած տարիներին խորհրդային Ադրբեջանի տարածքում շարունակվեց գործածվել պարսկա-արաբական այբուբենը: 1922-1929 թթ. ընթացքում այն փոխարինվեց ադրբեջաներենին հարմարեցված լատինատառ գրով, իսկ 1937-1939 թթ.⁹⁸ լատինատառն իր տեղը զիջեց ադրբեջաներենին հարմարեցված կյուրեղյան (ռուսական) գրին, որն օգտագործվեց մինչև 1991 թ., երբ լատինատառ ադրբեջաներենը մեկ անգամ ևս, այս անգամ չնչին փոփոխություններով, 1992-ին վերջնականապես վերահաստատվեց նորանկախ հանրապետությունում՝ որպես ազգային այբուբեն: Ադրբեջանի Հանրապետության ներկայումս գործածվող լատինատառ այբուբենն արդեն շատ բանով նմանվում է Թուրքիայում գործածվող գրին⁹⁹:

Նորհրդային Ադրբեջանի ժողովուրդը, որի մեծամասնությունը պարսկա-արաբական այբուբենին անձանոթ էր և նոր էր սկսել ծանոթանալ լատինական այբուբենին, 1939 թվականից պետք է աստիճանաբար սովորեր իր համար նոր, այս անգամ՝ կյուրեղատառ գիրը: Իսկ անկախությունից հետո՝ 1992 թվականից, ադրբեջանցիները մեկ անգամ ևս պարտադրված էին սովորելու լատինատառ մի նորաստեղծ այբուբեն:

Փաստորեն, բախվում ենք մի իրողության, երբ «Հնագույն մշակույթ» ունենալու հավակնող երկրի լեզվի ու գրականության մասնագետները, քաղաքական պայմանների թելադրանքով և ենթարկվելով իշխանությունների ճնշումներին, դյուրուլթյամբ փոխում էին լեզվի համար կարևոր հիմք հանդիսացող այբուբենը՝ այդպիսով, փաստորեն, ամբողջովին ջնջելով անցյալը և կրկին շարագրելով մինչ այդ գոյություն ունեցած գրականությունը: Սակայն Ադրբեջանում այս գործընթացները համեմատաբար դյուրին էին իրականացվում, քանի որ ամեն դեպքում տեղի լեզուն նախկինից եկող գրավոր որևէ խորհիմք չունեին, և մինչ այդ գոյություն ունեցած գրականության գերակշռող մասը գրված էր պարսկերենով: 1992 թվականից հետո կարիք կար մեկ անգամ

⁹⁷ Виктор Шнирельман, *Войны памяти: мифы, идентичность и политика в Закавказье*, Москва, 2003, էջ 123:

⁹⁸ Մանրամասների համար տե՛ս Անդրաս Ֆրինգսի հոդվածը. A. Frings, “Playing Moscow

⁹⁹ Լիլիթ Մովսիսյան, «Արրբեջաներենի այբուբենի պատմության ուրվագծեր», 21-րդ դար, համար 4, Երևան, 2008, էջ 156-166:

ևս տառադարձում կատարելով վերահրատարակել առնվազն ա՛յն գրքերը, որոնք իշխանությունները կհամարեին իրենց նպատակներին հարմար և կարևոր, իսկ այն գրականությունը, որը բովանդակային առումով ներկայում տարվող քաղաքականությունը նպաստավոր չէ, կարելի է տառադարձման ժամանակ ենթարկել անհրաժեշտ փոփոխությունների ու «բարելավումների»:

Տառադարձումների ընթացքում իրականությունը փոխելը սկսվել էր դեռևս խորհրդային շրջանից, և Ադրբեջանի մտավորականները անկախությունից հետո մեկ անգամ ևս առիթ ունեցան «վերանայելու» պատմությունը և «չտկելու» մինչև և այդ վրիպած և թույլ տրված սխալները՝ միանշանակ բոլոր դեպքերը դարձնելով ի շահ նորաստեղծ Ադրբեջանի: Այսպիսով՝ հրաշագործ այս զենքը հնարավորություն էր տալիս իշխանություններին կերտելու նոր պատմություն ու գրականություն՝ տառադարձման ժամանակ կատարելով ցանկացած փոփոխություններ և հորինումներ՝ հետևելով խորհրդային օրերին իսկ կիրառվող և ընդունված մեթոդաբանությունը: Քանի որ այս անգամ տառադարձությունը կատարվում էր այնպիսի ժամանակային կտրվածքում, երբ Ադրբեջանի իշխանություններն արդեն սկսել էին գործադրել իրենց հակահայ քարոզչությունն ու ինֆոտեղեկատվությունը, ապա հարմար առիթ և միջոց էր տառադարձման ժամանակ նենգափոխելու ու կեղծելու գրականությունը և ամենուրեք տարածելու ու ցրելու պատմության նոր վարկածները: Տառադարձությունն ամենահարմար առիթն էր փոփոխելու ու հորինելու ազգային պատմությունը և Կովկասի հարավին վերաբերող պատմական գրականությունից ընդհանրապես վերացնելու «հայ» և «Հայաստան» անունները՝ պետք եղած պարագայում Աղվանքն անվանելով «Հյուսիսային Ադրբեջան», իսկ Ատրպատականը՝ «Հարավային Ադրբեջան»: Այս նպատակին հասնելու համար որոշիչ էր նաև այն կարևոր հանգամանքը, որ բացի մասնագետների մի փոքր խմբից, ադրբեջանցի ժողովուրդը ներկայումս ընդհանրապես անծանոթ է արաբական տառերին ու պարսկերեն լեզվին, և հնարավորություն չունի կարդալու այն բնագիր տեքստերը, որոնք շարադրված են եղել պարսկերենով: Հետևաբար, ներկա սերունդն անկարող է կարդալ նախորդ շրջանների գրականությունը և տեղեկանալ իրողությունը, իսկ իրենց կապն անցյալի հետ հնարավոր է դառնում միայն անկախությունից հետո հրատարակված գրականության միջոցով:

Ճիշտ նույն իրավիճակն էր նաև Թուրքիայում, երբ 1929 թ. հունվարի 1-ից երկրի պաշտոնական այբուբենը օրենքի ուժով արաբատառից փոխվեց լատինատառի: Արդեն իսկ հաջողված այս փորձը լավագույն օրինակն էր Ադրբեջանի իշխանությունների համար, որով նրանք կարող էին իրականացնել նաև իրենց հակահայ ծրագրերը: Այսպիսով՝ այս դեպքում էլ, ինչպես շատ ուրիշ պարագաներում, Ադրբեջանը հետևում է Թուրքիայի կիրառած և փորձարկված օրինակին:

Նորաստեղծ այբուբեններով տառադարձություններ և թարգմանություններ իրականացնողներից ամենահեղինակավորը կրկին ադրբեջանցի ակադե-

միևուս Զիյա Բունիաթովն էր: Պատմական աշխատանքները վերաթարգմանելու ընթացքում նրա և իր գործընկերների կատարած հիմնական փոփոխություններից կարելի է առանձնացնել մի քանի բնութագրական օրինակներ:

ա) Գերմանացի Յոհան Շիլտբերգերի «*Of Bondage and Travel*» («Գերություն և ճամփորդություն») աշխատության թարգմանության ընթացքում Զ. Բունիաթովը (1984 թ.) հանել է հայերին վերաբերող տողերը և¹⁰⁰, որպես վերջնական հարված, ամբողջովին անտեսել գրքի վերջին վեց գլուխները (գլուխ 61–66), որոնց նյութը հիմնականում հայերն են ու նրանց կենցաղը¹⁰¹:

բ) Բաքվեցի պատմաբան և բանաստեղծ Աբբասղուլի–Աղա Բաքիխանովն իր «Գյուլիստան–է էրամ–Շիրվանի և Դաղստանի պատմությունը» կարևոր պատմական աշխատությունը գրել է պարսկերենով: 1970 թ. պարսկերեն բնագիրն ամբողջությամբ հրատարակվել է Բաքվում, որի տեքստի մեջ բազում անգամներ նշված են Հայաստանի անունն ու նրա աշխարհագրական վայրը: Գրքի 1991 թ. ռուսերեն թարգմանության մեջ Բունիաթովը բնագրից մեծ մասամբ հանել է հայերի և Հայաստանի անունները¹⁰²:

Գիրքը պարսկերեն բնագրից ամբողջապես անգլերեն են թարգմանել պարսիկ պատմաբան և լեզվաբան Հա՛սա՛ն Զա՛վազին և ամերիկացի Ուիլյամ Տլորը: Գրքի վերջին բաժինը՝ «Եզրակացությունը», պարունակում է Շիրվանի ժողովրդի կարևոր ձեռքբերումները, այդ թվում՝ մոտ 50 չափածո գրվածքներ: Գրքի թարգմանիչները Զ. Բունիաթովի կատարած թարգմանության մասին գրում են.

Գրքի վերջին գլուխը հետազոտողի համար տեղեկատվական մի հանք է, որտեղ Բաքիխանովը ցույց է տալիս, թե ինչպես տեղում բնակվող ժողովուրդներն, անկախ լեզվական, կրոնական ու ազ-

¹⁰⁰ Աղավաղված թարգմանության համար տե՛ս Шильтбергер Иоганн, *Путешествия по Европе, Азии и Африке, с 1394 года по 1427 г.*, перевод Ф. К. Буна, издание, редакция и примечания академика АН Аз. ССР З. Буниятова, Баку, 1984.

¹⁰¹ George A. Bournoutian, “Rewriting History”, *Journal of the Society for Armenian Studies*, Fresno, 1992–1993, հատոր 6, էջ 185–6: Տե՛ս նաև Bournoutian, *Two Chronicles on the History of Karabagh*, Costa Mesa CA, 2004, աշխատության հավելվածում ներկայացված են մի շարք թարգմանական և տառադարձման ընթացքում կատարված կեղծիքներն ու «հապավումները»: Տե՛ս էջ 265–269–ը: Տե՛ս նաև Գ. Աբգարյան, «Հայերը Շիլտբերգերի ուղեգրություններում», *Բանբեր Երևանի համալսարանի*, Երևան, 1997/2, էջ 103–112:

¹⁰² Аббас–Кули–Ага Бакиханов, *Гюлистан–и Ирам*, редакция и комментарии З. Буниятова, Баку, 1991.

գային տարբերություններէց, ապրում և իրար հետ կիսում էին մի ընդհանուր պատմություն...¹⁰³

Սակայն Ձ. Բունիաթովի անկատար և պակասավոր թարգմանությունն այսպես չէ: Նա ոչ միայն չի թարգմանել չափածո գրվածքները, այլև իր տեքստում դրանց մասին ոչ մի նշում չի արել, միաժամանակ նա չի թարգմանել գրքի որոշ հատվածներ ևս՝ առանց այդ մասին հիշատակելու և պատճառները նշելու: Այս պարագան հատկապես անհանգստացնող է, քանի որ նա տեքստից հանել է հայերով բնակեցված շրջանների մասին հատվածները՝ այդպիսով ոչ միայն կեղծելով պատմությունը, այլև հակասելով Ա. Բաքիխանովի այն մտայնությանը, որ պատմությունը պետք է գրել առանց կրոնական, ազգային, քաղաքական կամ այլ նախապաշարումների¹⁰⁴:

դ) Միրզա Ջավանշիր Ղարաբաղիի՝ 19-րդ դարի «Թարիխ-է Ղարաբաղ» (Ղարաբաղի պատմությունը) ձեռագիրը նույնպես գրված է պարսկերենով: Պարսկերեն բնագրի առաջին գլխի 4-րդ էջում Ղարաբաղին նշում է. «Հին Պարտավ քաղաքի բնակչությունը հայեր և այլ ժողովուրդներ էին»¹⁰⁵: 1959 թ. Ֆ. Բաբաևը ձեռագիրն ամբողջությամբ թարգմանել է ռուսերեն և կյուրեղյան տառերով գրված աղբրեջաններն: 1989 թ. Նազիմ Ախունդովը, որպես գիտական խմբագիր, վերանայել է նախորդ աղբրեջաններն թարգմանությունը (երկու թարգմանությունների հեղինակն էլ Ֆ. Բաբաևն է), որի արդյունքում այնտեղից հանվել են հայերին ու հարևան Հայաստան երկրին վերաբերող վերոնշյալ նախադասությունը և Հայաստանին վերաբերող ուրիշ հիշատակումներ: Այստեղ էլ, ինչպես այլ դեպքերում է, խմբագիրն իր վերաշարադրումների մասին որևէ տեղ նշում չի կատարել: Որպես օրինակ՝ ներկա աշխատության հավելվածի քարտ. 47-ում ներկայացված են այս գրքի պարսկերեն բնագրից մեկ հատված և նույնի բնագրի՝ Ֆ. Բաբաևի կյուրեղատառ աղբրեջաններն երկու տարբեր թարգմանությունները՝ վերցված 1959 և 1989 թթ. հրատարակություններից¹⁰⁶:

դ) 1989 թ. Ձ. Բունիաթովի խմբագրութայամբ Բաքվում ռուսերենով լույս է տեսել Եսայի Հասան-Ջալալեանց կաթողիկոսի (մոտ. 1665–1728) «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի» աշխատությունը, որտեղ խմբագիրը կա-

¹⁰³ Abbas Qoli Aqa Bakikhanov, *The Heavenly Rose-Garden. A History of Shirvan and Daghestan*, translated by Hasan Javadi and Willem Floor, Washington DC, 2009, էջ XVI:

¹⁰⁴ Տե՛ս վերատպված բնագրի նախաբանը, Արբասողույի-Աղա Բաքիխանով, *Գյուլիստան-է Էրաս-Շիրվանի և Դաղստանի պատմությունը*, Թեհրան, 2004, էջ 19:

¹⁸¹⁰⁵ Միրզա Ջավանշիր Ղարաբաղի, *Ղարաբաղի պատմությունը*, ձեռագիր, 1840–1847: Աղրեջանի ԳԱԱ, Ձեռագիր B712/11603:

¹⁰⁶ Տե՛ս հավելվածի քարտ. 47. Мирза Чамал Гарабаги, “Гарабаг Тарихи”, перевод Н. Ахундова. *Гарабаг намәләр*, Бақы, Иазычы, 1989, էջ 108: Տե՛ս նաև Bournoutian, նշվ. աշխ., էջ 185–191:

թողիկոսին ներկայացրել է առաջին հերթին որպես աղվան պատմիչ և ապա տեքստում արել փոփոխություններ՝ հանելով հայերին վերաբերող մի քանի հատվածներ: Ամերիկահայ պատմաբան Ջորջ Բուռնուլթյանն իր աշխատություններից մեկում մանրամասնորեն անդրադարձել է այս զեղծարարությունը, միտումնավոր բազմաթիվ այլ փոփոխությունների¹⁰⁷:

Բերենք ընդամենը մեկ, սակայն բնութագրական օրինակ: Բնագրում, ըստ Ջալալյանցի, Վախթանգ թագավորի կազմած 10 000 զինյալ ունեցող հայկական բանակի նպատակն էր վերահաստատել Հայկական տերությունը:

...և այսպէս բովանդակեալ զամենայն, և իբրեւ տասն հազար արս ընտիրս և սպառազէնս ընդ որոց և զդասս քահանայից և պաշտօնէից մերոց առեալ մեծաւ ճոխութեամբ և խնճոյիւք, համարելով նոր նորոգեալ զիշխանութիւն Հայոց, և գնացեալ իջանք մերձ ի քաղաքն Գանջայ...¹⁰⁸

1989 թ. Չ. Բունիաթովի խմբագրած թարգմանություն մեջ բանակը և վերականգնվող իշխանությունը հայկականի փոխարեն անվանափոխվել ու դարձել են «աղվանական»¹⁰⁹:

Արդիական տեխնոլոգիաների զարգացած և գերարագ տեղեկատվական և քարոզչական միջոցներն օգտագործելով՝ Ադրբեյջանի ներկա պատմագրությունը և նրանց օժանդակող իշխանություններն աշխատում են իրենց հորինված ու հրատարակած կեղծիքներն այնքան ծավալել ու ընդլայնել, որ նույնիսկ ճշգրիտ ներկայացրած տարբերակն իրենց մեծաքանակ մատուցվող զեղծարարությունների համեմատությամբ դառնա աննշան ու աննկատելի և այսպիսով չարժանանա հասարակ ընթերցողի ուշադրությունը: Նրանք աշխատում են քանակով գերազանցել որակին՝ հույս ունենալով, որ օրերից մի օր իրենց կատարած բազմաթիվ չփաստված ու անվավեր հորինվածքները կդառնան ընդհանրացած և աստիճանաբար ընդունված «իրականություն»:

¹⁰⁷ Kat'oghikos Esai Hasan Jalaleants', *A Brief History of the Aghuanq Region. A history of Karabakh and Ganje from 1702–1723*, trans. and annotated George Bournoutian, Costa Mesa, CA, 2009.

¹⁰⁸ Եսայի Աղուանից կաթողիկոս Հասան Զալալեանց, *Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի*, Երուսաղեմ, 1868, էջ 48: Տես նաև Արտո Մարտիրոսյանի նույն գրքի աշխարհաբար տարբերակը, Ստեփանակերտ, 2007, էջ 106:

¹⁰⁹ Եսաи Хасан-Джалалян, *Краткая история страны Албанской*, перевод Тер-Григоряна, подготовка к изданию З. Буянтова, Баку, 1989, էջ 35:

ԱԴՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ
ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ
ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

**2.1. «Ադրբեջանցի» էթնանվան և ադրբեջաներենի ձևավորման
գործընթացի արտացոլումը ադրբեջանական պատմագրություն մեջ**

Ցարական և Խորհրդային Ռուսաստանի իսլամ դավանող ժողովուրդների պատմություններն ուսումնասիրող փարիզաբնակ ռուս պատմաբան Ալեքսանդր Բեննիգսենը (1913–1988), *ԽՍՀՄ-ի մուսուլման ժողովուրդների մասին գրում է հետևյալը.*

Նախքան Հոկտեմբերյան հեղափոխությունը գյուղաբնակ կամ քոչվոր մահմեդականը, լինել նա թուրքմեն, ուզբեկ, կիրգիզ, դաղախ կամ կարակալակ, չունեի որևէ ազգություն պատկանելության հասկացություն: Նույնը կարելի է ասել նաև Վոլգայի թաթարների կամ ադրբեջանցիների մասին: «Ազերի» կամ «թաթար» անվանումները նախքան հեղափոխությունը նույնիսկ չէին գործածվում: Վոլգայի թաթարներն իրենց «թաթար», «բուլղար» կամ էլ պարզապես «մահմեդական» էին կոչում, իսկ [ներկա Ադրբեջանի Հանրապետության տարածքում բնակվող] «ազերիներն» իրենց կոչում էին «թուրք»: Այնպես որ, Հանրապետության հասարակություն համար միաբանող ուժը համարվում էր իսլամը¹¹⁰:

Բեննիգսենը և նրա գործակից էմբերգ Վիմբուշը հայտարարում էին.

Անգամ մինչև 1980-ական թթ. ազերիները դեռևս միավորված ազգություն չեն ներկայացնում¹¹¹:

Բայց և այնպես, ինչպես արդեն նշվեց, 1918 թ. Արաքսից հյուսիս հիմնված նոր երկիրը հռչակեց անկախություն՝ իր համար ընտրելով «Ադրբեջանի Հան-

¹¹⁰ Alexandre Bennigsen, “Islam or Local Consciousness Among Soviet Nationalities”. *Soviet Nationalities Problems*. Edward Allworth, ed., Cambridge, 1971, էջ 175:

¹¹¹ Alexandre Bennigsen & Enders Wimbush, *Muslims of the Soviet Empire: A Guide*, Bloomington, 1986, 136:

րապետութիւն» անվանումը¹¹²: Այս կերպ, այսինքն՝ քաղաքական որոշումով և գրչի մեկ հարվածով տեղաբնակ ժողովուրդը, որը մինչ այդ իրեն կոչում էր «թուրք», երբեմն էլ «թաթար» ու «մահմեդական» ընդհանուր անուններով, 1918 թվականի մայիսից անվանափոխվեց ու դարձավ «ադրբեջանցի»: Այն, որ այդ անվանումը տեղաբնակների կողմից միանշանակ չէր ընկալվում ու նրանց ականջին խորթ և օտարոտի էր հնչում, վկայվում է թեկուզ հենց այն հանգամանքով, որ մինչև 1936 թ., այսինքն՝ մոտ երկու տասնամյակ, նրանք իրենց դեռևս «թուրք» էին անվանում¹¹³: Այս մասին գրում են նաև ադրբեջանցի հետազոտողները: Այսպես՝ Ա. Ք. Ալեքպերովն իր «Ադրբեջանի հնագիտութեան և ազգագրութեան հետազոտութիւններ» աշխատութեան մեջ նշում է.

«Ադրբեջանցի» անվանումը սկսեց օգտագործվել 1936 թվականից: Նախքան այդ մեր երկրի ժողովուրդն ինքն իրեն կոչում էր «թուրք», մի անվանում, որն այժմ սկսեց տրվել հակահեղափոխական պանթուրքիստ կուսակցութեան անդամներին¹¹⁴:

Ըստ նույն հեղինակի՝ «չատ տարիներ հետո էր, որ երկրի ժողովուրդն սկսեց իրեն կոչել ադրբեջանցի»¹¹⁵:

Հակառակ վերոբերյալի՝ Ադրբեջանի ներկայիս իշխանութիւնները և նրանց պատվերով աշխատող պատմագիտութիւնը, ասես շլացած իրենց իսկ չափազանցութիւններից, սկսել են իրենք էլ հավատալ այս հորինվածքին ու արդեն պնդում են, որ Ադրբեջանը տարածաշրջանում ունի ավելի քան 5000 տարվա պատմութիւն¹¹⁶, և որ իրենք անկախ պետականութիւնը կորցրել են միայն 1813/1828 թվականներին՝ ռուս-պարսկական պատերազմներից հետո, այն էլ լոկ հարյուր տարով, որից հետո՝ 1918 թ., այդ կորուսյալ պետականութիւնը վերականգնվեց.

18-րդ դարի առաջին կեսին Ադրբեջանի Սեֆյան պետութեան անկմանը հաջորդեցին անկախ և կիսաանկախ իշխանութիւններ, խանութիւններ և սուլթանութիւններ՝ հիմնադրված 18-րդ դարի կեսին: Գյուլիստանի (1813) և Թուրքմենչայի (1828) պայմանագրե-

¹¹² Василий Владимирович Бартольд, *Работы по истории Кавказа и Восточной Европы*, Москва, 1963, Հատոր 2, էջ 703: Տե՛ս նաև Richard G. Hovannisian, *Armenia on the Road to Independence, 1918*, Los Angeles, 1967, էջ 189:

¹¹³ Քավլե Բա՛յաթ, *Փոթորիկը Կովկասում, 1917–1921*, Թեհրան, 2002, 45–47, պարսկերէն:

¹¹⁴ А. К. Алекперов, *Исследования по археологии и этнографии Азербайджана*, Баку, 1960, էջ 71:

¹¹⁵ Անդ:

¹¹⁶ Tale Haydarov and Taleh Baghirov, ed., *Azerbaijan, 100 Questions Answered*, Baku, 2008, էջ 21: Տե՛ս նաև Tamara Dragadze, ed., *Azerbaijan*, London, 2000, էջ 18–19:

րով Ռուսաստանի կողմից այս խանությունների գրավումը հարյուր տարով կանխակայեցին անկախ Ադրբեջանի պետութունը¹¹⁷:

Հեղինակը, այսպիսով, աշխատում է փաստել, որ Իրանի Սեֆյաններն ու նրանց նախորդող բոլոր մահմեդական իշխանություններն ու թագավորներն իրականում (հյուսիսային) ադրբեջանցիներ էին՝ և ա՛յս Ադրբեջանն էր, որ իր անկախ պետականութունը կորցրեց 1813–1828 թվականներից մինչև 1918 թվականը: Ադրբեջանական անհիմն տեսություններն ու կեղծիքներն այն աստիճանի են հասնում, որ, ինչպես փաստվում է վերը նշված մեջբերմամբ, իբր 1828 թվականին իրականում Ադրբեջա՛նն էր այս տարածաշրջանը պարտադրված Ռուսաստանին գիջողը և ոչ թե Իրանը:

Հայտնի իրողություն է, որ, որպես կանոն, երկրներն են, որ կոչվում են իրենց ժողովրդի անունով և ոչ թե հակառակը, ինչպես այս պարագայում է: Այստեղ կարևոր է նշել նաև այն, որ միջնադարյան վաղ շրջանի քարտեզներում ընդհանրապես սահմաններ չէին գծվում, և քարտեզի վրա շատ հաճախ միայն նշվում էր այդ տարածաշրջանում բնակվող ժողովրդի անունը, որն ավելի կարևոր էր համարվում, քան երկրամասի կամ տարածաշրջանի տեղանունը, իսկ սահմաններ գծելը սկսեց ընդհանրա՛նալ շատ ավելի ուշ՝ 14–15-րդ դարերի ընթացքում: Ադրբեջանի դեպքում տեղի է ունեցել դրա հակառակ գործընթացը: Այս երկրի ժողովուրդն անվանվել է մի երկրի անունով, որը նույնիսկ իրենց չէր պատկանում, այլ ընդօրինակված էր հարևան երկրի նահանգներից մեկից:

Ազգագրական բազմաթիվ աշխատությունների հեղինակ, ազգությունների և մշակույթների մասնագետ ամերիկացի պրոֆեսոր Ռոնալդ Ուիքսմանն իր «ԽՍՀՄ ժողովուրդները» աշխատության մեջ ադրբեջանցիների վերաբերյալ գրում է.

Չնայած այն պարագային, որ ադրբեջանցիները խոսում են թրքերեն լեզվով, նրանք թուրքերի, պարսիկների և կովկասյան այլ ցեղերի խառնուրդ են: Ադրբեջանը դեռ զբաղված է հանրապետության տարածքում բնակվող թաթերի, թալիշների, քրդերի, ուղիների, դաղստանցիների (ավարների, լեզգիների և ցախուրների), Վրաստանի հարևան շրջաններում բնակվող ինգիլոյների պարտադիր ձուլումով¹¹⁸:

Մինչև իսկ 1934 թ. Մոսկվայում կայացած խորհրդային գրողների առաջին համամիութենական համագումարի ընթացքում ռուս գրող Ի. Կոլիկը, իր գե-

¹¹⁷ Kamala Imranli, compiler, *War Against Azerbaijan, Targeting Cultural Heritage*, Baku, 2008, էջ 7:

¹¹⁸ Ronald Wixman, *The Peoples of the USSR: An Ethnographic Handbook*, New York, 1984, էջ 17: Ուիքսմանի ուրիշ աշխատություններից են *Language Aspects of Ethnic Patterns and Processes in the North Caucasus*, 1980, և *Ethnic Nationalism in the Caucasus*, 1982:

կուցման մեջ խոսելով Խորհրդային Միության ազգերի փոխադարձ ճանաչման մասին, Ադրբեջանի ժողովրդին անվանում է «թուրքեր»¹¹⁹:

2009 թ. ապրիլին լույս տեսավ մեր աշխատությունը անգլերենով, որտեղ առկա են բազմաթիվ ղետարկումներ Ադրբեջանի Հանրապետության բնակիչներին «ադրբեջանցի», «թուրք», «թաթար» և այլ անվանումներ տալու կապակցությամբ¹²⁰: Մի քանի ամիս անց՝ 2009 թ. օգոստոսի 8-ին, Բաքվում հրատարակվող ռուսալեզու «Զերկալո» օրաթերթում լույս տեսավ Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն Ֆարիդ Ալեքբարլիի հոդվածը՝ «Ո՞վ ենք մենք, ումի՞ց ենք սերում և ո՞ւր ենք գնում» խորագրով, որտեղ նա քննարկում էր Ադրբեջանի բնակչության անվանման հարցերը ճիշտ այնպես, ինչպես դա արվել էր մեր վերոհիշյալ աշխատության մեջ: Խնդրի կապակցությամբ Ալեքբարլին գրում է.

Մինչև 1930-ական թթ. ստալինյան ռեֆորմները «ադրբեջանցի» անվանումը պարզապես գոյություն չի ունեցել, և նման անվանում չըջանին կցվել է Ստալինի կամքով, մինչդեռ 1918–1920 թթ. Ադրբեջանի ժողովրդավարական Հանրապետության և ապա Խորհրդային Ադրբեջանի ժողովրդի պաշտոնական անվանումն ընդհուպ մինչև 1936 թ. եղել է «թուրք»... Կորցնելով ազգային ինքնությունը՝ մենք ընկղմվեցինք վեճերի մեջ այն մասին, թե ով ենք մենք՝ չումերների, ազվանների, մեղացիների [մարերի], թե մեկ այլ ժողովրդի հետևորդները: Այդ հոգնեցուցիչ ու հիմար վեճերը վերջ չունեն և չեն էլ ունենա, քանի դեռ մենք չենք կանգնել իրական հարթակի վրա և չենք անդրադարձել, որ «ադրբեջանցի» արհեստական և անդեմ անվան տակ կոծկված են իրական էթնոսներ՝ հիմնականում թուրքեր, ինչպես նաև քրդեր, թալիշներ, թաթեր, լեզգիներ և այլն¹²¹:

Ալեքբարլիի այս հայտարարությունն ամբողջովին հակառակ է նրա նախորդներից ակադեմիկոս, Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի նախկին տնօրեն պրոֆ. Իդրար Ալիևի (1924–2004) կարծիքին: Ալիևն իր՝ 1989 թվականին հրատարակած «Ակնարկ Ատրոպատենի պատմության» աշխատության մեջ պնդում է, որ Ադրբեջանի Հանրապետության բնակչությունը թուրքական ծագում չունի, այլ սերում է մարերից ու

¹¹⁹ Первый всесоюзный съезд советских писателей. Стенографический отчет, Москва, 1934, էջ 43:

¹²⁰ Ռուբեն Գալսյան, Հորինված պատմություն. Ադրբեջան և Հայաստան, կեղծիքներ և փաստեր, Լոնդոն և Երևան, 2010, էջ 148–149:

¹²¹ Фарид Алекберли, "Кто мы, от кого произошли и куда идем?", Зеркало, Баку, 8 августа, 2009. Տես նաև Ռուբեն Գալսյան, Հորինված պատմություն. Ադրբեջան և Հայաստան, կեղծիքներ ու փաստեր, Լոնդոն և Երևան, 2010, էջ 161–162:

Պարսկաստանի Ատրպատական նահանգում բնակվող ցեղերից¹²²: Այս իրարամերժ կարծիքները փաստում են, որ ադրբեջանական էթնոսի ձևավորման և երկրի պատմութան հիմնախնդիրները դեռևս սկզբունքորեն լուծված չեն նույնիսկ ադրբեջանական ակադեմիական շրջանակներում:

Ադրբեջանի խորհրդային և ներկա շրջանի պատմագիտական աշխատանքների ճնշող մեծամասնությունն ուղղված է փաստելու, որ ներկա Ադրբեջանի Հանրապետությունը ժողովուրդը տեղաբնիկներ են ու սերված են աղվանական ցեղերից: Սակայն այս տեսությունը կարող է առաջացնել լուրջ քաղաքական և տնտեսական խնդիրներ, նաև տարածայնություններ Ադրբեջանի բարեկամ և զինակից Թուրքիայի հետ ունեցած փոխադարձ կապերի առնչությամբ, մի երկրի, որն Ադրբեջանն ու ադրբեջանցիներին ընկալում է որպես պանթուրքիզմի ակումբի անդամ և սերված թյուրքական ցեղերից¹²³: Ըստ էություն, Թուրքիան հետաքրքրություն և շահ չունի պաշտպանելու Ադրբեջանի և Աղվանքի պատմական կամ ազգագրական կապերը, այլ նախընտրում է նրա բնակիչներին դիտարկել որպես թյուրքական ծագում ունեցող ժողովուրդ: Ադրբեջանի համար Թուրքիայի նման կարևորագույն դաշնակցին կորցնելը հակառակ է իր շահերին, հատկապես տարածաշրջանի քաղաքական և ռազմավարական ասպարեզներում: Ահա այս պատճառով է, որ Ադրբեջանի իշխանությունները և մտավորականները կարիք են զգում նման խնդիրներն ինչ-որ ձևով կանխելու և լուծումներ գտնելու, իրենց երկրին ու ժողովրդին ներկայացնելու որպես Թուրքիային ցեղակից, բարեկամ և այդ հենքի վրա՝ պատմականորեն զինակից:

2007 թ. Բաքվում երեք տարբեր լեզուներով և առանձին գրքերով (անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն) հրատարակված «Արևմտյան Ադրբեջանի հուշարձանները» աշխատությունը հիմնականում պատրաստվել է ծառայելու թե՛ ադրբեջանցիներին օղուղ թուրքերին կապելու և թե՛ հայկական մշակութային կոթողները յուրացնելու երկակի նպատակով: Գիրքը ժամանակին ուղարկվել է Ամերիկայի և Եվրոպայի տարբեր գրադարաններ, համալսարաններ ու քաղաքական կառույցներ, ինչպես նաև երկու տարի շարունակ Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքի գրքի միջազգային ցուցահանդեսի ընթացքում բաժանվել է բոլոր այցելուներին, սակայն այն նախատեսված չէ վաճառքի համար: Գրքի առաջին էջի վրա պատկերված է ներկա Հայաստանի Հանրապետության քարտեզը, և ներքևում տրված է հետևյալ բացատրությունը.

¹²² Иггар Алиев, *Очерк истории Атропатены*, Баку, 1989, էջ 25–30: Տե՛ս նաև նույնը՝ պարսկերեն թարգմանությամբ, Յուսուֆ Շադմանի, խմբագիր՝ Ֆերեյդուն Ջոնեյդի, Թեհրան, 1999, էջ 59–73:

¹²³ Jacob Landau, *Pan-Turkism. From Irredentism to Cooperation*, London, 1995, էջ 7, 14–18:

Արևմտյան Ադրբեջանի քարտեզը (այսօրվա Հայաստանի Հանրապետությունը) թուրքերի և օղուզների պատմական հայրենիքը¹²⁴:

Այս կերպ հեղինակը ցանկացել է ցուցել, որ իրենք սերում են թյուրքական օղուզ ցեղից, որն իբր դարեր շարունակ եղել է Փոքր Ասիայի բնիկ ժողովուրդը՝ նպատակ ունենալով այդպիսով իրենց «ազգակցական» կապերն ամրացնել թուրքիայի հետ: Սա մեկ բացատրություն ունի. քանի որ ադրբեջանցիները չեն ցանկանում դուրս մնալ Կովկասի բնիկ ժողովուրդների ցանկից, ապա իրենց նախահայրերին՝ օղուզներին են «բերում» Կովկաս և աշխատում հաստատել որպես տարածաշրջանի բնիկ ազգություն, ինչը լավագույնս կծառայի իրենց նպատակին: Այս կերպ, փաստորեն առանց կտրվելու կովկասյան տարածքից, նրանք ձեռք են բերում հնարավորություն՝ պնդելու, որ իրենք սերված են թե՛ օղուզներից և թե՛ աղվանական ցեղերից:

Այդ նույն նպատակին է ծառայում նույն 2007 թ. Բաքվում լույս տեսած մեկ այլ գիրք՝ Նարիման Ղուրբանովի «Ադրբեջանն ու թուրքիան: Մեկ ժողովուրդ, երկու պետություն» վերնագրով, որում ներկայացրած տեսությունն արդեն իսկ պարզ է դառնում աշխատության անվանումից¹²⁵: Սա մի կարգախոս է, որն Ադրբեջանը հաճախ օգտագործում է, երբ թուրքիայի զինակցության և օժանդակության կարիքն է զգում:

Թյուրքական ցեղերի՝ Փոքր Ասիայի հնագույն բնիկներ լինելու տեսությունը նույնպես հոգեհարազատ է թուրքիայի ներկա իշխանություններին և պատմագիտությունը, քանի որ իրենք էլ նույնն են պնդում ու աշխատում փաստել այս հորինված առասպելը¹²⁶: Սա մի ասպարեզ է, որտեղ թուրքիայի և Ադրբեջանի Հանրապետության տարած քարոզչական աշխատանքներն ամբողջովին համընկնում են: Թուրքիայի դպրոցական պատմության ատլասներում, ինչպես նաև Ադրբեջանի Հանրապետությունում, ուրարտական շրջանից մինչև 1918 թվականը ներկայացնող քարտեզներից ընդհանրապես հանված է «Հայաստան» անունը, իսկ «Ադրբեջան» անվանումն ընդգրկում է Կովկասի հարավային տարածքի մեծ մասը, ներառյալ ներկա Հայաստանի Հանրապետության և Պարսկաստանի Ատրպատականի տարածքը և դեռ ավելին¹²⁷:

Այսպիսով՝ հարկ եղած դեպքում մեր հարևան հանրապետությունը երբեմն հայտարարում է, որ իրենց նախնիները քրիստոնյա աղվաններն են, իսկ այլ դեպքերում, երբ և եթե դրա կարիքն զգացվում է, հրապարակում է մեկ այլ հայտարարություն՝ ասելով, թե իրենք թյուրքական օղուզ ցեղից են սերված, որոնք

¹²⁴ Aziz Alakbarli, *Les Monuments d'Azerbaïjan Ouest* (Արևմտյան Ադրբեջանի հուշարձանները), Baku, 2007, էջ 7:

¹²⁵ Նարիման Ղուրբանով, նշվ. աշխ.:

¹²⁶ Հարցի շուրջ մանրամասն տես թուրք բանասեր և քաղաքական գործիչ Զիյա Գյոքալպի (1876–1924) աշխատությունները: Օրինակ՝ *Ziya Gökalp, Türk Medeniyeti Tarihi* (1925) (Թուրքիայի քաղաքակրթության պատմությունը) աշխատությունը:

¹²⁷ *Özetli Tarih Atlası*, Baki, 1986: Sfin İsmail Faik Reşit Unat, *Tarih Atlası*, İstanbul, 1999:

իրբ տեղի բնիկ ժողովուրդն են: Նրանք անտեսում են այն փաստը, որ առաջին թյուրքական ցեղերը Կենտրոնական Ասիայից գաղթել ու թափանցել էին Կովկասի տարածաշրջան միայն 9–11–րդ դարերի ընթացքում, սակայն նրանք շարունակաբար պնդում են իրենց հնամյա ու մշտական ներկայությունը Կովկասյան լեռներից հարավ ընկած տարածաշրջանում¹²⁸:

Ինչպես արդեն նշվել է, աղվանական ցեղերից սերված լինելու տարբերակը մեջտեղ է բերվում պարզապես այն նպատակով, որ հայերին Կովկասի հարավային տարածաշրջանի պատմությունից «արտաքսելով»՝ ազրբեջանցիներն իբրև ժառանգներ ձգտում են տիրանալու իրենց պետության տարածքում դեռևս կանգուն մնացած հայկական քրիստոնեական մշակութային կոթողներին ու հուշարձաններին: Այս հորինվածքը հավաստի դարձնելու համար նրանք նույնիսկ աղվաններին շատ հաճախ անվանում են «ազրբեջանցիներ»¹²⁹:

Մինչդեռ ներկա Ազրբեջանի Հանրապետության ժողովուրդը պատմականորեն ձևավորվել է տարածաշրջանով անցած բոլոր ասպատակողներից ու ժամանակավոր իշխողներից, բոլոր ազգերից և ցեղախմբերից, որոնց մեջ են նաև աղվանները, պարսիկները, Ատրպատականի ազերիները, սելջուկները, մոնղոլները և Կենտրոնական Ասիայից այստեղ հասած, ինչպես նաև տեղում բնակվող հնագույն և բազմաթիվ այլ ցեղախմբեր: Այս տեսությունն են առաջադրում շատ իրատես պատմաբաններ ու ազգագրագետներ, որոնք խնդրին մոտենում են առանց քաղաքական ու դիվանագիտական խանգարող և իրականությունը կոծկող նկատառումների¹³⁰: Նույնիսկ Ստրաբոնը մեր թվարկության սկզբում Աղվանքի մասին գրելիս նշում է, որ այս շրջանի ժողովուրդը բաղկացած էր 26 ցեղերից, որոնք խոսում էին տարբեր լեզուներով¹³¹: Նույնը գրում են նաև շատ այլ պատմիչներ և պատմաբաններ, ինչպես, օրինակ՝ Պլինիոսը, Տիրբուրեցի Զերվազը, Ռանուլֆ Հիգգենը և ուրիշներ:

Ազրբեջանի ժողովրդի ձևավորման պատմական իրականությունը չընդունելու հավանական պատճառը կարող է լինել այն, որ ցեղային և մշակութային տարբեր ժողովուրդներից ձևավորելու պարագան ընդունելու դեպքում ազրբեջանական ազգային, հնագույն և հատկապես ուրույն պատմություն ունենալը կբացառվի, և նրանք պարտավորված կլինեն ընդունելու, որ ներկա «ազրբեջանական» կոչվող մշակույթը պատկանում է այսօր տեղում բնակվող ժողովրդի բազադրիչ բոլոր այլ ազգությունների նախահայրերին: Նման դեպքում տարբեր մշակույթների այսպիսի մի համախմբումն անհնար է կոչել «դարեր շարունակ գոյատևող յուրահատուկ և ուրույն ազրբեջանական մշակույթ», որն

¹²⁸ Imranli, նշվ. աշխ., էջ 8–19 և բազմաթիվ այլ աշխատություններ:

¹²⁹ Зия Буниятов, редактор, *Историческая география Азербайджана*, Баку, 1987, էջ 88, 93 և այլուր:

¹³⁰ Nicholas Awde & Fred James Hill, ed., *The Azerbaijanis*, London, 2009, էջ 11:

¹³¹ Strabo, *Geography*, trans. H.L. Jones, Loeb Classical Library series, London, 1928–2000, Գլուխ 11.4.6:

Ադրբեջանի իշխանավորների բուն և ազգային մոլուցք դարձած նպատակն է: Ադրբեջանին «հնագույն երկիր» և նրա մշակույթը «ադրբեջանական հնագույն մշակույթ» կոչելը նման է նրան, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներն իրենք իրենց հռչակեն «Հյուսիսային Ամերիկայի հազարամյա պատմություն ունեցող մի երկիր», իսկ իրենց ներկա մշակույթը՝ «այդ հնամյա երկրի՝ դարերից եկած մշակութային ժառանգությունը»:

Վերոբերյալ մոտեցումները քննարկելով՝ գալիս ենք այն եզրակացություն, որ ադրբեջանցի պատմաբանների ու հետազոտողների դիտանկյունից երկրի ժողովրդի էթնիկական ձևավորման պատմության ու ծագման հարցը դառնում է ճկուն ու փոփոխական տեսություն, որի կարգադրիչ գործոններն ու ուղեցույցներն են քաղաքական նկատառումներն ու իշխող վերնախավի կամայական, հիմնադուրկ որոշումները:

* * * *

Ըստ պարսիկ և ատրպատականցի պատմաբանների ու լեզվաբանների՝ պարսկական Ադրբեջանում՝ Ատրպատականում, մինչև միջին դարերը խոսակցական լեզուն և նրա բարբառները կոչվում էին ընդհանուր «ագերի» կամ «ադրբեջաներեն» անունով և ոչ թե «թրքերեն»: Սրանք իրանական պահլավերենի հնագույն բարբառների մի քանի տարբերակներ էին, որոնք այժմ համարյա թե գործածական չեն ու մոռացված են: Սա հաստատում է լեզվաբան և իրանական լեզուների մասնագետ Վալտեր Հեննինգը (1908–1967) իր «Ադրբեջանի հնագույն լեզուն» աշխատության մեջ¹³²:

Արաբ պատմիչ և աշխարհագրագետ Իբն Հաուքալը 978 թ. շարադրած իր «Սուրա'թ ուլ-Ա'րդ (Երկրի պատկերը)» աշխատության մեջ նշում է.

Ադրբեջանի և Հայաստանի որոշ շրջանների լեզուն պարսկերենն է, բայց շատերը գիտեն նաև արաբերեն... Հայաստանի տարբեր շրջաններում, այդ թվում՝ Նախիջևանում և Դվինում, խոսում են հայերենին նման լեզվով [հայերեն բարբառներով]: Խլաթում [Հայաստանի քաղաքներից] խոսվում է երեք լեզվով՝ արաբերեն, հայերեն և պարսկերեն¹³³:

Իրանական ծագում ունեցող, բայց արաբ համարվող այս աշխարհագրագետ գիտնականն իր աշխատություններում թրքերենի մասին բնավ չի հիշատակում, քանի որ այդ լեզուն դեռ մոլտք չէր գործել տարածաշրջան:

¹³² Walter Bruno Henning, “The Ancient Language of Azerbaijan”, *Transaction of the Philological Society*, 1954, Oxford, 1955, էջ 157–177:

¹³³ Իբն Հաուքալ, նշվ. աշխ., էջ 96:

Սիրիացի արաբ պատմիչ Յաղութ ալ-Հա՛մա՛վի ալ-Բա՛ղդադին (1179–1229) իր հանրահայտ «Մուջա՛մ ուլ-Բուլդան (Երկրների բառարան)» աշխատության մեջ բացատրություններ է տալիս աշխարհի հազարավոր քաղաքների ու շրջանների մասին: Իրանի Ադրբեջան նահանգում խոսվող լեզվի մասին նա գրում է.

Այս երկիրն ունի հրաշալի օդ և ջուր, մարդիկ գեղեցիկ են, սպիտակամորթ ու կարմրադեմ, նուրբ մաշկով: Ազերի անունով մի լեզու ունեն, որն իրենցից բացի ոչ ոք չի հասկանում¹³⁴:

Պարսիկ պատմիչ և աշխարհագրագետ Հա՛մդուլլահ Մոսթուֆի Ղա՛զվինին (1241–1349) իր «Նուզհա՛թ ուլ-Ղուլուբ (Սրտի երջանկություն)» աշխատության մեջ առանձին բացատրություններ է տալիս նահանգների, ժողովուրդների ու նրանց սովորությունների վերաբերյալ: Ատրպատականի Մարաղա քաղաքին նվիրված հատվածում նա գրում է.

Տեղացիները սպիտակամորթ են, պատկանում են մի ուղղափառ իսլամական կրոնի և խոսում են պահլավերեն լեզվի մի տարբերակով¹³⁵:

Իսկ պարսիկ լեզվաբան Աբդուլա՛լի Քարա՛նգն իր «Թաթերեն և հարգանքներն. հնագույն Ադրբեջանի լեզվի երկու բարբառներ» աշխատության մեջ նշում է, որ նախկինում Ադրբեջանի խոսակցական այս լեզուն կոչվում էր «ազերի»¹³⁶: Ապա նրանց համեմատելով Նոր Ջուղայի հայերի հետ, որոնք դեռևս պահպանել են իրենց նախնիների հայոց լեզուն, հայտարարում է.

Քանի որ հայերենը գրավոր և զարգացած լեզու է, ապա իր հրատարակությունների և գրականության շնորհիվ շարունակում է մնալ կենդանի և գործածական, իսկ Ատրպատականի նախկին հնագույն բարբառները, որոնք միասնաբար «ազերի» անվանումն ունեին և պատկանում էին արիական լեզուների ընտանիքին, չունենալով գիտական ու գրական հիմք ու գրականություն, շատ ուրիշ բարբառների նման աստիճանաբար փոփոխությունների ենթարկվելով՝ վերջապես մոռացվեցին ու անցան մեռած լեզուների շարքին¹³⁷:

¹³⁴ Յաղութ ալ-Համա՛վի, *Մուջա՛մ ուլ-Բուլդան*, թարգմանությունը՝ Դր Ա. Մոնգավիի, Թեհրան, 2001, Հատոր 1, Առաջին մաս, էջ 160, պարսկերեն:

¹³⁵ Համդուլլահ Մոսթուֆի Ղա՛զվինի, *Նուզհա՛թ ուլ-Ղուլուբ*: Թարգմանությունը՝ Դր. Դաբիր Սիադիի, Թեհրան, 2002, էջ 135, պարսկերեն:

¹³⁶ Աբդուլա՛լի Քարան՛գ, *Թաթերեն և հարգանքներն. հնագույն Ադրբեջանի լեզվի երկու բարբառներ*, Թավրիզ, 1954, էջ 10, պարսկերեն:

¹³⁷ Անդ, էջ 24:

Ատրպատականի հնամյա այս լեզուն, որն արևմտյան լեզվաբաններն ու պատմաբանները նույնպես «ագերի» են կոչում, համարվում էր մարերի վաղ միջնադարյան արիական արմատներ ունեցող լեզվի փոփոխված և զարգացած տարբերակը: Բուն ագերի լեզվի բարբառներից մի քանիսը դեռևս գործածվում են Ատրպատականի մի քանի գյուղերում ու շրջաններում: Ատրպատականի Քա՛րինգան, Արգին, Քիլասուր, Մա՛րգա՛ր, Դիզմար և այլ գյուղերում, որոնք գտնվում են Թավրիզից հյուսիս՝ դեպի Արաքս ընկած տարածաշրջանում, խոսում են թաթերեն, իսկ դրանցից դեպի արևմուտք գտնվող Գելին-Ղիյե գյուղում՝ հարգանի բարբառով: Սրանք երկուսն էլ հին ագերի լեզվի ենթաճյուղերից են¹³⁸:

Աշխարհահռչակ արևելագետ Վլադիմիր Մինորսկին (1877–1966) իր «Կովկասյան պատմության ուսումնասիրություններ» աշխատության մեջ թարգմանել և քննարկել է 16-րդ դարի օսմանցի պատմիչ Մյունա՛ջջիմ-բաշիի «Շիրվանի և Դերբենդի պատմությունը» մեծածավալ աշխատության 10–11-րդ դարերի՝ շաղաղյաններին վերաբերող հատվածը: Այստեղ նա նշում է.

9–10-րդ դարերի արաբական արշավանքների ընթացքում [Իրանի] Ատրպատականի բնիկ ժողովուրդը կազմված էր գյուղացիական զանգվածներից, որոնց արաբները տվել էին «ուլուջ» նվաստացուցիչ մականունը, որը նման է քրիստոնյաներին տրված օսմանական «ռա՛յա» [հայատակ] անվանմանը: Գյուղաբնակ այս ժողովրդի միակ զենքը պարսատիկն էր (տե՛ս «Թարիխե Թաբարի», III, 1379–1389): Սրանք խոսում էին մի քանի (ագերի և թալիշի) բարբառներով, որոնց մնացորդները դեռ առկա են որոշ կղզիացած թրքախոս համայնքներում¹³⁹:

Ամերիկացի լեզվաբան և համաշխարհային համբավ ունեցող իրանագետներ, Հարվարդի համալսարանի պրոֆեսորներ Ռիչարդ Ֆրայը և Պատրիկ Ջեքսոնը նույնպես հաստատում են, որ բուն ագերի լեզուն իրանական լեզվի բարբառներից է եղել¹⁴⁰: Մեր օրերում նույն նյութի վերաբերյալ հոգված ունի նաև ԵՊՀ իրանագիտության կենտրոնի ղեկավար պրոֆ. Գառնիկ Ասատրյանը, որտեղ նա քննարկել է իրանական Ադրբեջանի հնագույն և այսօր մեռած համարվող լեզուն¹⁴¹:

¹³⁸ Անդ, էջ 25 և 27–35:

¹³⁹ Vladimir Minorsky, *Studies in Caucasian History*, Cambridge, 1957, էջ 112:

¹⁴⁰ *The Cambridge History of Iran, Volume 6 of 8*, Peter Jackson, ed., Cambridge, 1986, էջ 950:

¹⁴¹ Гарник Асатрян, “Заметки об Азари – исчезнувшем языке Азербайджана”, *К освещению проблем истории культуры Албании и Восточных Провинций Армении*, Том 1, Ереван, 1991, էջ 484–492:

«Հարավային» և «Հյուսիսային» Ադրբեջաններ տեսութայան համախոհներ Նիքոլաս Առդը և Ֆրեդ Ջեյմզ Հիլը իրենց խմբագրած «Ադրբեջանցիները» աշխատութայան մեջ, որը լույս է տեսել «Ժողովուրդներ, մշակույթ և պատմություն» մատենաշարով, գրում են.

Ադրբեջանի մշտափոփոխ անցյալին ավելանում է նաև այն պարագան, որ անհամար քոչվոր ցեղեր և ռազմատենչ ցեղախմբեր իրենց տեղափոխութայան համար օգտվում էին Հյուսիսային տափաստաններից Կասպից ծովի արևմտյան ափերով դեպի Պարսկաստան ձգվող ճանապարհներից: Նման անցյալ ունենալն անդրադարձել է ներկա Ադրբեջանի Հանրապետութայան բնակչութայան վրա, որոնք իրենք էլ սերված են տարածաշրջանում ժամանակին բնակված թյուրքական, պարսկական, կովկասյան և այլ ժողովուրդներից¹⁴²:

Լայդենի համալսարանի պատմաբան, ծագումով պարսիկ թուրա՛ջ Ա՛թաբա՛քին, իր «Ադրբեջան. էթնոսն ու իշխանութայան պայքարն Իրանում» աշխատութայան մեջ, հղումներ անելով տարբեր աղբյուրների, գրում է.

Թուրքերենն Ատրպատական հասավ 11-րդ դարում, երբ մեծ թվով օղուզներ սկսեցին քոչել Փոքր Ասիա: Օղուզ թուրքերի առաջատար խումբը պատկանում էր այսպես կոչված «Իրաքի թուրքմեններ» ցեղախմբին, որոնց Պարսկաստանի Ղա՛զնա՛վի թագավորները հալածեցին ու քչեցին Խորասանից: Սրանց առաջնորդ Արսալան բին-Սելջուկը բանտարկվեց և բանտում մահացավ 1034 թ.: Օղուզների առաջին խումբը 2000 վրանով Ատրպատական հասավ 1029 թվականին, որոնց ընդունեց տեղի տիրակալ Վահսուտանը՝ նորեկներին օգտագործելով իր թշնամիների դեմ և նրանց միջոցով գրավելով Արճեջը¹⁴³:

Նորեկ օղուզների բերած լեզուն հարավարևմտյան թյուրքական լեզվախմբի մասին նա գրում է.

Այս լեզուն էլ իր հերթին որոշ չափով ազդվեց նախքան թյուրքական նվաճումներն այստեղ գործածվող լեզվից, բայց նորեկ լեզուն, լինելով իշխող դասի առօրյա գործածականը, աստիճանաբար փոխարինեց տեղական լեզվին¹⁴⁴:

¹⁴² Nicholas Awde & Fred James Hill, ed., *The Azerbaijanis*, London, 2009, էջ 11:

¹⁴³ Atabaki, նշվ. աշխ., էջ 9: Sînu ûşu Richard. Frye, ed., *The Cambridge History of Iran*. Volume 4, Cambridge, 1975, էջ 238:

¹⁴⁴ Atabaki, նշվ. աշխ., էջ 9–10:

Ըստ Իրանի Թավրիզ քաղաքում ծնված ատրպատականցի պատմաբան ու լեզվաբան Ա՛հմա՛դ Քա՛սրա՛վիի (1890–1946).

Ատրպատականում թրքերենն արմատավորվելով ազերի լեզվին տեղահան էր արել նախքան Սեֆյանների թագավորության հաստատումը: Դրա ապացույցն իրենք Սեֆյաններն են, քանի որ նրանք, լինելով բնիկ ատրպատականցի, արդեն գործածում էին ոչ թե ազերի, այլ թրքերեն, միակ բացառությունը գերդաստանի ղեկավար Շեյխ Սեֆին էր, որից ունենք հին ազերի լեզվով գրի առնված երկտող բանաստեղծություններ: Բայց երբ հասնում ենք Սեֆյանների թագավորության հիմնադիր Շահ Իսմայիլին, նրանց լեզուն արդեն թրքերենն էր ...¹⁴⁵

Վերոհիշյալ նյութին հանգամանորեն անդրադարձել է նաև պարսիկ պատմաբան Ռոդրիյե Բեհզադին կովկասյան ցեղերի և նրանց պատմության վերաբերյալ շարադրած իր վերջին աշխատության մեջ¹⁴⁶: Նույնը նաև հաստատում է «Քեմբրիջի Իրանի պատմությունը» հանրահայտ ութհատորյակը, որի վեցերորդ հատորն անդրադառնում է Թիմուրյանների և Սեֆյանների շրջանի (1335–1736) պատմությանը, լեզվին ու մշակույթին¹⁴⁷:

Պարսիկ պատմաբան ու լեզվաբան պրոֆ. Էնայա՛թ Ուլլա՛հ Ռեզան (1920–2010) Ադրբեջանի և Ադվանքի հնագույն լեզուների ու կրոնների վերաբերյալ ունի ծավալուն աշխատություն, որտեղ նա էլ իր հերթին մանրամասնորեն քննարկում է այս տարածաշրջաններում գործածված տարբեր տեղական լեզուները և հանգում վերը բերված եզրակացությունը¹⁴⁸:

Վերոնշյալ բուն պատճառներով էր, որ Ատրպատականի բնիկների հինավուրց «ազերի» լեզուն՝ սկսած սելջուկյան արշավանքներից, աստիճանաբար անհետացել ու գործածությունից դուրս է մղվել՝ տեղը զիջելով թյուրքական նորեկ ցեղերի լեզվին, որոնք, գրավելով Պարսկաստանի այս շրջանը, հաստատեցին թյուրքական նոր իշխանություններ:

Պարսիկ մտավորականներն ու պատմաբանները ազերի և թրքերեն լեզուների, ինչպես նաև Ադվանքի ու Ադրբեջանի վերաբերյալ վերջերս մեծ թվով աշխատություններ են հրատարակել Իրանում և այլուր, բայց քանի որ սրանք հիմնականում պարսկերեն են, դրանց համար միջազգային շուկա դուրս գալը

¹⁴⁵ Ահմադ Քասրավի, Քասրավիի երկերը. 78 հոդվածների և դասախոսությունների ժողովածու, «Ազարի կամ Ատրպատականի հինավուրց լեզուն», Թեհրան, Քեթաբխայե ջիբի, 1973, էջ 333, պարսկերեն:

¹⁴⁶ Ռոդրիյե Բեհզադի, Հնագույն ցեղերը Կովկասում, Անդրկովկասում, Միջագետքում և Բերրի Կիսալունի տարածքում, Թեհրան, 2005, էջ 116–118, պարսկերեն:

¹⁴⁷ The Cambridge History of Iran. Volume 6, նշվ. աշխ., էջ 951–954:

¹⁴⁸ Էնայաթուլլահ Ռեզա, Ադվանքը հնագույն ժամանակներից մինչև մոնղոլների շրջանը, Թեհրան, 2003, էջ 179–274, պարսկերեն:

կամ Եվրոպայի ու Ամերիկայի գիտական շրջանակներում տարածվելը բավականին դժվար է: Աշխատութեան ներկա գլխում նշված աշխատութուններից զատ, վերջին տասնամյակներում հրատարակվել են նաև մի շարք կարևոր պատմական և լեզվաբանական ուսումնասիրութուններ, որոնք մեծ մասամբ պարսկերեն են (բացառութեամբ մի քանիսի) և լույս են տեսել հիմնականում Իրանում¹⁴⁹:

Մոնղոլներին հետևող թյուրքական տարբեր ցեղեր, Ատրպատական հասնելով, մի քանի դար շարունակ շրջանի տերերն ու տիրակալները դարձան: Այս նորեկների տիրակալութեան ժամանակ էր, որ թրքերենը հաստատվեց ու դարձավ շրջանի գործածական ու ներկայում «բնիկ» հորջորջվող լեզուն: Այսինքն՝ այսօր «ազերի» կոչվող լեզուն ներկա Իրանի Ատրպատականի լեզուն է, այլ ամբողջովին մեկ ուրիշը, որն իր տեղը գիշել է թրքերենին, ու ինքն ամբողջովին մոռացութեան էր տրվել, իսկ ներկայիս Ադրբեջանում գործածվող թյուրքական լեզուն սխալմամբ կոչվում է «ազերի»: Սա Կենտրոնական Ասիայից բերված թրքական լեզուն է, որը, ազերի և պարսկերեն լեզուներից ազդված, ներկայումս Ատրպատականում, ինչպես նաև Ադրբեջանի Հանրապետութեան տարածքում օգտագործվում է որպես խոսակցական լեզու: Հին «ազերի» լեզվից մնացել է միայն անունը, այն էլ, կորցնելով իր նշանակութունը, մեծ մասամբ գործածվում է իրեն փոխարինող, բայց ամբողջովին օտար լեզվի՝ «թրքերենի» համար:

Արդի գենետիկ հետազոտութունները նոր բացահայտումներ են կատարել, որոնք, մեր կարծիքով, պարզաբանումներ են մտցնում այս ուղղութեամբ ևս: Իրանի Ատրպատականի շրջանի թրքախոս համայնքներից նմուշներ վերցնելով՝ գիտնականները եկել են այն եզրակացութեան, որ այդ ժողովրդի միայն ու թողուսը գենետիկ կապ ունի թուրքական ցեղերի հետ՝ այդ կերպ եզրակացնելով:

Այս շրջանում թուրքերեն լեզվի հարկադրված գործածութունը արդյունքն է իշխողների, այսինքն՝ սակավաթիվ գավթիչների գերակշռութեան, որոնք շրջանի ներկա բնակչութեան մեջ թողել են միայն չնչին հայրական գենետիկ հետքեր¹⁵⁰:

¹⁴⁹ Էնայաթոլլահ Ռեզա, նշվ. աշխ.: Տեն նաև հետևյալները. Դր. Փարվիզ Վարջավանդ, *Իրանն ու Կովկասը, Արանն ու Շիրվանը*, Թեհրան, 1999: Ռոդոլֆ Բեհզադ, *Հնագույն ցեղերը Կովկասում, Անդրկովկասում, Միջագետքում և Բերրի Կիսալունսի տարածքում*, Թեհրան, 2005: Արբասալի Զավադի, *Ադրբեջանն ու նրա լեզուն, ազերի-թրքերեն խնդիրն Իրանում*, ԱՄՆ, 1989: Ահմադ Խալիլովլահ Մոհամմադ, *Որտեղ է իրական Ադրբեջանը, և որտեղ են Ազերի լեզուն ու պատմությունը*, Բոնն, 2008: Դր Էնայաթոլլահ Ռեզա, *Արանն ու Ադրբեջանը (Կովկասյան Արանիան)*, Թեհրան, 1981, վերահրատարակվել է 8 անգամ (այս մեկը թարգմանվել է հայերեն և ռուսերեն):

¹⁵⁰ L. Andonian, S. Rezaie et al, “Iranian Azeri Y-Chromosomal Diversity in the Context of Turkish-Speaking Population of the Middle-East”, *Iranian Journal of Public Health* (2011/1), էջ 119–127:

19-րդ դարի կեսերին Շիրվանի մտավորականներն անդրադարձան այն հարցին, որ իրենց թրքերենը առանց գրի և գրականության չի կարող հարատևել, այդ իսկ պատճառով էլ դարի կեսերին Միրզա Քյա՛զիմբեկը հնարեց թրքերենին հարմար մի արաբատառ այբուբեն, որը սկսեց կիրառվել դպրոցներում: Իսկ Միրզա Ֆա՛թհա՛լի Ախունդովը (1812–1878) 1870-ական թվականներին Ադրբեջանի թրքերենով գրեց առաջին գրական երկերը՝ մի քանի թատերգություններ¹⁵¹:

Գալով աղվանական գրին ու գրականությանը, ըստ Մաշտոցի վարքագիր Կորյունի, հայկական տառերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցը հինգերորդ դարում Աղվանքի բնակիչների համար ևս ստեղծել է 52 տառ ունեցող մի այբուբեն¹⁵²: Այս այբուբենից մեզ են հասել միայն մի քանի պատառիկներ: Սրանք հիմնականում քարերի վրա եղած փորագրություններ են, որոնց 1996 թ. ավելացան Սինա լեռան մենաստանում գտնված երկու կրկնագիր-ձեռագիր մագաղաթները: Դրանց վրայի աղվաներեն գրությունը ջնջվել է, ու մագաղաթը վերագործածվել է վրացերեն ձեռագրի համար¹⁵³: Սակայն մի քանի արձանագրություն ու մի քանի էջ կրկնագիր-ձեռագիրը բավարար փաստեր չեն կարող լինել «ուրույն և հարուստ» աղվանական գրավոր մշակույթի առկայությունը փաստելու համար, ինչի մասին գրում է ադրբեջանցի պատմաբան Ֆարիդա Մամեդովան: Բացի այդ՝ կրկնագիր-ձեռագրի տեքստը թարգմանելու համար գիտաչխատողներն օգտվել են այսօրվա ուղիների լեզվից, սակայն նույն տեքստի բնագիրը նրանք անվանում են «աղվաներեն»: Ինչպե՞ս բացատրել այս հակասությունը¹⁵⁴:

Ֆարիդա Մամեդովան իր «Կովկասյան Աղվանքի քաղաքական և պատմական աշխարհագրությունը» աշխատության նախաբանում և անգլերեն համառոտագրում նշում է, որ իր ուսումնասիրությունների համար ինքն օգտագործել է աղվանական, հայկական և վրացական աղբյուրներ¹⁵⁵: Վերոհիշյալ աշխատանքը փոքրածավալ մի գրքույկ է, բայց ունի «օգտագործված գրականության» 466 անուն պարունակող տպավորիչ մի ցանկ: Ըստ հեղինակի՝ այս ցանկը պետք է ներառի իր նշած կարևոր «աղվանական» աղբյուրները: Մանրակրկիտ քննությունը պարզում է, որ ցանկի 466 անուն գրականությունը բաղկացած է հետևյալ աղբյուրներից.

¹⁵¹ Tale Haydarov and Taleh Baghirov, նշվ. աշխ., էջ 103: Տևս նաև Victor Shnirelman, *The Value of the Past*, նշվ. աշխ. էջ 81–82:

¹⁵² Կորյուն, *Վարք Մաշտոցի*, Երևան, 1981, էջ 288–299:

¹⁵³ J. Gippert, W. Schulze, Z. Aleksidze, J.-P. Mahé (editors), *The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai*, Brepols, 2009.

¹⁵⁴ Հրանտշ Խառատյան, *Եղիշե Առաքյալի, Գրիգորիսի և Կովկասյան Աղվանքի քրիստոնեացման հարցի շուրջ*, Կովկասյան Աղվանքի հին կրկնագիր-ձեռագրի վերծանության հրատարակության առիթով, Անտիպ հոդված, 2011:

¹⁵⁵ Фарида Мамедова, *Политическая история и историческая география Кавказской Албании*, Баку, 1986, էջ 251:

- 160 անունն հայկական աղբյուրներ, ներառյալ Խորենացի, Շիրակացի ընդհուպ մինչև ներկա հայ պատմաբաններ:
- 105 անունն ռուսական աղբյուրներ, որոնց մեծ մասը խորհրդային շրջանին են պատկանում:
- 91 անունն ադրբեջանական աղբյուրներ, որոնք բոլորը խորհրդային շրջանի պատմաբանների աշխատանքներ են:
- 47 անունն վրացական աղբյուրներ:
- 33 անունն եվրոպական գրականություն:
- 21 անունն հին հունա-հռոմեական ու լատինական աղբյուրներ:
- 7 անունն կոմունիստական գրականություն՝ Մարքս, Լենին և այլն:
- 2 անունն արաբական և պարսկական աղբյուրների ռուսերեն թարգմանություն:

Այս բոլորի մեջ զարմանալիորեն բացակայում են «աղվանական» հորջորջվող աղբյուրները, որոնք առաջին հերթին նշում է գրքի հեղինակը¹⁵⁶: Ըստ էության դրանք իրականում գոյություն չունեցող երևակայական աղբյուրներ են: Ահա թե ինչ որակի «գիտական» աշխատություններ է հրատարակում Ադրբեջանի մեծահամբավ գիտաշխատողների զգալի մասը:

Ադրբեջանի պատմաբաններն ու լեզվաբանները աղվանական գրականություն բացակայությունն արդարացնում են՝ ասելով, թե հայերն ու արաբներն ամբողջովին ոչնչացրել են աղվաներեն վիճագրություններն ու գրականությունը, և ապա պնդում, որ հայերը աղվաններին պարտադրել են իրենց գրավոր լեզուն փոխել հայերենի¹⁵⁷: Մյուս կողմից՝ նույն պատմաբանները պնդում են, որ Ադրբեջանում և պատմական Աղվանքի տարածքում մինչև 19-րդ դարը հայեր չեն բնակվել, և նրանք տարածաշրջան են ներխուժել միայն 19-րդ դարում: Այստեղ էլ առաջանում է մեկ այլ առեղծված: Եթե միջին դարերում Աղվանքի տարածքում հայեր չկային, ապա ովքե՞ր էին աղվաններին պարտադրում մոռանալ իրենց լեզուն և խոսել ու գրել հայերեն:

Գալով Հայոց լեզվին՝ ադրբեջանցի ակադեմիկոս և ԳԱԱ պատմությունների ինստիտուտի նախկին տնօրեն Իզրար Ալիևը, իրեն թույլ տալով ներկայանալ նաև որպես լեզվաբան, հայտարարում է.

Ներկա Հարավային Ադրբեջանի տարածքում մեր թվարկություններից առաջ խոսակցական լեզուն մարերենն էր, որի բարբառները հին Հայոց լեզվի աղբյուրն են հանդիսանում¹⁵⁸:

¹⁵⁶ Անդ, օտագործված գրականության ցանկ:

¹⁵⁷ Dragadze, Azerbaijan, London, 2000, էջ 138. Տե՛ս նաև Imranli, նշվ. աշխ., էջ 18:

¹⁵⁸ Израр Алиев, Очерк истории Атропатены, Баку, 1989, էջ 53:

Առաջին հերթին Ալիևի այս տեսակետը հաստատում է, որ Ատրպատականում կամ, նրա ասելով, Հարավային Ադրբեջանում նախկինում խոսվել է մարական մի լեզվով, որն այսօրվա թրքերեն լեզունն է: Մյուս կողմից էլ Ալիևն այս պնդման համար հղում է կատարում Անահիտ Փերիխանյանի «Ձանգեզուրի արամեական արձանագրությունը» հոդվածին, որտեղ հեղինակը Ձանգեզուրում 1965 թ. գտնված արամեական 9-տողանոց տեքստը քննարկելիս նշում է, որ սա իրանական լեզվի հյուսիսարևմտյան մարական անհայտ մի բարբառով է, որի միջոցով ինքը հայտնաբերել է մարական փոխառությունների կարևոր մի շերտ հայերենում, պարթևերենում և պահլավերենում¹⁵⁹: Ահա դա հիմք ընդունելով՝ Ալիևը հայերենի հիմքը հայտարարում է մարական լեզուն ու նրա բարբառները: Եթե առաջնորդվենք ի. Ալիևի այս տեսությունամբ, ապա պահլավերենն ու պարսկերենն էլ պետք է մարական լեզուներ լինեն:

2.2. «Արևմտյան», «Հյուսիսային» և «Հարավային» Ադրբեջաններ հասկացությունները

Ադրբեջանի իշխանությունների ծրագրած քարոզչական նպատակներից մեկն էլ «փաստելն» է «Հյուսիսային» և «Հարավային» Ադրբեջաններ եզրերի և դրանց անունը կրող երկրամասերի առկայությունը, որն իբր ունի դարավոր անցյալ: Պարսկական Ադրբեջանի՝ Ատրպատականի և Ադրբեջանի Հանրապետության միացման վերջնական նպատակին ծառայող այս կեղծ անվանումները գործածվում են ավելի քան 50 տարի: Վերջին տարիներին Ադրբեջանի իշխանություններն այս նորաստեղծ եզրերն այնքան հաճախ և ամենուրեք են գործածում, որ տվյալ խնդիրներին անտեղյակ ընթերցողը սրանք կընկալի որպես պատմական իրողություն: Քարոզչական այս հնարքն արդեն ունեցել է իր արդյունքը, և ներկա Ադրբեջանի Հանրապետության հանրության համար սա արդեն ընդունված է որպես պատմական ճշմարտություն: Ադրբեջանցի որոշ պատմաբանների կարծիքով Ադրբեջանի հյուսիսային և հարավային մասերի բաժանումը կատարվեց 1813 և 1828 թթ., երբ, ըստ Գյուլիստանի և Թուրքմենչայի պայմանագրերի, Արաքսից հյուսիս ընկած իսանություններն անցան Ռուսաստանին, իսկ Ատրպատականը մնաց Պարսկաստանի կազմում՝ այդպիսով երկիրը բաժանելով երկու մասի¹⁶⁰: Մինչդեռ Ջիյա Բունիաթովի կարծիքով այս երկու եզրերն ունեն ոչ թե մոտ 180 տարվա, այլ ավելի քան 1400-ամյա պատմություն: Այս հարցի մասին նա գրում է.

¹⁵⁹ Анаит Периханян, “Арамейская надпись из Зангезура”, *Историко-филологический журнал*, Ереван, 1965, համար 4, էջ 107–128:

¹⁶⁰ Tamara Dragadze, ed., նշվ. աշխ., էջ 22: Sîu ûsul Tale Haydarov, նշվ. աշխ., էջ 26: Ինչպես նաև Nicholas Awde & Fred James Hill, ed., նշվ. աշխ., էջ 12:

Ըստ պատմական քարտեզների հավաքածուների՝ Ադրբեջան հասկացությունը իրավասու է կիրառել Հյուսիսային և Հարավային Ադրբեջանի տարածքների նկատմամբ սկսած մ.թ. 6-րդ դարից: Մ. թ. VI դարում Սասանյան արքա Խոսրով Անուշիրվանը ստեղծեց Կովկասյան [երկրների] խումբը (Կուստը), որը կոչվում էր Աբդուլբաբա-հան, համաձայն արաբ-պարսկական ավանդույթի՝ Ադրբեջան, որի մեջ, ի թիվս այլ երկրների, մտնում էին Հյուսիսային Ադրբեջանը՝ Աղվանքը, և Հարավային Ադրբեջանը՝ բուն Ատրպատականը: Համաձայն արաբական և պարսկական աղբյուրների՝ Խալիֆայության փուլից և հետագայում, այսինքն՝ VIII դարից, Ադրբեջան ասելով՝ հասկանում էին միաժամանակ և՛ Հյուսիսային, և՛ Հարավային Ադրբեջանները: Ադրբեջանը դառնում է կամ քաղաքավարչական, կամ աշխարհագրական, կամ էլ քաղաքական հասկացություն¹⁶¹:

Բունիաթովի գրքից մեջբերված այս պարբերության մեջ առկա են մի քանի կոպիտ սխալներ և միտումնավոր նենգափոխված ու որպես «փաստ» ներկայացվող հայտարարություններ:

1. 6-րդ դարից մեզ հասած իսլամական պատմական կամ աշխարհագրական գրականության որևէ նմուշ գոյություն չունի, քանի որ իսլամը որպես կրոն ձևավորվել է 7-րդ դարում: Հայտնի է, թե Բունիաթովն ու մյուսները որտեղից են «գտել» այս աղբյուրները, և նրանց վրա հիմնվելով, ներկայացրել նշված տեսությունը: Հնագույն իսլամական աշխարհագրության գիրքն ու քարտեզը մեզ են հասել 9-րդ դարի կեսերից, հետևաբար առաջին պարբերության մեջ Բունիաթովի նշած «քարտեզները» նույն իր՝ Բունիաթովի պատրաստած քարտեզներն են, որոնք իրենցից վավերական ոչ մի արժեք չեն ներկայացնում: Իսկ նույն ժամանակաշրջանի և միջնադարյան մյուս քարտեզներում Ադրբեջան անվանումն ընդհանրապես գոյություն չունի:
2. Երկրորդ պարբերության մեջ նա միտումնավոր աղավաղել է «Ատրոպատեն» կամ «Ատրպատական» անվանումը և գրել «Աբդուլբաբա-հան», մի անվանում, որը նրա վկայակոչած «արաբական աշխարհագրական աղբյուրներում» ընդհանրապես գոյություն չունի: Իսկ «Ատրոպատեն» անվանումը առկա է հնամենի ժամանակներից:
3. 9-րդ դարից և դրանից հետո մեզ հասած իսլամական պատմական և հատկապես աշխարհագրական գրականության մեջ, սկսած Բա՛լխիից ու Իսթա՛խրիից, Իբն Հաուաթա՛լից, ա՛լ-Մա՛սուդիից, Իբրիսիից մինչև

¹⁶¹ Зиа Буниятов, редактор, *Историческая география Азербайджана*, Баку, 1987, էջ 5: Ст'у ևսև Дж. Гулиев редактор, *История Азербайджана*, Баку, 1979, էջ 29 և այլն:

Ղա՛զվիների ու Իբն Սա՛իդը, բոլոր աշխատություններում ու քարտեզներում Արաքսից և Կուրից հյուսիս գտնվող տարածաշրջանն անվանված է Առան, այսինքն՝ Աղվանք, իսկ Արաքսից հարավ գտնվողը կոչված է Ադրբեջան: Միջնադարյան իսլամական աշխարհագրական և պատմական գրականության մեջ ոչ մի տեղ գոյություն չունի «Հարավային Ադրբեջան» կամ «Հյուսիսային Ադրբեջան» կամ էլ սրանց հիշեցնող որևէ նման անվանում (մանրամասն տե՛ս աշխատության հինգերորդ գլուխը):

4. Հիմք ընդունելով իր իսկ հորինվածքը՝ Բունիաթովն աշխատում է Ադրբեջանին տալ Դերբենդից մինչև Համադան ու Ղազվին տարածված քաղաքական-վարչական կամ աշխարհագրական մի տարածաշրջանի վավերականություն:

Անհնար է, որ Զ. Բունիաթովն անտեղյակ լիներ արաբական պատմական ու աշխարհագրական աղբյուրների մեջ շարադրված նյութերից ու դրանց ներկայացրած ժամանակաշրջանի իրականությունից, այդ իսկ պատճառով էլ այս պարզունակ և կոպիտ կեղծիքն աններելի է նրան՝ որպես գիտաշխատողի, ակադեմիկոսի և Ադրբեջանի ԳԱ փոխնախագահի: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ լոկ քաղաքական քարոզչություն՝ հիմնված կեղծիքների ու երևակայության վրա:

1986 թ. Զիյա Բունիաթովն ու Ֆարիդա Մամեդովան իրենց աշխատություններում նշում են, որ պատմական Աղվանքի տարածքը մ.թ.ա. 1-ին դարից մինչև մ.թ. 8-րդ դարը մնացել է համարյա անփոփոխ: Եվ որ այն ընդգրկում է ներկա Հայաստանի Հանրապետության համարյա ամբողջ տարածքը, այդ թվում՝ Սյունիքը, Սևանի ավազանը, Երևանը, Էջմիածինը, ինչպես նաև Նախիջևանը, Արցախը, Ուտիքը, Կապադակը, Շաքին, Կամբուսենան, Վրաստանի հարավային և Իրանի հյուսիսարևմտյան շրջանները¹⁶²: Ֆ. Մամեդովան Բաքվում 2001 թ. կայացած «Կովկասյան Աղվանքի էթնոմշակութային ժառանգությունը» գիտաժողովում կարդացած իր գեկուցման մեջ Աղվանքի սահմանների կայուն ժամանակաշրջանը 200 տարով ընդլայնում և դարձնում է սկսած մ.թ.ա. 3-րդ դարից մինչև մ.թ. 8-րդ դարը¹⁶³: Այս ամենը Մամեդովան «փաստում» է՝ հղում կատարելով իր պատրաստած անհիմն քարտեզներին:

Ակադեմիկոս Իդրար Ալիևն էլ իր հերթին «Հյուսիսային», «Հարավային» և «Արևմտյան» Ադրբեջանների մասին նշումներ է անում իր «Ակնարկ Ատրոպատենի պատմության» աշխատության մեջ՝ մի քանի տեղ գործածելով այս մտացածին անվանումները¹⁶⁴: Ալիևն աշխատում է փաստել, որ ներկա Ադրբեջանի

¹⁶² Фарида Мамедова, “О некоторых вопросах исторической географии Албании I в. до н. э. — VIII в.”, *Истпроческая география Азербайджана*. Ред. Зиа Бунятов, Баку, 1987, էջ 7–8: Sli’u ušli Victor Shnirelman, նշվ. աշխ., էջ 165–171:

¹⁶³ Фарида Мамедова, *Об исторической географии Кавказской Албании, Армении и албанском этносе*, Баку, 2001. Համալայրի հասցն www.bakililar.az/ca/photos/farida/html:

¹⁶⁴ Иггар Алиев, *Очерк истории Атропатены*, էջ 9, 42, 59:

Հանրապետության քաղաքացիները հնագույն մարերից ու Ատրպատականից են սերված: Հեղինակը նաև գրում է, որ ըստ արաբ հեղինակների՝ Հարավային Ադրբեջանում [Ատրպատականում] վաղ միջնադարում տարածված լեզուներից ու բարբառներից են ազերին, պահլավերենն ու պարսկերենը: Հաջորդող պարբերության մեջ էլ շարունակելով նենգափոխումները՝ գրում է. «Ըստ Մասուդիի, Հարավային Ադրբեջանի ժողովրդի լեզուն ազերին էր» նախադասության մեջ միտումնավոր ավելացնելով «Հարավային» որակավորումը, որը բացակայում է Մասուդիի բնագրում: Ի. Ալիևը Մասուդիի գրածը կեղծելով չի բավարարվում և շարունակում է՝ գրելով՝ «Նույն կարծիքի են նաև արաբ աշխարհագրագետներ Իբն Հա՛ուբալը, Յաղութն ու Բա՛լագորին»¹⁶⁵, որոնց աշխատությունների մեջ երբևիցե «Հարավային» կամ «Հյուսիսային» Ադրբեջան անվանումները գոյություն չեն ունեցել:

Կովկասի հարավն ու Պարսկաստանի հյուսիսարևմտյան շրջանը ցուցադրող իսլամական քարտեզագրության մի քանի նմուշներ ներկայացված են սույն աշխատության հավելվածի քարտեզներում: Սրանց բոլորի վրա հստակ կարելի է տեսնել իրականությունը, թե որն է Աղվանքը, որը՝ Ադրբեջանը: Իսկ ինչպես վերը նշվեց, իսլամական քարտեզագրության մեջ «Հարավային» ու «Հյուսիսային» Ադրբեջանների վերաբերյալ ընդհուպ մինչև 20-րդ դարը որևէ նշում իսկ գոյություն չունի:

Պետք է նկատել, որ արդեն իսկ արևմտյան պատմաբաններից ոմանք սկսել են ադրբեջանական հորինված անվանումներն օգտագործել՝ օգտվելով ու հղումներ կատարելով կեղծ անվանումների հեղինակների, օրինակ՝ Զիյա Բունիաթովի աշխատություններին: Սրանցից մեկը վերը հիշված ամերիկուհի պատմաբան Օդրի Ալթշտատն է, որն իր «Ադրբեջանցի թուրքերը» գրքում «Հյուսիսային» և «Հարավային» Ադրբեջանների վերաբերյալ Զ. Բունիաթովից վերոնշյալ արաբ աղբյուրներին վերաբերող մեջբերումն է անում¹⁶⁶: Ցանկացած պատմաբան տեղյակ է, որ արաբական հնագույն աղբյուրները 9-րդ դարի առաջին կեսից են սկսում, և 6-8-րդ դարերից մեզ հասած արաբական պատմական որևէ տեքստ, գրավոր փաստաթուղթ գոյություն չունի:

Ամերիկուհի պատմաբանին ներելի չէ մանավանդ այն, որ իր աշխատությունը շարադրելու համար նա հիմնականում օգտվել է ադրբեջանական երկրորդական աղբյուրներից և մի քանի ռուսականներից, որոնք թարգմանություններ են և ոչ բուն աղբյուրներ, մինչդեռ հայտնի է, թե ադրբեջանցի ակադեմիկոսներն ու գիտնականները թարգմանություն ընթացքում ինչպիսի միտումնավոր բացթողումներ ու նենգափոխումներ են կատարում՝ տեքստերից հանելով Հայերին ու Հայաստանին վերաբերող անվանումները, նյութերը, երբեմն էլ՝ ամբողջական գլուխները¹⁶⁷:

¹⁶⁵ Անդ, էջ 27:

¹⁶⁶ Altstadt, նշվ. աշխ., էջ 3:

¹⁶⁷ Մանրամասն տե՛ս աշխատության երրորդ գլուխը:

Ամստերդամի «Միջազգային սոցիալ պատմություն ինստիտուտի» ավագ գիտաշխատող, Լադեբնի Համալսարանի Կենտրոնական Ասիայի և Իրանի պատմության ամբիոնի վարիչ, ազգությունը պարսիկ-ատրպատականցի պատմաբան և սոցիոլոգ պրոֆեսոր Թուրա՛ջ Ա՛թաբա՛քին իր «Ադրբեջանը. ազգությունը և ուժի պայքարն Իրանում» աշխատության մեջ նշում է.

Ադրբեջանի պատմությունը նվիրված աշխատություններում, որոնք հրատարակեցին Ստալինի մահից հետո պատմության նախկին՝ ստալինյան տարբերակին փոխարինելու նպատակով, դյուրությամբ կարելի է նկատել հորինված պատմությունը շարունակելու Ադրբեջանի թուրքերի շեշտակի փորձերը: Ըստ նման աշխատությունների հեղինակների՝ Ադրբեջանի [Հանրապետության, ո՛չ թե Ատրպատականի] տարածքը հնագույն ժամանակներից որոշ թյուրքական ցեղերի հայրենիքն է եղել: Աշխարհագրական պարզ եզրերի միտումնավոր սխալ գործածության միջոցով հորինված պատմության վավերականությունը հաստատելու մեկ ուրիշ փորձի օրինակ է Պարսկաստանի Ադրբեջանի և նախկին Խորհրդային Ադրբեջանի որոշ մտավորական շրջանակներում Արաքսից հյուսիս և հարավ գտնվող տարածաշրջանների համար «Հյուսիսային և Հարավային Ադրբեջաններ» անվանումների օգտագործումը: Ակներև է, որ այս եզրերի օգտագործման նպատակն է աշխարհագրական երկու տարբեր շրջանների մշակույթի ընդհանրությունը փաստելը, որը նաև պարունակում է պարսկական և ներկա Ադրբեջանի Հանրապետության վերջնական միացման կոչի բացահայտ ակնարկը¹⁶⁸:

«Արևմտյան Ադրբեջան» անվանումը և Սյունիքը ադրբեջանական դարձնելը վավերացնելու նպատակով Ադրբեջանի իշխանությունները դիմում են ցարական Ռուսաստանի՝ 19-րդ դարի կեսերին պատրաստված քարտեզներին, որտեղ պատկերված Հայաստանի և Ադրբեջանի տարածքները բաժանված են Երևանի, Բաքվի և Ելիզավետպոլի նահանգների միջև: Սրանցից երրորդն ընդգրկում էր նաև Ղարաբաղը և Սյունիքի մեծ մասը: Սակայն այս ներքին սահմանների անհեթեթ բաժանման պատճառն ընդհանրապես չի քննարկվում (տե՛ս Գլուխ առաջին, Մաս 1.1): Մինչդեռ երևույթի պատճառն այն է, որ, ըստ 1813 թ. կնքված Գյուլիստանի պայմանագրի, Արաքսից հյուսիս ընկած մասը՝ ներառյալ Շիրվանի, Թալիշի, Շամախիի, Ղարաբաղի և Զանգեզուրի գավառները, անցան Ռուսաստանին, որը դրանց հիման վրա ձևավորեց Ելիզավետպոլի նահանգը: Իսկ Հայաստանի մնացած տարածքը Թուրքմենչայի պայ-

¹⁶⁸ Touraj Atabaki, նշվ. աշխ., էջ 2-3: Վերոհիշյալ աղավաղումների համար տե՛ս Ադերբայջանի Թարիխի (Ադրբեջանի պատմությունը) եռահատոր աշխատությունը, Բաքու, 1958-1962:

մանագրով Ռուսաստանին անցավ դրանից 15 տարի հետո՝ 1828 թվականին: Ռուսական իշխանությունները նոր տիրացած շրջանը անվանեցին Երևանի նահանգ՝ չփոխելով մյուս տարածքների միջև արդեն իսկ իրենց գծած բաժանումները, որոնք գործածվում էին 1813 թվականից: Այսպիսով՝ Հայաստանի բուն տարածքը բաժանվեց ցարական Ռուսաստանի երկու նահանգների միջև: 1840 թ. այդ տարածքում կազմավորվեցին Բաքվի և Երևանի նահանգները, սակայն դրանց ներքին բաժանումները չփոխվեցին¹⁶⁹:

Նախկինում «գիտական» ներկայացվող ադրբեջանական քարոզչական գրականության մեջ երբեմն նշվում էր «Արևմտյան Ադրբեջանը», որի սահմանների մասին ճշգրիտ բացատրություններ չէին տրվում: «Արևմտյան Ադրբեջան» եզրը ամբողջովին պարզաբանվեց, երբ Ադրբեջանի զբոսաշրջության և մշակույթի նախարարությունը հրատարակեց «Արևմտյան Ադրբեջանի հուշարձանները» աշխատությունը: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս սույն աշխատության չորրորդ գլխում:

¹⁶⁹ Յարական Ռուսաստանի կատարած բաժանումների համար տե՛ս Հայաստանի ազգային առիստ, հատոր Բ, Երևան, 2008: Տե՛ս նաև Артур Цуциев, Атлас этнополитической истории Кавказа 1774–2004, Москва, 2007:

ՀԱՅԵՐԻ ԵԿԿՈՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Իսլամական շրջանի, նաև մինչխորհրդային ժամանակների նույնիսկ Ադրբեջանի Հանրապետության տարածքում բնակվող պատմիչներից և ոչ մեկը երբևէ չի հերքել Կովկասի հարավային շրջաններում, Շիրվանի տարածքում, Արցախում, Պարտավում, Շաքիում, Շամախիում և հարակից շրջաններում բնակվող հայերի առկայությունը: Նման բովանդակությամբ քարոզչություն ձևավորումը սկսվեց խորհրդային Ադրբեջանի կայանալուց հետո, ինչը ստալինյան քաղաքական-մշակութային գործելակերպի արդյունք էր: Ազգայնամոլության վերելքը դարձավ խորհրդային մի ավանդույթ, որն այսօր էլ նույնությամբ և դեռ ավելի ծավալուն կերպով ու արդի միջոցների գործածությամբ կիրառում են Ադրբեջանի պատմաբաններն ու այլ մասնագետներ:

Ադրբեջանի պնդումները, թե հայերն ընդհանրապես Կովկասի տարածքում նորեկներ են, հերքելու և Կովկասյան լեռներից հարավ գտնվող շրջաններում, Արցախում և ներկա Ադրբեջանի տարածքում հայերի վաղեմի բնակությունը փաստելու համար աշխատություններ կա գլխում հիմնականում օգտագործվել են օտար աղբյուրներ, որոնք միջագային գիտական ընկերակցության կողմից կարող են ընկալվել որպես ավելի անաչառ և վստահաբար քննադատության ու կասկածանքի առիթ չեն ներկայացնի:

Այս գլխում գերազանցապես քննարկվելու են պատմական և աշխարհագրական բնույթի աղբյուրներ (այդ թվում և ուղեգրություններ), որոնց մեջ առկա են Հայաստանի, Աղվանքի և Ադրբեջանի, այդ երկրների բնակչության վերաբերյալ նյութեր, տարաբնույթ տեղեկություններ: Այս շարքի օտար աղբյուրներից շատերը նախապես հայերեն թարգմանվել ու քննարկվել են տարբեր աշխատասիրությունների մեջ: Միջնադարյան որոշ պատմիչների և աշխարհագրագետների թողած ժառանգությունը թարգմանվել և ներկայացվել է «Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին» խիստ արժեքավոր մատենաշարով, որի հատորները սկսեցին լույս տեսնել դեռևս 1940 թվականից: Օտար ճամփորդների ուղեգրությունները ներկայացվել են Հովհաննես Հակոբյանի՝ 1932 թ. և 1934 թ. հրատարակված «Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության. ուղեգրություններ» երկհատորյակում: Շատ դեպքերում մենք դիմում ենք նաև «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի և Հ. Հակոբյանի աշխատասիրության մեջ տեղ գտած հեղինակների բնագիր հրատարակություններին:

3.1. Հայերի եկվորության տեսության հիմնադրույթները

Ինչպես նշվել է աշխատության նախաբանում, սկսած 1960-ական թթ. խորհրդային և ապա անկախ Ադրբեջանի պատմաբանները քարոզչական հակահայ պայքար են տարել և տանում՝ աշխատելով «փաստել», որ Կովկասյան լեռներից հարավ ընկած տարածաշրջանում հայերին 19-րդ դարի սկզբին առաջին անգամ բռնի բերել և բնակեցրել է ռուսական բանակը, և որ այդ տարածաշրջանում նախքան այդ ընդհանրապես հայեր չեն բնակվել:

Քարոզչական նպատակներով, սակայն գիտական հենք ունենալուն հավակնող, վերջերս հրատարակված «Պատերազմ ընդդեմ Ադրբեջանի» աշխատության մեջ ադրբեջանական հորինվածքները հասնում են մանրակրկիտ մշակված, բայց միևնույն ժամանակ բացարձակորեն կեղծված ծայրահեղությունների: Որպես օրինակ նշենք հետևյալ բնութագրական դրվագը.

Չնայած նրան, որ այսօր Հայաստանի Հանրապետությունում ադրբեջանցիներ չեն բնակվում, այս տարածաշրջանը պատմականորեն ադրբեջանցիների պապենական հողն է, որտեղ նրանք ապրում էին հայերի այստեղ հաստատվելուց շատ ավելի վաղ ժամանակներից¹⁷⁰:

Հատկանշական է, որ այս նույն միտքը կրկնեց Ադրբեջանի նախագահը իր ժողովրդին ուղղված 2011 թ. ամանորյա ուղերձի մեջ¹⁷¹:

Վերոհիշյալ գրքի ծայրահեղ խեղաթյուրումների և քարոզչական անհեթեթությունների, ինչպես նաև խեղաթյուրումների նպատակով ներկայացված արբանյակային հարյուրավոր լուսանկարների ու նրանց կից աղյուսակների անվավերականությունը փաստող նյութերով մենք ունենք մի շարք հրապարակումներ¹⁷²: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ Հայաստանում երբևէ մեծ

¹⁷⁰ Imranli, նշվ. աշխ., էջ 265:

¹⁷¹ Տե՛ս սույն հատորի առաջին գլխի չորրորդ մասը (1.4):

¹⁷² Տե՛ս Ռուբեն Գալչյան, *Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ / Армения в мировой картографии*, Լոնդոն և Երևան, 2005, հայերեն և ռուսերեն: Ռուբեն Գալչյան, *Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում: Հայաստան, Վրաստան և Ադրբեջան*, Լոնդոն և Երևան, 2007: Rouben Galichian, *The Invention of History. Azerbaijan, Armenia and the Showcasing of Imagination*, London & Yerevan, 2009. Ռուբեն Գալչյան, *Հորինված պատմություն. Ադրբեջան և Հայաստան. կեղծիքներ և փաստեր*, Լոնդոն և Երևան, 2010, ինչպես նաև աշխատության հեղինակի ելույթները և հոդվածները՝ հրատարակված Հայաստանի և Սփյուռքի պարբերական մամուլում: Ռուբեն Գալչյան, «Ադրբեջանական ձեռագրով. գիրք հայկական մշակութային ինքնության դեմ», «Ազգ» օրաթերթ, #103, 31 մայիս, 2008 թ., Հոփսիսմե Ավետիսյան, «Քարտեզները՝ հայոց պատմության խոսուն վկաներ» *Հայաստանի գրուցակից*, #5, (76), 13 փետրվար, 2009: – Vincent Lima, “Rouben Galichian chronicles the invention of Azerbaijan and its history”, *The Armenian Reporter*, 3 June, 2009, culture section. – Armine Adjemian, “L’invention de l’Azerbaïdjan”, *FranceArmenie*, 16–31– Juillet, 2009, Հասմիկ

Թվով ազդբեջանցիներ չեն բնակվել, քանի որ մինչև 1918 թ. այդպիսիք պարզապես գոյություն չունեին. կային միայն պարսիկներ, թուրքեր և թաթարներ, որոնք խոսում էին թրքերեն, ինչպես նաև նույն լեզվով խոսող Իրանի Ատրպատական նահանգի բնիկները, որոնք անկաշկանդ կարող էին շարժվել Իրանի տիրապետության տակ գտնվող տարածքներում, քանի որ մինչև 1813–1828 թթ. Ղարաբաղը, Ջանգեզուրը և Հայաստանի մեծ մասը Իրանի գերիշխանության ներքո էին: Սրանց պետք է ավելացնել նաև «կովկասյան թաթար» կոչվող թուրքերին, որոնք սկսել էին բնակվել Հայաստանի տարածքում: Դրուժյունը շարունակվեց մնալ ի շահ թուրք և թաթար ժողովուրդների, երբ խորհրդային տարիներին Ազդբեջանական ՍՍՀ ժողովուրդը վերանվանվեց «ազբեջանցի», և «հարևան ու բարեկամ հանրապետության» բնակիչներին իրավունք էր տրվում դյուրությամբ տեղափոխվելու և հաստատվելու Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և Հայաստանի Հանրապետության բերրի և դյուրին մշակելի տարածքներում:

«Պատերազմ ընդդեմ Ազբեջանի» գրքի էջերում հանդիպում է նաև այն պնդումը, թե հայերն առաջին անգամ Կովկասյան լեռներից հարավ գտնվող տարածաշրջան մուտք գործեցին միջին դարերում, երբ Վաղարշապատ քաղաքում էջմիածինը դարձավ նրանց կրոնական կենտրոնը: Այս նյութի վերաբերյալ վերոհիշյալ աշխատանքում գրված է.

Հայերի՝ այս տարածաշրջանում հաստատվելն ըստ երևույթին սկսվում է 15-րդ դարում Վաղարշապատից, որը Կովկասի առաջին հայկական համայնքն էր: Միմիայն 19-րդ դարում էր, որ հայերը զանգվածաբար բնակեցվեցին այստեղ¹⁷³:

Հեղինակը նկատի չի առել այն իրողությունը, որ էջմիածնի վանքը հայերը հիմնադրել են չորրորդ դարում, երբ նրանք հռչակեցին քրիստոնեությունը որպես պետական կրոն, և այդ օրերից այս շրջանը հայկական պետության կարևոր կենտրոններից էր: Վաղարշապատը 15-րդ դարում ոչ թե, ըստ գրքի, հիմնադրվեց, այլ իրականում վերահաստատվեց որպես հայ եկեղեցու կաթողիկոսանիստ կենտրոն, երբ Ամենայն Հայոց կաթողիկոսը դարեր շարունակ հաստատուն աթոռանիստ չունենալուց հետո՝ 1441 թ., վերջնականապես հաստատվեց այնտեղ: Հարկ չկա մասնագետ լինելու՝ տեղեկանալու համար, որ Կովկասյան լեռներից հարավ ընկած տարածաշրջանում են եղել Հայաստանի մի քանի մայրաքաղաքները, այդ թվում՝ Դավինը, Արտաշատը, Երվանդաշատը, ինչպես

Հարությունյան, «Փաստերը հերքում են Ադրբեջանի հորինած պատմությունը», «Ազգ» օրաթերթ, #142, 7 հուլիս, 2009: Лилит Ованнисян, “Азербайджан и Армения: вымысел и факты” *Собеседник Армении*, 30 октября, 2009. Марина Григорян, “Если мы хотим сохранить свою историю, то должны защитить ее”, *Голос Армении*, 8 октября, 2009.

¹⁷³ Imranli, նշվ. աշխ., էջ 272:

նակ բազմաթիվ հայկական կարևոր եկեղեցիներն ու վանքերը: Նույնիսկ նախաքրիստոնեական ժամանակներում հայոց Տիգրան Մեծ արքան Լեռնային Ղարաբաղի արևելյան մասում՝ Աղվանքի սահմաններին մոտ, հիմնադրել էր Տիգրանակերտ բերդաքաղաքը, որի հարևանությունը է տեղակայված 5–6-րդ դարերում կառուցված բազիլիկան¹⁷⁴:

Այս պարագայում ինչպե՞ս բացատրել, որ ադրբեջանցի պատմաբան Միրզա Զավանչիր Ղարաբաղին (1773–1853) 1840–1844 թթ. շարադրված իր «Ղարաբաղի պատմությունը» երկում, ներկայացնելով շրջանում մինչև 1830-ական թթ. տեղի ունեցած պատմական դեպքերը, Ղարաբաղին նվիրված հատվածում մի քանի տեղ գրելով հայերի մասին, նրանց եկվոր լինելու հարցի շուրջ ակնարկ անգամ չի անում: Նույնը կարելի է ասել Միրզա Աբիդյուզալ Բեկի (մոտ 1780–1848) «Ղարաբաղ–նամե» պատմական երկի վերաբերյալ՝ շարադրված 1845 թ. հետո. հեղինակն իր աշխատությունն նախաբանում գրում է.

...որոշ դեպքերի համար հարցումներ եմ անցկացրել տեղաբնակ տարիքավոր վրացիների, հայերի և մահմեդականների շրջանում¹⁷⁵:

Ղարաբաղի մարզում հայերի առկայությունը կարևոր փաստերից է գեներալ Երմոլովի կարգադրությունը կատարված ցարական Ռուսաստանի Ղարաբաղի մարզի վիճակագրությունը, որը կատարվել էր նախքան 1823 թ. և հրատարակվել 1866 թ. Թիֆլիսում: Այստեղ առկա են բազմաթիվ աղյուսակներ քաղաքներում ու գյուղերում բնակվող ժողովրդի վերաբերյալ, նշված են հայկական ու թաթարական բնակավայրերն ու նրանց ծուխերի (ընտանիքների) անունները, որոնցից պարզ է հայերի մեծաքանակ ներկայությունը մարզի բոլոր տարածքներում¹⁷⁶:

«Պատերազմ ընդդեմ Ադրբեջանի» գրքի նախաբանում քննարկելով հայերի ներկայությունը Հարավային Կովկասում՝ հեղինակը պնդում է հետևյալը.

Այսպիսով՝ տարածաշրջանը գրավելով [1813 թ. և 1828 թ.] և հայերին Ադրբեջանում բնակեցնելով՝ Ռուսաստանն այս շրջանում հսկայական ժողովրդագրական փոփոխություններ կատարեց¹⁷⁷:

Երբ ադրբեջանցի պատմաբաններն արտահայտվում են, թե հայերը Արցախում և Կովկասում հաստատվել են միայն 1828 թ. հետո, նրանք մշտապես հղում են կատարում 1825 թ. Ֆրանսիայից Ռուսաստան տեղափոխված՝ Հայ-

¹⁷⁴ Տե՛ս www.tigranakert.am/gallery/ կայքը:

¹⁷⁵ Мирза–Адигезаль–Бек, Карабаг–Наме, Баку, 1950, էջ 43:

¹⁷⁶ Могилевский и Ермолов, Описание Карабагской провинции, составлено в 1823 году, Тифлис, 1866.

¹⁷⁷ Imranli, նշվ. աշխ., էջ 7:

կական մարզի վարչության խորհրդական, եկամուտների և պետական տուրքի վարչության պետ, վիճակագիր, ազգագրագետ և պատմաբան Իվան Շոպենին (1798–1870), սակայն ըստ իրենց մեջ ընդունված զանցառումների սովորության՝ չեն հիշատակում Շոպենի շարադրածի մանրամասները և նրա աշխատության համապատասխան մասերն ամբողջութեամբ: Պարսկաստանից ներգաղթած հայերի մասին Շոպենն իր գրքի ցուցակներում նշում է, որ Թուրքմենչայի պայմանագրից հետո պարսկական Ադրբեջանից և Թուրքիայից դեպի Ռուսաստանի Հայկական մարզ գաղթեցին մեծաթիվ հայեր:

Գավառ	Պարսկաստանից	Թուրքիայից
Երևան	23,568 շունչ	20,639 շունչ
Նախիջևան	10,652 շունչ	27 շունչ
Օրդուբադ	1,340 շունչ	0
Ընդամենը	35,560 շունչ	20,666 շունչ ¹⁷⁸

Նրա ժամանակակից ռուս պատմաբան Սերգեյ Գլինկան (1775–1847), հիմնվելով պետական պաշտոնյաների գեկոլյցների վրա, գրում է, որ այդ տարիներին պարսկական Ադրբեջանից Ռուսաստան գաղթող հայերի ընդհանուր թիվը մոտ 40 000 էր¹⁷⁹, իսկ 1936 թ. Մոսկվայում հրատարակված փաստաթղթերի հավաքածուն նշում է, որ 1828 թ. սկզբին Պարսկաստանից Ղարաբաղի մարզ են փոխադրվել 750 ընտանիք հայեր¹⁸⁰: Ուշագրավ և կարևոր է, որ այս աշխատության գլխավոր և մասնագիտական խմբագիրն է Իլյա Պ. Պետրուշևսկին, որը ճանաչված է իր բնավ ոչ հայամետ հայացքներով: Գլինկայի և այս փաստաթղթերի տվյալներն ամբողջովին համընկնում են, ուստի կարելի է եզրակացնել, որ ըստ բոլոր փաստաթղթերի՝ Ղարաբաղի մարզ է բերվել մոտ 4500 շունչ հայ: Կարիք կա նաև հիշելու, որ ժամանակի ցարական Ղարաբաղի մարզը ներառում էր հայկական Սյունիքն ու Արցախը:

Պետք է նաև ավելացնել, որ Պարսկաստանից Ղարաբաղի շրջան գաղթած փոքրաթիվ հայության մեկ մասն էլ առաջին տարիների ընթացքում զոհ գնաց տեղաբնակ թուրքերի թշնամական վերաբերմունքին ու ընդհանրապես կյանքի վատ պայմաններին ու համաճարակներին: Այս հարցին դեռ 1973 թվականին մանրամասն անդրադարձել է Մ. Դարբինյանը¹⁸¹:

¹⁷⁸ Иван Шопен, *Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи*, Санкт Петербург, 1852, էջ 635–638:

¹⁷⁹ Сергей Н. Глинка, *Описание переселения армян адербиджанских в пределы России*, Москва, 1831, էջ 92:

¹⁸⁰ И. П. Петрушевский, ред. *Колониальная политика российского царизма в Азербайджане в 20–60-х гг. XIX в.*, Москва, 1936, առաջին մաս, էջ 204:

¹⁸¹ Մ. Դարբինյան, «Պարսկահայերի գաղթը և նրանց բնակեցումը (1828–1829 թթ.)», *Լրաբեր հասարակական գիտությունների*, Երևան, 1973, հատոր 2, էջ 12–22:

Ինչ վերաբերում է 1829–1830 թթ. ռուսական զենքի օժանդակությամբ Օսմանյան կայսրության գրավված տարածքներից Ռուսական կայսրության սահմանները ներգաղթած հայուկթյանը, ապա պետք է ասել, որ բացի վերը նշված թվից, նաև մոտ 14 044 ընտանիք, այսինքն՝ ավելի քան 100 000 շունչ տեղավորվեցին Թիֆլիսի ռուսական նահանգում, այսինքն՝ ներկա Շիրակի, Ախալցխայի ու Ախալքալաքի շրջաններում¹⁸²: Ադրբեջանի պատմաբանները երբ հայտարարում են, որ հայերը Արցախում և Ադրբեջանի Հանրապետության տարածքում մինչև 1828 թվականը չեն բնակվել, վերը նշված հայերին էլ հաշվում են որպես ռուսական զորքերի կողմից «Ադրբեջանի» տարածաշրջան բերվածներ¹⁸³:

Ի վերջո, ադրբեջանական նման պնդումների հեղինակներին պետք է հիշեցնել, որ 17-րդ դարի սկզբին պարսից Շահ Աբբասը Հայաստանից Իրան բռնագաղթեցրեց մոտ 300 000–400 000 հայուկթյուն, և 1828 թ. սրանց սերունդների հազիվ տասը տոկոսին հաջողվեց ավելի քան երկու դար տարագրությունից հետո վերադառնալ Հայրենիք:

Մեկ ուրիշ «փաստաթուղթ» էլ, որ բազմիցս արժանանում է ադրբեջանական հետազոտողների անդրադարձին, 1978 թ. մի լուսանկար է, որտեղ ներկայացված է ԼՂՀ Մարտակերտի շրջանի Մարաղա հայկական գյուղի հիմնադրման 150-ամյակին նվիրված հուշարձանը՝ «Մարաղա 150» մակագրությամբ: Ադրբեջանի «գիտնականները» պնդում են, թե քանի որ գյուղի բնակիչների նախնիներն այստեղ են հաստատվել միայն 150 տարի առաջ, ապա Կովկասյան լեռներից հարավ գտնվող տարածքներում ընդհանրապես մինչ այդ հայեր չեն բնակվել: Նույնն են անում նաև ադրբեջանամետ օտար պատմաբանները, ինչպես, օրինակ՝ գերմանացի Յոհաննես Ռաուն, որը որպես փաստ կրկին օգտագործում է այս միակ լուսանկարը¹⁸⁴: Այս տեսությունն առաջադրողներն ամբողջովին անտեսում են միջին դարերից սկսած այսօրվա Ադրբեջանի Հանրապետության տարածքում, այսինքն՝ Շիրվանում, Շաքիում, Շամախիում, Գանձակում և այլուր ապրող մի քանի հարյուր հազար հայ բնակչությանը, որոնք իրենց ծննդավայրերում բնակվում էին մինչև 1989–1992 թվականները: Նրանք իրենց ամբողջ տեսությունը հիմնավորում են մեկ գյուղի տվյալներով, որն Ադրբեջանի օմօնականները բնաջնջեցին 1992 թ. ապրիլի 10-ին՝ սպանելով տասնյակ մարդկանց, ոչնչացնելով հուշարձանը, իսկ բնակիչների մի մասին էլ վերցնելով պատանդ¹⁸⁵:

¹⁸² Մ. Դարբինյան, «Էջեր Ախալցխայի և Ախալքալաքի հայերի 1819–1830 թթ. գաղթի պատմությունից», *Բանբեր Երևանի համալսարանի*, Երևան, 1973, համար 2, էջ 212–216:

¹⁸³ Ադրբեջանական խեղաթյուրումների մանրամասների համար տես Kat'oghikos Esai Hasan Jalaleants', *A Brief History of the Aghuanq Region. A history of Karabakh and Ganje from 1702–1723*, translated and annotated by George Bournoutian, Costa Mesa, CA., 2009.

¹⁸⁴ Prof. Dr. Rau, Johannes, *Der Berg–Karabach–Konflikt zwischen Armenien und Asebaidschan*, Berlin, 2008, էջ 89:

¹⁸⁵ Caroline Cox and John Eibner, *Ethnic Cleansing in Progress. War in Nagorno Karabakh*, London, 1999, էջ 42–43: Այս մասին տես՝ Մեծ Բրիտանիայի պառլամենտին մանրամասն

Տարածաշրջանում հայերի ներկայության այլ անհերքելի փաստերն են այդ- տեղ պատրաստված հայերեն ձեռագրերը, որոնք ունեն գերազանցապես կրո- նական բնույթ: Ներկա Ադրբեջանի Հանրապետության կարևոր քաղաքներում ու ժամանակի հայաշատ բնակավայրերում, ինչպիսին եղել են Գանձակը, Շա- մախին, Շաքին, Բաքուն և այլն, նախքան 19-րդ դարը պատրաստվել են բազ- մաթիվ ձեռագրեր, որոնցից մի մասն այսօր պահպանվում է Երևանի Մատենա- դարանում: Սրանք փաստում են ղեռ նախքան 19-րդ դարն այստեղ բնակվող և բարգավաճող հայկական համայնքների գոյությունը, որոնց մի մասը հայտ- նի էր նաև որպես գրչության կենտրոններ: Այս ձեռագրերի մասնակի ցանկը բերվում է ստորև, որտեղ նշված են գրչության վայրը, Մատենադարանի ձե- ուագրահամարը և փակագծի մեջ՝ պատրաստվելու թվականը:

- **Գանձակ** — 3992 (1484 թ.), 8967 (1576 թ.), 9398 (16-18-րդ դդ.), 7980 (1639 թ.), 6771 (1667 թ.), 3541 (1671 թ.), 3576 (1673 3994 (1683 թ.), 3044 (1779 թ.), 5234 (1783 թ.), 9517 (1819 թ.):
- **Քարհատ, Դաշքեսան** — 3196 (1655 թ.), 10044 (1656 թ.), 9448 (1665 թ.), 3856 (1669 թ.), 8965 (1675 թ.):
- **Շատախ, Գանձակի մոտ** — 728 (1621 թ.), 713 (1636 թ.), 5072 (1661 թ.):
- **Շամախի** — 8361 (1742 թ.), 8492 (1717-1720 թթ.), 9729 (1765 թ.):
- **Շաքի** — 4228 (1681 թ.), 4422 (1783 թ.):
- **Մադրասա** — 5232 (1403 թ.):
- **Մասալի** — 5997 (18-րդ դար):
- **Սալյան** — 4013 (1803 թ.):
- **Բաքու** — 3853 (1779 թ.):

Նշված ձեռագրերը վկայում են, որ այս բնակավայրերում կային հաստատ- ված, կայացած և մշակութային կյանքով ապրող հայ համայնքներ¹⁸⁶:

«Պատերազմ ընդդեմ Ադրբեջանի» գրքի մեկ ուրիշ մասում կազմողը քննար- կում է Հայաստանում հայ գաղթականների և ապաստանածների իրավիճակը և քանակը՝ այս տվյալները ներկայացնելով որպես հայերին Կովկասում պար- տադրաբար վերաբնակեցնելու «փաստ»: Հեղինակը գրում է.

զեկուցել է անգլուհի Բարնոնուհի Քոկլար Մարաղա կատարած իր այցից հետո: Տե՛ս http://www.maragha.org/index_ar.html կայքը:

¹⁸⁶ Այս նույն կենտրոններում մինչև 19-րդ դարի վերջերը պատրաստվել են բազմաթիվ այլ ձեռագրեր, որոնք վերը տրված ցուցակում ընդգրկված չեն, քանի որ այդ հարցը դուրս է մեր աշխատության խնդիրներից:

1914–1916 թթ. մոտ 350 000 հայեր վերահաստատվեցին Կովկասում և, ըստ «Կովկասյան օրացույց»-ի 1916 թ. հատորի, նրանց թիվը Երևանի նահանգում հասավ 669,871-ի¹⁸⁷:

Ահա թե ինչպես կարելի է իրականությունն անմարդկային կերպով նենգափոխել. հայտնի իրողություն է, որ 1915–1918 թթ. Հայաստանի գյուղերն ու քաղաքները լի էին Օսմանյան կայսրությունում իրականացված ցեղասպանություններից ճողոպրած հայ ժողովրդի բեկորներով, որոնց մի մասը հասել էր մինչև Ռուսաստան, Պարսկաստան, Վրաստան ու Սիրիա:

Վերջին տարիներին գենետիկայով և ազգերի ծագումնաբանությունում զբաղվող եվրոպացի և ամերիկացի մի շարք գիտնականներ ուսումնասիրել են նաև Կովկասի տարածքում բնակվող մի շարք ժողովուրդների ծագումնաբանությունը: Մասնավորապես, սերունդներ շարունակ Սյունիքում և Արցախում բնակվող հայուկայան «Y» քրոմոսոմների վրա Լոնդոնի համալսարանի մասնագետները՝ վերջերս կատարած գենետիկական հետազոտությունները տվել են արմատական տվյալների 20–25 տոկոսի հաճախականություն¹⁸⁸: Ըստ այդ մասնագետների՝ սա փաստում է այն, որ տեղի բնակչության նախահայրերի առնվազն նույն տոկոսը այս տարածքում է բնակվել դեռևս պալեոլիթի շրջանից, այսինքն՝ ավելի քան 20 000 տարի անընդմեջ¹⁸⁹: Իսկ Ադրբեջանի տարածքում տեղի իշխանությունները թույլ չեն տվել մասնագետներին նման հետազոտություններ կատարել¹⁹⁰:

Այսպիսի «խնդիրները» հարթելու նպատակով Ադրբեջանի պատմագիտությունից բնագավառի հետազոտողներն աշխատում էին Արցախի հայուկայանը հայտարարել աղվանների հայացած եղբայրները¹⁹¹:

¹⁸⁷ Imranli, նշվ. աշխ., էջ 273:

¹⁸⁸ J. F. Wilson, D. F. Weiss, M. Richards, M. G. Thomas, N. Bradman, D. B. Goldstein, “Genetic evidence for different male and female roles during cultural transitions in the British Isles” *Proceedings of the National Academy of Sciences, USA*, 2001, էջ 5078–5083.

¹⁸⁹ M. E. Weale, L. Yepiskoposyan, R. F. Jager, N. Hovhannisyan, A. Khudoyan, O. Burbasge-Hall, N. Bradman, M. G. Thomas, “Armenian Y chromosome haplotypes reveal strong regional structure within a single ethno-national group” *Human Genetics* (2001/109), էջ 659–674: Տե՛ս նաև Левон Епископосян, *Когда генетика и история сталкиваются*, Ереван, 2008.

¹⁹⁰ Հետազոտությունները ձգարիտ կատարելու համար պետք է նշվի ամեն մի կենսաբանական փորձամուշ տվողի էթնիկական պատկանելությունը, քննադիմացի անցյալը, մայրենի լեզուն և այլն, որոնց բացահայտելն Ադրբեջանի իշխանությունների համար թերևս կարող էր խնդրահարույց դառնալ:

¹⁹¹ Հարություն Մարության, «Ցեղասպանության հիշողությունը որպես նոր ինքնության ձևավորիչ», *ՊԲՀ*, Երևան, 2005/1, էջ 55–66:

Տարածաշրջանի հնագույն անցյալ ունեցող ժողովուրդների վերաբերյալ տվյալներ են հաղորդում նաև հույն, հռոմեացի և այլ պատմիչներ: Աշխարհագրական ու պատմական այդ նյութերի մեջ համարյա ամեն տեղ առկա է հայերի ու Հայաստանի անունը, որը տեղադրվում է Կուրի հարավից սկսած մինչև Տավրոսյան լեռները: Մյուս հնագույն երկրները, որոնք, ավելի փոքր լինելով, ոչ նույնքան հաճախ են հիշվում, Աղվանքը, Իբերիան ու Փոքր Մարաստանն են: Աղվանքը նշվում է Կուրի շրջապատում, հիմնականում Կուրից հյուսիս ընկած, մինչև Կովկասյան լեռնաշղթայի սահմանը հասնող շրջանում: Գալով ներկա Ադրբեջան անվանմանը կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ Արաքսից հարավ ընկած Ադրբեջան–Ատրպատականին, ապա այս շրջանը հնում կոչվում էր Փոքր Մարաստան, որը Մարաստանի հյուսիսային անկյունն էր:

Երկու հազար տարի առաջ այս առիթով հետևյալ տեղեկությունն է տվել Ստրաբոնը.

... մյուս մասը կոչվում է Ատրոպատյան Մարաստան, որն իր անունը ստացել է Ատրոպատես գորավարից, քանի որ նա էր, որ չթողեց Մեծ Մարաստանի մասը կազմող այս երկրամասը դառնա մակեդոնացիների վասալը¹⁹²:

Փոքր Մարաստանը Ատրպատական վերանվանվելու վերաբերյալ Պարսկաստանի այս նահանգի Թավրիզ քաղաքում ծնված մեծանուն պատմաբան ու լեզվաբան Ա՛հմա՛դ Քա՛սրա՛վին (1890–1946) 1930 թ. շարադրված «Ազերի կամ Ադրբեջանի հինավուրց լեզուն» հոդվածում գրում է.

Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակներից այստեղ մի դեպք է պատահել, որի հետևանքը մեր լեզվի մեջ դեռ ապրում է, և սա մեր երկրի «Ադրբեջան» անվանումն է: ... այս շրջանը Փոքր Մարաստան էր կոչվում մինչև այն, երբ Ալեքսանդրն ամբողջ շրջակայքը գրավեց, բայց այստեղ դրա դեմ դուրս եկավ Ատրոպատ անունով մի տեղացի գորավար և իր երկիրը պաշտպանեց ու մինչև իր կյանքի վերջն այս շրջանում իշխեց: Այսպիսով՝ այս երկիրը նրա անունով անվանվեց Ատրոպատական, որն աստիճանաբար փոխվեց ու դարձավ Ազերբայջան: Տեղեկություններ կան, որ Ատրոպատի ժառանգները մի քանի հարյուր տարի այդ տարածքի տիրակալներն էին¹⁹³:

¹⁹² Strabo, նշվ. աշխ., գիրք 11.13.1, էջ 303:

¹⁹³ Ահմադ Քասրավի, «Ազարի կամ Ատրպատականի հինավուրց լեզուն», Քասրավիի երկերը. 78 հոդվածների և դասախոսությունների ժողովածու, Թեհրան, 1973, էջ 322, պարսկերեն:

Նույն նյութին է անդրադառնում նաև Ադրբեջանի ԳԱ ակադեմիկոս Իզրար Ալիևը և նշում, որ Ատրպատականի անունն առաջին անգամ Փոքր Մարաստանին է տրվել մ.թ.ա. 331 թվականին, և այն, որ Մարաստանի փրկիչը գորավար Ատրոպատն էր¹⁹⁴:

Ահա թե ինչու և ինչպես Պարսկաստանի վասալ Փոքր Մարաստանը վերանվանվեց Ատրպատական և դարերի ընթացքում լեզվական փոփոխությունների ու զարգացումների փուլերն անցնելով՝ այսօր պարսկերենով կոչվում է Ադրբեջան կամ Ադերբայջան:

Հայերի՝ Կովկասյան լեռներից հարավ ընկած տարածաշրջանում ունեցած վաղեմի բնակությունը հաստատելու նպատակով հաջորդ ենթաբաժիններում բերում ենք դասական շրջանի, միջին դարերի և իսլամական աշխարհի այլ մասնագետների հիշատակումներն ու մեջբերումները, որոնք գալիս են փաստելու, որ ադրբեջանական «փաստարկներն» ընդամենը հայոց պատմության կեղծումներ ու նենգափոխումներ են:

3.2. Հայերի առկայությունը տարածաշրջանում ըստ հունա-հռոմեական աղբյուրների

Նախ անդրադառնանք տարածաշրջանի մասին հին հունա-հռոմեական աղբյուրների հաղորդած տեղեկություններին:

Առավել վստահելի և կարևոր գրավոր աղբյուր հայերի ու Հայաստանի գոյությունը վերաբերյալ չեն կարող լինել, քան հնագույն հույն պատմիչ, Պատմահայր Հերոդոտոսի հաղորդած տեղեկությունները (մ.թ.ա. մոտ 484-425): Նա իր «Պատմություն» աշխատության մեջ ութ տեղ նշում է հայերի ու Հայաստանի մասին՝ Հայաստանը տեղադրելով Եփրատից հյուսիս գտնվող տարածքում¹⁹⁵: Պարթևների հարևանության մեջ նա հաճախ նաև նշում է մարերի ու Մարաստանի մասին, որը դեռ Ատրոպատեն չէր անվանվել, իսկ Ալբանիայի կամ Աղվանքի մասին Հերոդոտոսի աշխատություններում որևէ նշում չկա:

Հիմք ընդունելով Հերոդոտոսի «Պատմության» մեջ բերված նյութերը և նշումները՝ անգլիացի քարտեզագետ Չարլզ Մյուլլերը պատրաստել է նրա նկարագրած աշխարհի քարտեզը, որի արդյունքն է հավելվածի քարտեզ 4-ը՝ վերցված «Հնագույն Աշխարհագրություն» ատլասից¹⁹⁶: Ինչպես գրքում, այն-

¹⁹⁴ Стів Іграп Алієв, *Очерк історії Атропатени*, Баку, 1989: Стів նաև պարսկերենը, թարգմանությունը՝ Յուսուֆ Շադմանի, խմբագիր՝ Ֆերեյդուն Ջոնեյդի, Թեհրան, 1999, գլուխ 3, էջ 93-94 և 98-99:

¹⁹⁵ Herodotus, *Landmark Herodotus. The Histories*, trans. Andrea Purvis, ed. Robert Strassler, London, 2008, գիրք 5, 52.3, էջ 388-390: Стів նաև Հերոդոտոս, *Պատմություն ինը գլխից*, թարգմանությունը՝ Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, էջ 307:

¹⁹⁶ E. H. Bunbury, *History of Ancient Geography*, in two volumes, New York, 1932/1951, հատոր 1: Стів նաև William Smith and George Grove, *Atlas of Ancient Geography*, London, 1874.

պէս էլ քարտեզի մեջ նշված են Հայաստանը և Մարաստանը, այսինքն՝ Ատրպատականին նախորդող երկրամասը:

3.2.1. Հնագույն հունական աղբյուրներից ամենահեղինակավորներից է պատմիչ և աշխարհագրագետ Ստրաբոնը (մ.թ.ա. 64 — մ.թ.25), որից պահպանվել է 17-հատորանոց «Աշխարհագրություն» կոչված երկը: Այս հատորները աշխարհագրական հնագույն և կարևորագույն տեքստերից են, որոնք պարունակում են մանրակրկիտ բացատրություններ ու տեղեկություններ ժամանակին ճանաչված աշխարհի վերաբերյալ¹⁹⁷: Հրաչյա Աճառյանն այս հատորներից առանձնացրել է Հայաստանի և նրա հարևանների (այդ թվում և Աղվանքի) վերաբերյալ տրված բացատրությունները, որոնք հրատարակվել են առանձին գրքով¹⁹⁸:

Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ 60-ից ավելի պարբերություններ կան Հայաստանի և հայկական շրջանների ու տեղանունների մասին: Աշխատության մեջ հաճախ նշված են նաև Ալբանիան (Աղվանքը), Վիրքը և Մարաստանը: Աղվանքի տեղագրության ու սահմանների վերաբերյալ նա գրում է.

Աղվաններն ապրում են իվերների և Կասպից ծովի միջև՝ արևելքում սահման ունենալով ծովը, իսկ արևմուտքում՝ Վիրքը: Մնացորդ կողմերից Հյուսիսը պաշտպանված է Կովկասյան լեռներով (քանի որ սրանք գտնվում են դաշտավայրերից ավելի բարձր, իսկ նրանց դեպի ծով ձգվող մասը կոչվում է Կերավնյան, հարավային սահմանն էլ Հայաստանն է, որը ձգվում է նրա [Աղվանքի] ամբողջ երկայնքով...¹⁹⁹

Ատրպատական վերանվանված նախկին Փոքր Մարաստանի մասին Ստրաբոնը գրում է հետևյալը.

Մարաստանը բաժանված է երկու մասի: Մի մասը կոչվում է Մեծ Մարաստան, որի մայրաքաղաքն էքբաթանան [ներկա Համադանը] է, որտեղ Մարական կայսրության թագավորների նստավայրն էր (պարթևները մինչև հիմա շարունակում են այդ քաղաքը որպես թագավորանիստ գործածել, և նրանց թագավորները ամռանն առնվազն մի քանի ամիս այստեղ են անցկացնում...): Մյուս մասը կոչվում է

¹⁹⁷ Ստրաբոնի աշխատության աղբյուրաբանության համար տե՛ս Հենրիկ Սվազյան, «Ստրաբոնի աղբյուրները Աղվանքի մասին», *Պատմա-քանասիրական հանդես*, Երևան, 1978, համար 1, էջ 95–104:

¹⁹⁸ Ստրաբոն, *Օտար աղբյուրները հայերի մասին*, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Յերեվան, 1940:

¹⁹⁹ Strabo, նշվ. աշխ., գիրք 11.4.1, էջ 203:

Ատրոպատյան Մարաստան, որն իր անունը ստացել է Ատրոպատես գորավարից, քանի որ նա էր, որ չթողեց Մեծ Մարաստանի մասը կազմող այս երկրամասը մակեդոնացիների հպատակը դառնա²⁰⁰:

Ստրաբոնի աշխատությունների 11-րդ գրքի 14-րդ գլուխն ամբողջովին նվիրված է Հայաստանին, որտեղ նա բացատրություններ է տալիս երկրի տեղանքի, բնության, աշխարհագրության, ժողովրդի ու նրա կենցաղի և պատմական կարևոր դեպքերի մասին: Հայաստանի սահմանների վերաբերյալ Ստրաբոնը տալիս է հետևյալ բացատրությունները.

Հայաստանի հարավային մասի որոշ շրջաններ հասնում են մինչև Տավրոս, որը նրան բաժանում է Եփրատի և Տիգրիսի միջև գտնվող Միջագետք երկրից: Մեծ Հայքի արևելյան սահմանն է Ատրոպատեսը [Ատրպատականը], հյուսիսում են Կասպից ծովը վերը գտնվող Պարաքոսթրասի լեռները, ինչպես նաև Աղվանքը, Վիրքն ու Կովկասը, որը շրջապատում է այս երկրները և հասնում մինչև Հայաստանի նմանապես հասնելով Մոսքիկյան և Կողքիսի լեռներին, ձգվելով մինչև Տիբարանի, ինչպես որ նրանք անվանվում են²⁰¹:

Հավելվածի քարտեզ 5-ում ներկայացված է բրիտանացի քարտեզագետ Ջարլզ Մյուլլերի՝ Ստրաբոնի աշխատությունների հիման վրա վերականգնած քարտեզը: Քարտեզի մեջ նշված են միայն կարևոր երկրները, որոնց մեջ է նաև Հայաստանը:

3.2.2. Գայոս Պլինիոս Սեկունդոսի (որը ճանաչված է որպես Պլինիոս Ավագ՝ 23–79 թթ.) ամենակարևոր աշխատություններից է 37 գրքերից բաղկացած «Բնագիտությունը», որի 3–6-րդ գրքերը նվիրված են աշխարհագրությանն ու պատմությանը: Կովկասյան լեռներից հարավ ընկած տարածքի վերաբերյալ այս հատորներում Պլինիոսը պատմում է Վիրքի, Աղվանքի և Հայաստանի մասին, իսկ «Ադրբեջան» անվանումը նրա աշխատությունից բացակայում է: Հեղինակը գրում է.

Մեծ Հայքը սկսում է Պարիեդրի [Հավանաբար Պոնտոսյան] լեռներից և Կապադոկիայից առանձնանում է, ինչպես ասացինք, Եփրատ գետով մինչև այնտեղ, որտեղ Եփրատը թեքվում է դեպի արևելք, իսկ Միջագետքից նրան բաժանում է Տիգրիս գետը: Այս երկու գետերի ակունքները Հայաստանում են... Այսպիսով՝ նրա սահմանները հասնում են մինչև Ադիաբենես, որտեղ որ այս երկրի

²⁰⁰ Անդ, գիրք 11.13.1, էջ 303:

²⁰¹ Անդ, գիրք 11.14.1, էջ 317–319:

լեռնաշղթաները նրա միջով են անցնում: Այստեղից երկրի սահմանները ձգվում են դեպի ձախ՝ անցնելով Արաքսը և հասնելով Կուր, իսկ նրա լայնութունը հասնում է մինչև Փոքր Հայք²⁰²:... Կուրից այն կողմ ընկած հարթավայրը բնակեցված է պլեանական ցեղերով և ապա իբերներով, որոնք Ալբանիայից առանձնանում են Ալազան գետով²⁰³:

Հավելվածի քարտեզ 6-ում ներկայացված է Չարլզ Մյուլլերի (1813–1894) աշխարհագույց քարտեզը՝ գծված ըստ Դիոնիսիոս Պերերգեստիսի երկրորդ դարի տեքստերի: Այստեղ կարելի է տեսնել Հայաստանը և Մարաստանը, իսկ Ազրբեջան անվանումը քարտեզից ընդհանրապես բացակայում է: Սրա պատճառը կարող է լինել այն, որ Փոքր Մարաստանին Ատրոպատեն–Ազրբեջան անվանելը հավանաբար դեռ էջը ընդհանրացել, և երկրամասն այստեղ կոչված է իր՝ Մարաստան անվանումով:

3.2.3. Հռոմեացի աշխարհագրագետ Պոմպոնիոս Մելայի (մահ. 45 թ.) հիմնական աշխատությունը կոչվում է «Աշխարհի նկարագրությունը», որի մեջ նա բացատրություններ է տալիս սկզբում Միջերկրականի շուրջը տեղակայված երկրների մասին, ապա ավելի համառոտ գրում է ճանաչված աշխարհը շրջապատող օվկիանոսի ու այլ երկրների մասին: Ասիայում բնակվող ազգությունների մասին նա գրում է.

Ասիայի ժողովուրդների մեջ են վրացիները, հայերը և մարերը²⁰⁴:

Արաքս գետի վերաբերյալ Մելան նշում է.

Արաքսը աղբյուր է առնում Տավրոսյան լեռների կողմից՝ հանդարտ հոսելով Հայաստանի դաշտավայրերով...²⁰⁵

Մելան ոչ մի նշում չի անում Աղվանքի կամ Ազրբեջանի մասին, միայն տալիս է մարերի անունը, իսկ Փոքր Մարաստանը հավանաբար նոր էր Ատրոպատ գորավարի պատվին անվանվել «Ատրպատական», այդ պատճառով էլ այս նոր անվանումն այստեղ բացակայում է²⁰⁶:

²⁰² Pliny the Elder, *Natural History*, trans. H. Rackham, Cambridge, 1999, Գիրք VI.IX–25, էջ 355:

²⁰³ Անդ, Գիրք VI, XI–29, էջ 359:

²⁰⁴ Pomponius Mela, *Description of the World*, F. E. Romer trans., Ann Arbor, 2001, էջ 37–38, բնագրի գիրք 1, գլուխ 13:

²⁰⁵ Անդ, էջ 112, բնագրի գիրք 3, գլուխ 40:

²⁰⁶ Ինչպես արդեն նշվել է, ըստ ավանդության, Փոքր Մարաստանը Ատրոպատեն է կոչվել ի պատիվ Մարաստանի տիրակալ Ատրոպատի, ով, Ալեքսանդր Մակեդոնացուն դիմադրելով, պահպանեց երկրի անկախությունը: Ատրոպատեն անվանումը համարյա

Մեկայի բացատրությունների վրա հիմնվելով՝ քարտեզագետ Կոնրադ Միլերը պատրաստել է նրա աշխարհագույց քարտեզը, որը կարելի է տեսնել հավելվածի քարտեզ 7-ում: Միլլերը քարտեզում նշել է բոլոր այն տեղանունները և երկրների անունները, որոնց մասին Մեկան գրել է իր աշխատության մեջ: Քարտեզի մանրամասում կարելի է տեսնել Հայաստանի և նրա հարակից շրջանների տեղանունները, բայց, ինչպես նշվեց, բացակա են Աղվանքն ու Ադրբեջանը:

3.2.4. Կլավդիոս Պտղոմեոսի (մոտ 90–168 թթ.) կարևորագույն աշխատությունը՝ «Աշխարհագրությունը», շարադրվել է երկրորդ դարում, որի մեջ «Ասիայի երրորդ քարտեզ»-ում առկա են ժամանակին Կովկասյան լեռներից հարավ ընկած տարածաշրջանում գոյություն ունեցած երկրները, որոնք են Վիրքը (Վրաստանը), Կողքիսը (Աբխազիան), Ալբանիան (Աղվանքը), Մեծ Հայքը և Մարաստանը: Ժամանակին Փոքր Մարաստանի համար դեռևս Ադրբեջան կամ Ատրպատական անվանումը ընդհանրացված էջը, հետևաբար Պտղոմեոսի գրքում և նշված տեղեկությունների հիման վրա գծված քարտեզներում Ադրբեջան անվանումը գոյություն չունի²⁰⁷:

Պտղոմեոսի «Աշխարհագրության» հատորներում Հայաստանին վերաբերող տեղանունների ցուցակը գրքի հինգերորդ հատորում է՝ բաժանված երկու մասի: Փոքր Հայքի քաղաքների ցուցակը տրված է «Ասիայի առաջին քարտեզ» գլխում, որը պարունակում է 79 տեղանուն, որոնցից կարևորներն են Մելիտանան (Մալաթիան), Նիկոպոլիսը, Սատալան (Սատաղը) և Կոման: Մեծ Հայքի ցուցակը տրված է «Ասիայի երրորդ քարտեզ» գլխում, որտեղ առկա են 85 տեղանուններ, ներառյալ Արտաշատը, Արմավիրը, Տիգրանակերտը, Արշամաշատը և Տուշպան (Վանը) (տե՛ս քարտ. 8–10)²⁰⁸: Նույն գլխում Աղվանքի համար ցուցակագրված են 36 տեղանուններ: Հաջորդ՝ վեցերորդ գրքի առաջին գլխում Հայաստանին կից Փոքր Մարաստանի համար ցուցակում առկա է 25 տեղանուն:

Աշխատությանս հավելվածում տրված են մի քանի պտղոմեոսյան քարտեզներ, իսկ հինգերորդ գլխում առկա են դրանց վերլուծությունները:

նույնությամբ պահպանվել է միայն հայերենով, Ատրպատական տարբերակով, իսկ պարսկերենով այս անվանումը աստիճանաբար փոխվել է՝ դառնալով Ադորբեզան, Ադրբիզան, Ադրբիջան և վերջապես՝ Ազերբայջան:

²⁰⁷ Քանի որ Պտղոմեոսի աշխատությունները մեծ մասամբ քարտեզագրական բնույթի են, ապա դրանց կանդիդատանք աշխատության հինգերորդ գլխում:

²⁰⁸ Մանրամասների համար տե՛ս Robert Hewsen and Mkrtich Khachaturian, *Armenian Place Names in Ptolemy's Geography*, Paris, 1982:

3.3. Հայերի առկայութիւնը Կովկասում՝ ըստ իսլամական աղբյուրների

Երբ արաբները գրավեցին Միջին Արևելքի հնագույն քաղաքակրթութիւն ունեցող երկրները, նրանք խոհեմութիւն ունեցան ազատութիւն տալու տեղում բնակվող մտավորականներին ու գիտնականներին՝ զբաղվելու և զարգացնելու իրենց արվեստն ու գիտութիւնը: Շատ խալիֆաներ գիտական կենտրոններ հիմնեցին Բաղդադում, Կահիրեում, Կորդոբայում ու Հյուսիսային Աֆրիկայում: Այս ընթացքում հին հունա-հռոմեական մշակույթին պատկանող գրականութիւնը թարգմանվեց արաբերեն, որն իսլամական աշխարհի ընդհանուր գրական լեզուն էր համարվում²⁰⁹:

Այսպես կոչված «արաբ» աշխարհագրագետներից շատերն իրականում պարսիկ էին կամ ունեին պարսկական ծագում: Նրանց մեջ կային շատ նշանավոր գիտնականներ՝ արաբական քարտեզագրութիւն դպրոցի հիմնադիր Աբու Զեյդ Իբն Սա՛հլ ա՛լ-Բա՛լխին (850–934), Իսհաղ Իբն Մուհամմա՛դ ա՛լ-Իսթա՛խրին (մահ. 957 թ.), Աբու-Ռեյհան Բիրունին (972–1048), Զա՛քա՛րիա Իբն Մուհամմա՛դ Ղա՛զվինին (1203–1283), Հա՛մդ-Ուլլա ա՛լ-Մոսթոուֆին (1281–1339) և բազմաթիվ ուրիշներ: Արաբ ճամփորդներից շատերը, մասնավորապես Իբն Բա՛թու՛թան (1304–1368/9), եղել է աշխարհի շատ երկրներում, այդ թվում՝ Կասպից ծովի հյուսիսում (1330–1335), Ռուսաստանում, Կենտրոնական Ասիայում, Չինաստանում, Հնդկաստանում (1345–1349) և այլ հեռավոր երկրներում: Արաբ ճամփորդներն իրենց գործունեութիւնը փաստորեն ընդլայնում էին ժամանակին ճանաչված աշխարհի սահմանները՝ իրենց ուղեգրութիւններում նշելով մանրակրկիտ բացատրութիւններ և դիտարկումներ:

Իսլամական աշխարհագրութիւնն ու քարտեզագրութիւնն մեջ, հատկապես Հայաստանին, Ադրբեյջանին ու Աղվանքին վերաբերող գլուխների բոլոր բացատրական տեքստերում և քարտեզներում հստակ կարելի է տեսնել, որ այս մասնագետների տեսակետից Ադրբեյջանը նույնն է, ինչ-որ ներկայի Իրանի Ատրպատական նահանգը, մինչդեռ Աղվանքն առանձին մի երկիր է՝ տեղադրված Արաքսի և Կուրի հյուսիսային ափերին, նաև այն, որ այս երկուսն առանձին ժողովուրդներ, երկրներ ու պետութիւններ են: Միևնույն ժամանակ Հայաստանն այս բոլոր քարտեզներում առկա է որպես մի երրորդ երկիր՝ Դվին մայրաքաղաքով, արաբերենով՝ Դա՛բլ: Իսլամական աշխարհագրութիւնն տարբեր հեղինակների գրքերում ու քարտեզներում շրջանի երեք երկրներին պատկանող քաղաքների վերաբերյալ բերված տեղեկութիւնները, որոշ չնչին բացառութիւններով, ամբողջովին համապատասխանում են միմյանց:

Իսլամական աշխարհագրագետներն իրենց գրութիւններին կից գծագրել և ավելացրել են քարտեզներ: Աշխատութիւնն այս մասում կվերլուծվեն աշխար-

²⁰⁹ Ehsan Masood, *Science of Islam*, London, 2009. Տե՛ս նաև Michael Morgan, *Lost History*, Washington DC, 2007.

հազարութեանն ու պատմական աշխարհագրութեանը վերաբերող գրավոր տեղեկութիւնները, իսկ քարտեզների ուսումնասիրութիւնը կատարվի հինգերորդ գլխում:

3.3.1. Հնագույն իսլամական պատմիչներից ու աշխարհագրագետներից Ա՛հմա՛դ Իբն Յա՛հյա ա՛լ-Բա՛լազորին (մահ. 892 թ.) Ազրբեջանը համարում էր Պարսկաստանի նահանգներից մեկը: Իններորդ դարի այս պատմիչը իր «Քիթաբ Ֆոթուհ ա՛լ-Բուլղան (Գիրք երկրների նվաճումների)» աշխատութեան մեջ «Ազրբեջանի նվաճումը» գլխում նշում է.

Արդաբեյլեցի Հուսեյն Իբն Ա՛մրուն պատմում է՝ ինչպես Օմա՛ր Իբն Խա՛թթաբը Ազրբեջանի տիրակալ նշանակեց Հա՛դիֆա՛թ բին ա՛լ-Յա՛մա՛նիին... Երբ Հա՛դիֆա՛թն իր հրամանը ստացավ, գնաց Ազրբեջանի Արդաբեյլ քաղաքը, որտեղ բնակվում էր հարկահավաք մարզպանը: Բայց մարզպանը մինչ այդ հաջողել էր Ազրբեջանի Բաջբեյվան, Մեյմանդ, Նարին, Սարաբ, Միանե և այլ քաղաքներից զինվորներ հավաքել: Նրա կազմած բանակը դաժանաբար մարտնչեց Հա՛դիֆա՛թի իսլամական ուժերի դեմ²¹⁰:

Վերոհիշյալ բոլոր քաղաքները գտնվում են Պարսկաստանի Ազրբեջան նահանգում՝ փաստելով, որ արաբներն այս շրջանն էին համարում իրական Ազրբեջանը: Նույն աշխատութեան «Հայաստանի նվաճումը» գլխում Բալազորին թվարկում է Հայաստանի քաղաքների անունները, որոնց շարքում են Սամոսատան, Կալիկլան, Խլաթը, Արճեչը, Զուրգանը, Սիսականը, Բագրևանդը, Դվինը և այլն²¹¹:

3.3.2. Իններորդ դարի պարսիկ գիտնական Իբն Խուրդադբեհհը (մոտ 820–912) նաև իսլամական աշխարհի հայտնի աշխարհագրագետներից էր: Նա իր աշխարհագրական «Քիթաբ-ուլ Մա՛սալեք վա ա՛լ-Մա՛մալեք (Գիրք ճանապարհների և երկրների)» երկում Ազրբեջանի և Աղվանքի (Առան) մասին գրում է հետևյալը.

²¹⁰ Yahya ibn Jaber al-Baladhuri. *Kitabi Futuh ul-Buldan*, Leiden, 1866, արաբերեն մաս, էջ 325–326: Տե՛ս նաև Баладзори, *Книга завоевания стран*, перевод П. К. Жызе, Баку, 1927, էջ 23:

²¹¹ al-Baladhuri, նշվ. աշխ., էջ 193: Տե՛ս նաև Баладзори, նշվ. աշխ., էջ 5:

Առանի, Գուրգանի և Սիաջանի երկրները Կասպերի աշխարհամասի մասն են կազմում, որոնց տիրեց Անուշիրվանը²¹²:

Մեկ այլ տեղ նա նշում է.

Հյուսիսում, որը Պարսկաստանի քառորդ մասն է կազմում, իշխում էր Ադապատկան անունը կրող գորավարը: Այս շրջանի մեջ են մտնում Հայաստանը, Ադրբեջանը, Ռեյը, Դեմավենդը, որի կարևոր քաղաքն է Շալանբան...²¹³

Իբն Խուրդադբեհը նշում է Ադրբեջանին պատկանող հետևյալ քաղաքների անունները. «Մարաղա, Միանջ [Միանե], Արդաբիլ, Վարթան [Վարզական], Թավրիզ, Մարանդ, Խոյ, Մողան, Բարզանդ, Ջաբերվան, Ուրմիա և Սալմաստ...»²¹⁴, «...Վարթան [կամ Վարզական քաղաքը] տեղադրված է Հայաստանի և Ադրբեջանի սահմանի վրա...»²¹⁵: Բոլոր վերոհիշյալ քաղաքները մշտապես եղել ու այժմ էլ Պարսկաստանի Ադրբեջան կամ Ատրպատական կոչվող նահանգում են, ինչը մեկ անգամ ևս փաստում է, որ Ադրբեջանը միշտ եղել է Պարսկաստանի նահանգներից մեկը: Վարզական քաղաքը, որը նշված է որպես Հայաստանի և Ադրբեջանի սահման, այժմ Թավրիզից 50 կիլոմետր հյուսիս-արևելք է, Արաքսից 40 կիլոմետր հարավ, ներկա Իրանի և Հայաստանի սահմանի մոտ:

Իբն Խուրդադբեհի աշխատության մեջ Ադվանքը նշվում է երեք էջերի բացատրություններում, Ադրբեջանին (Պարսկաստանի նահանգ) հատկացված է 14 էջ, իսկ Հայաստանին՝ 20 էջից ավելի: Սրանք վկայում են այս երկրների կարևորության աստիճանն աշխարհագրական, առևտրական ու քաղաքական տեսակետներից:

Բաբվում 1986-ին հրատարակված Իբն Խուրդադբեհի գրքի ռուսերեն թարգմանություն մեջ առկա է Հարավային Կովկասի քարտեզը, որի փոխելը, ըստ երևույթին, գրաքննիչի աչքից վրիպել է: Քարտեզը գալիս է փաստելու վերը նշվածը: Այստեղ Հայաստանի սահմանը Վանի արևմուտքից հասնում է մինչև Սևան և նրանից էլ անց, իսկ Ադրբեջանը տեղադրված է Արաքսի հարավից մինչև Ուրմիո լիճը գտնվող տարածքում: Ադրբեջանից հյուսիս են տեղադրված Ադվանքի տարբեր շրջանները, ինչպիսիք են Շիրվանը, Մողանը, Շաքին,

²¹² Abul Kasim Obaidallh ibn-Abdallah Ibn Khordadbeh, *Kitab al-Masalik va al-Mamluk*, original Arabic with French translation, Bibliotheca Geographorum Arabicorum, Part 6, volume 39 “From the Islamic Geography” series, Leiden, 1889, արաբերենի էջ 118–120:

²¹³ Անդ:

²¹⁴ Անդ, էջ 118:

²¹⁵ Անդ, էջ 119:

Թաբասարանը և այլն, իսկ Աղվանք անվանումն այստեղ բացակայում է (տե՛ս Հավելվածի քարտեզ 25)²¹⁶:

3.3.3. Իսլամական քարտեզագրության մեջ առաջատար դեր ունեն Ա՛բու-Զա՛իբ Իբն Սա՛հլ ա՛լ-Բա՛լլիին (850–934), ում անունով էլ անվանվում է իսլամական քարտեզագրության ամենակարևոր և ամենամեծ տարածում ունեցող դպրոցը: Նա գիտնական էր ու մաթեմատիկոս և ապրում էր Բաղդադում, սակայն կյանքի վերջին շրջանում տեղափոխվեց Միջին Ասիայի Բալխ քաղաքը (այժմ՝ Աֆղանստանում), որտեղ սկսեց աշխատել աշխարհագրական նյութերի վրա:

Նրա անունով կոչվող «Բա՛լլի» դպրոցին պատկանող քարտեզներն ունեն մի քանի յուրահատկություններ, որոնք առկա են համարյա բոլոր իսլամական քարտեզներում: Այս դպրոցին պատկանող քարտեզագրական և աշխարհագրական գրքերի մեջ առանձին գլուխներում աշխարհի և աշխարհամասերի վերաբերյալ տրվում են բացատրություններ, որոնց կցվում են պատկան տարածաշրջանները պատկերող քարտեզները՝ ընդհանրապես ուղղորդված վերհարավով²¹⁷: (Արաբներն աշխարհը նաև բաժանում էին եղանակային գոտիների)²¹⁸:

²¹⁶ Ибн Хурдадбех, Книга путей и стран, Баку, 1986, էջ 290, քարտեզ 10:

²¹⁷ Երբ քարտեզի վերևում հյուսիսն է կամ, ասենք, արևելքը, քարտեզը կոչվում է «ուղղորդված հյուսիսով» կամ «ուղղորդված արևելքով»:

²¹⁸ Աշխարհացույց քարտեզում քնակելի աշխարհը բաժանված է յոթ եղանակային գոտիների: Սրանց մեջ նշված կարևոր ծովերից է Միջերկրականը (Հոմաի ծովը), որի արևելյան վերջավորությունը պատվում է հյուսիս ու միանում Սև ծովին: Հարավում առկա է մեծ ծով/օվկիանոսը, որը Հնդկական օվկիանոսն է՝ միացած Պարսկական ու Արաբական ծոցերին, ներառյալ տարբեր կղզիները: Հյուսիսում Կասպից ծովը (Բահր-ի Խազար) ցույց է տրվում որպես մի լիճ, որը երբեմն պարունակում է մի քանի կղզի, սրան հարևան են Արալյան լիճը (Բահր-ի Խորազմ) և Ամուդարյա գետը: Սա արդեն հին հունական քարտեզագրության սրբագրված տարատեսակն է, որտեղ Կասպից ծովը հաճախ ցույց էր տրվում որպես Հյուսիսային օվկիանոսին միացած մի ծովածոց: Տիգրիսը (Դեջլե) և Եփրատը (Ֆորաթ) պատկերվում են դեպի Պարսից ծոցը հոսող գետեր, իսկ Նեղոսի հինգ ակունքներն աֆրիկյան Լուսնի լեռներն են նշում, որտեղից հինգ գետեր թափվում են մի լճի մեջ՝ այստեղից միանալով մեկ գետի, և հոսում ու հասնում Միջերկրական ծով:

Համատարած օվկիանոսն ու Ղաֆի լեռները շրջապատում են երկրի բոլորակը: Աստվածաշնչյան Գոգ և Մազոգ ցեղախմբերը ցուցադրվում են առանձնացած ոչ թե Ալեքսանդր Մակեդոնացու, այլ պարսիկ թագավոր Խոսրով Անուշիրվանի (ձանաչված որպես «Արդարադատ Անուշիրվան» انوشیروان دادگر) կառուցած պարսպով, որն այս վայրագ ցեղերին հեռու էր պահում «առաջատար» մարդկությունից (տե՛ս նաև Հին կտակարան, Եզեկիել, Գլուխ 38 և 39): Այս պարսպը և դրա մեջ կառուցված դարպասը հայ գրականության մեջ հիշվող Ճորա պահակն է, որի տարբեր անվանումներն են՝ Ալանաց, Կասպից և Երկաթե դարպասներ: Մանրամասների համար տե՛ս Ռուբեն Գալսյան, Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում. Հայաստան, Վրաստան և Ադրբեջան, Երևան և Լոնդոն, 2007, էջ 16–18, 44–45, 56–57:

Իսլամական աշխարհագրական ձեռագրերից շատերը կարող են պարունակել աշխարհացույց քարտեզներ, բայց ինչ վերաբերում է երկրների ու տարածաշրջանների քարտեզներին, ապա սրանք հիմնականում իսլամական երկրների ու տարածաշրջանների քարտեզներ են: 10-րդ դարի պարսիկ ճամփորդ ու աշխարհագրագետ ա՛լ-Մուկա՛դդա՛սին (945 — մոտ 1000 թթ.) իր 985 թ. շարադրած աշխարհագրական երկում գրում է.

Այստեղ մենք գրում ենք իսլամական աշխարհի մասին, և մենք մեզ չենք անհանգստացնում անհավատների երկրներով և օգուտ չենք տեսնում դրանց մասին խոսելուց: Բայց և այնպես մենք կխոսենք նրանց մասին, որոնց մեջ ապրում են նաև մուսուլմաններ²¹⁹:

Բալխի աշխարհագրական դպրոցի ձեռագրերում տարածաշրջաններին ու երկրներին հատկացված քարտեզները հիմնականում կենտրոնանում են Իրանի, Միջին Արևելքի և Կենտրոնական Ասիայի վրա: Ընդհանրապես գրքի սկզբում առկա է աշխարհացույց քարտեզը, որին հաջորդում են տարածաշրջաններին նվիրված բացատրական գլուխներ ու դրանց քարտեզները, որոնցից են Արաբիան, Ֆարսը, Մազրիբը, Քիրմանը, Իրաքը, Ջազիրան (Միջագետք), Փարսը, Խուզիստանը, Սիստանը, Սինդը, Հինդը, Խազարը, Դեյլամն ու Թաբարիստանը, Խորեզմը, Միսրն ու Շամը (Սիրիա): Աշխարհացույց քարտեզներում իսլամական աշխարհից դուրս հիշատակվելու պատվին են արժանանում ընդամենը մի քանի երկիր, որոնցից են Անդալուզիան, Ռումը (Հռոմը կամ Բյուզանդիոնը), Բուլղարիան, Ռուսաստանը, Աղվանքը, Հայաստանը, Սակալիբան²²⁰ (Սակերը), Հնդկաստանը և Ջինաստանը: Ոչ իսլամական երկրների համար առանձին քարտեզ չէր պատրաստվում, բացառությամբ Աղվանքի ու Հայաստանի, որոնք Արաքսի հարավում տեղակայված Պարսկաստանի հյուսիսարևմտյան նահանգի՝ Ատրպատականի հետ միասնաբար պատկերվում են առանձին քարտեզի մեջ և կրում «Հայաստանի, Ատրպատականի ու Աղվանքի քարտեզ» անվանումը: Սա ընդհանրապես միակ քարտեզն է, որն ուղղված է հյուսիսով վեր:

Իսլամական քարտեզների մեջ Կովկասյան լեռներից հարավ գտնվող երկրներից Կողքիսի և Վիրքի անունները չեն հիշատակվում, փոխարենը Ադրբեջանը կամ Ատրպատականը մշտապես ներկա է որպես Պարսկաստանի հյուսիսարևմտյան նահանգ: Աղվանքը նույնպես ներկա է իր պարսկերեն և արաբերեն «Առան» անվանումով: Այս երկիրը հիշատակվում է բոլոր իսլամական քար-

²¹⁹ Al-Muqaddasi, *The best divisions for Knowledge of the Regions*, translated from by Arabic Prof. Collins, Reading, 2001, էջ 8: Բնագրի էջ 9:

²²⁰ Այս անվանումը արաբները տալիս էին սլավոններին, խազարներին և Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայում բնակվող ցեղերին, որոնք հաստատված էին Բյուզանդական կայսրությունից հյուսիս: Sten *Encyclopaedia of Islam*, New Edition, Volume 8, Leiden & London, 1995, էջ 872–881:

տեղներում, քանի որ տեղի բնակչությունն այդ ժամանակներից սկսած մասամբ կրոնափոխ էր եղել և ընդունել իսլամը, հետևաբար այս երկիրն արդեն սկսել էր համարվել իսլամական: Իսլամական քարտեզագրություն մեջ այս երեք երկրների տեղադրումը այսպես է ներկայացվում.

- Աղվանքը՝ տարածված Կուր գետի երկու ափերին՝ Թիֆլիսից մինչև Կասպից ծով:
- Ատրպատականը՝ Արաքսի հարավային ափերին՝ Ուրմիա լճից արևելք:
- Հայաստանը՝ Արաքսի հյուսիսում և հարավում՝ Ուրմիա լճից արևմուտք:

Հայաստանի, Ադրբեջանի ու Աղվանքի մասին վերոհիշյալ նկատառումը հաստատում է արաբ աշխարհագրագետ Աբուլֆեդան՝ իր «Թա՛ղվիմ ուլ-Բուլդան» գրքում՝ անելով հետևյալ դիտողությունը. «Քանի որ այս երկրներն իրար հետ շատ մոտ հարաբերություններ ունեն, մասնագետները նրանց տեղադրում են նույն քարտեզում և շարադրանքներում նրանց միատեղ են ներկայացնում»²²¹:

3.3.4. Պարսիկ պատմիչ և աշխարհագրագետ Իբն ա՛լ-Ֆա՛ղիհ Հա՛մա՛ղանին (10-րդ դարի սկիզբ), որի «Մուլթա՛սա՛ր ալ-Բուլդանը (Երկրների համառոտ գիրք)» աշխատությունն աշխարհագրական կարևոր երկերից է, ծնվել է Իրանի Համաղան քաղաքում, որը, ըստ Ֆ. Մամեդովայի տեսությունն ու Իդրար Ալիևի քարտեզների, հնագույն Ադրբեջանի քաղաքներից է²²²:

Այս աշխատության մեջ Ադրբեջանին հատկացված է 3 էջ, Հայաստանին՝ 17 էջ, իսկ Առանը նշված է միայն երկու տեղ: Ադրբեջանին վերաբերող գլխում հեղինակը նրա սահմանները նշում է Պարտավից մինչև Զանջան, որը գրեթե համապատասխանում է Իրանի Ատրպատական նահանգի տարածքին: Այստեղ նշվող քաղաքներից են Սալմաստը, Մողանը, Խոյը, Վարսականը, Բայլականը, Մարաղան, Նեյրիզը և Թավրիզը²²³: Հայաստանի քաղաքների շարքում նշվում են Պարտավը, Շաքին, Կապաղակը, Դվինը, Բագրևանդը, Նախիջևանը, Խլաթը, Արճեչն ու Կալիկլան (Էրզրումը)²²⁴: Իբն Ֆա՛ղիհը Առանի անունը նշում է միայն հպանցիկ, իբրև մի փոքրիկ երկիր, որի միջով անցնում են Արաքսը և Կուրը, և որը գտնվում է այն շրջանում, որտեղ Բայլական քաղաքն է²²⁵:

²²¹ Աբուլֆեդա, *Թաղվիմ ուլ-Բուլդան*, թարգմ.՝ Արդուլլահ Այաթի, Թեհրան, 1970, էջ 442, պարսկերեն:

²²² *Ozetli Tarih Atlası* (Baki, 1986): Տե՛ս հավելվածի քարտեզ 1-ը:

²²³ Իբն ալ-Ֆաղիհ, *Մուխթասար ուլ-Բուլդան*, թարգմ.՝ Հ. Մասուդի, Թեհրան, 1970, էջ 129, պարսկերեն:

²²⁴ Անդ, էջ 129-130:

²²⁵ Անդ, էջ 139:

3.3.5. Բաղդադում ծնված Ա՛բու ա՛լ-Հա՛սան Ալի Իբն Հուսեյն Ա՛լի ա՛լ-Մա՛սուդի (մոտ 896–956) արաբ պատմաբանը, աշխարհագրագետն ու ճամփորդը պարզապես ճանաչված է Մաս՛ուդի անունով: Երիտասարդ տարիքից նա սկսել է ճամփորդել Ադրբեջանի, Հայաստանի ու Կովկասի տարածքում, հասել է արևելքում մինչև Հնդկաստան ու հարավում՝ աֆրիկյան տարբեր երկրներ: Կովկասի և հարակից շրջանների մասին նա գրում է.

Կասպից և Սև ծովերի միջև բնակվել էին օղուզ կոչվող թյուրքական ցեղերը, որոնք այս ծովերը միացնող գետերը սառչելիս ձիով անցնում էին սառած գետերով ու հարձակվում խազարների վրա... Պարսից թագավոր Խոսրով Անուշիրվանը Դերբենդում կառուցեց Կասպից դարպասները [Ճորա պահակը], որպեսզի իր երկիրը պահպանի խազարների, ալանների, ավարների ու թյուրքական ցեղերի ներխուժումից: Կասկած չկա, որ հակառակ դեպքում ալանները, ավարները և թյուրքերը կգրավեին Բարդան [Պարտավը], Ադվանքը, Բայլականը, Ադրբեջանը, Ջանջանը, Աբհարը, Ղազվինը, Համադանը, Դինավարը, Նիհավանդն ու մինչև Քուֆայի ու Բասրայի սահմանները²²⁶:

Թեև իններորդ դարում այս ցեղերին չհաջողվեց գրավել Կովկասյան լեռներից հարավ ընկած տարածքները, սակայն շատ ժամանակ չանցած թյուրքական ցեղերը հասան մինչև Մա՛սուդիի վերը նշած ադվանական ու ադրբեջանական, ինչպես նաև հայկական քաղաքներն ու շրջանները: Սկզբնական շրջանում նրանք հիմնականում զբաղվում էին տեղաբնակներին կողոպտելով ու շահագործելով, ապա աստիճանաբար հաստատվեցին ու այսօր դարձել են տեղաբնակներ, որոնք տարածաշրջանի իրական բնիկներից մեկին՝ հայերին, այժմ կոչում են օտարներ և նորեկներ:

3.3.6. Իսլամական աշխարհագրագետների մեջ ամենակարևոր ու կարկառուն դեմքերից մեկը պարսիկ աշխարհագրագետ Ա՛բու Իսհազ Իբրահիմ բին Մուհամմա՛դ ա՛լ-Ֆարսի ա՛լ-Իսթա՛խրին է (մահ. 957 թ.), որի ստեղծագործությունն զուգորդոցն ու հիմնական աշխատանքը «Քրիթաբ ուլ Մա՛սալիք ուա ա՛լ-Մա՛մալիք (Գիրք ճանապարհների և երկրների)» հատորն է: Ձեռագրի մեզ հասած պատճենները պարունակում են 19–21 քարտեզ: Ամեն քարտեզ ունի իրեն վերաբերող տեքստ, որտեղ տրված է քարտեզում պատկերված տարածքի աշխարհագրությունն ու ժողովրդի վերաբերյալ մանրակրկիտ տեղեկու-

²²⁶ Mas'udi, *From The Meadows of Gold*, translated by Paul Lunde & Caroline Stone, London, Penguin, 2007, էջ 17–18, 27, 28: Sīu ūlu Al-Mas'udi, *Meadows of Gold and Mines of Gems*. Translated by Aloys Sprenger, London, 1841, էջ 401, 416 և 459:

թյուններ²²⁷: Կովկասյան լեռներից հարավ գտնվող տարածաշրջանին վերաբերող գլուխը կոչվում է «Հայաստանի, Առանի և Ազրբեջանի մասին», որտեղ բացատրված ու նշված են այս երեք երկրներն ու նրանց քաղաքները, գետերը, լճերն ու լեռները: Տարածաշրջանի երկրներին պատկանող քաղաքների վերաբերյալ Իսթախրին գրում է²²⁸.

Ազրբեջան Ամենամեծ քաղաքը Արդաբեյլն է: Քաղաքներն են Մարաղան, Ուրմիան, Միանեն, Դեհխարզանը, Սալմաստը, Նաշուին, Մարանդը, Թավրիզը, Բարզանդը, Մողանը, Ջաբերվանը, Ուշնեն [Օշնավիյե] և այլ փոքր քաղաքներ:

Առան Պարտավը, որը մեծ քաղաք է: Քաղաքներն են Բաբուլ-Աբուաբը [Դերբենդ], Թիֆլիսը, Բայլականը, Վարթանը, Շիրվանը, Շամախին [Շամախա], Աբխազը, Շաբերանը, Ղաբլան [Կապադակ], Շաքին, Գյանջան, Շամխորը և այլ փոքր քաղաքներ:

Հայաստան Դվինը, որն Արդաբեյլից ավելի մեծ քաղաք է, ապա Նախիջևանը, Բերկրին, Խլաթը, Մանազկերտը, Վարզանը, Բիթլիսը, Կալիկլան [Կարին կամ Էրզրում], Արզանը, Միաֆարկինը²²⁹ և Սարաջը, որոնք բոլորը շեն են:

Գլխի վերջում տրված է շրջանի քաղաքների ու ճանապարհների մղոնաչափը, որը նմանվում է Շիրակացու և այլ հայկական ու այլ աղբյուրներում գտնվող մղոնաչափերին²³⁰: Իսթախրիի ձեռագրի քարտեզներն ընդհանրապես գեղեցիկ գծված ու վառ գույներով ներկված արվեստի աշխատանքներ են (օրինակի համար տե՛ս հավելվածի քարտ. 26):

Այս բոլորը գալիս են փաստելու Աղվանքի ու Ազրբեջանի տարբեր երկրներ լինելու պարագան:

3.3.7. Մեզ հասած իսլամական հնագույն աշխարհագրական աշխատանքներից մեկն էլ Ա՛բուլղասիմ Մուհամմա՛դ Իբն Հա՛ուքալի (ճամփորդել է 943–978 թթ.) «Սուրա՛թ ուլ-Ա՛րդ (Երկրի պատկերը)» աշխատությունն է,

²²⁷ Ալ-Իսթախրիի ձեռագրից մեզ է հասել 34 օրինակ, որոնց մեծ մասն ունեն քարտեզներ, բայց դրանցից ամենահինը 1173 թվականին պատկանող ընդօրինակումն է: Տե՛ս նաև Harley, J. B. & Woodward, David, *The History of Cartography*, Chicago, 1992/1 & 1992/2, էջ 130–136:

²²⁸ Ալ-Իսթախրի, *Քիթաբ ուլ Մանալիք ուս ալ-Մանալիք*, թարգմ.՝ Իրազ Աֆշարի, Թեհրան, 1961, էջ 155–159:

²²⁹ Տիգրանակերտը՝ հին Հայաստանի մայրաքաղաքը, այժմ Թուրքիայի Սիլվան քաղաքի մոտակայքում է: Տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Երևան, 1991, Հատոր 3, էջ 678, 818: Նաև Երևան, 2001, Հատոր 5, էջ 92:

²³⁰ Ալ-Իսթախրի, նշվ. աշխ., էջ 160–161:

որը պարունակում է մոտ 21 քարտեզ ու դրանց վերաբերյալ մանրակրկիտ բացատրություններ:

Իբն Հաուքալը իսլամական քարտեզագրության «Բա՛լխի» դպրոցին պատկանող իր աշխատության մեջ ներկայացնում է ժամանակի ճանաչված աշխարհը, որն իր համար հիմնականում իսլամական երկրներն ու նահանգներն էին: Իբն Հաուքալը տալիս է գլխավոր քաղաքների, գետերի ու լեռների անվանումներն ու դրանց վերաբերյալ մանրամասն բացատրություններ: Նրա գրքի վեցերորդ գլուխը նվիրված է Կովկասյան լեռներից հարավ ընկած երեք երկրներին: Այդ գլուխը կոչվում է «Արմանիյյա, Ազերբայիջան վա Առուան (Հայաստան, Ադրբեջան ու Աղվանք)», որի տեքստում գտնում ենք այս երկրներին պատկանող քաղաքների անվանացանկը: Գլխի սկզբում նա գրում է.

Այս գլխում կխոսենք Բյուզանդիոնի հարևանությունը և նրա արևելքում գտնվող այլ իսլամական երկրների մասին: Շարադրությունը կսկսենք Հայաստանով, Աղվանքով և Ադրբեջանով, որոնց ես համարում եմ մեկ տարածաշրջան, և որոնց տիրակալը մեկ հոգի էր²³¹:

Այս գլխում ներկայացված երեք հարևան երկրների քաղաքներից են հետևյալները²³².

Առան Բաբ-ուլ-Աբուլաբ [Դերբենդ], Շիրվան, Շամախի [Շամախա], Շաքի, Թիֆլիս, Զենգե [Գյանջա], Բարդազե [Պարտավ]:

Ադրբեջան Մարանդ, Խունջ, Թավրիզ, Արդաբիլ, Զանջան, Մաբադա, Դաջերման, Ուշնե [Օշնավիյե], Խոյ, Ուլմիա, Բուհայրե Քաբուլթան [Ուլմիո կամ Կապուտան լիճ]:

Հայաստան Խլաթ, Դվին, Վարդան, Կալիկլա [Կարին կամ Էրզրում], Արզան, Բիթլիս, Միաֆարկին, Բուհայրե Խլաթ [Վանա լիճ] և Զաբալ Հարիս [Արարատ լեռ]:

Թե՛ քարտեզից (տե՛ս հավելվածի քարտեզ 27) և թե՛ շարադրված աշխատության վերոբերյալ տողերից պարզ է, որ Ադրբեջանն ու Աղվանքը երկու տարբեր երկրներ են՝ տեղադրված Արաքսի հարավային և հյուսիսային ափերին:

²³¹ Իբն Հաուքալ, *Սուրաթ ու-Արգ*, թարգմ.՝ Դր. Ա. Շոարի, Թեհրան, 1966, էջ 81, պարսկերեն:

²³² Իբն Հաուքալ, նշվ. աշխ., էջ 83-91:

3.3.8. Անհայտ հեղինակի կողմից 982 թ. պարսկերենով շարադրված աշխարհագրական Հոդուդ ուլ-Ալամ (Աշխարհի սահմանները) ձեռագիրը եզակի մի աշխատություն է: Այն թարգմանել և իր բացատրական տեղեկություններն է կցել հանրահայտ ուսուսարևելագետ Վլադիմիր Մինորսկին²³³:

«Հոդուդ ուլ-Ալամ» աշխատությունն ընթերցողին է ներկայացնում ճանաչված աշխարհի երկրներն ու ժողովուրդները: Այստեղ տարբեր գլուխներ են հատկացված Հայաստանին, Ադրբեջանին ու Աղվանքին: Վերոհիշյալ երեք երկրներին պատկանող քաղաքները ձեռագիրը ներկայացնում է հետևյալ կերպով²³⁴:

Ադրբեջան Մայրաքաղաքն է Արդավիլը, կարևոր քաղաքներն են Ասնան, Ուշնեն, Սարաբը, Միանեն, Խունջը, Ջաբերվանը, Թավրիզը, Մարաղան, Բարզանդը, Մոզանն ու Վարթանը:

Հայաստան Մայրաքաղաքն է Դվինը, կարևոր քաղաքներն են Դեհխարզանը, Ուրմիան, Սալմաստը, Խոյը, Բերկրին, Արճեչը, Խլաթը, Նախիջևանը, Բիթլիսը, Մալազկերտը, Կալիկլան [Էրզրում], Միաֆարկինը, Մարանդը, Ահարը, Սունգանն ու Կաբան:

Աղվանք Մայրաքաղաքն է Բարդան [Պարտավը], կարևոր քաղաքներն են Բայլականը, Գանձակը, Շամխորը, Խունանը, Բարդուկին, Ղալան, Թիֆլիսը, Շաքին, Մուբարաքին, Սունբաթմանը, Սարարը, Կաբալան [Կապաղակ], Բարդիջը, Շիրվանը, Խուրսանը, Խուզիվանը, Դերբենդը և Բաքուն:

Մի փաստ ևս այն մասին, որ այստեղ առկա են երեք տարբեր երկրներ՝ ամեն մեկն իր տարածքով ու ժողովուրդով:

3.3.9. Մուհամմադ Բին-Ահմեդ Շամսուդդին ալ-Մուղադդա'սին (945-1000 թթ.) 10-րդ դարի հայտնի արաբ/պարսիկ աշխարհագրագետներից էր,

²³³ Ձեռագրի պատճենը, նրա պարսկերեն տեքստը և Մինորսկու ծանոթագրությունները հրատարակվել են Թեհրանում, տես *Հոդուդ ուլ-Ալամ*, Թեհրան, 2004: 1904-1908 թթ. Մինորսկին աշխատել է Թավրիզի ու Թեհրանի ռուսական հյուպատոսություններում և, առիթն օգտագործելով, ուսումնասիրել է տեղի հին գրականությունն ու գիտական աշխատությունները: Տես նաև Հ. Փափազյան, «Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (10-րդ դար)», *Տեղեկագիր հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի*, Երևան, 1952, No. 5, էջ 73-86: Փափազյանը հավանաբար կուսակցության թելադրանքով ձեռագրին տալիս է տաջիկական ծագում:

²³⁴ *Hodud ul-Alam*, Vladimir Minorsky Translator and Commentary, Cambridge, 1982, for Gibbs memorial, էջ 142-145, քնագրի էջ 32ա-32բ: Տես նաև Մինորսկու *Հոդուդ ուլ-Ալամ* աշխատությունը պարսկերեն, թարգմ.՝ Դր. Ջանիրա Միր-Մեյմանդի և Ղուլամ-Ռեզա Վարսիհրամի, Թեհրան, 2004, էջ 415-433:

որի քարտեզները պարզ են, ցուցադրում են բազմաթիվ կարևոր ճանապարհներ և քաղաքներ: Նրա «Ա՛հսա՛ն ա՛լ-Թա՛ղասիմ Ֆի Մա՛րա՛ֆա՛թ ուլ-Ա՛ղալիմ (Երկրների վերաբերյալ տեղեկությունների լավագույն բաժանումները)» աշխարհագրական երկը պարունակում է տեղեկություններ բազմաթիվ երկրների, գավառների ու դրանց տարածքում բնակվող ժողովուրդների մասին: Գիրքը պարունակում է նաև 20 քարտեզ: Նրա աշխատության բնագիրն արաբերեն է, բայց նաև առկա է դրա պարսկերեն թարգմանությունը, որն ալ-Մուկա՛ղզա՛սիի մայրենի լեզուն էր²³⁵:

Ա՛լ-Ռուհաբ՛ Նափաֆաբ Ջ. Բունիաթովի նշած «Կովկասյան Կուստ» (տե՛ս Գլուխ 2.2) տարածաշրջանի մասին նա գրում է.

Այս շրջանը բաղկացած է երեք մասից, սրանք են Առանը, Ադրբեջանն ու Հայաստանը²³⁶:

Աղվանքը կամ Առանը սկսվում է Արաքսի հյուսիսային ափերից: Այս շրջանի վերաբերյալ հեղինակը նշում է.

Ալ-Ռանի [Առան կամ Աղվանք] շրջանը զբաղեցնում է երկրամասի մեկ երրորդը և նրա մայրաքաղաքն է Պարտավը: Նրա քաղաքներն են Թիֆլիսը, Ղա՛լա՛ն, Խունանը, Շամգուրը, Ջանգան [Գանձակը], Բարդիջը, Շամախին, Շիրվանը, Բաբուն, Շաբարանը, Բաբ-ուլ-Աբուլաբը [Դերբենդ], ալ-Աբխանը [Աբխազը], Ղաբլան [Կապադակ], Մանազկերտը և Թաբլան²³⁷:

Մինչդեռ Հայաստանի վերաբերյալ ալ-Մուկա՛ղզա՛սին գրում է.

Հայաստանը մի կարևոր շրջան է: Այստեղից են գալիս վարագույրներ, գեղեցիկ ժանյակավոր հագուստներ և ուրիշ հատուկ իրեր: Մայրաքաղաքը Դվինն է, և կարևոր քաղաքներից են Բիթլիսը, Խլաթը, Արճեչը, Բերկերին, Խոյը, Սալմաստը, Ուրմիան, Դախերդանը, Մարաղան, Ահարը, Մարանդը, Սանջանը, Կալիկլան և Նուրինը (հավանաբար Նուրիկ)²³⁸:

²³⁵ Այս աշխատության մանրամասների համար տե՛ս Ռուբեն Գալյան, *Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում. Հայաստան, Վրաստան և Ադրբեջան*, Լոնդոն և Երևան, 2007, էջ 52–53:

²³⁶ Al-Muqaddasi, նշվ. աշխ., էջ 303, բնագրի էջ 374–375:

²³⁷ Անդ, էջ 303–306, բնագրի էջ 373–377:

²³⁸ Անդ:

Իսկ Ադրբեջանի, այսինքն՝ Պարսկաստանի Ատրպատական նահանգի վերաբերյալ, ա՛լ-Մուկա՛ղղա՛սին նշում է.

Ազերբայջանը [Ատրպատականը] մի նահանգ է, որի մայրաքաղաքն Արդաբեյլն է... Նրա քաղաքներից են Ռասբան, Թավրիզը, Ջաբերվանը, Խունջը, Միանեն, Սարբը, Բերուան, Վարզականը, Մոզանը, Մեյմանդը և Բարզանդը²³⁹:

Ալ-Մուղա՛ղղա՛սիի քարտեզը ներկայացված է հավելվածի քարտեզ 28-ում:

3.3.10. Արաբ աշխարհագրագետ և գիտնական Ա՛բու ա՛լ-Ֆիդա կամ Ա՛բու-Ֆեդայի (1273–1331) կարևորագույն աշխատություններից մեկն է «Թա՛ղվիմ ուլ-Բուլղան (Երկրների նկարագրություն)» հատորը, որտեղ նախնական բացատրություններ կան երկրագնդի աշխարհագրության մասին, ապա աղյուսակներով տրված են տարբեր երկրների ու շրջանների, քաղաքների ու նրանց պատկանելության, գետերի ու լեռների անվանումները, մարդկանց ապրելակերպն ու առևտուրը: Գրքի գլուխներից մեկը կոչվում է «Հայաստանի, Առանի և Ադրբեջանի մասին», որտեղ Ադրբեջանի սահմանների մասին նա գրում է. «Այս երկրի արևելքում է Դեյլամը [Գիլանը], հարավում են Իրաքն ու ալ-Ջագիրան»: Մրան հաջորդում է այս շրջանի քաղաքների աղյուսակը, որի սյունակներում նշված են քաղաքները, դրանց որ երկրին պատկանելի և քաղաքի մասին որոշակի տնտեսագիտական և ժողովրդագրական տեղեկություններ: Այս գլխի նյութ երկրների ցուցակը կարելի է համառոտել հետևյալ կերպ.

Ադրբեջան Սալմաստ, Ուրմիա, Մարաղա, Արդաբեյլ, Միանե, Մարանդ, Թավրիզ [Առանի սահմանի վրա], Բարզանդ և Սուլթանիե:

Հայաստան Երզնկա, Մուշ, Արզան, Մալազկերտ, Խլաթ, Ոստան, Դվին:

Աղվանք Շիրվան, Նախիջևան, Ուջան, Մոզան Բարդաա [Պարտավ], Շամխոր, Շամշատ, Բաբ-ուլ-Աբուաբ²⁴⁰:

Ահավասիկ մեկ այլ արաբ ճամփորդի ներկայացրած քարտեզը, որտեղ Աղվանքն ու Ադրբեջանը Արաքսի հակառակ ափերին տեղադրված երկու տարբեր երկրներ են:

²³⁹ Անդ, էջ 307, քնագրի էջ 377–378:

²⁴⁰ Արուլֆիդա, *Թա՛ղվիմ ուլ-Բուլղան*, թարգմ.՝ Արդուլլահ Այաթի, Թեհրան, 1970, էջ 450–469, պարսկերեն:

3.3.11. Պարսիկ աշխարհագրագետ Համդուլլահ Մոսթոուֆի ավ-Ղա՛զվի-նիի (1281–1349) «Նուզհա՛թ ուլ-Ղուլուբ» աշխարհագրական հետազոտությունը նվիրված է իսլամական երկրների աշխարհագրությանն ու պարունակում է նրանց քաղաքներին ու ժողովուրդներին վերաբերող բացատրական գլուխներ: Գրքի երրորդ գլխի վերնագիրն է՝ «Ադրբեջան նահանգի մասին»: Այստեղ նա նշում է.

Ադրբեջանը Իրանի մեծագույն և կարևորագույն նահանգն է²⁴¹:

Այսպիսով՝ Մոսթոուֆին էլ իր հերթին, ինչպես բոլոր այլ իսլամական աշխարհագրագետները, Ադրբեջանը համարում է Արաքսից հարավ գտնվող Իրանի Ատրպատական նահանգը, որը պետք է չփոթել գետի հյուսիսում գտնվող Ադվանքի հետ: Ինչպես նշվեց, այս նույնը կարելի է տեսնել բոլոր իսլամական քարտեզների ու աշխարհագրական գրականության մեջ (տե՛ս հավելվածի 25–30 քարտեզները):

3.3.12. Ադրբեջանական հակահայ «գիտական» քարոզչության հիմնադիրներից Զիյա Բուներիսովը 1971 թ. թարգմանել և խմբագրել է Բաքվում ծնված աշխարհագրագետ ավ-Ռա՛շիգ ավ-Բաքուլիի (14–15-րդ դարեր) արաբերենով շարադրված «Քիթաբի թա՛խլիս ավ-Ասար վա՛ Ա՛ջայիբ ուլ-Մոլուբ ավ-Ղա՛հհար (Ամենակարող թագավորների և նրանց զարմանալի ձեռքբերումների գիրքը)» աշխատությունը, որի մեջ ավ-Բաքուլին Ադրբեջանի վերաբերյալ գրում է.

Այս երկիրը գտնվում է Քուհիստանի [Պարսկաստանի] Գիլանի և Դեյլամի շրջանի, Ադվանքի և Հայաստանի միջև: Այնտեղ՝ Թավրիզ և Արդաբիլ քաղաքների միջև է Սավալան լեռը²⁴²:

Այս բացատրությունն ամբողջովին Պարսկաստանի Ատրպատական նահանգին է համապատասխանում՝ այդպիսով մեկ անգամ ևս փաստելով Ադվանքի և Ադրբեջանի տարբեր երկրներ լինելու հանգամանքը: Հայաստանի վերաբերյալ ավ-Բաքուլիի շարադրածը գալիս է փաստելու նույնը, ինչ նշվեց վերը: Նա գրում է.

²⁴¹ Համդուլլահ Մոսթոուֆի Ղա՛զվիի, *Նուզհա՛թ ուլ-Ղուլուբ*, թարգմ.՝ Դր. Դաբիր Սիադի, Թեհրան, 2002, էջ 121, պարսկերեն:

²⁴² Абд ар–Рашид ал–Бакуви. *Китаб Тахус ал–Асар ва ал–Аджаиб ал–Малик ал–Каххар*, Москва, 1971, էջ 61–62: Տե՛ս նաև Ա՛րդ ավ-Ռաշիդ ավ-Բաքուլի, Փարիզի ազգային գրադարանի ձեռագիր համար f.AR–585, էջ 34ր:

Երկիր Ադրբեջանի և Բյուզանդիոնի միջև, որտեղ կան բազմաթիվ քաղաքներ, ամրոցներ ու գյուղեր: Բնակիչները քրիստոնյա են: Այնտեղ են Մեծ և Փոքր Մասիսները, որոնց գագաթը ոչ ոք չի կարող բարձրանալ²⁴³:

Թավրիզի մասին նա գրում է որպես Ատրպատականի (պարսկական Ադրբեջանի) ամենամեծ քաղաքը: Նրա ուղեգրութուններում Աղվանքի (կամ Առանի) մասին որևէ ակնարկ չկա, քանի որ այդ ժամանակաշրջանում Աղվանքը որպես երկիր այլևս գոյություն չուներ:

3.3.13. Բաքվեցի պատմաբան, փիլիսոփա և բանաստեղծ Ա՛բբաս Ղուլի Աղա Բաքիխանովը (1794–1847) համարվում է Ադրբեջանի պատմագիտություն հիմնադիրը: Նրա կարևոր պատմական աշխատությունը՝ «Գյուլխտան-է Էրա՛մ. Շիրվանի և Դաղստանի պատմությունը» գիրքը, ըստ ժամանակի սովորությունների շարադրված է պարսկերենով և թարգմանվել է ադրբեջաներեն²⁴⁴: Ըստ ներկա ադրբեջանական հրատարակությունների.

Նա [Բաքիխանովը] ներկայացնում է մի շարք փաստեր, ներառյալ աշխարհագրական տեղեկություններ Ղարաբաղի, Ղուբայի և նրանց շրջապատի և այլ վայրերի մասին²⁴⁵:

Եվ ահա ինչ է գրում Բաքիխանովը Շիրվանի սահմանների մասին.

Շիրվան երկրի սահմաններն են արևելքում Կասպից ծովը, հարավում՝ Կուր գետը, որը նրան բաժանում է Մոզանի շրջանից և Հայաստանից: Հյուսիս-արևմուտքից Գանեղ [հավանաբար Գանիչ] գետը, որն Իլիսուլից հասնում է մինչև Կովկասյան լեռները... Այսպես՝ ներկա Շիրվանը, Սալյանը, Շաքին, Բաքուն, Ղոբբեն [Ղուբա], Դերբենդը, Թաբասարանը, Կուրը և Սամուրիեն կազմում են այս երկրի մեծագույն և կարևոր մասը²⁴⁶:

Սակայն ակադեմիկոս Զիյա Բունիաթովն իր խմբագրությամբ լույս տեսած բնագրում վերը նշված աշխարհագրական սահմանների մեջ Շիրվանին կից

²⁴³ Անդ, էջ 86 (ռուսերեն թարգմ.) և 52բ:

²⁴⁴ Victor Shnirelman, *The Value of the Past*, նշվ. աշխ., էջ 80:

²⁴⁵ Tale Heydarov, Taleh Baghirova, ed., *Azerbaijan, 100 Questions Answered*, Baku, 2008, էջ 95:

²⁴⁶ Abbas Qoli Aqa Bakikhanov, *The Heavenly Rose Garden. A History of Shirvan and Daghestan*, transl. Willem Floor and Hasan Javadi, Washington, 2009, էջ 5: Տնս նաև Արբասղուլու Աղա Բաքիխանով, *Գյուլխտան-է Էրամ. Շիրվանի և Դաղստանի պատմությունը*, Թեհրան, 2004, էջ 23, պարսկերեն:

«Հայաստան» անունը չի հանդուրժել ու ամբողջովին հանել է՝ թողնելով միայն «Մողան»-ը:

Շիրվանի շրջանը արևելքից սահմանակից է Կասպից ծովին, հարավ-արևմուտքից՝ Կուր գետին, որն այն բաժանում է Մուղանից...²⁴⁷

Բունիաթովի խեղաթյուրումները սկսվել են գրքի վերնագրից: Այստեղ բացատրվող երկրամասը և ներկա Ադրբեջանի Հանրապետության տարածքը որոշ չնչին սահմանային փոփոխություններով միևնույնն են, սակայն քանի որ այս անվանումը չէր համընկնում ադրբեջանական արդի պատմաբանների նպատակներին, ուստի գրքի թարգմանություն մեջ վերնագրի երկրորդ մասը՝ «Շիրվանի և Դաղստանի պատմությունը», հանվել է, ու գիրքը թարգմանվել է կրճատված՝ միայն «Գյուլիստան-է էրա՛մ» խորագրով: Թարգմանություն մեջ Ձ. Բունիաթովի խեղաթյուրումներն ու փոփոխությունները բազմաթիվ են ու տարբեր և վերոբերյալով չեն ավարտվում: Օրինակ՝ ձեռագրի էջ 22-ից նա հանել է մի ամբողջ պարբերություն, որի մեջ շեշտվում է հայերի անունը, իսկ այլ տեղերում «հայեր»-ին կից ավելացրել է «թաթեր» անվանումը²⁴⁸: Բաքիխանովը Ղարաբաղի մասին նշում է հետևյալը.

Աբդուլ Ռահմանը Մողանի կողմից և Բաքրը Հայաստանի կողմից գրավեցին Շիրվանի տարածքի մեծ մասը մասամբ ուժով, մասամբ էլ խաղաղ միջոցներով, բայց հայերի մեծամասնությունը, որոնք դեռևս բնակվում էին դժվարհասանելի շրջաններում, արաբական բանակից հեռացան ու չցանկացան նրանց դիմադրել²⁴⁹:

Ձ. Բունիաթովն իր թարգմանություն մեջ «հայերի» բառը փոխել է «բնակչու՛թյան» բառով և այսպիսով վերջին նախադասությունը դարձրել.

... բայց բնակչության մեծամասնությունը, որոնք դեռևս ավրում էին դժվարհասանելի շրջաններում, արաբական բանակից հեռացան ու չցանկացան նրանց դիմադրել²⁵⁰:

Նույն երևույթը կարելի է տեսնել վերջին տարիների ադրբեջանական հակահայ գրականության էջերում: Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի (Արցախի) քրիստոնյա բնակչությանը՝ «Պատերազմ ընդդեմ Ադրբեջանի» գիրքը

²⁴⁷ Аббас-Кули-Ага Бакиханов, *Гюлистан-и Ирам*, редакция З. Буниатова, Баку, 1991, էջ 11: Տե՛ս նաև Bakikhanov, նշվ. աշխ., էջ 5, տողատակի ծանոթագրություն 1:

²⁴⁸ Бакиханов, Баку, 1991, նշվ. աշխ., էջ 21 և 26:

²⁴⁹ Bakikhanov, նշվ. աշխ., էջ 41: Տե՛ս նաև Բաքիխանով, նշվ. աշխ., էջ 61:

²⁵⁰ Аббас-Кули-Ага Бакиханов, նշվ. աշխ., էջ 48:

Ձ. Բունիաթովից մեկ քայլ ավել է առաջանում՝ է՛լ ավելի աղավաղելով բնագիրը, աշխատելով ընդհանրապես չեղյալ համարել այս շրջանի բնիկ հայերին և նրանց բոլորին դարձնել աղվաններ: Այս երկրորդ թարգմանություն մեջ տեսնում ենք Բաքիխանովի գրածին նման, բայց իրականում նենգափոխված հետևյալ տեքստը, որտեղ «հայ» բառը այս անգամ փոխվել է «աղվան»-ի.

...Աղվան քրիստոնյաների մեծամասնությունն ընդունեց իսլամն ու դարձավ մահմեդական, բայց լեռնաբնակ աղվանները մնացին քրիստոնյա²⁵¹:

Իր աշխատություն մեկ այլ հատվածում Բաքիխանովը պատմում է՝ ասելով.

Չինգիզ Խանը, Դերբենդի վրայով անցնելով դեպի Շիրվան ու Ադրբեջան, բերեց 90 000 զինվոր²⁵²:

Մեկ ուրիշ տեղ նա նշում է.

Այս ժամանակ Բեյսունգորը Շիրվանի բանակով եկավ ու հասավ Ադրբեջան...²⁵³

Այս երկու նախադասություններով Բաքիխանովը հաստատում է, որ Շիրվանը (հնագույն Աղվանքը) ու Ադրբեջանը ժամանակին տարբեր ժողովուրդներ ունեցող երկու առանձին երկրներ էին:

Բաքիխանովն իր գրքում համեմատաբար հաճախ չի նշում «Ադրբեջան» անվանումը, այն էլ, որպես կանոն, «Հայաստան» անվան ընկերակցությամբ (այսինքն՝ «Հայաստանն ու Ադրբեջանը»), բայց տեքստն ուշադրություն չէր տալ թերթողն անմիջապես կհասկանա, որ բոլոր այս նշումները ոչ թե Շիրվանին ու Դաղստանին են վերաբերում, այլ մի երրորդ երկրի, այսինքն՝ Արաքսից հարավ գտնվող Պարսկաստանի Ադրբեջան (Ատրպատական) նահանգին:

Ադրբեջանի պատմագրության հիմնադիր Բաքիխանովը, իր պատմական կարևորագույն աշխատություն մեջ Աղվանքը և Ատրպատականն իրարից առանձնացնելով, Արաքսից հյուսիս ընկած երկրամասին մերժում է տալ «Ադրբեջան» կամ «Հյուսիսային Ադրբեջան» անվանումը՝ այն ներկայացնելով որպես Շիրվան և Դաղստան:

3.3.14 Միրզա Ջա՛մալ Ջա՛վանշիր Ղա՛րաբաղին (1773–1853) Արցախում ծնված պատմաբան էր, որն իր 1840–1844 թթ. շարադրած «Թարիխ-է Ղա՛րա-

²⁵¹ Imranli, նշվ. աշխ., էջ 12: Ընդգծումը հեղինակինն է:

²⁵² Bakikhanov, նշվ. աշխ., էջ 69:

²⁵³ Անդ, էջ 77:

բաղ (Ղարաբաղի պատմութիւնը)» երկը գրի է առել ժամանակի գործածական և պաշտոնական գրավոր լեզվով, այսինքն՝ պարսկերենով: Այս աշխատութեան երկու ձեռագիր օրինակները պահվում են Ադրբեջանի գիտութիւնների ազգային ակադեմիայի գրադարանում: Իր աշխատութեան մեջ Ղարաբաղին գրում է.

Հնագույն ժամանակներում Բարդա՛ա [Պարտավ] քաղաքը բնակեցված էր Հայերով և այլ ժողովուրդներով²⁵⁴:

Ղարաբաղիի ձեռագրի վերոնշյալ հատվածի բնօրինակի պատճենը կարելի է տեսնել հավելվածի քարտեզ 47ա-ում: Նույն նախադասութիւնը դեռևս ամբողջութեամբ առկա է ձեռագրի 1959 թվականի ադրբեջաներեն թարգմանութեան մեջ (քարտեզ 47բ): Սակայն քանի որ ձեռագրում հայերի մասին եղած տողերն Ադրբեջանի իշխանութիւնների այսօրվա քարոզչութեանը հակասում էին, ուստի այս «սխալը ճշտելու» նպատակով ինչ-որ քայլեր պետք է ձեռնարկվեին: Եվ դրանք շատ չուշացան. Նազիմ Ախունդովն իր 1989 թ. վերամբարդած տեքստի մեջ առանց վարանելու ձեռագրի թարգմանութիւնից հանել է հայերին վերաբերող այս նախադասութիւնը (տե՛ս քարտեզ 47գ), ինչպես նաև ուրիշ հիշատակումներ, ուստի, երբ նյութը հայերին է վերաբերում, նույն գրքի երկու թարգմանութիւնները շատ տեղերում բավականին տարբերվում են²⁵⁵:

Ղարաբաղցի պատմաբանն իր աշխատութեան երկրորդ գլուխն անվանել է «Ղարաբաղի վիլայեթի հին սովորութիւնների և պարտավորութիւնների վերաբերյալ», որն այսպես է սկսվում.

Իրանում Սեֆյան սուլթանների իշխանութեան օրոք, որոնք այժմ դրախտում են, Ղարաբաղի վիլայեթն իր ցեղերով, Խամսայի Դիզակ, Վարանդա, Խաչեն, Զրաբերդ և Թալիշ հայկական մահալներով ենթակա էին Գյանջայի բեգլարբեգութեանը²⁵⁶:

Այսպիսով՝ Միրզա Ղարաբաղին հաստատում է, որ վերոհիշյալ հինգ հայկական մահալները (մելիքութիւնները) գոյութիւն են ունեցել նույնիսկ ավելի

²⁵⁴ Гарабаѓи, Мирзэ Чамал Чаваншир. *Гарабаѓ Тарихи*, Перевод Назима Ахундова, Баќы, 1959, էջ 11–12: Sıu uulu Mirza Jamal Javanshir Qarabaghi, *Tarikh-e Qarabakh*, Baku, Academy of Sciences of Azerbaijan, Manuscript B712/11603, 4. English translation entitled *A History of Qarabagh* by George Bournoutian, Costa Mesa CA, 1994, էջ 15, 16 և 37:

²⁵⁵ Гарабаѓи, Мирзэ Чамал Чаваншир. “Гарабаѓ Тарихи”. *Гарабаѓнамялэр*, Перевод Назима Ахундова, Баќы, 1989, էջ 108: Sıu uulu George A. Bournoutian, “Rewriting History. Recent Alterations of Primary Sources Dealing with Karabakh”, *Journal of the Society for Armenian Studies*, Fresno, 1992–1993, հատոր 6, էջ 185–191:

²⁵⁶ Ղարաբաղի, նշվ. աշխ., ձեռագրի էջ 6, պարսկերեն:

վաղ ժամանակներում, քան զրքում նշված պատմական ժամանակաշրջանը, այսինքն՝ 18-րդ դարի առաջին քառորդը²⁵⁷:

3.3.15. Շուշիում կրթություն ստացած պատմաբան Միրզա Աղիբյոզալ Բեգն (1778–1840) իր «Ղարաբաղնամե» աշխատության մեջ, որը պարունակում է 1736–1828 թթ. Արցախի պատմությունը, մանրակրկիտ նշում է հայկական իսլամայի մելիքություններն ու նրանց մելիքների անուններն ու արմատները²⁵⁸: Մինչդեռ Աղբեջանի ներկա պատմաբանների մեծամասնությունը հերքում է տեղում հայերի գոյությունը նախքան 1828 թ.:

* * * * *

Եվ վերջապես՝ Աղբեջանի պատմաբանները պնդում են, որ Սեֆյան Պարսկաստանի Շահ Աբբաս Մեծն իրականում Աղբեջանի թագավորն էր: Հայտնի է, որ Շահ Աբբասն Օսմանյան կայսրության դեմ մղած իր պատերազմների ընթացքում որոշեց նահանջելիս ռազմական շրջանից (հիմնականում Արարատյան դաշտից, Նախիջևանից, Սյունիքից ու Արտազ գավառից) տեղահան անել հայ բնիկներին և լքված տարածքներում ոչնչացնել ամեն ինչ՝ այդպիսով սահմանամերձ շրջանը օսմանցիների համար դարձնելով անհրապույր և ոչ պիտանի: Այդ շրջաններից 1603–1605 թթ. նա տեղահան արեց ու բռնազաղթեցրեց ավելի քան 300 000 հայերի: Նրանց մի մասին շահը բնակեցրեց Սպահան քաղաքի մոտ՝ նորակառույց Նոր Ջուղա քաղաքում, որտեղ նրանց սերունդներն առ այսօր բնակվում են և ունեն գործող եկեղեցիներ ու դպրոցներ²⁵⁹: Շահ Աբբասի նպատակներից էր օգտագործել նաև հայ առևտրականներին, վարպետներին և արհեստավորներին իրանի տնտեսական զարգացման խթանման համար ունեցած իր ծրագրերում: Հատկապես Նախիջևանի հայ առևտրականներն արդեն իսկ դարեր շարունակ առևտուր էին անում Եվրոպայի տարբեր երկրների հետ և ունեին այդ փորձը, հետևաբար կարող էին այս ծրագրերի մեջ շատ օգտակար լինել: Այդպիսով Շահ Աբբասը հայ առևտրականների միջոցով Պարսկաստանի

²⁵⁷ Ներկա օրերում պարսիկ մեծանուն պատմաբան Ֆիրուզ Քազեմզադեն, որը Բիլ Բլինթոնի նախագահության ժամանակաշրջանում ԱՄՆ Միջազգային կրոնական ազատության հանձնախմբի նախագահն էր, հայերի մասին հետևյալն է գրում. «Հայերը միշտ ապրել են Անդրկովկասում և դրանից դուրս: Անդրկովկասում նրանք բնակվում են Վրաստանից հարավ գտնվող լեռնային շրջանում: Նրանց հողը քարքարոտ է ու ոչ շատ բերրի, բայց լինելով նվաճողների ձանապարհի վրա՝ նրանց երկիրը ուրիշների համար մշտապես պատերազմի դաշտ է հանդիսացել»: Տե՛ս նաև Firuz Kazemzadeh, *The Struggle for Transcaucasia (1917–1921)*, New York and Oxford, 1951, էջ 3–4:

²⁵⁸ Мирза Адыгозел Бай, “Гарабаѓнаме”. *Гарабаѓнамәләр*. Перевод Назима Ахундова, Бақы, 1989, էջ 36–37:

²⁵⁹ Sir William Ouseley, *Travels in various Countries of the East, More Particularly Persia*, London, 1819–23, հատոր 3, էջ 47:

և Եվրոպայի միջև դրեց ուղղակի առևտրական կապերի հիմքը²⁶⁰: Այստեղ առաջանում է հետևյալ կարևոր հարցը: Եթե, ըստ ադրբեջանցի պատմաբանների, նախքան 19-րդ դարը Կովկասյան լեռներից հարավ ընկած տարածաշրջանում հայեր չկային, ապա 1603–1605 թվականներին Շահ Աբբասն ինչպե՞ս կարողացավ նույն այդ շրջանից տեղահան անել ավելի քան 300 000 հայ և քչել դեպի Պարսկաստան:

* * * * *

Այստեղ մի փոքր շեղում կատարելով՝ կարիք կա զգուշացնելու, որ Շահ Աբբասին ադրբեջանցի թագավոր համարելով՝ միայն նրա գրաված Հայաստանի տարածքը է, որ Ադրբեջանի իշխանությունները ցանկանում են յուրացնել՝ այդ վերանվանելով «Արևմտյան Ադրբեջան»: Ելնելով նույն կարգախոսից՝ Ադրբեջանի հաջորդ քայլը հավանաբար կլինի այն, որ Շահ Աբբասի և Սեֆյանների տերությունը, այսինքն՝ ամբողջ Իրանի տարածքը, իրականում պետք է անվանել Ադրբեջան և ընդհանրապես մոռանալ Իրանի գոյությունը որպես անկախ մի երկիր: Ահա թե որտեղ կտանի մեզ պատմությունը նման աղավաղումը: Այս գործընթացում Ադրբեջանն արդեն որոշ քայլեր կատարել է՝ Իրանի հյուսիսարևմտյան մասը՝ մինչև Համադան, համարելով Ադրբեջան (տե՛ս հավելվածի քարտեզ 1-ը):

Բավական է աչքի անցկացնել ադրբեջանցի պատմաբաններ Միրզա Զա՛մալ Զա՛վանշիր Ղա՛րաբաղիի և Ա՛բբաս Ղուլի Աղա Բաքիխանովի վերը նշված տեքստերը՝ հասկանալու համար, որ հայերն այս տարածաշրջանում ապրել են շատ ավելի վաղ ժամանակներից, քան ներկա Ադրբեջանի իշխանություններն ու հետազոտողներն են պնդում: Նույնը վկայում են հնագույն հույն պատմիչները, միջնադարյան ուղեգիրները: Արդյո՞ք պատմությունը հորինողներն ու կեղծողները հնարավորություն կունենան ոչնչացնելու գոյություն ունեցող ամբողջ գրականությունն ու փաստաթղթերը: Կարելի է վստահաբար ասել՝ ո՛չ. միջագային մակարդակով նման բան անելը հնարավոր է: Սակայն քանի որ Ադրբեջանն ունի նոր այբուբեն, ուստի ներքին գործածություն համար ներկայում կատարվող ու կատարվելիք տառադարձության ընթացքում այս գեները լայնորեն հնարավոր է կիրառել և ամեն ինչ գրել այնպես, ինչպես որ կարիք կա այսօրվա քարոզչություն համար, ինչ որ արդեն արվել և դեռ շարունակում է իրագործվել: Ադրբեջանի գիտաշխատողներն ու դիվանագետներն իրենց նոր գիրը ծառայեցնում են զեղծարարությունները զանգվածային տեղեկատվության միջոցներով ցրելու և դրանց իրական լինելը հաստատելու նպատակնե-

²⁶⁰ Susan Babaie, Kathryn Babayan, Ina Baghdiantz-McCabe and Massumah Farhad, *Slaves of the Shah*, London, 2004. Տևս նաև Ouseley, նշվ. աշխ.:

րին, ինչն Ադրբեջանի ժողովրդի մեջ զարգացնում է հակահայ տրամադրություններ և մտայնություն:

3.4. Հայերի առկայությունը Կովկասում՝ ըստ միջնադարյան քրիստոնյա ճամփորդների և պատմիչների

Այս ենթագլխում կվերլուծվեն 12-րդ դարից մինչև 19-րդ դարի առաջին տասնամյակի քրիստոնյա օտար պատմիչների ու պատմաբանների աշխատանքներից և ճամփորդների ուղեգրություններից այն հատվածները, որոնք վերաբերում են Հայաստանին, Աղվանքին ու Ադրբեջանին: Ինչպես արդեն նշվեց, այդ աշխատությունների որոշ մասն արդեն իսկ թարգմանվել է հայերեն, ծանոթագրվել ու հրատարակվել. մենք այստեղ դրանց համապատասխան հատվածներն օգտագործում ենք աշխատության համատեքստում²⁶¹:

Անգլիացի պատմաբան Քրիստոֆեր Ուաքերն ընտրել է այս ճամփորդներից մի քանիսի հուշերից հատվածներ և ներկայացրել իր «Արարատի տեսիլքը» գրքում²⁶²:

3.4.1. Տասներեքերորդ դարի անգլիացի պատմաբան և ժամանակագիր **Ջերվազ Տիլբուրեցին** (մոտ 1150–1228) մի որոշ շրջան աշխատում էր Գերմանիայում և Իտալիայում: Նրա կարևորագույն աշխատանքներից է «Զբաղմունք կայսեր համար» գիրքը՝ շարադրված հռոմեական Սրբազան կայսր Օտտո IV-ի համար: Հավանաբար այս գրքին էլ նա կցել է «Էբսթորֆի աշխարհացույց» մեծածավալ քարտեզը: Ջերվազի աշխատությունը պարունակում է զանազան տեղեկություններ աշխարհի երկրների վերաբերյալ. մասնավորապես Կովկասյան Ալբանիայի՝ Աղվանքի մասին նա գրում է հետևյալը.

Կովկասի հարավում ապրում են 34 ցեղախմբեր: Սրանց ամենամոտ վայրի անվանումն է Ալբանիա, մինչ դրանից այն կողմ՝ դեպի ծովը, ապրում են ամազոնները²⁶³:

Հավելվածի քարտեզ 21-ի մանրամասում վերատպված է Ջերվազին վերագրվող «Էբսթորֆ» կոչված աշխարհացույց քարտեզից Հայաստանի և հարակից շրջանների հատվածը: Այս քարտեզն էլ, ինչպես մյուս միջնադարյան՝ կրոնական ազդեցություն կրողները, ուղղված են արևելքով վեր: Քարտեզն ունի բազմաթիվ

²⁶¹ Այս բաժնում դիտարկվող քարտեզները մանրամասն կքննարկվեն աշխատության հինգերորդ գլխում: Իսկ քարտեզները կարելի է տեսնել աշխատության հավելվածում:

²⁶² Christopher Walker, *Visions of Ararat. Writings on Armenia*, London, 1997.

²⁶³ Gervase of Tilbury, *Otia Imperialia. Recreation for an Emperor*, translated by S. E. Banks and J. W. Binns, Oxford, 2002, Գիրք 2, գլուխ 3, 230–231:

բացատրուեցան և պատմական տեղեկություններ, որոնց մի քանիսի թարգմանությունները տրված են քարտեզին կից: Քարտեզի վրայի բացատրություններում Աղվանքի մասին հեղինակը գրում է.

Այս երկիրը, որը կոչվում է Ալբանիա [Աղվանք], բնակեցված է 26 ցեղերով... Երկիրը սկիզբ է առնում Կասպից ծովի արևմտյան մասից, նրա ափերից և անմշակ տարածքներով ձգվում է մինչև Հյուսիսային օվկիանոս, նաև հասնում է մինչև Մեթիդիա [Ագովի] ճահճուտները²⁶⁴:

Հայաստանի անունը գրքում և քարտեզում մի քանի անգամ չեղջուրվում է: Այդ մասին գրքում առկա է նաև հետևյալ բացատրությունը.

Հայաստանի շրջանը գտնվում է Տավրոսի և Կովկասի լեռների միջև և տարածվում է մինչև Կապադովկիա՝ հարավ-արևելքում հասնելով մինչև Ակրոկերավնյան լեռները, որից ակունք է առնում Տիգրիսը: Ասում են, որ այս լեռների գագաթներից ամենաբարձրի՝ Արարատի վրա ջրհեղեղից հետո նստեց Նոյյան տապանը: Արարատը նույնպես մի դաշտավայր է Հայաստանում²⁶⁵:

Ջերվազն էլ իր հերթին ցույց է տալիս, որ Հայաստանն ու Ալբանիան միջին դարերում գոյություն են ունեցել, սակայն Ադրբեջանի մասին խոսք անգամ չկա ո՛չ գրքում և ո՛չ էլ քարտեզում:

3.4.2. Ըստ Գանձակի գավառում ծնված **Կիրակոս Գանձակեցու** (մոտ 1201–1271 թթ.)՝ 12–13-րդ դդ. Գանձակ քաղաքի բնակչության մեծ մասը պարսիկ էր, և մի մասն էլ՝ քրիստոնյա: Քաղաքի բնակչության վերաբերյալ իր «Պատմություն»-ի Ա գլխում նա նշում է հետևյալը. «Այս քաղաքս բազմամբոխ լցեալ պարսկոք, այլ սակաւ եւ քրիստոնէիւք»²⁶⁶:

3.4.3. Ուիլյամ դե Ռուբրուկը (1220–1293 թթ.) Ֆլամանդացի միսիոներ քարոզիչ էր, որը 1253–1255 թթ. Կոստանդնուպոլսից ճանապարհվելով հասավ մինչև Կարակորում՝ մոնղոլների տերության կենտրոնը: Նրա վերադարձի ճանապարհն անցնում էր Կովկասի և Հայաստանի վրայով, որոնց մասին նա գրի է

²⁶⁴ Gervase of Tilbury, *The Ebstorf Map*.

²⁶⁵ Gervase of Tilbury, նշվ. աշխ., գիրք 2, գլուխ 3, էջ 226–229:

²⁶⁶ Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն հայոց*, աշխատասիրությամբ՝ Կարապետ Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 235: Քրիստոնյաները հավանաբար հայեր էին և ոչ թե վրացիներ, քանի որ քաղաքը հաճախ ասպատակում և կողոպտում էր վրաց թագավորը: Ըստ Գանձակեցու աշխատության ժԲ գլխի՝ հայերն օգնում էին վրացի գեղիներին՝ նրանց տալով ուտելիք, հագուստ, երբեմն էլ պարսիկներից գնելով նրանց ազատությունը:

առել հետաքրքրական նյութեր: Իր ուղեգրությունների մեջ Ռուբրուկը նշում է ալաններին, Կովկասի թաթարներին, վրացիներին, պարսիկներին և հայերին, ինչպես նաև նրանց երկրների անունները, բայց Ադրբեջանի և ադրբեջանցիների մասին ոչ մի նշում չկա²⁶⁷:

3.4.4. Պոլո ընտանիքի անդամները երկու անգամ ճամփորդել են մինչև Չինաստան` Իտալիայից բացակայելով մոտ 24 տարի` 1271–1295 թթ.: Մարկո Պոլոյի (1254–1324) շարադրած ուղեգրության մեջ կան Կովկասի, Հայաստանի և նրան հարակից շրջանների մասին բավականին մանրակրկիտ տեղեկություններ: Նա մանրամասն բացատրություններ է տալիս Մեծ և Փոքր Հայքերի տարածքի, քաղաքների և նրանց առևտրական կապերի ու կրոնի վերաբերյալ²⁶⁸: Վրաստանի և մասնավորապես Թիֆլիսի մասին գրելիս նա նշում է.

Այս երկրում կա մի գեղեցիկ քաղաք` Թիֆլիս անունով, շրջապատված արվարձաններով և ամրոցներով: Քաղաքը բնակեցված է հայ և վրացի քրիստոնյաներով, ինչպես նաև մահմեդականներով և հրեաներով, բայց վերջինները` ոչ մեծ քանակությամբ²⁶⁹:

Մարկո Պոլոն նույնպես իր ուղեգրության մեջ Աղվանքի, Ադրբեջանի և ադրբեջանցիների անունները չի նշում:

3.4.5. Ռանուլֆ Հիգդեն (մոտ 1282–1363) անգլիացի պատմիչ և ժամանակագիր էր, որը 1299 թ. մինչև իր մահն աշխատում էր Անգլիայի Չեսթեր քաղաքի Ուարբուրգի արքայությունում: Նրա պատմական աշխատությունը` «Պոլիֆրոնիկոնը», ունի երեք տարբերակ` գրված 1327, 1340, իսկ վերջինը` 1360 թվականին²⁷⁰: Աշխատության առաջին գրքում հեղինակը տալիս է գերազան-

²⁶⁷ Richard Hakluyt, ed., *The Principal Navigation Voyages of the English Nation*, Glasgow, 1903, հատոր 1. Տե՛ս նաև William de Rubruck, “The Journals of Friar William de Rubruck”, *Contemporaries of Marco Polo.*, ed. Komroff, London, 1928, էջ 75–217: Ինչպես նաև Հ. Հակոբյան, *Աղբյուրներ Հայաստանի վերաբերյալ Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, հատոր Ա, ԺԳ–ԺԶ դար*, Յերեվան, 1932, հատոր Ա, էջ 44–45 և 48–49:

²⁶⁸ Marco Polo, *The Travels of Marco Polo*, translated by William Marsden, New York, Doubleday & Co., 1948, էջ 20–22:

²⁶⁹ Անր, էջ 25: Տե՛ս նաև Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 55:

²⁷⁰ Ձեռագիրը բազմաթիվ անգամներ ընդօրինակվել է և բաժանվել Անգլիայի տարբեր վանքերում, ինչպես նաև Օքսֆորդի և Քեմբրիջի համալսարաններում: Այդ ընդօրինակություններից մեզ է հասել ավելի քան 100 օրինակ: Ռանուլֆն անհագուրդ կարդացող էր և նրա *Պոլիֆրոնիկոնը* հիմնված է Սալուստիոսի, Սոլինոսի, Պլինիոս Ավագի, Իգիորի, և իրեն նախորդող այլ պատմաբանների աշխատությունների վրա: Գրքի բնագիրը լատիներեն է, և այն ավելի հանրամատչելի դարձնելու համար 1380 թվականին Ջոն Տրևիզան կատարեց դրա անգլերեն թարգմանությունը, որը հրատարակվեց 1480 և 1482 թվականներին: Հետագայում գիրքը ևս մեկ անգամ` 1527 թվականին, վերահրատարակել է Փիթր Տրևիզը: Հիգդենի աշխատանքի վերաբերյալ մանրամասն

ցապես աշխարհագրական բնույթի տեղեկություններ Հայաստանի, Վիրքի, Աղվանքի, Կովկասյան լեռնաշղթայի ու Կասպից ծովի վերաբերյալ: Հայաստանի հարակից շրջանների մասին նա տալիս է համառոտ աշխարհագրական տեղեկություններ: Մասնավորապես Պարթևաստանի և Մարաստանի վերաբերյալ նա գրում է.

Պարթևաստանի թագավորության ժողովուրդն անհաղթելի է, որը նաև վերաբերում է Ասորեստանի, Մարաստանի, Պարսկաստանի ու Քարմանիայի [այժմ՝ Իրանի Քիրման նահանգի] ժողովուրդներին, որոնց իշխում է Պարթևաստանը: Սրանց տարածքը հասնում է Կասպից ծովից մինչև Կարմիր ծով և Հնդկաստանի դաշտերից մինչև Տիգրիսի ափերը, մինչև Միջագետք²⁷¹:

Աղվանքի վերաբերյալ Հիզդեն գրում է.

Աղվանքի արևելքում է Կասպից ծովը, և այն հասնում է մինչև Ազովի ճաշիճները²⁷²:

Հայաստանի մասին նա գրում է.

Հայաստանն այլ կերպ նաև անվանվում է Արարատի երկիր: Անունը վերցված է Յասոնի ասպետ Արմենիոսից, որը, գրավելով Հայաստանի տարածքը՝ Տավրոսից մինչև Կովկաս և Կասպից ծովից մինչև Կապադովկիա, հաստատվեց այնտեղ: Այստեղ է կանգնած Արարատ լեռը, որի վրա ջրհեղեղից հետո նստեց Նոյյան տապանը: Կան երկու Հայաստաններ՝ Մեծ և Փոքր²⁷³:

«Պոլիքրոնիկոնի» մեջ առկա է նաև աշխարհացույց քարտեզ, որի օրինակներից մեկը ցույց է տրված և քննարկված հավելվածի քարտեզ 24-ում:

3.4.6. Յոհան Շիլտբերգերը (մոտ 1381–1440) գերմանացի զինվոր էր, որ գերվել էր 1396 թ. սուլթան Բայազեդ Առաջինի կողմից: Նա սուլթանին ծառայել է մինչև 1402 թ. նրա կրած պարտությունը՝ այս անգամ գերվելով Լենկթեմուրի կողմից և ծառայելով նրա պահակագործում: Լենկթեմուրի մահից հե-

տնս Բուրեն Գալջյան, *Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում. Հայաստան, Վրաստան և Ադրբեջան*, Լոնդոն և Երևան, 2007, էջ 84–85:

²⁷¹ Ranulf Higden, *Polychronicon*, translated by John Trevisa in 1387. Facsimile reproduction of the book printed in 1527. Edited by Churchill Babington, London, 1865, հատոր I, էջ 85, 87:

²⁷² Անդ, էջ 143:

²⁷³ Անդ, էջ 145–147:

տո (1405 թ.) Շիլտբերգերի գերությունը շարունակվել է նրա որդու՝ Շահրոխի, ապա թոռան՝ Աբու-Բաքրի օրոք, որոնք այդ ընթացքում ասպատակում էին Հայաստանը՝ իրենց հետ տանելով նաև գերի Շիլտբերգերին: 1396–1422 թթ. Յ. Շիլտբերգերը եղել է Հայաստանի և Արցախի տարածքներում: Հետագայում լույս տեսած իր աշխատության մեջ Շիլտբերգերը հետևյալ դիտողություններն է գրանցել տեղացի հայերի մասին՝ ասելով.

Ես Հայաստանում հաճախ եմ եղել: Լենկթեմուրի մահից հետո ես հանդիպեցի նրա որդուն, որը Հայաստանում ուներ երկու թագավորություն: Նրա անունն էր Շահրոխ: Նա սիրում էր ապրել Հայաստանում, քանի որ այնտեղ կար մի գեղեցիկ դաշտավայր: Նա իր ցեղախմբի հետ այդտեղ էր ձմեռում, որովհետև այդտեղ կային լավ արոտավայրեր: Ջրառատ մի գետ՝ Չուրը [Կուր], որը նաև կոչում են Տիգրիս[?], անցնում է այս հարթավայրով, և այս երկրում նույն գետի մոտ արտադրվում է լավագույն մետաքսը: Անհավատներն [մահմեդականները] իրենց լեզվով այն անվանում են Կարավաք [Ղարաբաղ]: Սա գտնվում է Հայաստանում, բայց այնտեղ անհավատներն են իշխում: Հայերն ապրում են նաև շրջակա գյուղերում, բայց հարկ են տալիս անհավատներին²⁷⁴:

Շիլտբերգերի այս բացատրություններն ազդեցիկացրին Զիյա Բունիաթովի համար անընդունելի էին, և 1984 թ. նույն գրքի թարգմանությունը խմբագրելիս Բունիաթովը հանել է հայերին վերաբերող տողերը և որպես վերջնական հարված՝ ամբողջովին անտեսել գրքի վերջին վեց գլուխները, որոնց նյութը հիմնականում հայերն են: Այդպիսով՝ գրքի բնագիրն ազդեցիկացրեց թարգմանությունից բավականին տարբեր է ու «մաքրված» հայ և Հայաստան անուններից²⁷⁵:

Նկատենք, որ աշխատությունը որևէ տեղեկություն Աղվանքի կամ Ազրբեջանի մասին չի պարունակում:

3.4.7. Իսպանացի պալատական դեսպան և ճամփորդ Ռույ Գոնզալես դե Կլավիսոն (մահ. 1412 թ.) 1403–1405 թթ. եղել է Կաստիլիայի Հենրի Երրորդ թագավորի դեսպանը Լենկթեմուրի մոտ: Ճանապարհին նա անցել է Արևմտյան և Արևելյան Հայաստանով ու իր ուղեգրությունների չորրորդ գլուխն անվա-

²⁷⁴ Johann Schiltberger, *Bondage and Travels – 1396 to 1427*, London, 1879, էջ 86 և գլուխ 61–66:

²⁷⁵ Բունիաթովի թարգմանությանը, դրա ընթացքում իրականացրած փոփոխությունների և կեղծիքների անդրադարձել է Պարույր Մուրադյանն իր “Как издавались “Путешествия” հոդվածում: Տե՛ս *Коммунист*, Երևան, 25.06.1988, համար 149: Տե՛ս նաև George A. Bournoutian, “Rewriting History”, *Journal of the Society for Armenian Studies*, Fresno, 1992–1993, հատոր 6, էջ 185–6:

նել «Տրապիզոնը և ճամփորդութիւնն Հայաստանով»: Երզնկայից անցնելիս նա գրի է առել հետևյալը.

Քաղաքը [Երզնկան] կառուցել են հայերը և պատերի վրա հաճախ նկատելի են փորագրված խաչեր: Քաղաքի բնակչութիւնը կազմված է բազմաթիվ քրիստոնյա հայերից ու հույներից²⁷⁶:

Մեկ այլ տեղ նա գրում է.

Հասանք Լենկթեմուրի քաղաքներից մեկը՝ Էրզրում: Այստեղ կա հայերին պատկանող գեղեցիկ մի եկեղեցի: Դրանք այստեղ բազմաթիվ էին, և քաղաքն էլ երկրի ամենահարուստ և ամենամեծն էր համարվում²⁷⁷:

Ապա Կլավիխոն շարունակում է.

Երեքշաբթի հասանք Նաուխուա [Նախիջևան, պարսկերենով՝ Նախուի կամ Նաշուի], ուր բնակվում էր մի Քաշի [քելիչ – տերտեր], որն այստեղի կառավարիչն էր և մեր դեսպաններին ընդունեց շատ սիրով: Այստեղ ապրում են բազմաթիվ հայեր²⁷⁸:

Էջմիածնի վերաբերյալ նա նշում է.

Հինգշաբթի մայիսի 29–ին հասանք Carmarin [Էջմիածին], որից վեց լիգա հեռավորութան վրա տեսանք մեծ լեռը [Արարատը], որի վրա ջրհեղեղից հետո նստեց Նոյյան տապանը: ...Բնակչության մեծամասնութիւնը հայեր են, բայց Հայաստանն այժմ գրավել են մավրերը [Լենկթեմուրը] ...²⁷⁹

Կլավիխոն անցել է Ատրպատականով և այդտեղի ներկայում թրքաբնակ խոյ քաղաքով և իր ուղեգրութիւնների մեջ Ազրբեջանի մասին գրելիս նշում է խոյն ու Թավրիզը, այսինքն՝ նրա տեսակետից Ազրբեջանը Իրանի Հյուսիսարևմտյան նահանգն է: Իսկ Աղվանքի վերաբերյալ նա որևէ գրառում չունի:

²⁷⁶ Ruy Gonzales de Clavijo, *Narrative of the Embassy of the Ruy Gonzales de Clavijo to the Court of Teimour at Samarkand*, transl. Clemens R. Markham FRGS, London, 1854, էջ 72–73:

²⁷⁷ Անդ, էջ 79:

²⁷⁸ Անդ, էջ 80:

²⁷⁹ Անդ, էջ 80–81:

3.4.8. Վենետիկցի դիվանագետ, առևտրական և ճամփորդ Զոզաֆաթ կամ Զոզաֆա Բարբարոն (1413–1494), 1471–ից մինչև 1478 թվականները մի քանի անգամ Հայաստանով անցնելով, ուղևորվել է դեպի Պարսկաստան: Մինչև Թավրիզ հասնելը Բարբարոն մանրամասնորեն գրի է առել Պատմական Հայաստանի տարբեր քաղաքներում, այդ թվում՝ Տարսնում, Ադանայում, Մարդինում, Բիթլիսում, Ոստանում և Խոյում բնակվող հայերի մասին²⁸⁰: Նա բացատրություններ է տալիս նաև Բայբուրթի, Երզնկայի, Ախլաթի, Խնուսի և Արճեշի մասին²⁸¹: Լոռիից Շամախի անցնելիս նա իր ուղեգրություններում հետևյալն է գրում.

...քաղաքը [Շամախին] գտնվում է Բաքվի ծովից վեց օրվա ճանապարհ հեռավորության վրա, և ծովը գտնվում է նրա աջ կողմում, իսկ ձախ կողմում Մինգրելիան է՝ դեպի Մեծ ծով [Սև ծով], և Քուլթայիսը, որը տեղադրված է Կասպյան լեռների շրջանում: Այս [Շամախին] շատ լավ քաղաք է, ունի 4,000–5,000 տուն, որտեղ հատուկ եղանակով պատրաստում են մետաքս և կտավ: Քաղաքը գտնվում է Հայաստանում, և բնակչության մեծամասնությունը հայեր են²⁸²:

Բարբարոյի հուշերը հաստատում են, որ 15–րդ դարում Գանձակում եղել է մեծ թվով հայություն, որն այսօր հերքում են ազրբեջանցիները:

3.4.9. Մեծբրիտանացի առևտրական Անթոնի Զենկինսոնը (1529–1610)՝ որպես բրիտանական արքունիքի և «Մոսկովյան ընկերության» ներկայացուցիչ, 1557 թ. սկսած չորս անգամ ճամփորդել է Պարսկաստան և իր ուղեգրություններում Շամախի քաղաքի մասին նշում է հետևյալը.

Այս քաղաքը [Շամախի] ծովից հեռու է ուղտով յոթ օրվա ճանապարհով, բայց այժմ շատ ավերված վիճակում է և հիմնականում բնակեցված է հայերով²⁸³:

Անդրադառնաով Ազրբեջանին՝ նա գրում է.

²⁸⁰ Հովհաննես Հակոբյան, *Աղբյուրներ Հայաստանի յեւ Անդրկովկասի պատմության, Ուղեգրություններ, հատոր Ա, ԺԳ–ԺԶ դար*, Երևան, 1932, էջ 178–179:

²⁸¹ Անդ, էջ 196–198:

²⁸² Josafa [Giosafat] Barbaro and Ambrogio Contarini, *Travels to Tana and Persia*, William Thomas Translator, London, 1873, էջ 86: Տես նաև Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 199:

²⁸³ Anthony Jenkinson, *Early Voyages and Travels to Russia and Persia*, London, 1886, հատոր 1, էջ 136:

Լայնության 38-րդ աստիճանի վրա գտնվող Օրդովիլը [Արդաբիլ] հնագույն մի քաղաք է, որը գտնվում է Ադերաուզանում [Ադրբեջանում], որտեղ ընդհանրապես Պարսկաստանի արքունականներն են թաղված²⁸⁴:

Այսինքն՝ Զենկինսոնը հաստատում է, որ Ադրբեջանը Պարսկաստանի հյուսիսարևմտյան նահանգն էր: Զենկինսոնի գրքի 1886 թ. հրատարակության խմբագիր Դելմարժ-Մորգանն իր տողատակի բացատրություններում Ադրբեջանի մասին նշում է հետևյալը.

Արբեկայի ճակատամարտում պատերազմող մարերի զորավար Ատրոպետի Մարաստանն ընդգրկում է Արաքսը, Սեֆիդ Ռուզը [Պարսկաստանի Ռեշտ քաղաքի մոտ], Թալիշը, Գիլանը մինչև Կասպից ծովի ափերը²⁸⁵:

Սրանք քաղաքներ են, որոնք տեղակայված են Պարսկաստանի ներկա Ատրպատական նահանգում:

3.4.10. Մեկ այլ անգլիացի ճամփորդ՝ Զոն Քարթրայթը (Օքսֆորդի Մատլիս քոլեջից) 1603 թ.՝ նախքան Շահ Աբբասի կարգադրած տեղահանումների իրագործվելը, անցել է Նախիջևանի և Հյուսիսային Պարսկաստանի շրջանով և իր ուղեգրությունների մեջ գրանցել հետևյալը.

...հասանք Հայաստանի և Ատրպատականի սահմանին, որտեղ Հայաստանի տարածքում է գտնվում Զուլֆա քաղաքը, որի բնակչությունը քրիստոնյա է՝ հայ և վրացի: Նրանք զբաղվում են մետաքսի և այլ առևտրով, և այդ իսկ պատճառով քաղաքը հարուստ է ու լի դրամով: Նրանք գենք չեն կրում ու չեն պատերազմում: Քաղաքն ունի երկու հազար տուն և տասը հազար բնակիչ, կառուցված է մեծ լեռան ստորոտում՝ ոչ բերրի հողի վրա, այնպես որ իրենց մթերքը, բացի գինուց, բնակչությունը ստիպված է բերել Նախիջևան քաղաքից²⁸⁶:

²⁸⁴ Անդ, էջ 140: Տե՛ս նաև Հ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 378:

²⁸⁵ A. Jenkinson, նշվ. աշխ., էջ 98:

²⁸⁶ John Cartwright, *The Preachers Travel wherein is set downe a true journal, to the confines of East Indies, through the great countreyes of Syria, Mesopotamia, Armenia, Media, Hircania and Parthia*, London, 1611, էջ 35:

Այսինքն՝ մենք գործ ունենք մեկ այլ սկզբնաղբյուրի հետ, որը վկայում է Նախիջևանում բնակվող հայերի մասին:

3.4.11. Ֆրանսիացի քարոզիչ և ճամփորդ **Ալեքսանդր դե Ռոզը** (1591–1660), Շահ Աբբասի ձեռքով տեղի հայկական համայնքը բռնագաղթեցնելուց հետո՝ 1648 թ., այցելելով Ջուղայի հայկական գերեզմանոցը, գրել է այդտեղի դեռևս կանգուն մնացած բազմաթիվ խաչքարերի մասին.

Այս լքված ու անմարդաբնակ քաղաքի [Ջուղայի] պարիսպներից դուրս կա հնագույն հայերի բարեպաշտությունը փաստող մի հուշարձան: Դաշտի մեջ գեղեցիկ կերպով տեղադրված են ավելի քան տասը հազար մարմարյա գերեզմանաքարեր՝ զարդարված հրաշակերտ քանդակներով: Ամեն մի մեծ պատվանդանի վրա կանգնած է 12 ոտք բարձրություն և 8 ոտք լայնություն ունեցող մի ճեղմակ մարմարե սալաքար՝ զարդաքանդակված բազմաթիվ գեղեցիկ պատկերներով, որոնց վրա նաև առկա է մեծ խաչը: Այս բազմաթիվ մարմարյա գերեզմանները շատ գեղեցիկ տեսարան են ներկայացնում²⁸⁷:

Նա նաև այցելել է Էրզրում, Նախիջևան, Երևան ու Էջմիածին և գրել տեղի հայ բնակչության մասին: Ռոզը մահացել է Սպահանում և թաղված է քաղաքի Նոր Ջուղայի հայկական գերեզմանոցում:

Ռոզն իր աշխատության մեջ բացատրություններ է տալիս Թավրիզի մասին՝ որպես Մարաստանի կամ Ատրպատականի քաղաքներից մեկը, և նշում, որ Փոքր Մարաստանի մայրաքաղաքն էր Էքբաթանան՝ Համադանը: Այստեղ Աղվանքի և Արաքսից հյուսիս ընկած Ադրբեջանի մասին ոչ մի անդրադարձ չկա:

3.4.12. Գերմանացի մաթեմատիկոս **Ադամ Օլեարիոսը** (1603–1671) 1635–ից մինչև 1639 թ. Հոլշտայնի դքսության դեսպան Բրյուգեմանի հետ երկու անգամ ճամփորդել է Մոսկվա, այնտեղից էլ որպես դեսպանի քարտուղար անցել է Պարսկաստան: Նա իր ուղեգրություններում մանրակրկիտ բացատրություններ է տվել Ռուսաստանի ու Պարսկաստանի քաղաքների, ժողովրդի կենցաղի ու սովորությունների մասին:

Արխանգելսկից Պարսկաստան ճամփորդելիս դեսպանների շքախումբը մի քանի ամիս մնացել է Շամախիում՝ որպես տեղի պարսիկ տիրակալի հյուր: Սա Օլեարիոսին առիթ է տվել մանրակրկիտ ուսումնասիրելու տեղի կյանքն ու սո-

²⁸⁷ Alexandre de Rhodes, *Divers Voyages et Missions du P. A. de Rhodes en la Chine & Autres Royaumes avec son Retour en Europe par la Perse et l'Armenie*, Paris, 1653, մաս 3, էջ 62–74:

վորությունները, մասնավորապես նա մոտիկից չփվել է տեղի հայերի հետ և իր երկրորդ ուղեգրության հինգերորդ գլխում նշում է, որ Շամախին Պարսկաստանի լավագույն քաղաքներից է, որի հյուսիսային մասը համարյա առանձին քաղաք էր²⁸⁸: Այստեղի փողոցները նեղ են, տները՝ մեծ մասամբ կառուցված ցեխից և կավից, կան նաև քիչ թվով աղյուսաչեն ու քարաչեն տներ: Քաղաքի այս հատվածի բնակչութունը կազմված է մեկ մասը հայերից և մյուս մասն էլ՝ վրացիներից²⁸⁹:

1637 թ. հունվարի 5-ին այստեղ նա մասնակցել է հայերի՝ Քրիստոսի Ծննդյան տոների առթիվ կատարվող Ջրօրհնեքի արարողությանն ու դրանից հետո կատարվող տոնակատարություններին, որոնց մասին մանրամասն գրել է իր ուղեգրություններում²⁹⁰: Ըստ իսլամական շարիա օրենքի՝ Շիրվանի պարսիկ կուսակալը հայերին արտոնություն չէր տալիս քաղաքում նոր եկեղեցի կառուցել, սակայն որպես բարի հյուրընկալ և ի պատիվ իր հյուր դեսպանների՝ 1637 թ. հունվարի 18-ին նա հայերին նոր եկեղեցի կառուցելու իրավունք է տալիս, որը հայ համայնքի շրջանակում մեծ խանդավառություն է առաջացնում²⁹¹:

3.4.13. Ֆրանսիացի ճամփորդ Ժան Բատիստ Թավերնիեն (1605–1689) դեպի Իրան կատարած իր առաջին ճամփորդության ընթացքում (1631–1633) կոստանդնուպոլսով անցել ու այցելել է Թոքաթ, Էրզրում, Երևան, Նախիջևան, Թավրիզ և ապա հասել մինչև Իրանի մայրաքաղաք Սպահան:

Երևանի և Նախիջևանի մասին գրելիս նա նշում է տեղում բազմաթիվ հայերի ներկայությունը, որոնք հատկապես Նախիջևանում մեծահարուստներ և առևտրականներ էին: Հասնելով Սպահան՝ նա նշում է արդեն այնտեղ բնակվող՝ Շահ Աբբասի տարագրած հայությունը, որոնք Նոր Զուղայում կառուցել էին եկեղեցիներ և վերսկսել էին իրենց բոլոր ծեսերն ու վերականգնել ազգային ավանդությունները²⁹²:

3.4.14. Մեկ ուրիշ ճամփորդ՝ հանրահայտ Սըր Զոն Շարդանը (1643–1713), 1671 և 1675 թվականներին այցելել է Վրաստան, Հայաստան, Պարսկաստան (ներառյալ Նոր Զուղան) և մանրամասնորեն անդրադարձել հայերին՝ գրելով

²⁸⁸ Այդ ժամանակ Պարսկաստանը գրավել էր Կովկասի հարավային շրջանը, ներառյալ Շամախին:

²⁸⁹ Adam Olearius, *Voyages and Travels of the Ambassadors sent by Frederick Duke of Holstein to the Great Duke of Muscovy and the King of Persia. History of Muscovy, Tartary and Persia*, translated to English by John Davies, London, 1669, էջ 165:

²⁹⁰ Անդ, էջ 157–158:

²⁹¹ Անդ, էջ 158–159:

²⁹² Jean-Baptiste Tavernier, *The Six Voyages*, english translation, London, 1677, 16–21.

նրանց կենցաղի, սովորությունների և ավանդույթյունների մասին: Հայաստանի մասին նա գրում է.

Փոքր Հայքի սահմաններն են արևելքում՝ Մեծ Հայքը, հարավում՝ Սիրիան, արևմուտքում՝ Սև ծովը և հյուսիսում՝ Կապադովկիան, իսկ Մեծ Հայքը տեղադրված է Միջագետքի, Վրաստանի, Մարաստանի և Փոքր Հայքի միջև²⁹³:

Երևանի և նրա բնակչության մասին նա գրում է.

Էրիվանը, ըստ հայերի, աշխարհի հնագույն բնակավայրն է: Նրանք հաստատում են, որ Նոյ նահապետը և նրա ընտանիքը, նախքան ջրհեղեղն ու դրանից հետո, Արարատից իջնելով, այնտեղ են բնակվել²⁹⁴:

Շարզանի ուղեգրությունները փաստում են տարածաշրջանում վաղուց հաստատված հայ բնակչության առկայությունը, ներառյալ նրանց ավանդույթյունները, մշակույթն ու սովորությունները: Այս բոլորը իրողություններ են, որոնք աշխատում է հերքել այսօրվա Ադրբեջանի Հանրապետության պատմագիտությունը:

3.4.15. Բաքվում 1989 թվականին հրատարակվել է Բունիաթովի խմբագրած Եսայի Հասան-Ջալալյանցի (մահ. 1728 թ.) «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի» գրքի ուսեսրեն թարգմանությունը, որի մեջ Աղվանքի տարածքում բնակվող հայությանը նա հետևյալ կերպ է ներկայացնում²⁹⁵.

1. Թագավորական հրովարտակով հայկական և ոչ հայկական բոլոր գյուղերի կալվածքներն ու անասունները ցուցակագրվեցին (էջ 20):
2. Բռնության ենթարկված հայ բնակչությունը, հատկապես Կուտկաշենի Փողար գյուղի հայերը Շամախիի Մալեք Մահմուդի դեմ բողոքեցին (էջ 25):
3. Շամախիի շրջանի քաղաքներում ու գյուղերում բնակվող հայերն ու քրիստոնյաները շատ չտուժեցին (էջ 60):

²⁹³ Sir John Chardin, *Travels to Persia and ye East Indies through the Black Sea and the country of Colchis*, London, 1686, էջ 242–243:

²⁹⁴ Անդ, էջ 248:

²⁹⁵ Есаи Хасан-Джалалян, *Краткая история страны Албанской*, перевод Тер-Григоряна, подготовка к изданию З. Бунятова, Баку, 1989: Էջերը նշված են յուրաքանչյուր պարբերության վերջում:

4. Տեղի վրացի բնակչության շարժական գույքը, թանկարժեք իրերն ու անասունները գրավեցին և այսպես վարվեցին ոչ միայն մահմեդականների թաղամասերում, այլև գավառի հայկական թաղերում ևս (էջ 66):

Բաքվում հրատարակված այս գրքից պարզ է դառնում որ Ադրբեջանի պատմաբանների շրջանում որոշ ժամանակ դեռևս ընդունված էր հայերի առկայությունը պատմական Աղվանքի տարածաշրջանում, որը, սակայն, աստիճանաբար վերացավ, ու ներկա պատմաբաններն այս իրողությունը հերքում են հիմնովին:

3.4.16. Անգլիացի վաճառական Ջոնաս Հանուեյը (1712–1786) առևտրական նպատակներով մի քանի անգամ Մոսկվայով անցնելով հասել է Իրան և գրառել իր ճամփորդական բոլոր հուշերը: Սրանք 1753 թվականին հրատարակվել են չորս հատորով՝ վերահրատարակվելով 1754 թվականին:

Գրքի երրորդ հատորում առկա են նրա շարադրությունները Հայաստանի և հայերի մասին: Նա գրում է Նախիջևանի հայության մասին, թե ինչպես են նրանց հետ վարվում պարսիկ խաները: Ապա գրում է պարսից Շահ Թահմասբի և նրա դեմ հայերի ապստամբության մասին²⁹⁶: Շամախիի հայության մասին նա հետևյալն է պատմում.

Սավի Մուսթաֆան հայերին ցրեց Շամախիի շրջանում: Այս մարդիկ կազմակերպվելով դրուժյանը հարմարվեցին ու հիմնեցին ինչ-որ հանրապետական կառույց, որն իրեն դրսևորեց՝ պարտության մատնելով ամռանը Աբդուլլահ փաշայի ուղարկած 6000-հոգանոց բանակին²⁹⁷:

Ինչպես տեսնում ենք, 18-րդ դարում Շամախիում հայերը ոչ թե գոյություն ունեին, այլ ունեին կազմակերպված ղեկավարություն ու բանակ:

3.4.17. Ցարական Ռուսաստանի արխիվներում Բաքվից, Շիրվանից ու Դաղստանից ստացված զեկուլյցներում (1728–1796) կան բազմաթիվ նյութեր տեղաբնակ հայերի մասին: Այս զեկուլյցները պատկանում են տարբեր պաշտոնյաների գրչին, այդ թվում և ստորև նշվածները: Այսպես՝ Ի. Փ. Գերբերը կասպից ծովի արևմտյան ափին տեղակայված երկրների և ժողովուրդների նկարագրի մասին 1728 թ. զեկուլյցում մասնավորապես նշում է.

²⁹⁶ Jonas Hanway, *Account of the British Trade over the Caspian Sea*, Volume 3, London, 1753, 110, 116, 189, 207. Տե՛ս նաև C. Walker, նշվ. աշխ., էջ 22–27:

²⁹⁷ Անդ., էջ 252:

Շամախիում... Հայերը բնակվում էին Մուշկուլի, Ռուսթավի և Հատկապես Ղաբալայի [Կապադակի] շրջանների բազմաթիվ գյուղերում. շատերն էլ բնակվում են Շամախիում, Բաքվում և Դերբենդում: Շամախիի մոտակայքում նրանք ունեն վանքեր, որտեղ բնակվում է նրանց եպիսկոպոսը²⁹⁸:

Ի. Կ. Դերյակինը Շիրվանի իր նկարագրությունների մեջ նշում է. «Շամախիում բնակվում են պարսիկներն ու հայերը²⁹⁹: ...Ապշերոնյան թերակղզի և Բաքու: Այստեղ բնակվում են 540 ընտանիք պարսիկ և 40 ընտանիք հայ»³⁰⁰:

3.4.18. Անգլիացի դիվանագետ ու Պարսկաստանի շահի հատուկ պատվիրակ Ջեյմզ Զ. Մորիեն (1780–1849) 1808 թ. Կոստանդնուպոլսից, Փոքր Ասիայով և Հայաստանով անցնելիս ներկայացել է Շահին՝ որպես Բրիտանիայի հատուկ պատվիրակ: Իր ուղեգրություններում նա անդրադառնում է Հայաստանին ու հայերին և մեզ հետաքրքրող տարածաշրջանի մասին ներկայացնում որոշ տեղեկություններ, այդ թվում.

Այնտեղ [Խոյ քաղաքում] բնակվում է մոտ 10 000 շունչ, որոնց մեծ մասը հայեր են: Մահմեդականներն ապրում են առանձին թաղամասում³⁰¹:

Իսկ Բայազետ քաղաքի մասին նա գրում է.

Ինչպես իմացա, Բայազետը Արարատ լեռան հարևանությամբ է, և նրա բնակիչները հիմնականում հայեր են³⁰²:

Մորիեն Աղվանքի մասին որևէ նշումներ չի անում, քանի որ այդ ժամանակներում նման երկիր գոյություն չուներ, իսկ Թավրիզը ներկայացնում է որպես Պարսկաստանի քաղաքներից մեկը:

3.4.19. Անգլիացի արևելագետ Սըր Ուիլյամ Օուսլին (1769–1842) 1810–1812 թթ. իր եղբորն ուղեկցել է Պարսկաստան, որտեղ նա նշանակվել էր Բրիտա-

²⁹⁸ М. О. Косвен, Х. М. Хашаев, редакторы, *История, география и этнография Дагестана*, Москва, Издательство Восточной литературы, 1958, էջ 116:

²⁹⁹ Անդ, էջ 164.

³⁰⁰ Անդ, էջ 167–168:

³⁰¹ James Morier, *A Journey through Persia, Armenia, and Asia Minor*, London, 1812, էջ 299:

³⁰² Անդ, էջ 307:

նրա յի դեսպան: Ուրիշամբ, Պարսկաստանից դուրս գալով, ցամաքային ճանապարհով հասնում է Ջմյուռնիա և այնտեղից վերադառնում Անգլիա: Լինելով խիստ հետաքրքրասեր և բժախնդիր անձնավորություն՝ իր ուղեգրություններում նա տալիս է մանրակրկիտ տեղեկություններ տեղի բնակիչներին, նրանց ապրելակերպի, ավանդությունների, կրոնի և մշակույթի վերաբերյալ, որոնք համարվում են հույժ կարևոր ազգագրական սկզբնաղբյուրներ:

1812 թ. Թավրիզը ներկայացնում է որպես Պարսկաստանի մեծ քաղաքներից մեկը, և մանրամասնորեն քննարկում է Ադրբեջան անվան աղբյուրները³⁰³: Ապա վերլուծում և քննարկում Արաքս գետի անվանումը: Նա նշում է, որ գետը սկիզբ է առնում Կալի-Կլայից ու Արգեռումից (էրզրում), ապա անցնում Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի միջով ու հասնում Կուր գետին³⁰⁴:

Շուրջ 3 մղոն մենք անցանք չոր և ոչ բերրի շրջաններով և ապա լեռնային ու թեք ճանապարհով անցանք, ու մեր առջև բացվեցին Ջուղա քաղաքից մնացած փլատակները, մի քաղաք, որն այժմ ամբողջապես ավերված է...³⁰⁵

Ապա շարունակում է.

Հինգ-վեց մղոն քչելուց հետո Հասան Խանը մեզ մատնանչեց հեռվում՝ Հայաստանի տարածքում գտնվող Քուհե-մարը [Նախիջևանի Օձասարը կամ թրքերենով՝ Իլան-գաղը], որն այսպես է կոչվում բազմաթիվ օձերի պատճառով, որոնք տարվա հատուկ եղանակներին այնտեղ են հավաքվում... Իմ գիշերելու վայրը՝ մի չքավոր հայի անշուք տուն, Ջուղայում լավագույնն էր: Նա մեզ լավ հյուրընկալեց և շուտով մեզ մատուցեց մի հիանալի ընթրիք:

Հաջորդ առավոտյան կանուխ ես գննեցի Ջուղա քաղաքի աչքի ընկնող ավերակները, որտեղ այժմ 45 ընտանիք, ըստ երևույթին ցածր դասի, հայեր են ապրում, որոնցից և բաղկացած է քաղաքի ամբողջ բնակչությունը: Բայց տեղի նախկին բնակչության բազմամարդու թյունը հնարավոր է պատկերացնել դեպի գետը տարածված թեք ափի վրա գտնվող ծավալուն և խճուղված գերեզմանոցից, որտեղ կանգուն են հեռվից մարդկային բազմության կամ ավելի ճիշտ՝ խիտ շարված գորագնդի տպավորություն թողնող բազմաթիվ գերեզմա-

³⁰³ Sir William Ouseley, *Travels in various Countries of the east, more particularly Persia*, 3 volumes, London, 1819–23, հատոր 3, էջ 399 և 412:

³⁰⁴ Անդ, էջ 426:

³⁰⁵ Անդ, էջ 428:

նաքարերը: Սրանք անցյալ դարերի ընթացքում ապրած սերունդներին պատկանող գերեզմանաքարեր են³⁰⁶:

Ու. Օռուլին Սպահանի և Նոր Զուղայի հայության մասին կատարել է հետևյալ նշումները.

Այստեղի [Նոր Զուղայի] բնակիչները քրիստոնյա են, որոնց նախահայրերին իրենց հիմնական բնակավայրից՝ Հայաստանի Զուղայից, բռնութամբ գաղթեցրեց միապետը և որպես իր բռնության հատուցում՝ իրավունք տվեց նրանց ծննդավայրի անունը տալ իրենց հատկացված նոր բնակավայրին³⁰⁷:

Նա ապա շարունակում է իր շարադրանքը Նախիջևանի, Երևանի, Աշտարակի, Էջմիածնի և Հայաստանի այլ քաղաքների վերաբերյալ՝ դրանց մասին տալով տարբեր և մանրամասն տեղեկություններ՝ այդ կերպ մեկ անգամ ևս փաստելով հայերի առկայությունն այս շրջաններում:

3.4.20. Մեծանուն անգլո-ֆրանսիացի պատմաբան և արևելագետ Գի Լը Սթրենջը (1854–1933) սահուն կարգում և խոսում էր արաբերեն ու պարսկերեն: Հետազոտելով պարսիկ և արաբ պատմաբանների ու աշխարհագրագետների ձեռագրերը՝ նա շարադրել է իր «Արևելյան խալիֆայության երկրները» աշխատությունը: Գրքի XI գլուխը նվիրված է Իրանի Ադրբեջան (Ատրպատական) նահանգին, որտեղ նա բացատրում է այս նահանգի տարբեր քաղաքների հարաբերություններն արաբ խալիֆների հետ³⁰⁸:

Ադրբեջանի վերաբերյալ գլխում Լը Ստրենջը ներկայացնում է հետևյալ քաղաքները, որոնք բոլորն էլ Ատրպատականում, այսինքն՝ ներկա Պարսկաստանի հյուսիսարևմտյան նահանգում են. «Թավրիզ, Սարավ, Մարաղա, Մարանդ, Պասավի, Ուշնե, Ուրմիա, Սալմաստ, Խոյ, Նախչևան, Արդաբիլ, Ահար, Միանդ [Միանե], Խալխալ, Ֆիրուզաբադ և Շահրուդի շրջանը»³⁰⁹:

XII գլուխը Լը Սթրենջն անվանել է «Գիլանը և հյուսիսարևմտյան գավառները», որտեղ նա շարադրում է հետևյալը.

³⁰⁶ Անդ, էջ 429: Տնս նաև Patrick Donabedian, Lucy Der-Manuelian, Steven Sim and Argam Aivazyán, *The Destruction of Jugha and the Entire Armenian Cultural Heritage in Nakhijevan*, Bern, 2006.

³⁰⁷ Անդ, 47: Նրա նշածը Սպահանի Նոր Զուղա թաղամասն է, որտեղ միայն հայեր էին բնակվում:

³⁰⁸ Guy Le Strange, *The Lands of the Eastern Caliphate. Mesopotamia, Persia, and Central Asia from the Moslem conquest to the time of Timur*, New York, 1905, գլուխ XI, էջ 159–171:

³⁰⁹ Անդ, էջ 159:

Աղվանքի, Շիրվանի, Վրաստանի և Հայաստանի գավառները, որոնք ընկած են Արաքսից հյուսիս, իսլամական աշխարհին չէին պատկանում, հետևաբար արաբ աշխարհագրագետները սրանք նշում են միայն անցողիկ: Հնագույն ժամանակներից այս գավառներում ապրել են մահմեդականներ և շրջանի կառավարողները հաճախ նշանակվում էին խալիֆի կողմից, բայց մինչև միջին դարերը այս գավառների բնակչության մեծամասնությունը մնում էր քրիստոնյա: Միայն մոնղոլների և հատկապես 14-րդ դարում Լենկթեմուրի Վրաստանի ասպատակումներին հաջորդող վերաբնակեցումների շնորհիվ էր, որ այս հողերի վրա մշտականորեն բնակեցվեցին թուրքերը, և իսլամը դարձավ շրջանի իշխող կրոնը³¹⁰:

Հայաստանի մասին Լը Սթրենջը մասնավորապես գրում է.

Իսլամական տիրապետությունների գոնվող Հայաստանի մայրաքաղաքը Դվինն էր... որն այժմ փոքր գյուղ է: Տասներորդ դարում Դվինը Արդաբեյլից [Ադրբեջանի մայրաքաղաք] ավելի մեծ քաղաք էր և Հայաստանի ու Ներքին Հայքի ամենակարևոր կենտրոնն էր համարվում³¹¹:

Լը Սթրենջն իր աշխատության մեջ Ադրբեջանը համարում է Իրանի Ատրպատական նահանգը, մինչդեռ Աղվանքը, Մողանն ու Շիրվանը միասնաբար նա ներկայացնում է այն տարածքում, որն Ադրբեջանի Հանրապետության հիմնական մասն է կազմում՝ վերջիններին մշակույթն ու էթնոսը համարելով ամբողջովին տարբեր Ադրբեջանից:

3.4.21. Ռուս պատմաբան Իլյա Պավլովիչ Պետրուշևսկին (1898–1977) ճանաչված էր որպես հայամետ պատմաբան, սակայն նա իր աշխատություններից մեկում նշում է հետևյալը.

Ղարաբաղի հինգ հայկական մելիքություններն էին Գյուլիստանը, Զրաբերդը, Խաչենը, Վարանդան ու Դիզակը, որոնք մինչև Նադիր շահի օրերը Ղարաբաղի և Գանձակի բեգլարբեգություն մեջ էին, բայց 1747–1749 թթ. դարձան Զավանշիրի ցեղախմբի Ղարաբաղի խաների վասալները:

17-րդ դ. սկզբին Քաշաթաղի շրջանը, որը Ղարաբաղի հարավարևմուտքում էր և Հայկական ու Ադրբեջանական ՍՍՀ-ների

³¹⁰ Անդ, էջ 176–177:

³¹¹ Անդ, էջ 182:

հարավային սահմաններում, ղեկավարվում էր հայկական ավանդական Մելիք Հայկազի կողմից, որը հայտնի էր Անդրկովկասի համար մղված թուրք-իրանական պատերազմի ընթացքում ունեցած իրանամետ դիրքորոշմամբ: Մեզ է հասել Շահ Աբբասի Ֆիրմանը [հրովարտակը], որտեղ նա ներկայացնում է Մելիք Հայկազի՝ շահին մատուցած ծառայությունները³¹²:

Վերոնշյալ գրականությունից և վկայություններից պարզ է, որ Կովկասի հարավային շրջանում հայերը, սկսած վաղ միջնադարից, ունեցել են ծաղկուն համայնքներ: Իսկ ավելի հարավ գտնվող տարածքներում, ինչպիսին են Արցախն ու Գանձակը, հայերի ներկայությունը կարելի է հաստատել նվազագույնը երկու և կես հազարամյակ շարունակ: Սրա խոստուն փաստերից է հյուսիսարևելյան Արցախում Տիգրան Մեծի կառուցած Տիգրանակերտ քաղաք-ամրոցը (տե՛ս 3.1 ենթագլուխը):

³¹² Петрушевский, Илья Павлович. *Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI начале XIX вв.*, Ленинград, 1949, т. 2 136–137:

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՑՄԱՆ ՈՒ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ընդունված օրինաչափություն է, որ որևէ երկրի տարածքում գտնվող մշակութային և պատմական կոթողների գոնե էական մասը պետք է պատկանելիս լինի տեղի ժողովրդի նախահայրերին: Իսկ ի՞նչ է լինում այն պարագայում, երբ երկրի տարածքում առկա պատմական և մշակութային կոթոթյուններն ընդհանրապես այդ երկրի ժողովրդին չեն պատկանում, այլ ուրիշին են, և որպես կանոն՝ դրանք հարևան երկրների պատմամշակութային ժառանգության մասն են կազմում:

Եթե տվյալ երկրի մտավորականությունը հրահանգ է ստանում ունենալ հնագույն մշակույթ, ապա միակ ելքը ուրիշինը յուրացնելն է: Դրան հետևում է որոշակի քաղաքականություն. եթե հնարավոր չէ որևէ պատմամշակութային հուշարձան յուրացնել, ապա անհրաժեշտություն է առաջանում այն վերացնելու և ոչնչացնելու՝ այդ կերպ տարածքը դատարկելով ուղղակի օտար մշակույթին պատկանող հետքերից: Այս դեպքում գործի է դրվում նաև մեկ այլ՝ հոգեբանական դրույթ, այն է՝ այսպես կոչված «պրոյեկցիան», երբ մեղադրում ես ուրիշին այն մեղքի համար, որը դու ես գործել:

Վանկուվեր քաղաքի Բրիտանական Կոլումբիայի համալսարանի պատմությունից ամբիոնի վարիչ, ծագումով պարսիկ Դր. Քավե Ֆարոքիը փաստում է, որ Շիրվանի և Բաքվի թուրք մտավորականները դեռ 1828 թվականից սկսել էին պարսկական բուն մշակույթը պախարակել ու արժեզրկել՝ գովաբանելով իրենց ունեցած թրքական մշակույթը, ընթացքում յուրացնելով պարսկական մշակույթի կարևորագույն նմուշները և դրսևորումները³¹³:

Ադրբեջանի Հանրապետության հակահայ ու հակաիրանական քաղաքականությունն ու քարոզչությունը, ինչպես նաև ձեռնարկած կոնկրետ քայլերը լիովին համապատասխանում են վերոհիշյալ գործելակերպին, այն է՝ պատմամշակութային հուշարձանների, մշակույթի գործիչների և, այդպիսով, ամբողջական մշակույթների և դրանց միջոցով տարածաշրջանների յուրացումը, իսկ որպես ծայրահեղ քայլ՝ օտար ներկայացվող մշակույթի ոչնչացումը, ապա և դրանում հենց այդ նույն մշակույթի իրական կերտողներին, այս պարագայում՝ հայերին մեղադրելը:

³¹³ Kaveh Farrokhi, *The Process of de-Iranization of Caucasian Azerbaijan (1828 to present)*, ներկայացված թալիշներին նվիրված երկրորդ միջազգային համագումարում, 12 նոյեմբեր, 2011 թ., Երևան, «Իրանը և Կովկասը», անգլերեն հանդես, Leiden, 2012:

4.1. Պատմամշակութային կոթողների յուրացումը կամ ոչնչացումը

Պատմամշակութային կոթողների յուրացման ասպարեզում մեծ փորձ ունի Ադրբեջանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, որի հրատարակությունները լի են աշխատությունների նախորդ բաժիններում բերված աղավաղումներով ու հորինվածքներով:

Կովկասյան Ալբանիայի՝ ներկա Ադրբեջանի Հանրապետության և Արցախի զբաղեցրած տարածքներում տեղակայված Հնադարյան ու միջնադարյան հուշարձանները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջինը բազմաթիվ և բազմազան քրիստոնեական հուշարձաններն են, այդ թվում՝ վանքերը, եկեղեցիները, խաչքարերը, որոնք կառուցել են տեղացի հայերը և փոքր մասն էլ աղվանական ցեղերից քրիստոնյա մնացած փոքրամասնությունները (օրինակ՝ ուղիների Նիժ գյուղի եկեղեցին): Երկրորդ խմբի հուշարձաններն են դամբարանները, պալատները և մզկիթները, որոնք կառուցվել են տարածք ներխուժած արաբների, ապա և մոնղոլ-թաթարների, տարբեր թյուրքական ցեղերի դարավոր տիրապետության ընթացքում, բայց հիմնականում՝ 15-19-րդ դարերի ընթացքում տարածաշրջանում իշխող պարսիկները: Սակայն այս խմբի հուշարձանները առաջիններից շատ ավելի սակավաթիվ են, հատկապես Արցախում:

Ինչպես նախապես նշվեց, Ադրբեջանի իշխանությունները և նրանց կարգադրությամբ գործող պատմագիտությունը ամեն ջանք գործադրում են՝ տիրանալու իրենց և հարակից տարածաշրջաններում պահպանված մշակութային կոթողներին ու շինություններին: Եթե այս ասպարեզում նրանք հաջողության հասնեն, ապա տեր կդառնան Հնամյա մի մշակույթի, որն այդ շրջանում գոյություն է ունեցել ավելի քան 2000 տարի, չնայած այն իրողությունը, որ դրանք գերազանցապես պատկանում են այլ քաղաքակրթության ու այլ ժողովրդի:

Ադրբեջանում հուշարձաններն ու հնությունները յուրացնելու ծրագիրը սկսել է լրջորեն գործադրվել դեռևս 1960-ական թվականներից: Այս ժամանակաշրջանում հրատարակված աղավաղումներով լի գրքերից մեկը Դ. Ա. Ախունդովի «Ադրբեջանի հնագույն և վաղ միջնադարյան ճարտարապետություն» է, որի կեղծիքը սկսվում է հենց գրքի խորագրից: Այստեղ նշված՝ Արաքսից հյուսիս ընկած Ադրբեջանը գրքում հիշված ժամանակաշրջանում, այսինքն՝ միջնադարում, ընդհուպ մինչև նույնիսկ 1918 թ., գոյություն չի ունեցել, հետևաբար այդ տարածաշրջանը չէր կարող ունենալ այսպիսի անվանում: Ինչպես բազմիցս նշվել է, այդ անունը պատկանում է Իրանի նահանգներից մեկին, որը ժամանակին կոչվել է Փոքր Մարաստան, ապա՝ Ատրպատական: Մինչդեռ գրքի բովանդակությունը հուշում է, որ Ադրբեջան ասելով հեղինակը նկատի ունի Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքը: Գրքում լայնորեն կիրառված մեկ այլ անվանափոխում է հայկական «խաչքարի» փոխարեն «խաչդաշ» եզրի օգտագործումը, որտեղ բառի առաջին վանկը պահպանվել է, իսկ երկրորդը փոխվել է

թրքերենի («դաշ» թրքերեն նշանակում է «քար»)՝ այդ կերպ ցանկանալով «փաստել», որ դրանք ադրբեջանական մշակույթին են պատկանում³¹⁴:

Յուրացման այլ օրինակներ են Գանձակի Ս. Հովհաննես և Նիժ գյուղի Ս. Եղիշե եկեղեցիները: Առաջինի դեպքում եկեղեցու ներսից և դրսից մաքրվել են բոլոր հայերեն գրություններն ու խաչերը, շենքը ձևափոխվել է և դարձել համերգասրահ, իսկ երկրորդ դեպքում եկեղեցու մուտքի վրայի և ներսի հայերեն արձանագրությունները պարզապես ոչնչացվել են եկեղեցին «վերանորոգելու» ընթացքում³¹⁵:

Հայկական մշակութային հուշարձաններին տիրանալու նպատակով Ադրբեջանի իշխանությունների վերջին ձեռնարկումներից է Ադրբեջանի մշակույթի ու գրոսաշրջության նախարարության «Ալիև հիմնադրամի» օժանդակությամբ 2007 թ. Բաքվում հրատարակված Ազիզ Ալեքբարլիի խմբագրած «Արևմտյան Ադրբեջանի հուշարձանները» խորագրով աշխատությունը: Այս երևակայական հատորի հեղինակներն են Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի անդամ Բուզադ Բուզադովը և թղթակից անդամներ Վալի Ալիևը, Ջաֆար Ղիյասին ու Մաշադիխանում Նեմաթը, որոնք, հակառակ իրենց ակադեմիական կոչմանը, սուտն ու կեղծիքը հասցրել են կատարելության: Այսպես՝ գրքի յոթերորդ էջում պատկերված է Հայաստանի Հանրապետության քարտեզը, որի տակ նշված է. «Արևմտյան Ադրբեջանի քարտեզը (այսօրվա Հայաստանի Հանրապետությունը), օղուզ թուրքերի պատմական հայրենիքը ...»³¹⁶: Ըստ հեղինակների՝ ներկա ՀՀ-ի տարածքը հնագույն ժամանակներում եղել է Ադրբեջանինը, այսինքն՝ այդ հողերը մինչև վերջերս պատկանել են մի երկրի, որն ինքը ծնունդ է առել միայն 1918 թվականին: Հեղինակները կա՛մ չգիտեն, կա՛մ էլ մոռացության են տվել այն պարագան, որ օղուզ թյուրքական ցեղերը եկել են Կենտրոնական Ասիայի և Ալթայի շրջանից, և որ նրանք Իրանի և Կասպից ծովի հյուսիսով Փոքր Ասիա են հասել միջին դարերում: Այս մասին գրում է նույնիսկ հեղինակավոր Իսլամական հանրագիտարանը³¹⁷: Մինչդեռ եթե հավատալու լինենք վերոհիշյալ աշխատության հեղինակներին, ապա Կենտրոնական Ասիայի այս ցեղերը հանկարծակի կղառնան Կովկասի բնիկներ, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բոլոր նախաքրիստոնեական տաճարները, ուրարտական ամրոցները, պատմամշակութային հուշարձանները կպատկանեն միջին դարերում տարածաշրջան ներխուժած թյուրքական քոչվոր ցեղախմբերին:

³¹⁴ Давуд Ага-огли Ахундов, *Архитектура древнего и ранне-средневекового Азербайджана*, Баку, 1986.

³¹⁵ Հարցի շուրջ մանրամասն տես Ռուբեն Գալսյան, *Հորինված պատմություն*, Երևան, 2010, էջ 79, 80, 85–87 և 190–192:

³¹⁶ Aziz Alakbarli, *Les Monuments d’Azerbaijan Ouest*, Baku, 2007, էջ 7:

³¹⁷ *The Encyclopaedia of Islam, Volume 2*, B. Lewis, Ch. Pellat, J. Schacht, ed., Leiden and London, 1965, էջ 1106–1107:

Գրքում առկա են Հայաստանում տեղակայված կարևոր հնագույն հուշարձանների, եկեղեցիների ու վանքերի լուսանկարները՝ կից բացատրություններով, որտեղ սրանք բոլորը վերագրվում են ազրբեջանական մշակույթին: Դրանց շարքին են նաև նախապատմական «Զորաց քարերը», Էրեբունի ուրարտական ամրոցը, Սիսիանի Ուխտասարի ժայռաքանդակներն ու համարյա բոլոր հայկական վանքերն ու եկեղեցիները, ներառյալ Տաթևի, Սանահինի, Սևանի վանքերը, Երեբունյքի, Թալինի, Քասախի, Թալիշի, Օձունի, Ավանի եկեղեցիները և բազմաթիվ այլ հուշարձաններ: Ստորև մեջբերում ենք վերոհիշյալ գրքից մեկ տասնյակ նմուշներ:

- Էջ 28–29–ի պատկերը ուրարտական Թեյշեբաինի ամրոցն է (մ.թ.ա. 8–րդ դար): Խորագիրն է՝ «Հնագույն թյուրքական ամրոց»:
- Էջ 30–31–ի պատկերում Գառնիի հելլենիստական տաճարն է: Խորագիրն է՝ «Գառնի թյուրքական տաճար և ամրոց»:
- Էջ 50–51–ի պատկերում ինքնուրույն վանքն է, սակայն խորագրում նշված է՝ «Հնագույն թյուրքական տաճար»:
- Էջ 60–61–ի պատկերը 4–րդ դարում հիմնադրված Էջմիածնի Մայր տաճարն է, սակայն վերնագրված է՝ «Ուլաքիլիսա, հայ–թյուրքական տաճար, 7–րդ դար»:
- Էջ 90–91–ի պատկերը Գոշավանքն է, 12–րդ դարի հայկական համալսարանը: Խորագիրն է՝ «Գոշավանք հայ–թյուրքական տաճար»:
- Էջ 98–99–ի պատկերը ցույց է տալիս Տաթևի վանական համալիրը, որը վերնագրված է՝ «Աղվանա–թյուրքական քրիստոնեական տաճար»:
- Էջ 106–107–ի պատկերում 10–11–րդ դարերի Հաղպատի վանքն է, սակայն վերնագրված է՝ «Աղբաթ թյուրքական տաճար»:
- Էջ 126–127–ի պատկերը ցույց է տալիս 10–15–րդ դարերի Հաղարծինի վանքը: Խորագիրն է՝ «Աղարծին ալբանա–թյուրքական հուշարձան»:
- Էջ 148–149–ի պատկերը Օրբելյան իշխանների կառուցած Նորավանքն է: Խորագիրն է՝ «Ամաղու օղուգ–թյուրքական հուշարձան»:
- Էջ 154–155–ի պատկերը ցույց է տալիս Սաղմոսավանքը, 13–րդ դար, սակայն վերնագրված է՝ «Թուրք–քրիստոնյա տաճար Սաղմոսավանք»:

Այս գրքում նշված որակումներն ու անվանումները աշխարհի պատմաբանների համար լուրջ մարտահրավեր են: Նրանք պետք է բացահայտեն, թե ովքեր են այն միջնադարյան թուրք–քրիստոնյաները, որոնք Հայաստանի և Արցախի տարածքներում կառուցեցին բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր և հարյուրավոր այլ մշակութային կոթողներ:

Նպատակասլացությունը աչքի ընկնող հրատարակություններից է Ազրբեջանի ԳԱԱ–ի ակադեմիկոսներ Իդրար Ալիևի և Քամիլ Մամեդզադեի ուղ-

սաց և ադրբեջանական լեզուներով հրատարակված «Ղարաբաղի աղվանական հուշարձանները» պատկերազարդ աշխատությունը³¹⁸: Այս գրքի տեքստերում Ղարաբաղը նշված է որպես Ադրբեջանի գողտրիկ անկյուններից մեկը: Գրքում հատկապես առանձնացված են մի քանի կարևոր «աղվանական» կոթողներ, որոնք են Աղօղլան վանքը (Ծիծեռնավանքը, 6-7-րդ դդ.), Խուժավանքը (Դադիվանք, 9-13-րդ դդ.), Ամարասը (5-րդ դդ.), Ս. Ելիսայի տաճարը (Եղիշե առաքյալի վանքը, 4-14-րդ դդ.) և Գանձասարը (9-13-րդ դդ.): Սրանք ներկայացվում են որպես աղվանական հնագույն ճարտարապետության նմուշներ՝ կառուցված աղվանների ձեռքով, մինչդեռ այս վանքերի և նրանց շրջակայքի հավելյալ կառույցների շինարարության ընթացքում աղվանական ցեղերից միայն մի աննշան մասն էր քրիստոնյա մնացել: Հեղինակները նաև հանգիստ խղճով աչքաթող են անում վանքերի վրայի հայերեն վիմագիր արձանագրություններն ու բազմաթիվ խաչքարերը, որոնք փաստեր են՝ թողած դրանց կառուցողների կողմից:

* * * * *

Ինչպես վերը նկատվեց, Ադրբեջանի իշխանությունների համար առկա է մեկ ուրիշ ճանապարհ ևս՝ հուշարձանների իսպառ բնաջնջումն ու ոչնչացումը: Նման քաղաքականության կարգախոսն է. «Եթե հնարավոր է, տե՛ր դարձիր եղած պատմամշակութային կոթողներին, իսկ եթե հնարավոր չէ, ապա դրանք պետք է ոչնչացնել»: Զեղծարարի համար նման աշխատածը շատ ավելի հարմար է և ձեռնտու: Ոչնչացման փաստը ապագայում կարելի է վերագրել պատերազմներին ու երկրաշարժներին՝ պնդելով, որ դրանք աղվանական հուշարձաններ էին, իսկ մյուս տարբերակն ընդհանրապես դրանց երբեմնի գոյությունն ուրանալն ու ժխտելն է: Այս բոլորը լիարժեք օգտագործում են ներկա Ադրբեջանի Հանրապետության իշխանություններն ու պատմագիտական միտքը՝ հորինելով նորանոր տեսություններ փաստելու իրենց կողմից առաջ քաշված կեղծիքները³¹⁹:

Հիմնահատակ ոչնչացման վառ օրինակներ են Զուղայի միջնադարյան հայկական գերեզմանոցի հազարավոր խաչքարերը, որոնց Դավուդ Աղա-օղլի

³¹⁸ Иггар Алиев и Камиль Мамедзаде, *Албанские памятники Карабаха*, Баку, 1997.

³¹⁹ Հարցի մասին մանրամասն տե՛ս նաև Սամվել Կարապետյան, «Հայկական հուշարձանների եղեռնն Ադրբեջանում», *Հայոց Յեղապանություն. պատճառներ և դասեր*, մաս 2, Երևան, 1995, էջ 30, 31 և այլն: Սամվել Կարապետյան, *Բուն Աղվանքի հայկական վիմագրերը*, մատենաշարի Գիրք 1, Երևան, 1997, էջ 48-49: Հարություն Մարության, *Հայ ինքնության պատկերագրությունը*, Երևան, 2009, էջ 295: Ռուբեն Գալչյան, *Հորինված պատմություն*, 2010, էջ 189-198: Սամվել Կարապետյան, «Հայկական հուշարձանների վիճակը Ադրբեջանում», *Վարձք*, համար 3, Երևան, 2010-2011:

Ախուրդովն իր աշխատությունների մեջ անվանում է «աղվանական»³²⁰: Բայց այս կեղծ պատկանելությունն անգամ անկարող եղավ փրկել խաչքարերը բացարձակ ոչնչացումից: Այս քարե կոթողների միակ մեղքն այն էր, որ իրենց վրա կրում էին հայերեն վիմագիր արձանագրություններ և հայերի անուններ: Դեռ 1960-ական թթ. ադրբեջանցիները հայտարարում էին, որ դրանք աղվանական ու ադրբեջանական մշակույթին պատկանող գերեզմանաքարեր են: Բայց 1996–2005 թթ. ընթացքում այս գերեզմանոցը տարբեր փուլերով ու աստիճանաբար վերացվեց, իսկ վերջին փուլում Ադրբեջանի բանակային ստորաբաժանումների մասնակցությամբ այս ավերումն ավարտին հասցվեց, և միջնադարյան գերեզմանոցի տեղում կառուցվեց գինվորական վարժությունների դաշտ: Այս բոլորը նկարահանված և փաստագրված է Իրանի սահմանից դիտող անհատների կողմից³²¹:

Երբ դեռ չէր սկսվել ավերման վերջին փուլը, Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Բ–ն 2003 թ. հունվարի 16–ին նամակ էր հղել Ադրբեջանի հոգևոր առաջնորդ Շեյխ–ուլ–Իսլամ Ալլահշուբուր Փաշա–Ձադեին՝ հայտնելով իր երկմտությունը Նախիջևանում Ջուղայի գերեզմանոցի վիճակի մասին և խնդրելով նրա օժանդակությունը՝ պահպանելու միջազգային կարևորություն ունեցող այս միջնադարյան հուշարձանը (նամակ համար 176, 16.01.2003): Շեյխ–ուլ–Իսլամը նամակին պատասխանել էր համար 194, 27.02.2003 թվակիր նամակով՝ հայտարարելով, որ կաթողիկոսին հասած տեղեկությունները Նախիջևանի տարածքում գտնվող նշված հուշարձանների մասին, որոնք, ի դեպ, նրա բնութագրմամբ, աղվանական են, ճշգրիտ չեն, և երկմտության կարիք չկա: Մինչդեռ նույն ընթացքում ադրբեջանական իշխանությունները 2005 թվականին խաչքարերի ոչնչացման ծրագիրը հավանաբար արդեն մշակել էին:

2003 թվականի փետրվարի 13–ին Գերմանիայի Խորհրդարանի (Deutsche Bundestag) փոխնախագահ Դր. Անյե Ֆոլմերը, զանգահարելով Գերմանիայում Ադրբեջանի լիազոր դեսպան Հուսեյնադա Սադիդովին, հարցում է արել Ջուղայի գերեզմանոցի ավերման և այս մասին իրեն հասած տեղեկությունների վերաբերյալ: Դեսպան Սադիդովը երկար ընդմիջումից հետո գրավոր պատասխանել է.

³²⁰ Давуд Ага–оглы Ахундов, *Архитектура древнего и ранне–средневекового Азербайджана*, Баку, 1986.

³²¹ Armen Haghazarian, *Julfa. The Annihilation of the Armenian Cemetery by Nakhijevan's Azerbaijani Authorities*, Yerevan, 2006. Տնօրեն Patrick Donabedian, Lucy Der-Manuelian, Steven Sim and Argam Aivazyan. *The Destruction of Julfa and the Entire Armenian Cultural Heritage in Nakhijevan*, Bern, 2006. Ռուբեն Գալիչյան, *Հորիված պատմություն*, 2010, էջ 197–198: Haik Demoyan, *Azerbaijan. Vandalism as Usual*, Yerevan, 2010. Rouben Galichian, *The Invention of History; Azerbaijan, Armenia and the Showcasing of Imagination*, London and Yerevan, 2007, էջ 73–88: Սամվել Կարապետյան, «Հայկական հուշարձանների վիճակը Ադրբեջանում», *Վարձք*, համար 3, Երևան, 2010–2011, էջ 10–11:

Ներողամիտ եղեք պատասխանի ուշացման համար, քանի որ այս խրթին պատմաքաղաքական հարցը հետազոտելու և պատասխանը տալու համար ժամանակի կարիք կար: Նշված տարածքում եղել է և այժմ էլ առկա է մի գերեզմանոց, որի պատմությունը սկսվել է չորրորդ դարից: Հայկական աղբյուրներում այս գերեզմանոցը կոչվում է «Խաչքարա» [Հավանաբար՝ Խաչքար], որը, սակայն, պատկանում է նախախլամական Աղբբեջանին, որը ժամանակին կոչվում էր Կովկասյան Ալբանիա [Աղվանք]: Բարեբախտաբար, Ձեր լսած լուրերն անհիմն են և ոչ իրական: Գերեզմանոցը պարզապես կառուցված է երկրաշարժային գործուն գոտու վրա, հետևաբար դարերի ընթացքում նրա կանգուն քարերն աստիճանաբար տապալվել են³²²:

Գերմանիայում Աղբբեջանի Հանրապետության դեսպանի այս նամակը մի քանի կեղծիք է պարունակում. նախ՝ այն, որ Խաչքարերը իբր պատկանում են մինչև 7-րդ դարի ժամանակաշրջանին, և երկրորդ՝ դրանք տապալվել են միայն երկրաշարժերի պատճառով, և վերջապես այն, որ դրանք աղվանական հուշարձաններ են կամ, ավելի ստույգ, աղվանական են «եղել», քանի որ այլևս գոյություն չունեն: Իսկ եթե դրանք իրականում աղվանական էին, ապա ինչո՞ւ Աղբբեջանի իշխանությունները կազմակերպեցին դրանց ոչնչացումը. չէ՞ որ դրանք իբր իրենց նախնիներինն էին:

Վերոբերյալ աղբբեջանական աղբյուրները (նախորդ էջում նշված՝ Ախունդովի աշխատությունը, Շեյխ-ուլ-Իսլամի և Գերմանիայում Աղբբեջանի դեսպանի նամակները) հաստատում են Ջուղայում գերեզմանոցի առկայությունը՝ այն անվանելով «աղվանական», սակայն գերեզմանոցը ոչնչացնելուց հետո Աղբբեջանի զիրքորոշումը փոխվել է, և Աղբբեջանի իշխանությունները հայտարարում են, որ նման գերեզմանոց գոյություն չի էլ ունեցել: Այս հայտարարությունը ամբողջովին հակասում է թե՛ Շեյխ-ուլ-Իսլամից և թե՛ դեսպանից ստացած պատասխան նամակներում նշված գերեզմանոցի իրավիճակին ու եղելությունը:

Այս մոտեցումը, սակայն, պարզում է աղբբեջանական իշխանությունների վերը մատնանշած գործելակերպը, որն է՝ տեր դառնալ եղած մշակույթին կամ՝ եթե դա հնարավոր չէ, ոչնչացնել այնպես, որ նրանցից հետք էլ չմնա: Նույն մոտեցումը նրանք օգտագործել են Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքում մինչև 1980 թ. գոյություն ունեցած հայկական եկեղեցիների

³²² Ներկայացվածը Աղբբեջանի դեսպան Սադիղովի՝ հունիսի 24-ի, 2003 թվակիր, Գերմանիայի Բունդեսթագի փոխնախագահ Դր. Անյե Ֆոլմերին հղված նամակի երկու պարբերությունների թարգմանությունն է: Մանրամասն բացատրությունների համար տես Ռուբեն Գալսյան, *Հորինված պատմություն*, Երևան, 2010, էջ 195–197:

ու վանքերի նկատմամբ³²³, քանի որ սրանց գոյութիւնը փաստում էր այդտեղ Հայերի դարավոր ներկայութիւնը, իսկ քրիստոնեական հուշարձանների քանակը տասնյակ անգամներ գերազանցում էր մզկիթների քանակը: Ադրբեջանի Հանրապետութեան մնացյալ տարածքում նույնպես ոչնչացվել են Հայկական եկեղեցիները, իսկ այն հազվագյուտ հուշարձանները, որոնք դեռ կանգուն են, «մաքրվել» են իրենց հիմնադրման օրվանից առկա Հայերեն արձանագրութիւններից և այլ Հայկական հետքերից³²⁴:

Պետք է նաև նշել, որ սկսած 1926 թվականից՝ Նախիջևանի ԻՍՍՀ-ի ադրբեջանական իշխանութիւններն ամեն կերպ խոչընդոտում են և արգելել են բնիկ Հայերի վերադարձը Նախիջևան, որոնք 1910–1922 թվականներին պատերազմից ու կոտորածներից ճողոպրելու նպատակով ստիպողաբար հեռացել էին իրենց գյուղերից ու քաղաքներից³²⁵:

4.2. Գրավոր մշակութի և մշակութային գործիչների յուրացումը

Ադրբեջանական կեղծիքների զինանոցում կա մեկ ուրիշ զենք ևս, այն է՝ աշխատել Հնարավորութեան սահմաններում «յուրացնել», «սեփականացնել» Ադրբեջանի տարածքում ծնված, գործող կամ այդ տարածքի մասին գրած պատմիչներին, զիտնականներին, գրողներին և այլ մտավորականների և, անկախ էթնիկ ծագումից, նրանց Հայտարարել «ադրբեջանցի»: Այս գործընթացի մի փոքրիկ մասն են կազմում հետևյալ մշակութային գործիչներն ու զիտնականները:

4.2.1. Ադրբեջանական աղբյուրները պնդում են, որ Մովսես Կաղանկատվացին (կամ Դասխուրանցին) ադրբեջանցի պատմիչ է³²⁶: Ըստ երևույթին, ադրբեջանական կեղծ աղբյուրներն այնքան են առաջ գնացել, հավաստի ու համոզիչ դարձել, որ նույնիսկ ամերիկացի պատմաբան Օդրի Ալթշտատն իր հետազոտութիւնների մեջ, օգտվելով ադրբեջանական աղբյուրներից, նշում է «ազվան պատմիչ Մոյսեյ Կաղանկատլին...»³²⁷: Արդեն իսկ նկատելի է, թե ինչ արդյունք են տալիս ադրբեջանական նենգափոխումները. նույնիսկ մասնագետ պատմաբաններն արդեն սկսել են հավատալ նրանց հորինվածքներին³²⁸:

³²³ Նախիջևանում եղած պատմական հուշարձանների վերաբերյալ տնն Արգամ Այվազյան, *Նախիջևան. Գիրք հուշարձանաց*, Երևան, 1990, *Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները*, Երևան, 1986, և այլն:

³²⁴ Տնն Ռուբեն Գալսյան, *Հորինված պատմություն*, Երևան, 2010, էջ 189–193:

³²⁵ Վլադիմիր Խոջաբեկյան և Բագրատ Ասատրյան, «Նախիջևանի հայության պատմությունից», *Սովետական մանկավարժ*, Երևան, 1988, համար 10, էջ 37–45:

³²⁶ Victor Shnirelman, նշվ. աշխ., էջ 154:

³²⁷ Altstadt, նշվ. աշխ., էջ 6 և 12:

³²⁸ Կաղանկատվացու աշխատանքի շուրջ Ֆարիդա Մամեդովայի շարադրած և Զիյա Բունիաթովի խմբագրած Աղվանքի պատմության մասին քննադատական հոդվածով հանդես է եկել Բագրատ Ուրուբաբյանը: Տնն Фарида Мамедова, *“История Албан”*

4.2.2. Հանրահայտ պարսիկ գրող ու բանաստեղծ Նիզամի Գյանջավու (1141–1209) ծննդավայր Գյանջա քաղաքը Պարսկաստանի տարածքում էր: Սակայն քանի որ Գյանջան ներկայումս Ադրբեջանի տարածքում է, ադրբեջանցիները նրան համարում են «ադրբեջանցի» բանաստեղծ³²⁹:

Ադրբեջանի կենտրոնական բանկի՝ 1993-ից մինչև 2006 թվականը թողարկված 500-մանաթանոց թղթադրամի վրա երևում է Նիզամիի պատկերը, իսկ 2008 թվականին նրա մահվան 800-ամյակի առթիվ բանկը թողարկեց 100-մանաթանոց հիշատակի ոսկեդրամ:

4.2.3. Նա՛սիր-ուգ-դին Թուսին (1201–1274) ծնվել է Պարսկաստանի արևելյան Խորասան նահանգի Թուս քաղաքում, այդ պատճառով էլ կոչվում է Թուսի: Նա Հանրահայտ պարսիկ մաթեմատիկոս, գիտնական ու աստղագետ էր ու իր տարաբնույթ գործունեությունը ընթացքում սելջուկ Հոլաքու խանի համար Ադրբեջանի այն ժամանակվա մայրաքաղաք Մարաղայում 1259 թ. կառուցել էր մի աստղադիտարան, որի հիմքերը դեռ կանգուն են: Հիմք ընդունելով այն փաստը, որ Թուսին եղել է Մարաղայում, որը գտնվում է Ատրպատականում կամ, ըստ Ադրբեջանի իշխանությունների, Հարավային Ադրբեջանում, նրանք որոշել են Թուսինին համարել «ադրբեջանցի»³³⁰:

4.2.4. Զ. Բունիաթովը Եսայի Հասան-Ջալալեանցի (մահ. 1728 թ.) «Պատմութիւն Համառօտ Աղուանից երկրի» գրքի թարգմանությունն նախաբանում նրան ներկայացնում է որպես աղվան պատմիչ, առանց հաշվի առնելու, որ Եսային սերված էր Խաչենի Հասան-Ջալալյան հայ մելիքական հայտնի տոհմից: Այս տոհմի անդամներից մի քանիսը ծառայել էին որպես Գանձասարի կաթողիկոսներ, և Եսային էլ, լինելով նույն տեղի կաթողիկոս, գրքում իրեն հայ դասելով, գրում է՝ «Իսկ ի մէջ և յագգէս Հայոց...»՝ տեքստում հատուկ ուշադրություն դարձնելով հայերին ու նրանց ճակատագրին³³¹:

4.2.5. Ատրպատականցի բանաստեղծ Հուսեյն Բեհշա՛թ-Թա՛բրիզին (1906–1988) ճանաչված է իր «Շա՛հրիար» գրական մականունով: Նա ծնվել է Պարսկաստանի Ատրպատական նահանգի Թավրիզ քաղաքում (ապացույցը ազգանվան մեջ առկա է «Թաբրիզի» բառն է), և բարձրագույն կրթություն ստացել Թեհրանի համալսարանում: Քանի որ նա էլ ատրպատականցի էր, այդ երկրա-

Мойсейя Каланкату́йского как источник по общественному строю раннесредневековой Албании, Баку, 1977, ինչպես նաև Баграт Улубабян, “Еще одна произвольная интерпретация армянской “Истории страны Агван””, Բանբեր Հայաստանի արխիվների, Երևան, 1979, հատոր 2, էջ 219–232:

³²⁹ Heydarov and Bagiyev, ed., նշվ. աշխ., էջ 105:

³³⁰ Tale Haydarov, նշվ. աշխ., էջ 94:

³³¹ Եսայի Աղուանից կաթողիկոս Հասան Ջալալեանց, Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղեմ, 1868, էջ ր:

մասը կոչելով «Հարավային Ադրբեջան»՝ ներկա Ադրբեջանի Հանրապետության պատմաբանները Շահրիարին էլ ադրբեջանցի են հայտարարում³³²:

4.3. Ոչնչացման համար կիրառվող ազրեսիան և պրոյեկտումը

Անձի հոգեբանական պաշտպանական մեխանիզմների մեջ առկա են «ազրեսիայի փոխանցում» և «պրոյեկցիա» կամ «պրոյեկտում» կոչված երևույթները: Այս հոգեբանական պաշտպանական մեխանիզմներն ազդեցիկ են՝ նվազեցնելու և դուրս բերելու անհատին տհաճ, մեղավոր զգացումներից և անընդունելի իրավիճակներից: Սրանցից առաջինի դեպքում անձը ենթագիտակցաբար ինքնապաշտպանման համար սկսում է հավատալ իրականությունն անհամապատասխան տեղեկություններին և ապրել պատրանքների աշխարհում՝ իր ֆրոստրացիան փոխադրելով և արտահայտելով երրորդ անձի հանդեպ հաճախակի ծայրահեղ ազրեսիայով: Մյուսը՝ պրոյեկտումը, կարելի է թարգմանել որպես «անդրադարձ» և բացատրել իբրև սեփական տհաճ և զգացումների ակամա և անգիտակցական փոխանցումը երրորդ՝ կողմնակի անձի:

Անհատի դեպքում սրանք անձի ինքնապաշտպանական միջոցներ և գործընթաց են, որի ընթացքում անհատն իր իսկ ունեցած, բայց անձի համար անընդունելի, տհաճ ու խանգարող զգացումներն ու ձգտումները ենթագիտակցաբար վերադրում է ուրիշներին, որոնք դառնում են նրա ազրեսիայի փոխանցման կամ պրոյեկտման առարկան: Փաստորեն «ես»-ը պաշտպանվում է՝ մեկ այլ անձի վրա դնելով իր հոգեբանական, ֆիզիկական դժվարություններն ու խնդիրները: Ազրեսիայի փոխանցման դրսևորումը կարող է լինել ինչպես ուղղակիորեն մեկ անհատի նկատմամբ, նրա բացակայությունից դեպքում ազրեսիան կարող է արտահայտվել անուղղակի կերպով՝ անդրադառնալով երրորդ անձի վրա, որով անհատի ֆրոստրացիաները փոխանցվում են և դառնում հարձակողական վերաբերմունք՝ ուղղորդվելով երրորդ անձին: Պրոյեկտման պարագայում հաճախ ծնողներն իրենց դժվարություններն ու վախի զգացումը դրսևորում են որպես երեխայի ունեցած զգացում: Հոգեբանին դիմող մայրը հաճախ փորձում է նրան համոզել, որ երեխան վախենում է մթությունից կամ փակ դռներից: Նման դեպքերում հետազոտությունները հաճախ փաստում են, որ այդ բոլոր վախերն առկա են մոր մեջ, որն անգիտակցաբար դրանք պրոյեկտում է երեխայի վրա³³³:

Ազրեսիայի փոխանցման և պրոյեկտման երևույթների հետազոտությունները հիմնականում վերաբերել են անհատին և նրա շրջապատին, սակայն հարցին կարելի է նայել նաև այլ տեսանկյունից՝ դրանք փոխադրելով ավելի լայն շրջանակ, առաջին հերթին գերդաստանի, ապա և ազգային մակարդակների վրա: Օրինակ՝ ընտանիքների փոխհարաբերությունների պարագայում հաճախ ընտա-

³³² Tale Heydarov, նշվ. աշխ., էջ 106:

³³³ Խ. Գասպարյան և Մ. Մելիք-Փաշայան, *Բժշկական հոգեբանություն*, Երևան, 1995, էջ 62–64:

նիքի անդամներն այլ ընտանիքի են վերագրում նրանց հանդեպ իրենց բացասական դիրքորոշումներն ու զգացումները, այսպիսով մեղքն իրենցից թոթափելով՝ անդրադարձնում են մյուսների վրա՝ ենթագիտակցաբար հանգստացնելով իրենց խիղճն ու շղարչելով հավանական մեղսակցության զգացումը: Խնդիրն ընդլայնելով՝ պրոյեկցիան կարող է նաև փոխանցվել ցեղային և միջազգային հարաբերությունների դաշտ:

Ազրբեջանական ներկա քարոզչություն մի մասն ազդված է այս հոգեբանական գործոններից, որոնք անհատականից անցնում են ազգային, այսինքն՝ ավելի ծավալուն դաշտ: Փոխանցման գործընթացը և դրան հետևող ազդեցիկ, ինչպես նաև պրոյեկտման գործողությունը, փոխանցվելով ժողովրդական զանգվածներին, նրանց մղում է առաջին հերթին Ֆրոստրացիայի հետևանքով զարգացած ազդեցիկ թիրախ դարձնել մեկ ուրիշ ժողովրդի, իսկ իրենց կատարած հանցավոր արարքները դեմացինի վրա՝ պրոյեկտման միջոցով ձեռքազատվել այդ մեղքերի պատասխանատվությունից:

Պատմական ազգային անցյալի ձևավորման ապարդյուն փնտրտուքը Ազրբեջանի մտավորականության մեջ առաջացրել է Ֆրոստրացիայի և հոստախաբություն զգացում, որի պաշտպանողական մեխանիզմներից է դրան հետևող ազդեցիկ: Սա մասնավորապես արտահայտվում է սեփական երկրի մեջ գոյություն ունեցող, բայց օտարների կառուցած պաշտամունքային բնույթի հուշարձանները, ընդհանրապես հնություններն ու պատմամշակութային այլ կոթողներ միտումնավոր ոչնչացնելով: Այդպիսով՝ վերացվում են օտարներին պատկանող պատմամշակութային այն կոթողները և անցյալը, որի պակասը զգում են երկրի տերերը:

Դրան հետևող պրոյեկցիայի պարագայում պատմամշակութային կոթողներն ավերողները սեփական մեղքերից ձեռքազատվում են՝ նույն գործողության համար մեղադրելով իրենց երեակայական թշնամուն, որն այս դեպքում հայն է ու հայ ժողովուրդը: Ներքոբերյալ մի քանի օրինակներ նման ազդեցիկից և պրոյեկտումներից են, որոնք շատ մեծ ծավալ են ընդունել վերջին տարիների ընթացքում:

Ծավալուն ազդեցիկի ծայրահեղ արտահայտություններից է հատկապես Նախիջևանում կատարված ավերը, որտեղ հայկական բազմաթիվ եկեղեցիներից համարյա բոլորն այժմ հիմնահատակ ոչնչացված են, և նույնիսկ տեղի բնակչությունն արգելված է դրանց, ինչպես նաև ժամանակին Նախիջևանի գյուղերում ու քաղաքներում ապրած հայերի մասին խոսելը: Նախիջևանի վանքերի և եկեղեցիների «մեղքն» այն էր, որ տեղի իսլամական հուշարձանները թվով սակավ էին ու անշուք, իսկ հայկականները կառուցվածքով ավելի շքեղ էին և թվով՝ գերազանց: Մեկ այլ ցայտուն օրինակ է Զուղայի միջնադարյան գերեզմանոցի հազարավոր խաչքարերի իսպառ բնաջնջումը Ազրբեջանի ներկա իշխանությունների ձեռքով:

Ադրբեջանում հրատարակված «Պատերազմ ընդդեմ Ադրբեջանի» գրքում³³⁴ խմբագիրն արբանյակային անորակ լուսանկարներ է ներկայացնում և նշում այս կամ այն ադրբեջանական կամ աղվանական (իրականում հայկական) պատմամշակութային հուշարձաններն ու եկեղեցիները, որոնք, իբր, ոչնչացրել են հայերը: Գրքում առկա ցուցակներում նշվում են մոտ 1800 շինություններ, որոնք իբր հայերի կողմից ավերված շենքերն են: Սակայն մանրակրկիտ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գյուղական բնակելի տների և պետական շինությունների ավերը մեծ մասամբ կատարվել է պատերազմի հետևանքով, իսկ հաճախ և որոշ դեպքերում էլ գալիս են փաստելու դրա հակառակը, այսինքն՝ այն, որ այդ շինությունները ներկայումս կանգուն են³³⁵: Ներկայացրած բոլոր լուսանկարներով ու աղյուսակներով հանդերձ գրքի հեղինակներն ու խմբագիրն անուշադիր են եղել իրենց ներկայացրած փաստերն ընտրելիս և նույնիսկ այս պարզ պրոյեկտումն էլ չեն կարողացել համոզիչ կերպով իրականացնել ու ներկայացնել: Օրինակ՝ Աղդամի իսլամական գերեզմանոցի և նրա մոտակայքի արբանյակային լուսանկարների բացատրություն մեջ ասվում է, որ հայերն ամբողջովին ոչնչացրել են իսլամական գերեզմաններն ու դամբարանները՝ որպես փաստ ներկայացնելով երկու կարևոր դամբարան Աղդամում, երկուսն էլ՝ նրա շրջակայքում՝ նշելով սրանցից երեքի անունները՝ Ուղուրլու Բեգի, Միր Ալիի և Քյանգաուլիի դամբարանները: Սակայն նույն արբանյակային լուսանկարներն ուսումնասիրողը կարող է պարզ տեսնել դամբարանների ստվերները, որոնք փաստում են դրանց կանգուն լինելը: 2009 թվականին մենք լուսանկարել ենք այս դամբարանները, որոնց պատկերները տեղադրված են մեր հեղինակած «Հորինված պատմություն» գրքում³³⁶: Մեկ ուրիշ օրինակ էլ Համզա Սուլթանի (Մելիք Հայկազի) ամառանոցային պալատն է Միծեռնավանքից երկու կիլոմետր հարավ գտնվող Մելիքաշեն գյուղում, որը, ըստ «Պատերազմ ընդդեմ Ադրբեջանի» գրքի, ոչնչացրել են հայերը, բայց որն իրականում վերականգնված է և ծառայում է որպես փոքրիկ հյուրանոց, որտեղ 2007 թվականին գիշերել է աշխատություն հեղինակը³³⁷:

Այս անտեղի մեղադրանքները գալիս են ներկայացնելու ավելի լայն և զանգվածային պրոյեկտման ցայտուն մի երևույթ, իսկ հոգեբանական պաշտպանական մեխանիզմները հաստատում են, որ մեղքի զգացում ունեցողները միշտ փնտրում են մի քավություն նոխազ, որը նրանց գոնե ժամանակավորապես կազատի իրենց համար անհաճո այս զգացումներից ու իրավիճակից:

³³⁴ Վերոհիշյալ ադրբեջանական գրքի և դրա պարունակած զանազան կեղծիքների բացահայտման համար տե՛ս նաև Ռուբեն Գալսյանի «Հորինված պատմություն» (Երևան, 2010) հատորը:

³³⁵ Imranli, նշվ. աշխ.:

³³⁶ Մանրամասն բացատրությունների համար տե՛ս Ռուբեն Գալսյան, Հորինված պատմություն, Երևան, 2010, էջ 64–66, 185:

³³⁷ Անդ, էջ 62–64, 185–186:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՔԱՐՏԵՋԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Քարտեզը մի փաստաթուղթ է, որը Սուրբ Գրքից ու Ղուրանից հետո հավանաբար ամենալայն տարածումն ունի ամբողջ աշխարհում: Նախապատմական ժամանակներում, երբ դեռ այսօրվա պատկերացմամբ «քարտեզ» կոչվածը գոյություն չուներ, իսկ գիրը դեռ չէր զարգացել, մարդ արարածն իր շրջապատը պատկերացրել է ուրույն կերպով և այդ «պատկերացրածը» կարողացել է փոխանցել ուրիշին ավազի կամ հողի վրա փայտիկի ծայրով արված նշաններով ու գծերով, իսկ երբեմն էլ՝ մտքում եղածը քարի վրա փորագրելով: Հնագույն առարկաները, որոնք մեզ են հասել, և որոնք կարող են քարտեզ կոչվել, հողամասերի կամ բնակավայրերի սահմանները նշող գծագրերն են՝ քանդակների տեսքով: Դրանք հայտնի են Դանիայում (Ֆին նահանգ), Ֆրանսիայում (Մոն Բեգո), Իտալիայում (Բեդոլինա, Պոնտե Սան Ռոկկո և այլն), Ռուսաստանում (Մայկոպ), Հայաստանում (Ուխտասար, Սևան) և այլուր հայտնաբերված ժայռապատկերներում: Կարելի է ասել, որ քարտեզը տարբեր կերպարանքներով գոյություն է ունեցել մինչև բրոնզե դարը. որոշ կավե սալիկների վրա արված փորագրություններին մասնագետները տալիս են մինչև անգամ 8,000 տարվա պատմություն³³⁸: Մինչդեռ որևէ քանդակ կամ գրություն, որը կարելի է պայմանականորեն համարել իբրև անցյալը վկայագրող «փաստաթուղթ», երևան է եկել քարտեզների հնագույն նմուշներից մի քանի հազարամյակ ավելի ուշ:

Քարտեզի յուրահատկությունն այն է, որ նրա պարունակած ողջ տեղեկությունը նայողին կամ ընթերցողին մատուցվում է մեկ հայացքով, միանգամից, մինչդեռ նույն տեղեկությունները գրավոր փաստաթղթից ստանալու համար անհրաժեշտ է ընթերցել ողջ տեքստը: Իսկ շատ դեպքերում քարտեզի ներկայացրածն ընդհանրապես հնարավոր չէ ճշգրիտ բացատրել ցանկացած շարադրանքով:

Ինչ վերաբերում է ձեռագիր աշխատությունների մեջ եղած քարտեզներին, նշենք, որ եթե նույնիսկ տվյալ ձեռագրից մեզ հասել է մի քանի օրինակ, ապա դրանց քարտեզները, եթե նույնիսկ առկա են, հաճախ միմյանցից այնքան են տարբերվում, որ երբեմն դրանք կարելի է դասել տարբեր քարտեզախմբերում: Տեքստն արտագրելը դյուրին է, սակայն երբ հերթը գալիս է պատկերն ընդօ-

³³⁸ Leo Bagrov, *History of Cartography*, Cambridge, 1964, էջ 31: Սրանցից են Անկարայի մոտ՝ Չաթալ Հոյուկում գտնված քաղաքի պլանը և Իրաքում՝ Հարրան քաղաքի մոտ գտնված սալիկի վրա գծված կադաստրային պլանը: Տես նաև կայք <http://www.henry-davis.com/MAPS/AncientWebPages/100B.html>

րինակելուն, ապա այդ աշխատանքը կատարողի ճաշակն ու վարպետությունը կարող է հիմնովին փոխել քարտեզի տեսքն ու պարունակությունը: Այդպիսի ծայրահեղ դրսևորումներից են Իզիդորի (տե՛ս Հավելվածի քարտ. 13 և 14) և Բեստուսի քարտեզները (տե՛ս Հավելվածի քարտ. 15, 16 և 17):

Ութերորդ դարից մինչև 14-րդ դար քրիստոնեական եվրոպական միտքը և քարտեզագիտությունը գերազանցապես առաջնորդվում էին կրոնական դոգմաներով, մինչդեռ այդ նույն ժամանակահատվածում իսլամական աշխարհում այն գարգանում էր առավելապես ազատ ու անկաշկանդ: Հետևանքն այն եղավ, որ իսլամական աշխարհում մատթեմատիկան, ֆիզիկան, քիմիան, բժշկությունը և մյուս գիտություններն ու արվեստը զարգացան ու առաջ անցան քրիստոնեական աշխարհից: Աշխարհագրությունն ու քարտեզագրությունը նույնպես այն գիտությունների շարքում էին, որ իսլամական աշխարհը, ընդունելով հին հունական տեսությունները, դրանք զարգացրեց ու կատարելագործեց ձեռք բերված նորանոր տեղեկություններով: Այլ կերպ ասած՝ իսլամական աշխարհագրությունն ու քարտեզագրությունն իրականում ժառանգորդն են հունա-հռոմեական դպրոցի, որի տարբեր տեսությունները որդեգրեցին արաբ և պարսիկ աշխարհագրագետները: Դրանց թվում էին երկրի գնդաձևություն, եղանակային գոտիների բաժանելու, շրջապատող օվկիանոսի և նույնիսկ բնակելի աշխարհի տարածքի վերաբերյալ տարբեր տեսությունները: Իսլամական քարտեզագրության սկիզբն իններորդ դարն է: Այն ծաղկուն շրջան ապրեց մոտ 400 տարի, որի ընթացքում իսլամական աշխարհագրագետները շատ ավելի առաջատար էին, քան նրանց արևմտյան գործակիցները: Չնայած նրան, որ արաբների ու պարսիկների քարտեզագրական ներդրումները 14-րդ դարից հետո էլ դեռ շարունակվեցին, բայց դրանք աստիճանաբար նվազում էին ու դառնում հազվադեպ:

Երբ թյուրքական ցեղախմբերը սկսեցին իրական վտանգ սպառնալ Բյուզանդական կայսրության և նրա մայրաքաղաք Կոստանդնուպոլսի համար, այնտեղ պահպանված հին հունական մի շարք ձեռագրերի հետ Պտղոմեոսի «Աշխարհագրությունը», որին մինչ այդ եվրոպացիներն անծանոթ էին, տեղափոխվեց ու հայտնվեց Իտալիայում, որտեղ, առաջին անգամ լինելով, այս կարևորագույն աշխարհագրական երկին ծանոթացան արևմտյան աշխարհագրագետներն ու քարտեզագետները: Բյուզանդացի գիտնական Էմանուել Քրիստլարասը (մոտ 1355–1415 թթ.) այս աշխատությունն առաջին անգամ հին հունարենից թարգմանեց լատիներեն, և այդպիսով արևմտյան աշխարհագրագետներն առիթ ունեցան ծանոթանալու այս կարևոր հետազոտությանը³³⁹:

Արևմտյան աշխարհում քարտեզագրությունը, հնազանդվելով կաթոլիկ եկեղեցու դոգմաներին, երկար ժամանակ ոչ մի կարևոր առաջադիմություն

³³⁹ A. E. Nordenskiöld, *Facsimile Atlas to the Early History of Cartography, with Reproductions of the Most Important Maps Printed in XV–XVI Centuries*, translated by Adolf Ekelof and Clements Markham, Stockholm, 1884.

չարձանագրեց և մոտ հազար տարի անցկացրեց համեմատաբար ճահճացած վիճակում: Սակայն երբ Պտղոմեոսի աշխատութիւնները հասան արևմտյան քաղաքակրթութեանը, դրանց ծանոթանալուց հետո արդեն անհնար դարձավ կասեցնել արևմտյան քարտեզագրութեան առաջադիմութիւնն ու արդիականացումը³⁴⁰: Այսպիսով՝ երկրորդ դարի աշխարհագրագետ Պտղոմեոսը երկրորդ անգամ ևս՝ այս անգամ 15–16–րդ դարերում, մեծ դեր ունեցավ միջնադարյան քարտեզագիտութեան առաջադիմութեան մեջ:

Ըստ էութեան, քարտեզը չի կարող ներկայացնել սխալ կամ հորինված տեղեկութիւններ, բայց սա վերաբերում է տեղագրական, ջրագրական կամ ֆիզիկական և նման քարտեզներին, որոնց վրա քարտեզագետն աշխատում է ներկայացնել տեղանքի մասին ունեցած իր ամբողջ և իրական տեղեկութիւնները: Խնդիրը փոխվում է, երբ անդրադառնում ենք քաղաքական աշխարհը ներկայացնող քարտեզներին, որոնք կրում են երկրների անուններ և սահմաններ: Սրանք երբեմն պատրաստվում են ծառայելու քարոզչական և քաղաքական նպատակներին և գծագրվում են քաղաքական իշխանավորների և կուսակցութիւնների պատվերներով, նրանց հսկողութեան տակ: Նման դեպքերում է, որ քարտեզը իրականութիւնը ներկայացնելու փոխարեն ցուցադրում է կեղծված և փոփոխված՝ ոչ իրական մի աշխարհ:

Քարտեզների մասին խոսելիս պետք է նշել, որ երկրագնդի աշխարհագրութեան, ֆիզիկական, ջրագրական և տեղագրական տվյալները վերջին մի քանի հազարամյակների ընթացքում համեմատաբար քիչ փոփոխութիւններ են կրել: Այն, ինչ նկատելիորեն փոխվել է, հաճախ արդյունք է առաջին հերթին մարդկութեան բնակործանիչ գործունեութեան, որոնցից են Սահարայի և Միջին Ասիայի անապատացումը, անտառային մակերեսների զանգվածային ոչնչացումը Լատինական Ամերիկայում և Սիբիրում, Սևանա լճի մակերեսի նվազումը, Արալյան ծովի գրեթե ամբողջական վերացումը և այլն: Քանի որ ֆիզիկական քարտեզագրի աշխատանքի արդյունքը կարելի է ուղղակի համեմատել իրականութեան հետ, ապա քարտեզագիրը միշտ աշխատել է իր գիտելիքների և հնարավորութիւնների սահմաններում ցուցադրել աշխարհի և երկրների իրական վիճակը: Այս նպատակին հասնելու համար նրան օգնում էր նաև այն պարագան, որ վաղ միջնադարից մինչև 14–15–րդ դդ. քարտեզների ճշտող մեծամասնութեան մեջ երկրների սահմանները չէին նշվում, և առանց սահման նշելու տրվում էին տվյալ շրջանում բնակվող ժողովուրդների ու նրանցով բնակեցված երկրների անվանումները: Միջին դարերում սահմաններն ավելի առաձգական էին, քան այսօր, և քարտեզագետներն այդպիսով կարող էին իրականութիւնն ավելի ճշգրիտ ներկայացնել՝ նշելով միայն տվյալ տարածաշրջանում բնակվող ժողովուրդների անունները, ներկայացնելով իրականութիւնն

³⁴⁰ Քարտեզագրության զարգացման և հատկապես Պտղոմեոսի (90–168 թթ.) և նրա աշխատությունների մասին տե՛ս Ռուբեն Գալչյան, Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, Երևան, 2005, էջ 16–21:

առանց կեղծ ու արհեստական սահմանների, քանի որ սահմաններ գծելու գործընթացի վրա որոշ պայմանների առկայությունը կարող էին ազդել քաղաքական դրդապատճառներն ու իշխանավորների անհատական ճշումները, որոնցից խուսափելը քարտեզագրի համար կարող էր անհնար լինել: Բացի այդ՝ սահմանները համեմատաբար հեղհեղուկ վիճակում էին, քանի որ պարբերաբար ենթարկվում էին փոփոխությունների:

Այստեղ որպես օրինակ կարելի է բերել Հայաստանի ներկայությունը հին և միջնադարյան քարտեզագրություն մեջ: Միջին դարերում՝ նույնիսկ իր անկախությունը կորցնելուց հետո, «Հայաստան», «Արմենիա» կամ «Էրմենիյե» անվանումը կարելի է տեսնել համարյա բոլոր եվրոպական ու իսլամական քարտեզներում, քանի որ դրանք պատկերում էին հայ ժողովրդի բնակեցման տարածաշրջանը: Այս անվանումը, որպես կանոն, գրվում էր Վանա լճից մինչև Ուրմիա լիճ և Դիարբեքիրից մինչև Լոռի ընկած տարածաշրջանի վրա (տե՛ս հավելվածի միջնադարյան քարտեզները): Հավելվածի քարտեզ 41-ում կարելի է տեսնել 1803 թ. օսմանյան մի քարտեզ, որտեղ երկրի սահմանների մեջ Վանի և Էրզրումի վիլայեթների վրա նշված է «Էրմենիստան» (Հայաստան) անունը, իսկ նրանից հարավ նշված է «Քյուրդիստանը»: Արևմտյան քարտեզագրություն մեջ «Հայաստան» անունը նշելու ավանդույթը շարունակվեց մինչև 1925–1930 թթ., երբ, հավանաբար, մասամբ Թուրքիայի Հանրապետությունը հաճոյանալու նպատակով, մասամբ էլ Թուրքիայի իրականացրած ցեղասպանությունը արդյունքում տարածքի հայաթափության պատճառով արևմտյան քարտեզներից աստիճանաբար վերացվեց Թուրքիայի արևելյան շրջանների վրա մինչ այդ նշվող «Հայաստան» անվանումը: Այս անվանումը դեռևս առկա է հավելվածի քարտեզ 48-ում, որը 1925 թ. ԱՄՆ-ում հրատարակված «Աշխարհի ատլասից» վերցված՝ «Փոքր Ասիա» անվանված քարտեզն է³⁴¹:

Մեկ անգամ ևս նշենք, որ ճամփորդական ուղեգրությունները նույնպես հույժ կարևոր նշանակություն ունեն ոչ միայն պատմաբանների, այլ նաև աշխարհագրագետների համար: Նման աշխատությունները չի կարելի համարել պատմական բնույթի, քանի որ գրանցվածը ոչ թե հեռու կամ մոտիկ անցյալում պատահած դեպքերն են, այլ հեղինակի տեսած և ապրած իրականությունը, որի վկան և հաճախ ակտիվ մասնակիցն է եղել ինքը՝ հեղինակը: Այսինքն՝ դրանց հիմքում ընկած են անհատի ուղղակի տեսած և ընկալած իրականությունների, իհարկե, գրի առնված նրա անհատական ճաշակի դիտանկյունից և հայեցողությամբ: Հետևաբար ուղեգրությունները կարելի է համարել քարտեզի գրավոր և լրացուցիչ մի մասնիկը:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ այն դեպքերում, երբ առկա են երրորդ՝ օտարի կողմից պատրաստված քարտեզ ու շարադրված ուղեգրություններ, որոնք նույնպես պարունակում են խնդրո առարկա տարածաշրջանի մա-

³⁴¹ The Literary Digest 1925 Atlas of the World & Gazetteer, New York, 1925, էջ 46–47:

սին տվյալներ ու տեղեկություններ, ապա այդ քարտեզները կարելի է համարել իրականությունը համեմատաբար ավելի ճշգրիտ ներկայացնող աղբյուր, քան նույն շրջանի վերաբերյալ գուտ պատմական շարադրանքներից քաղված տեղեկությունները:

* * * * *

Աշխատության հավելվածում տեղադրված են իրականությունը բացահայտման թեմային օժանդակող, համաշխարհային քարտեզագրական մշակույթին պատկանող մի շարք կարևոր աշխարհացույց և այլ քարտեզներ՝ պատրաստված սկսած նախքան մեր թվականությունն ընկած ժամանակներից մինչև 19-րդ դարի վերջերը, որոնք ներկայացնում են ժամանակի համաշխարհային քարտեզագրության լավագույն օրինակները: Սրանք կքննարկվեն հաջորդ էջերում:

5.1. Կլավդիոս Պտղոմեոսի (մոտ 90–168) «Աշխարհագրություն» գրքից ստորև կքննարկվի մի քանի քարտեզ՝ գծագրված նրա քարտեզագրական և աշխարհագրական շարադրանքների հիման վրա: Սկսած 1470-ական թվականներից՝ իտալացի, հոլանդացի, գերմանացի, չվեյցարացի և այլ քարտեզագետներ աշխատել են վերականգնել այն քարտեզները, որոնք Պտղոմեոսն ինքը կարող էր ժամանակին գծած լինել: Քարտեզների վերականգնման համար աղբյուր են ծառայել «Աշխարհագրության» մեջ ճանաչված աշխարհի մայրցամաքների, օվկիանոսների, ծովերի ու լճերի, երկրների, լեռների ու գետերի անունները, բացատրությունները և աշխարհագրական տվյալները, ինչպես նաև աշխատանքում տեղ գտած մոտ 8000 տեղանունների ու նրանց կոորդինատների ցուցակները: Պտղոմեոսն իր աշխատության մեջ օգտագործել է ժամանակի հունական անվանումները, որոնցից շատերն այսօր մեզ անձանոթ են և տարբերվում են այսօր գործածվող տեղանուններից, հաճախ նույնիսկ առանց որևէ նմանություն: Համեմատելով տարբեր քարտեզագետների իրականացրած պտղոմեոսյան քարտեզների վերականգնումները՝ կարելի է նկատել, որ դրանք ունեն միմյանց նման շատ տեսք, այդ թվում նաև ընդհանուր տեսք ու բովանդակություն, բայց ամեն մեկը պատրաստված է քարտեզը վերականգնող քարտեզագրին յուրահատուկ ոճով:

Աշխատության մեջ դիտարկված պտղոմեոսյան քարտեզներից առաջինը «Աշխարհացույց» քարտեզն է (տե՛ս հավելվածի քարտեզ 8): Զեռագիր քարտեզը պատրաստել է գերմանացի քարտեզագետ Մարտին Վալդեմյուլլերը (1470–1520), այն հրատարակվել է Ստրասբուրգում 1513 թվականին: Այստեղ ներկայացված է ամբողջ աշխարհը, եվրոպան ներկված է վարդագույն, Ասիան՝ դեղին, Աֆրիկան՝ սպիտակ: Քարտեզի վրա առանց սահմանների բաժանում-

ների նշված են կարևոր երկրները: Նույն քարտեզի քարտ. 8ա մանրամասի աջ կողմում կարելի է տեսնել Առաջավոր Ասիայի մասը, վերևում՝ աջ կողմում՝ Կասպից ծովն է, ձախում՝ Պոնտոսը կամ Սև ծովը, ներքևի ձախ կողմում՝ Միջերկրական ծովը: Շրջանի կարևոր երկրների շարքում են Մեծ և Փոքր Հայքերը, Ալբանիան (Աղվանքը)՝ Հայաստանի հյուսիսում, Մարաստանը՝ Հայաստանից հարավ-արևելք և Ասորեստանն ու Միջագետքը՝ նրանից հարավ: Ադրբեջան անվանումն այստեղ նշված չէ, քանի որ նման անունով երկիր դեռևս գոյություն չուներ:

Հավելվածի հաջորդ երկու պատկերները ևս Հայաստանի տարածաշրջանին վերաբերող պտղոմեոսյան քարտեզներ են: Հավելվածի քարտեզ 9-ը «Աշխարհագրության» մեջ անվանված է «Ասիայի երրորդ քարտեզը. Կոլխիդա, Իվերիա, Ալբանիա և Մեծ Հայաստան»: Առաջին երեք երկրները տեղադրված են Կովկասյան լեռներից անմիջապես հարավ՝ Կասպից և Սև ծովերի միջև ընկած տարածքում, իսկ Հայաստանը՝ այս երեքի հարավում: Հայաստանից հարավ-արևելք նշված է «Մարաստանի մեկ մասը» (Media Pars), որի Ատրպատական կամ Ադրբեջան վերանվանումը Պտղոմեոսի ժամանակ դեռ ընդհանրացած չէր: Քարտեզը վերականգնել է Լեոնարդ Հոլմը, որը պտղոմեոսյան ատլասի իր տարբերակը հրատարակել է Գերմանիայի Ուլմ քաղաքում 1482 թ.: Փոքր Հայքի արևելյան ծայրամասը երևում է քարտեզի ձախ վերջավորության վրա:

Հավելվածի քարտեզ 10-ը Պտղոմեոսի հազվագյուտ քարտեզներից է, որի վրա Մեծ ու Փոքր Հայքերը ներկայացված են միասնաբար՝ մեկ էջի վրա: Այս քարտեզը վերցված է Բոնոնիի վերականգնած ատլասից՝ հրատարակված Հռոմում 1482 թ.: Քարտեզի վրա ծովերը ներկված են կանաչ, իսկ լեռները՝ կապույտ: Վերևի աջ անկյունում տեսանելի է Կասպից ծովը, որի արևմտյան ափին Ալբանիան է, ապա նրանից արևմուտք՝ Իբերիան ու Կոլխիդան: Կասպից ծովի հարավում երևում է Մարաստանի մի մասը: Քարտեզի հիմնական մասը հատկացված է Մեծ և Փոքր Հայքերին, որտեղ ցուցադրված են բազմաթիվ քաղաքներ: Հայաստանից արևմուտք Կապադոկիան է:

Պտղոմեոսի բոլոր քարտեզներում առկա են Մեծ և Փոքր Հայքերը, ինչպես նաև Ալբանիան ու Մարաստանը: Մեկ անգամ ևս փաստելով, որ վերջին երկուսը առանձին երկրներ են եղել և իրար հետ հարևան լինելուց զատ ուրիշ կապ ու առնչություն չեն ունեցել, սակայն Ադրբեջան անունը, որը, ըստ Բունիաթովի և ուրիշների, 5000 տարվա պատմություն ունի, Պտղոմեոսի քարտեզների վրա ընդհանրապես գոյություն չունի:

5.2. Սուրբ Հիերոնիմոսը կամ Զերոմն (340–420) իր կյանքն անցկացրել է Հռոմում, Կոստանդնուպոլսում և Անտիոքում, որտեղ և ձեռնադրվել է քահանա: Նա ճանաչված էր իբրև ամեն ինչը հարցականի տակ դնող, հակաճառող ու վիճաբանող մի անձնավորություն: Բավականին երկարատև ճամփոր-

դուլթյուններից հետո նա հաստատվեց Բեթղեհեմի վանքերից մեկում և նվիրվեց կրոնական բովանդակություն ունեցող տեքստերի ու Հին կտակարանի թարգմանությունը:

Ս. Հիերոնիմոսը ճանաչված էր նաև որպես Աստվածաշնչի հեղինակավոր մեկնաբան: Նա հունարենից լատիներեն է թարգմանել Կեսարիայի եպիսկոպոս Եվսեբիոսի (մոտ 260–340 թթ.) «Քրոնիկոն (Ժամանակագրական կանոններ)» աշխատությունը, որը պարունակում է Աստվածաշնչի մեջ նշված վայրերի ու տեղանունների մանրակրկիտ բացատրությունները: Ս. Հիերոնիմոսի աշխատությունների այս հավաքածուն վերնագրված է «*Presbiteri liber Hebraicum Quaestionem in Genesim, Ejustem liber de situ nominibus locum Hebraicum. Tabula Geographica ex opusculis S. Hieronimi descripto*» կամ էլ պարզապես «*Liber Locorum* (Գիրք տեղագրություն)»:

Չնայած այն բանին, որ Ս. Հիերոնիմոսը համարվում է կղերական մտավորական, բայց նրա այս աշխատությունը վաղմիջնադարյան աշխարհագրական կարևոր երկերից մեկն է, որը տեղանունների ու քաղաքների ցուցակներից զատ, պարունակում է նաև հինգերորդ դարում պատրաստված երկու ձեռագիր քարտեզ:

Հավելվածի քարտեզ 11-ը և 11ա-ն ներկայացնում են Ս. Հիերոնիմոսի աշխարհացույց կամ, ավելի ճիշտ կլինի ասել, Միջին Արևելքի և Հարավարևելյան Եվրոպայի քարտեզի բնօրինակը, որը պատկանում է 420 թվականին, բայց այստեղ արտատպվածը դրա 12-րդ դարի ընդօրինակությունն է: Քարտեզի սահմանն արևելքում Հնդկական օվկիանոսն է, արևմուտքում՝ Եգեյան ծովը, Հյուսիսում՝ Սև ծովը և հարավում՝ Կարմիր ծովը:

Ըստ ժամանակի ընդունված սովորություն՝ քարտեզն ուղղորդված է վեր արևելքով: Այստեղ լեռնաշղթաները պատկերված են իրար կից կիսաշրջանների շարքով, գետերը՝ զուգահեռ կրկնակի գծերով, իսկ քաղաքները՝ տարբեր շինությունների ու ամրոցների մանրապատկերներով:

Սև ծովը (*Euxinus Pontus*) պատկերված է երկարացված և տեղակայված է քարտեզի ներքևի ձախ ծայրամասում: Կասպից ծովից (*Caspiu Mare*) պատկերված է միայն մի մասը՝ Սև ծովից վեր: Պարսից ծոցը և Արաբական ծովը քարտեզի վերին աջ մասում են: Սրանք ներկված են կարմիր և նույնպես պատկերված են մասամբ՝ որպես երկու հարևան ծոցեր: Սրանցից վերևինը, որի մեջ է հոսում Ինդոս գետը, Արաբական ծովն է, իսկ մյուսը՝ Պարսից ծոցը, որի մեջ են թափվում Եփրատն ու Տիգրիսը:

Քարտեզ 11ա-ի մանրամասում նշված համարները Հայաստանի հարակից շրջանների կարևոր տեղանուններն են, որոնք ստորև բերված բացատրություններում նշված են փակագծերի մեջ (տե՛ս նաև քարտեզին կից ցուցակը)³⁴²:

³⁴² Այս թվերը հեղինակի կողմից ավելացված են քարտեզում անունները հստակեցնելու և թարգմանությունները պարզաբանելու նպատակով: Ավելի մանրամասն տե՛ս հավելվածի քարտ. 11ա-ն:

Հայաստանը տեղադրված է Կասպից և Սև ծովերի միջև, և այստեղ առկա լեռնաշղթայի վրա մակագրված է *Armenie pile* (11), որը նշանակում է «Հայաստանի սյուները [դարպաս]»: Սրա աջում է Մեծ Հայքը (9), իսկ Արաքսի (5), Եփրատի (6) և Տիգրիսի (7) ակունքը միևնույն լեռներն են, ընդ որում՝ գետերից առաջինը սկիզբ է առնում լեռների հյուսիսից, իսկ մյուս երկուսը՝ հարավից: Այս լեռնաշղթան կարող է ներկայացնել հետագայում Հայկական բարձրավանդակ կամ լեռնաշխարհ որակված աշխարհագրական շրջանի մի մասը, քանի որ այս երեք գետերը հենց այդ բարձրավանդակից են ակունք առնում: Այս քարտեզում Մեծ կամ Վերին Հայքը՝ *Armenia Superior* (9), Եփրատի (6) և Տիգրիսի (7) ակունքի մոտ՝ նրանց միջև է, այսինքն՝ Վասպուրականում, Այրարատում, Մոկքում և Աղձնիքում: Մեծ Հայքի անվան տակ պատկերված է լեռան վրա նստած մի վրանաձև տուն՝ մակագրված *Arca Noe* (12) «Նոյյան տապան», իսկ լեռն ունի *Armenia* (27) «Հայաստան» մակագրությունը: Այս լեռները մեկ այլ լեռնաշղթայի հարավային ծայրամասում են. լեռնաշղթան կոչվում է Կասպից դարպասներ (22), որը սխալ անվանում է, քանի որ սա դարպաս չէ, այլ լեռնաշղթա, որը կարող է լինել միայն Արարատից սկիզբ առնող և դեպի արևմուտք շարունակվող Հայկական պարը: Հայաստանի սյուներից վերև (արևելք) կա մի երկրորդ՝ ուղղահայաց գրված «Կասպից դարպասներ» (28) մակագրություն, որը թերևս Կովկասյան լեռնաշղթայի արևելյան ծայրամասի և ծովափնյա Դերբենդ քաղաքի միջև ընկած «Ճորա պահակ» անցքն է, սակայն այստեղ սա տեղադրված է մի անանուն լեռնաշղթայի մեջտեղում, որը կարող է միայն լինել Կովկասյան լեռնաշղթան (26), իսկ դարպասը՝ հավանաբար Դարյալի կիրճն է: Սա Կովկասյան լեռների միջով անցնող միակ ճանապարհն է, որը միջնադարյան քարտեզներում հաճախ կոչվում է նաև «Կովկասյան դարպասներ»³⁴³: Դերբենդի մոտով անցնող ճանապարհը երբեմն «Ալեքսանդրի դարպաս» էր կոչվում, քանի որ, ըստ ավանդությունների, այն կառուցել էր Ալեքսանդր Մակեդոնացին, Հարավային Կովկասը հյուսիսային Գոգ և Մագոգ վայրագ ցեղերից պաշտպանելու մտադրությամբ: Հայկական պարից դեպի արևմուտք «Փոքր կամ Ներքին Հայքն» է՝ *Armenia Inferior* (10), իսկ «Եդեսիան» (Ուրֆան), «Սամոսատան» (Արշամաշատ) և «Հարրանը» Հայաստանի և Միջա-

³⁴³ Պտղոմեոսն այս կիրճը կոչում է Ալվանների դարպաս (տե՛ս Ptolemy, *The Geographia*, 1991, գիրք 5, գլուխ 8, և «Ասիայի երրորդ քարտեզը»), հայերեն՝ «Ալանաց դուռ» (տե՛ս ՀՄՀ, Երևան, հատ. 3, 1977, էջ 316), իսկ արաբերեն՝ Բար-ի-Ալան: Դարյալի կիրճը հին քարտեզներում անվանվում էր «Կովկասի դարպաս», երբեմն էլ դրան տալիս են «Կասպից դարպաս» անվանումը, որն ընդհանրապես տրվում է Դերբենդի մոտ «Ճորա պահակ»-ին կամ «Դերբենդի անցք»-ին (տե՛ս ՀՄՀ, Երևան, հատ. 7, 178, էջ 104): Նման մի վրիպակ կա նաև *Բառգիրք Հայկազեան լեզուի*-ի մեջ, որտեղ Ալանաց դուռը անվանված է նաև Ճորա կամ Կասպից անցք: Տե՛ս *Նոր բառգիրք Հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1769, հատ. 2, մաս 2, էջ 235, ինչպես նաև Վենետիկ, 1836, հատ. 1, էջ 640: Մանրամասների համար տե՛ս Ռուբեն Գալսյան, *Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում*, Երևան, 2007, էջ 16-18:

գետքի հարևանությամբ տարածքում են: «Կովկասյան» (23) և «Տավրոսյան» (24) լեռնաշղթաները սխալմամբ տեղադրված են «Կասպից ծովի» (1) հարավ-արևելքում. դրանք միացած են սուր անկյունով, որոնց միացման կետից դեպի հյուսիս է հոսում մեկ այլ գետ՝ Արաքսը:

«Աղվանքը» (18) նշված է «Կասպից ծովից» (1) արևմուտք՝ «Վերին Սկյու-թիայի» մոտ, և «Արաքսից» (5) հյուսիս, իսկ «Կողքիսը» (Աբխազիան, 19) տեղադրված է «Եվքսիսյան ծովի» (Սև ծով, 2) արևելյան ափին: Վիրքը, որն այստեղ անվանված է «Հիբերիա», տեղ է գտել Արաքսի ափին (11-ի և 16-ի միջև):

Քարտեզում առկա են մի քանի մանր տեղագրական սխալներ, սակայն կարևորն այն է, որ քարտեզում նշված աշխարհագրական տվյալների, քաղաքների, երկրների ու տարածաշրջանների մեջ Հայաստանը, Աղվանքը, Վիրքը և Կողքիսն ունեն հստակ ներկայություն: Աղվանքը տեղադրված է Կուրից հյուսիս, իսկ Ադրբեջան անվանումն ընդհանրապես գոյություն չունի:

5.3. Պատմաբան և աստվածաբան Պաուլոս Օրոսիոսը (354–420) ծնվել է Պորտուգալիայում: Նրա առաջին աշխատությունը կրոնական հակասությունների մասին է (ինչը հետագայում դարձավ նրա մասնագիտությունը), բայց նրա ամենակարևոր աշխատության խորագիրն է՝ «Պատմության յոթ գիրք հեթանոսների դեմ», որից մեզ են հասել մոտ 200 ձեռագիր օրինակներ: Այս երկը, որը նա շարադրել է 416–417 թթ., պարունակում է աշխարհի պատմությունը՝ սկսած արարումից (5618 տարի): Գիրքը սկսվում է աշխարհի մասին ընդհանուր բնույթի բացատրություններով, որտեղ նա խոսում է ցամաքամասերի T–O տեսակի բաժանման մասին մի քարտեզով, որի մեջ նա նշում է շատ քիչ տեղագրական տեղեկություններ: Տեքստի այս գլխում նա տալիս է մոտ 300 տեղանուններ, որոնք գրքի մյուս էջերում այլևս չեն հիշատակվում: Չնայած նրան, որ ձեռագիրը որևէ քարտեզի առկայության մասին ուղղակի չի խոսում, բայց տեքստի լեզուն այնպիսին է, որ բացատրում է դրան կից ինչ-որ քարտեզի բովանդակությունը³⁴⁴: Օրոսիոսը ազգությունների և երկրների մասին նշում է. «... Եփրատ գետից սկսած, որից արևմուտք Միջերկրականն է և հյուսիսում լեռները, որը կոչում են Տավրոս, կա մի երկիր, որը կոչում են Հայաստան...»: Ապա շարունակում է. «...և այս լեռների հյուսիսում են Կապադովկիան և Հայաստանը: Հայաստանը գտնվում է Կապադովկիայից արևելք»³⁴⁵:

³⁴⁴ Paulus Orosius, *Seven Books of History Against the Pagans: the Apology of Paulus Orosius*. Translated with introduction and notes by Irving W. Raymond. Records of civilization, sources and studies, no. 26., New York, 1936, գիրք 1, գլուխ 1, մաս 1:

³⁴⁵ Paulus Orosius, *King Alfred's Anglo-Saxon version of the Compendious History of the World by Orosius*. Containing facsimile specimens of the Lauderdale and Cotton mss., a preface describing these mss., etc., an introduction on Orosius and his work; the Anglo-Saxon text; notes and various readings; a literal English translation, with notes; Mr. Hampson's Essay on King Alfred's geography, and a map of Europe, Asia, and Africa, according to Orosius and Alfred, London, 1859, գիրք 1, գլուխ 1, մաս 8:

Պ. Օրոսիոսի աշխարհացույց քարտեզը վերականգնել է Կոնրադ Միլլերը, որտեղ Կովկասյան լեռներից հարավ ընկած տարածաշրջանում ցուցադրված են խնդրո առարկա երեք երկրները (տե՛ս հավելվածի քարտեզ 12): Կովկասյան լեռներից հյուսիս՝ Կասպյան դարպասների մոտ նշված է Ալբանիան: Հայաստանով անցնող և նրանից հարավ գտնվող երկու լեռնաշղթաները կոչվում են «Հայկական» և «Տավրոսյան» լեռներ, որոնց մոտ էլ նշված է «Հայաստանը», իսկ սրանից հարավ «Պարթևաստանն» է, որի մոտ գտնվող լեռնաշղթան կոչվում է «Mons Ariobarzanes» (Արիոբարզանի/Ատրպատականի լեռներ): Բուն Մարաստանը պատկերված է քիչ ավելի հարավ: Այսպիսով, ըստ Օրոսիոսի, այս տարածաշրջանում վաղ միջնադարում ներկա էին Հայաստանը, Աղվանքը և Մարաստանը, որի հյուսիսային մասն ապագայում կոչվելու էր Ատրպատական:

5.4. Սևիլիայի եպիսկոպոս Իգիդորը (560–636) ճանաչված էր նաև որպես Սուրբ Իգիդոր: Նա մեծ ազդեցություն ունեցող միջնադարյան բարձրաստիճան կղերականներից էր: Իգիդորը կազմել է նաև համաաշխարհային գիտելիքների մի բազմակողմանի հավաքածու՝ այդպիսով դառնալով արևմտյան քրիստոնեությունից վերջին դասական փրկիսոփան և Եվրոպայի ամենաազդեցիկ հեղինակություններից մեկը: Այս երկը, որը կոչվում է «Էտիմոլոգիա (Ստուգաբանություն)», բաղկացած է 20 գրքից. 13-րդ հատորը կոչվում է «Աշխարհը և նրա շրջանները»: Այս հատորի մեջ եղած նյութերն ու տեղեկությունները մեծ մասամբ վերցված են Սալիսոսի (մ.թ.ա. 3-րդ դար), Պլինիոս Ավագի (23–79) և այլոց աշխատություններից: «Էտիմոլոգիայի» մեջ առկա է մի աշխարհացույց քարտեզ, որի պատկերները տարբեր ընդօրինակություններում միմյանցից բավականին զանազանվում են: Ընդհանրապես, ձեռագրի հին ընդօրինակումների քարտեզներն ավելի պարզ են ու անպաճույճ, մինչդեռ հետագայում պատրաստվածները տարբեր ոճերի ու դպրոցների խառնուրդներ են ու ավելի զարդարուն (տե՛ս հավելվածի քարտեզ 13 և 14): Ներկա աշխատության հավելվածում վերատպված ու քննարկված են քարտեզներ Իգիդորի ձեռագրի երկու տարբեր ժամանակների ընդօրինակումներից: Սկզբնական շրջանում կրոնական ազդեցությունը պատրաստված, այսպես կոչված, աշխարհացույց T–O քարտեզները պարզ էին ու նշում էին միայն երկրի սկավառակն ու մայրցամաքները: Երբ քարտեզներում սկսում են նշել տարբեր երկրների, ժողովուրդների ու վայրերի անուններ, նրանց մեջ Ասիայի արևմտյան տարածաշրջանում երևում են Հայաստանը՝ Արարատով ու Նոյյան տապանով, ինչպես նաև Կովկասյան լեռները, Արաքսը՝ իրենից հյուսիս տեղադրված Կովկասյան Ալբանիա–Աղվանք երկրով, իսկ դրանից հարավ՝ Մարաստան–Ատրպատականը³⁴⁶:

³⁴⁶ Տե՛ս Ռուբեն Գալսյան, Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում, հայերեն տեքստը, Լոնդոն և Երևան, 2007, էջ 32–36:

5.4.1. Իզրիդորի քարտեզներից հավելվածի քարտեզ 13-ը գծված է 12-րդ դարում Ֆրանսիայում և ճանաչված է որպես «Մեծանի» քարտեզ: Քարտեզն արդեն պարունակում է որոշ թվով հավելյալ տեղեկություններ, հիմնականում երկրների անուններ: Այստեղ, մայր ցամաքների հիմնական բաժանումներից բացի, Ասիայի և Եվրոպայի տարածքում նշված են բազմաթիվ երկրների անուններ՝ առանց որոշակիացնելու նրանց սահմանները: Սրանց թվում են.

- Հայաստանը (1), որի հարևանությունը Միջագետքն է,
- Մեդիան՝ Միջագետքին հարևան,
- Ալբանիան՝ Հայաստանից հյուսիս,
- Իբերիան՝ Ալբանիայից արևմուտք,
- Երկրորդ Հայաստանը՝ Կիլիկիայի հարևանությունը,
- [ՓոքրՀայք]:

Այսպիսով՝ քարտեզը հաստատում է Մեծ և Փոքր Հայքերի առկայությունը, ինչպես նաև նրանցից հյուսիս գտնվող Աղվանքը, որը Մարաստան-Ադրբեջանից ամբողջովին տարբեր երկիր է³⁴⁷:

5.4.2. Այս ճոխ և զարդարուն «Աշխարհացույց» քարտեզը (հավելվածի քարտեզ 14) նույնպես պատկանում է Իզրիդորի քարտեզների T-O ընտանիքին, բայց պարունակում է շատ ավելի տեղեկություններ, քան մյուսները: Պատկերի մանրամասնում քարտեզի տեղանունների վրա ավելացված են թվանշաններ, որոնք վերաբերում են Կովկասյան լեռներից հարավ ընկած երկրներին և Հայաստանին: «Վերին Աղվանքը» (8) նշված է «Կովկասյան լեռներից» (19) հարավ: Սրա մոտ է երկու գագաթների վրա նստած մի տնակի մանրապատկեր, մակագրված «Նոյյան տապան» (4, Archa Noe), երկգագաթ լեռն էլ «Արարատն» է (3): Արարատի ներքևի մակագրությունն ասում է՝ «Հայաստանի լեռներ» (2, Montes Armenie), որոնք գտնվում են «Տավրոսից» (11, Mons Taurus) սկիզբ առած և դեպի «Սև ծովը» (18) հոսող «Յուքսիս» (հավանաբար Ալիս կամ Կիզիլիրմաք) գետի մոտ: «Մեծ» կամ «Վերին Հայքը» (1, Armenia Superior) տեղադրված է օվկիանոսին միացած կանաչ ծովածոցի տեսք ունեցող Կասպից ծովից արևմուտք: «Կովկասյան լեռները» (10, Mons Caucasus) գտնվում են «Մեծ Հայքից» հյուսիս-արևմուտք, որոնց հարավային վերջամասում են «Կասպյան դարպասները» (5, Porte Caspie):

Այսպիսով՝ քարտեզը պարզ ցուցադրում է Հայաստանի և Աղվանքի համեմատական տեղադրումը՝ առաջինը երկրորդից հարավ³⁴⁸:

³⁴⁷ Անդ, էջ 33–34:

³⁴⁸ Անդ, էջ 34–35:

5.5. Իսպանացի կղերական **Լիբենացի Բեատոսը** կամ **Բեատը** (մոտ 730–798) բենեդիկտյան ուխտի մի կոլուսկրոն հոգևորական և աստվածաբան էր: Նա աշխատում էր Իսպանիայի Լիբենայի լեռներում գտնվող մի վանքում, և նրա «*Commentarium in Apocalipsin* (Ապոկալիպսիսի մեկնաբանություն)» աշխատության մեջ առկա է նաև աշխարհացույց մի քարտեզ³⁴⁹:

5.5.1. Հավելվածի 15 քարտեզը պատճենված է Բեատոսի աշխատության 1050 թ. օրինակից, պահպանվում է Ֆրանսիայի ազգային գրադարանում: Քարտեզն ունի մեծ քանակությամբ մանրակրկիտ պատմական ու աշխարհագրական տեղեկություններ և ճանաչված է որպես «Սան Սևերի Բեատոս»: Չնայած քարտեզն ընդօրինակված է 776 թ. բնագրից, բայց ընդօրինակողը գործի է դրել նաև իր ճաշակն ու ունեցած տեղեկությունները՝ քարտեզին տալով յուրահատուկ հանրագիտարանային բնույթ: Պատ. 16–ում վերատպված է Կոնրադ Միլլերի նույն քարտեզի վերագծած օրինակից Կովկասի տարածքը: Քարտեզն ուղղորդված է արևելքով վեր և զարդարված է բազմաթիվ մանրապատկերներով: Կասպից ծովը (տե՛ս հավելվածի քարտեզ 12) ցույց է տրված որպես հյուսիսարևելյան օվկիանոսին միացած մի ծովածոց: Միջին Արևելքը և Կովկասի երկրամասն ավելի պարզ կարելի է տեսնել Կոնրադ Միլլերի նույն քարտեզի վերագծված տարբերակում՝ քարտ. 16–ում: Պարզաբանելու համար քարտեզի վրա ավելացված են թվանշաններ, որոնց բացատրությունները տրված են նրան կից: Ստորև տրված են նույն այդ քարտեզում առկա Հայաստանի և Աղվանքի տեղագրական բացատրությունները:

Հայաստանի շրջանը. գտնվում է Տավրոսյան և Կովկասյան լեռների միջև, տարածվում է մինչև Կասպից ծով: Տավրոսի փեշերից սկիզբ է առնում Տիգրիսը: Հայաստանը երկու մասից է բաղկացած՝ վերին Հայք և Ներքին Հայք:

Աղվանքը. սրա արևելքում է Կասպից ծովը, որը բարձրանում ու միանում է շրջապատող օվկիանոսին և մյուս կողմից հասնում մինչև Ազովի ճափին:

5.5.2. Հավելվածի քարտեզ 17–ում ներկայացված է Իսպանիայի Բուրգոնդի–Օգմա քաղաքի Մայր տաճարի գրադարանում պահպանվող Բեատոսյան քարտեզի՝ 1203 թ. ընդօրինակված ձեռագիրը: Սա զարդարուն տեսակի T–Օ քարտեզ է, որի ամենացայտուն գրվազը Միջերկրական ծովն է: Ինչպես բոլոր Բեատոսները, այս օրինակն էլ ուղղորդված է արևելքով վեր և ունի ձվածիր կերպարանք, որի տարածքը լի է քաղաքների ու երկրների մանրապատկերներ-

³⁴⁹ Բեատոսի Ապոկալիպսիսի մեկնաբանությունից մեզ է հասել 26 օրինակ: Մանրամասն տե՛ս Ռուբեն Գալչյան, Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում, Երևան, 2007, էջ 39–43:

րով: Քարտեզի վրա Հայաստանը ցուցադրված է Կասպից ծովից արևմուտք՝ Կուր գետի երկու ափերին, իսկ Աղվանքը (*Aluania*)՝ նույնպես Կասպից ծովի արևմուտքում, բայց Կուրից և Հայաստանից հյուսիս: Տավրոսյան լեռներից հարավ՝ Եփրատի ու Տիգրիսի մոտ են Պարթևաստանը և Ասորեստանը (*Parthia, Assiria*): Հայաստանից արևելք առկա է Ալբանիան, իսկ «Ադրբեջան» անվանումն այստեղ ընդհանրապես բացակայում է:

5.6. Բեդա Երանելին (672–735) անգլիացի պատմաբան էր ու բարձրաստիճան կղերական: Նրա ամենամեծ ճանաչում ունեցող աշխատանքներից է «*De Natura Rerum* (Գիրք իրերի բնության մասին)», որին կից տրված է մի աշխարհացույց T–O տեսակի քարտեզ: Բեդայի քարտեզների հիմքը նույնպես նախորդներից իրեն հասած քարտեզագրական տեղեկություններն են և քարտեզները: Հավելվածի քարտեզ 18–ը Բեդայի քարտեզներից է: Այստեղ Ասիայի երկրների ցուցակի մեջ Ասիան նշող առաջին տողի տակ են Պարսկաստանը և Մարաստանը (ապագայի Ատրպատականը), իսկ դրանից 6 տող ներքև նշված են Աղվանքը (Ալբանիա) և Հայաստանը: Այստեղ ևս «Ադրբեջան» անվանումը բացակայում է, իսկ Աղվանքն ու Մարաստան–Ատրպատականը նշված են որպես առանձին երկրներ³⁵⁰:

5.7. Հավելվածի 19–րդ քարտեզը կոչվում է Անգլո–սաքսոն կամ Քոթթոնյան քարտեզ, քանի որ պատկանում էր 1753 թ. Բրիտանական թանգարանը հիմնող երեք անհատներից մեկին՝ Սըր Ռոբերտ Քոթթոնին: Քարտեզը փոքրածավալ է՝ պատրաստված Անգլիայում և տեղադրված 1050 թ. ձեռագրի հատորում, որը պարունակում է նաև տոնացույցներ, այլ աղյուսակներ, պատմական իրադարձությունների նկարագրություններ և նույնիսկ փոքր հափերի Մակրոբիոսյան աշխարհացույց քարտեզ՝ ուղղորդված արևելքով վեր³⁵¹: Քոթթոնյան քարտեզը պատրաստվել է Անգլիայում, և նրանում առկա տվյալներն ուղղակի կապ ունեն Մարկոս Վեսպանիանոս Ագրիպայի՝ Հուլիոս Կեսարի կարգադրությունում մ. թ. ա. առաջին դարում պատրաստված քարտեզի հետ³⁵²:

Քարտեզում լեռները նշված են կանաչով, բայց Պարսից ծոցի ու Կարմիր ծովի, ինչպես նաև մի քանի կարևոր գետերի համար գործածվել է կարմիր գույնը: Քարտեզի վերևի աջ մասում՝ առյուծի ոտքերի տակ, նշված են Տավրոսյան լեռները, որտեղից սկիզբ են առնում Եփրատն ու Տիգրիսը (տե՛ս մանրամասը): Լեռնաշղթայի ներքևում Արարատ լեռն է՝ իր երկու գագաթներով, գծված կողքի վրա և անվանված «Հայկական լեռներ», որի վրա նստած է եռահարկ Նոյյան տապանը: Արարատից ներքև կա «Արմենիա» մակագրությունը, որը, սակայն, քարտեզի հետևի կողմից թափանցած թանաքի պատճառով դժվար է ընթերց-

³⁵⁰ Անդ, էջ 36–38:

³⁵¹ Անդ, էջ 23–25:

³⁵² Անդ, էջ 63–64:

վում: Դեպի արևմուտք (ներքև)՝ Սև ծովից աջ, կա մեկ այլ լեռնաշղթա, որը նույնպես «Տավրոս» է կոչված: Սա վերևի (արևելք) նույնանուն լեռնաշղթայի երկրորդ մասն է, որը շարունակվում է ընդհատումով: Հայաստանի հարևան երկրներն են Իբերիան, Վիրքը և Միջագետքը: Տապանից ձախ երկու կղզիներ ունեցող ծովածոցը Կասպից ծովն է, որի ներքևում՝ Հյուսիսային օվկիանոսի մոտ, Գոգ և Մագոգ վայրագ ցեղերի արգելափակված տարածքն է:

Կասպից և Սև ծովերի միջև ընկած տարածքում կան երկու մակագրություններ: Մեկը նշում է «Աղվանքի լեռներ», որոնք հավանաբար կարող են լինել Կասպից կամ Կովկասյան լեռները, մյուսը՝ «Կողքիս շրջան», որը տեղադրված է Սև ծովին կից: Վիրքը, այստեղ՝ Հիբերիա, նշված է Հայկական լեռներից հարավ՝ Հայկական և Տավրոսյան լեռներից սկիզբ առնող երկու գետերի միջև՝ Միջագետքի տարածաշրջանում: Պարսկաստանը և Մարաստանը նշված են հարավում՝ կարմիր ներկված Պարսից ծոցի մոտակայքում: Ադրբեջան կամ Ատրպատական անունն այս քարտեզում նույնպես գոյություն չունի:

5.8. Այսպես կոչված «Սաուլի աշխարհացույցը» (1180 թ.) (հավելվածի քարտեզ 20) կամ **Հենրի Մայնցեցու** քարտեզը ընդգրկված է «Իմագո Մունդի (Աշխարհի պատկերը)» անունով մի ձեռագրում³⁵³: Քարտեզը պատկանում է դասական T-O տեսակին, բայց պարունակում է քրիստոնեական դադափարախոսության հետ համընկնող հավելյալ տեղեկություններ: Քարտեզն ուղղորդված է արևելքով վեր, որտեղ, ըստ քրիստոնեական տեսության, երկրային դրախտն է, դեպի շրջապատի օվկիանոսը հոսող իր չորս գետերով³⁵⁴: Քարտեզի ներքևի ձախ մասում եղած շրջաններն անվանված են «Հիրկանիա», «Ամազոններ» և «Հայաստան»: Հայաստանի հարավում են Տավրոսյան լեռները, որոնք գծված են կարմիրով՝ ուղղահայաց ձգված համարյա մինչև «Արևելյան օվկիանոս»³⁵⁵: Այստեղ էլ Գոգ և Մագոգ ցեղերը պարսպով առանձնացած են մարդկությունից, բայց Կասպից ծովից արևելք են: Քարտեզում Կողքիսը (9) տեղադրված է Սև ծովի հարավ-արևելքում՝ «Կասպից դարպասներ» անվանված լեռնաշղթայի մոտ, մինչդեռ Աղվանքը (10) փոխադրված է Սև ծովից հյուսիս: Այսպիսով՝ քարտեզում նշված են Հայաստանն ու Աղվանքը՝ որպես առանձին երկրներ, բայց Ադրբեջան անվանումն այս քարտեզի վրա էլ որևէ տեղ նշված չէ:

5.9. Ասորական գրականության նշանավոր դեմքերից է բանաստեղծ, պատմաբան, բժշկագետ և բանասեր **Գրիգորիս Յուհաննա Բար-Էբրոյոն կամ Բար-**

³⁵³ Քարտեզի մանրամասն վերլուծությունը տես Ռուբեն Գալյան, Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում, Երևան, 2007, էջ 65-66:

³⁵⁴ Այստեղ շատ նմանություններ կան Հերեֆորդի «Մապա Մունդի» մեծադիր քարտեզի հետ և Սաուլի քարտեզը կարելի է համարել Հերեֆորդի քարտեզի համառոտված տարբերակը (տես քարտեզ 23):

³⁵⁵ Ըստ Օրոսիոսի՝ Կովկասյան լեռները, սկսվելով Սև ծովի արևելքից, տարածվում են արևելք՝ մինչև Հնդկաստան: Տես Օրոսիոս, նշվ. աշխ., գիրք 6, էջ 35, 38, պատկեր 13:

Տեղեկություններ, որը ճանաչված է նաև «Ա՛բու-Յա՛րա՛ջ» մականունով: Նա ծնվել է 1226 թ. Մալաթիայում (Հայաստան) և մահացել 1286 թ. Մարաղայում (Իրանի Ատրպատական նահանգ), որտեղ պաշտոնավարում էր³⁵⁶: Հավելվածի քարտեզ 21-ը արտատպված է Բարձհերեսի «Մինարեթ Ղուդչե (Սրբավայրի լույսը)» աշխատության մեջ տեղադրված քարտեզից: Աշխատությունը մեզ է հասել երեք օրինակով: Իրանցից երկուսը գտնվում են Փարիզում, իսկ երրորդը՝ Բեռլինում: Այստեղ պատկերված օրինակը Փարիզի քարտեզներից մեկի ճշգրիտ ընդօրինակությունն է և տեղադրված է Քեմբրիջի համալսարանի գրադարանում պահվող Բար-Ալիի 15-րդ դարի «Բառարանի» մեջ: Քարտեզը կիսաշրջանաձև է, ունի 210 մմ տրամագիծ և բնագրի 14-րդ դարի ընդօրինակումն է: Այստեղ պատկերված է արևելյան կիսագնդի հյուսիսային կեսը: Ըստ իսլամական քարտեզագրական սկզբունքների՝ քարտեզն ուղղորդված է հարավով վեր: Այն շատ նմանություններ ունի իր ժամանակակից պարսիկ աշխարհագրագետ ա՛լ-Ղա՛զվինիի քարտեզներին և դրանց նման բաժանված է կլիմայական գոտիների: Այստեղ դրանք նշված են զուգահեռ բարակ կարմիր գծերով, մինչդեռ ցամաքի և ծովի սահմանները նշված են ավելի հաստ գծերով՝ քարտեզի մակերեսի մեծ մասը թողնելով առանց աշխարհագրական տեղեկությունների, նշելով միայն տեղանուններ: Տեղանունների համար տե՛ս Հավելվածի քարտեզ 22ա-ին կից ցուցակը:

Հավելվածի քարտեզ 21ա-ն ներկայացնում է քարտեզի վերագծված տարբերակը, որի վրա կարելի է տեսնել բոլոր քաղաքների ու շրջանների լատինատառ տեղանունները³⁵⁷: Քարտեզում առկա են նաև Մեծ և Փոքր Հայքերը (V-11 և 5), Խլաթը՝ Մեծ Հայքի մայրաքաղաքը (V-7), Մայֆերկաթը կամ Միաֆարկին-Տիգրանակերտը՝ մինչքրիստոնեական Հայաստանի մայրաքաղաքներից մեկը (V-9), և Վանա լիճը (V-10): Վանի, Կովկասի (VI-8) և ալանների (VI-4) միջև՝ Կասպից ծովից (V-13) արևմուտք, առկա է Երկաթե դուռը (V-15), որը Դերբենդի կամ Կասպից դարպասն է: Քարտեզում առկա են նաև Ատրպատականը (V-12) և Շիրվանը (VI-3), որը նշված է Աղվանքի աշխարհագրական վայրում:

Ասորական այս քարտեզն էլ իր հերթին փաստում է, որ Ատրպատականը Իրանի նահանգներից էր և տեղակայված էր Արաքսից հարավ, իսկ նրանից հյուսիս նույն անունով երկիր գոյություն չուներ, կար միայն Շիրվանը:

5.10. Միջնադարյան կարևորագույն մեծադիր աշխարհացույց քարտեզներից է Անգլիայի Հերեֆորդ քաղաքի Մայր տաճարում գտնվող քարտեզը (պատրաստված է 1280-1289 թթ.), որը պատկանում է օրոսյան T-O քարտեզների տեսակին: Սրա արտաքին չափերն են 162x135 սմ, իսկ քարտեզի բոլորակի տրամագիծը 132 սմ է: Շնորհիվ իր մեծություն, աշխարհագրական մանրամաս-

³⁵⁶ Մանրամասն տե՛ս ենթաբաժին 3.4.1.: Տե՛ս նաև Ռոբերտ Գալչյան, *Կովկասից հարավ երկրները միջնադարյան քարտեզներում*, հայերեն տեքստը, Լոնդոն և Երևան, 2007, էջ 79-81:

³⁵⁷ Dr. Konrad Miller, *Mappae Arabicae*. Vol. I-VI, Stuttgart, 1926-1931, հատոր 5:

նություններից բացի, քարտեզի վրա հնարավոր է եղել նաև ավելացնել Աստվածաշնչից և հնագույն առասպելներից վերցված տեքստեր, ինչպես նաև գծել հեռավոր երկրներում ապրող տարբեր առասպելական գազանների և զարմանահրաշ կենդանիների մանրապատկերներ: Սա միջնադարյան միակ մեծագիր քարտեզն է, որը մեզ հասել է ամբողջութամբ և կատարյալ վիճակով:

Քարտեզի մանրամասնում (22ա) կարելի է տեսնել Կովկասից հարավ գտնվող շրջանը: Այստեղ «Հայաստանը» քարտեզի կենտրոնից աջ է՝ նշված 1 թվանշանով (նշումները մերն են — Ռ. Գ.): Նոյյան տապանը նշված է 4-ով և մակագրված է՝ «Նոյյան տապանը նստած Հայաստանի լեռների վրա»: Նրա ներքևում՝ տապանից աջ, «Փոքր Հայքն» է՝ գրված կարմիրով և նշված 3-ով: «Մեծ Հայքը» տապանի և հորիզոնական աշտարակի միջև է՝ նշված 2-ով: «Աղվանքը» (20) տեղադրված է քարտեզի եզրում՝ աշխարհը շրջապատող օվկիանոսի հյուսիսային հատվածի մոտ՝ Կասպից ծովից արևմուտք, որտեղ նա միանում է քարտեզի եզրում գտնվող օվկիանոսին: Աղվանքի գտնված շրջանը անվանված է Հիրկանիա, նշված է 16-ով:

Այսպիսով՝ քարտեզում բազմաթիվ անգամներ նշվում է Հայաստանը: Մեկ անգամ նշվում է Ալբանիան, որը տեղադրված է Հայաստանից հյուսիս ընկած տարածքում, երկու անգամ՝ Մեդիան (Մարաստանը)՝ Տիգրիսի մոտակա տարածքներում: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ քարտեզագիրը Աղվանքն ու Ատրպատականը նկարագրել է որպես երկու տարբեր երկրներ՝ առաջինը տեղադրված Արաքսից հյուսիս, իսկ մյուսը՝ նրանից հարավ:

5.11. Ռանուլֆ Հիգդենի աշխատանքները քննարկվել են աշխատությունների ընթացքում և ներկայումս համարվում են աշխատություններից մեկ օրինակը կքննարկվի ստորև:

Հավելվածի քարտեզ 23-ում «Հայաստանի» անունը նշված է «Փոքր Ասիայի» տարածաշրջանի մի հատվածում: Այս երկրամասը սկսվում է Միջերկրականի հյուսիս-արևելքից ու հասնում մինչև Պոնտոսյան լեռները՝ երկու կողմից շրջապատված «Կապադովկիայով» ու «Միջագետքով»: Քարտեզ 23-ի մանրամասն ներքևում կարելի է տեսնել քարտեզի վրա համարակալված շրջանի կարևոր տեղանունները:

5.12. Հավելվածի քարտեզ 24-ում վերատպված է Զերվազ Տիլբուրեցուն վերագրվող «Էբսթորֆի աշխարհագրոլոգ» քարտեզը, որը նա հավանաբար պատրաստել է նույն գրքին զուգահեռ: Քարտեզի Ասիայի հարավարևմտյան շրջանը կարելի է տեսնել քարտեզի մանրամասնում, որի վրա հերթական թվանշաններով նշված են Հայաստանի և հարակից շրջաններին վերաբերող տեղանուններն ու դրանց այլ մանրամասնությունները: Ներքևում թարգմանաբար

տրված են էբսթոբիջյան քարտեզի վրա այս համարներով ցուցադրված բացատրական գրությունները:

Հայաստանին վերաբերող տեղանուններն են³⁵⁸.

1. Արարատ:
2. Նոյյան տապան:
3. Հայաստանը տարածված է Կապադովկիայից մինչև Կասպից ծով:
4. Սա Հայաստանի շրջանն է, որն անվանված է Յասոնի ընկերակից Արմենայի [կամ Արմենիոս] անունով: Այս շրջանը Տավրոսի և Կովկասի միջև է և տարածվում է մինչև Կապադովկիա և Կասպից ծով:
5. Հայաստանի Պարտավ քաղաքը:
6. Ս. Բարդուղիմեոսի շիրիմը [ըստ ավանդության՝ քրիստոնեությունը Հայաստան բերող առաքյալներից մեկը]:
7. Արաքսը մի գետ է Հայաստանում, որն աղու ենք է առնում նույն լեռներից, որտեղից նաև աղու ենք է առնում Եփրատը:
8. Արաքսի վրա կառուցված Ալեքսանդրի կամուրջը:

Կողքիսի վերաբերյալ քարտեզը նշում է.

9. Կողքիսի երկիրը [Աբխազիան]: Մասնագետները Ոսկե գեղմը տեղադրում են այստեղ, հետևաբար Յասոնը եկավ այստեղ ու պատճառ դարձավ Հունաստանի և Տրոյայի պատերազմին:

Աղվանքի բացատրությունն է.

10. Այս երկիրը, որը կոչվում է Ալբանիա [Աղվանք], բնակեցված է 26 ցեղերով, որոնք հայտնի են իրենց մաշկի չլացուցիչ սպիտակ գույնով և աշխարհ են գալիս սպիտակ մազերով: Երկիրը սկիզբ է առնում Կասպից ծովի արևմուտքից և նրա ավերով ձգվում դեպի Հյուսիսային օվկիանոս՝ անցնելով վայրի շրջաններով ու Մեոտիսյան ճահիճներով [Ազովի ծով]³⁵⁹:

Էբսթոբիջյան քարտեզում առկա բացատրական տեղեկություններում նշված են Հայաստանն ու Աղվանքը, բայց Ազրբեջանի կամ Մարաստանի մասին նշումներ գոյություն չունեն:

³⁵⁸ Gervase of Tilbury, *The Ebstorf Map*. Սա քարտեզի վրայի բացատրությունների թարգմանությունն է: Տե՛ս հավելվածի քարտեզ 24–ի բացատրությունները:

³⁵⁹ Անդ, ինչպես նաև Gervase of Tilbury, *Otia Imperialia*, գիրք 2, գլուխ 5, էջ 230–231:

Ստորև դիտարկենք մի քանի իսլամական քարտեզներ, որոնց հեղինակներից մի քանիսի աշխարհագրական աշխատանքներն արդեն քննարկվել են երրորդ գլխում:

5.13. Իններորդ դարի պարսիկ գիտնական Իբն Խուրդադբեհի մասին խոսվել է սուլյն աշխատութեան երրորդ գլխի 3.3.2 ենթաբաժնում: Հավելվածի քարտ. 25-ը Կովկասից հարավ գտնվող շրջանի համար նրա գծած քարտեզի ընդօրինակումն է, որը տեղադրված է Բաքվում ուսուցիչներով հրատարակված Իբն Խուրդադբեհի աշխարհագրական «Քրթաբ-ուլ Մասալեք վա՛ ա՛լ-Մամալեք (Գիրք ճանապարհների և երկրների)» աշխատութեան մեջ³⁶⁰:

Քարտեզում Արաքսից հարավ տարածքն անվանված է Ադրբեջան, իսկ Արաքսից հյուսիս տարածքին տրված են Թաբասարան, Շաքի, Շիրվան, Մողան և այլ անվանումներ, որոնք միասնաբար կոչված են Առան: Այնպես որ այս իսլամական աշխատությունն էլ Աղվանքն ու Ադրբեջանը երկու տարբեր երկրներ է համարում՝ մեկն Արաքսի հյուսիսում, մյուսը՝ հարավում:

5.14. Ա՛բու Իսհազ Իբրահիմ բին Մուհամմա՛դ ա՛լ-Ֆարսի ա՛լ-Իսթա՛խրի

5.15. Ա՛բուլղասիմ Մուհամմա՛դ Իբն Հա՛ուքալ

5.16. Մուհամմա՛դ Բին-Ա՛հմեդ Շա՛մսուդդին ալ-Մուհա՛դդա՛սին

Վերոնշյալ երկու պարսիկ և մեկ արաբ աշխարհագրագետների թողած գրականությունը քննարկվել է սուլյն աշխատութեան երրորդ գլխի 3.3.6, 3.3.7 և 3.3.9 ենթաբաժնիներում, իսկ այստեղ կքննարկվեն նրանցից յուրաքանչյուրի պատրաստած Հարավային Կովկասը ցուցադրող քարտեզը: Սրանք երեքն էլ պատկանում են իսլամական քարտեզագրութեան Բալխի դպրոցին, հետևաբար նրանց աշխարհագրութեան գրքերի քարտեզներում առկա են Կովկասի հարավային շրջանի քարտեզներ, որոնք ցուցադրում են տարածաշրջանի երեք կարևոր երկրները՝ Հայաստանը, Աղվանքը և Ատրպատական-Ադրբեջանը: Բոլոր քարտեզներն էլ ներկայացված են իրար շատ նման կերպով:

Այս երեք երկրներին պատկանող քաղաքների տեղանունները տրված են երրորդ գլխում, իսկ հավելվածի քարտեզներ 26, 27 և 28-ը ներկայացնում են այս աշխարհագրագետների գծած քարտեզները: Երեք քարտեզների աջ մասում պատկերված է Կասպից ծովը, կենտրոնի հորիզոնական կրկնակի գծով գծվածն Արաքս գետն է, որը միանում է վերևից անցնող և Կասպից ծովը հասնող Կուր գետին: Արաքսի և Կուրի հյուսիսում է Աղվանքը՝ այստեղ անվանված Առան, իսկ Արաքսի հարավում է Ատրպատականը՝ քարտեզում անվանված Ազերբայ-

³⁶⁰ Ибн Хурдадбех, Книга Путей и Стран, Баку, Издательство Академия наук Азербайджана, 1986, էջ 290, քարտիկ 10:

ջան: Ատրպատականից հյուսիս-արևմուտք Հայաստանն է, որի տարածքում պատկերված են գույգ Արարատները: Բոլոր քարտեզներում ներկա են Հայկական, այսինքն՝ Վանա և Ուրմիո լճերը, միայն Մուկա՛ղղա՛սի քարտեզում Ուրմիո լիճը նշված չէ:

Ըստ ընդունված սովորության՝ քարտեզներում գծված չեն սահմաններ, իսկ նրանց կից տեքստերն ու ծանոթագրությունները տեղեկություններ են տալիս քաղաքների և նրանց՝ որ երկրին պատկանելու վերաբերյալ: Երեք քարտեզներում նշված երկրները և նրանց պատկանող քաղաքները փաստում են, որ վերոհիշյալ երկրները երեքն էլ գոյություն են ունեցել նույն ժամանակահատվածում և նշված անուններով, իսկ Աղբբջանը չի ունեցել «հյուսիսային» և «հարավային» բաժանումներ, հակառակ Բունիաթովի այն հայտարարություն, որ իբր «արաբական աղբյուրներում, Հյուսիսային և Հարավային Աղբբջան հասկացությունն առկա է դեռ 6-րդ դարից» (տե՛ս Գլուխ 2.2, էջ 71):

5.17. Իբն Ա՛բդուլլահ Մուհամմա՛ղ բին Ա՛բդուլլահ բին Իդրիս ալ՛-Շա՛րիֆ ալ՛-Իդրիսի, ճանաչված որպես ալ՛-Իդրիսի (1099–1165 թթ.), արաբ աշխարհագրագետներից ամենահաճախ ճամփորդածն ու հանրաճանաչն էր: Նա ծնվել է Մարոկկոյի Սյուտա քաղաքում 1099 թվականին, սովորել է Կորդովայում³⁶¹, որը ժամանակին Արևմտյան Եվրոպայի կարևորագույն մշակութային կենտրոններից էր, որտեղ և առիթ է ունեցել հետազոտելու կատալան և պորտուգալական ծովային քարտեզները՝ պորտուգալացիները³⁶²:

Ալ՛-Իդրիսին ճամփորդել էր Եվրոպայում, Միջին և Կենտրոնական Ասիայում, հավաքել աշխարհագրական բազմաբնույթ տեղեկություններ: 1154 թ. նա Սիցիլիայի Ռոջե II թագավորի համար պատրաստել է իր աշխարհագրական գիրքը, որը ճանաչված է «Ռոժեի գիրք» մականունով: Այս գրքում ալ՛-Իդրիսին սկզբում ներկայացնում է բոլորակաձև աշխարհացույց մի քարտեզ՝ գծված Բալխի դպրոցի հիմունքներով, բնակելի աշխարհը բաժանված յոթ կլիմայական գոտիների՝ ըստ նրանց աշխարհագրական լայնությունների: Գիրքն ունի 70 մանրամաս քարտեզներ՝ յուրաքանչյուրն իր բացատրական տեքստով, որոնք ցուցադրում են աշխարհի 7 կլիմայական գոտիները՝ ամեն մեկը բաժանված 10 հատվածի, որոնցից յուրաքանչյուրի համար գրքում առկա է առանձին քարտեզ:

Հավելվածի քարտեզ 29-ում պատկերված է ալ՛-Իդրիսի քարտեզներից մեկը, որը վերաբերում է հինգերորդ եղանակային գոտում ընդգրկվող Կովկասի հարավային շրջանին: Այստեղ ցուցադրված են Մերձավոր Արևելքի, Կովկասի

³⁶¹ Այդ ժամանակ Կորդովայում կար ավելի քան 70 գրադարան, և քաղաքը համարվում էր մշակույթի ու գիտության կենտրոն:

³⁶² Պորտուգալացիներ էին կոչվում միջնադարյան ծովային քարտեզները: Տե՛ս Ռուբեն Գալսյան, Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, Երևան և Լոնդոն, 2005, էջ 22–23, 94–95 և 98–107:

սի ու Փոքր Ասիայի շրջանները, իսկ քարտեզը, ըստ իսլամական քարտեզների, ուղղորդված է հարավով վեր:

Քարտեզում պատկերված Հայաստանի քաղաքներից են Բիթլիսը, Կալիկլան (Կարին-Էրզրումը), Խլաթը, Արճեշը, Դվինը, Նախիջևանը (Նաշուի), Արզանը, Սալմաստը: Վերևի հատվածի ձախ կողմում կապույտ լիճը Կասպից ծովն է, իսկ վերևում՝ կենտրոնում, կանաչ բոլորակը Վանա լիճն է:

Նույնիսկ 1154 թվականի այս քարտեզում Բիլադ ուլ-Ռանը, այսինքն՝ Աղվանք-Առանը, տեղակայված է Արաքսից հյուսիս, իսկ Ատրպատական-Ադրբեջանը՝ գետի հարավային ափին: Աղվանքի տարածքում առկա քաղաքներից են Բաբ-ուլ-Աբուլբաբը, Շամխորը, Շամախին, Վարսականը, Թիֆլիսը և այլն:

Պարսկական Ադրբեջանը՝ Ատրպատականը, տեղադրված է Արաքսի ափից դեպի հարավ ընկած տարածաշրջանում: Նրա քաղաքներից նշված են Արդաբեյլը և Բարզանդը:

Ըստ այս քարտեզի՝ տարածաշրջանում առկա են երեք երկիր, Ադրբեջանը՝ Արաքսից հարավ, Աղվանքը՝ Արաքսից ու Կուրից հյուսիս, և Հայաստանը՝ Արաքսի երկու ափերին և այնտեղից դեպի հարավ շարունակվող տարածաշրջանում: Արաքսի հյուսիսում «Ադրբեջան» անունով երկիր չի նշվում:

5.18. Զա՛քա՛րիա իբն Մուհամմա՛դ ա՛լ-Ղա՛զվի՛նիի աշխարհագրական բառարանի ձեռագիրը կոչվում է «Ասար ուլ բիլադ վա՛ ա՛խբար ուլ իբադ (Վայրերի, հուշարձանների և Աստծո արարածների պատմությունը)»: Սա պարունակում է եղանակների գոտիների բաժանված սխեմատիկ մի աշխարհացույց քարտեզ՝ ուղղորդված հարավով վեր:

Հավելվածի աշխարհացույց քարտեզ 30-ը Ղա՛զվի՛նիի 13-րդ դարի վերոնշյալ հատորի 1580 թվականին արված ընդօրինակումից մի հատված է: Քարտեզը պարսկերենով է և պահպանվում է Ամերիկայի Բալթիմոր քաղաքի Ուալթեր Արթ Գալերիի գրադարանում: Այստեղ լեռները ցուցադրված են ոսկեգօծ, իսկ ծովերը, ծոցերն ու գետերը՝ արծաթագօծ:

Ղա՛զվի՛նիի մյուս քարտեզների նման սա էլ ցուցադրում է յոթ եղանակային գոտիները, և քարտեզում առկա մակագրությունների մեծ մասը դրանց է վերաբերում: Քարտեզը պարունակում է բավականին արդիական և հետաքրքրական տեղեկություններ ու նորույթներ: Այստեղ բացատրություններ կան Հյուսիսային և Հարավային բևեռների ծայրահեղ ցրտի և երկարատև գիշերների ու ցերեկների վերաբերյալ:

Քարտեզում կարմիրով նշված համարներին համապատասխանող տեղանունների թարգմանությունները տրված են դրան կից աղյուսակում: Այստեղ Արաքսի ափերին է «Հայաստանը» (10), «Աղվանքը» նշված է իր քաղաքներով,

որոնք են՝ «Պարտավ» (13), «Բաքու» (14), «Շամախի» (15), «Դերբենդ» (16), իսկ Ատրպատականը նշված է իր մայրաքաղաքով՝ «Թավրիզ» (17):

5.19. Տիրիպ դե լա Ռյուլի հավելվածի քարտեզ 31-ը կոչվում է «Հայաստանի քարտեզը» (1653), նշում է Հայաստանի չորս նահանգները՝ Մեծ Հայքը, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայքերը: Այս վարչական բաժանումները կատարվել էին Հուստինիանոս Ա կայսեր (483–565) օրոք:

Քարտեզի նյութը Հայաստանն է, բայց առկա են նաև հարակից երկրները, որոնց մեջ են հյուսիս-արևելքում Աղվանքը՝ Ալբանիան, արևելքում՝ Մարաստան-Ատրոպատենը՝ կրկին հաստատելով 5-6-րդ դարերում այս երեք տարբեր երկրների առկայությունը սովյալ տարածաշրջանում, առանց Հարավային և Հյուսիսային Ադրբեջանների:

5.20. Նիկոլաս Սանսոնի (1600–1667) 1648 թ. պատրաստած՝ քարտեզ համար 32-ը ցուցադրում է պատմական Հայաստանը, Կողքիսը, Վիրքը և Աղվանքը: Ըստ այս ֆրանսիացի քարտեզագետի՝ Կովկասի հարավային տարածաշրջանի երկրներն էին Հայաստանը, Մարաստանը՝ Մեդիան, Վիրքը՝ Իբերիան, Կողքիսը և Աղվանքը՝ Ալբանիան: Այսինքն՝ այս երկրներն ունեին տարբեր ազգությունների ժողովուրդներ:

Այստեղ էլ բացակայում են «Հյուսիսային և Հարավային Ադրբեջաններ» հասկացություններն ու անունները, քանի որ պատմական այդ ժամանակահատվածում այդպիսի երկրներ գոյություն չեն ունեցել:

5.21. Յոհաննես Բլաուն (1596–1673) հոլանդացի կարևորագույն քարտեզագետների ընտանիքից էր, հանրահայտ իրենց 12-հատորանոց «Մեծ ատլասով (Atlas Maior)»: Ատլասը պարունակում է ամբողջ աշխարհի տարածքներից 600 մեծադիր քարտեզ և 3000 էջ բացատրական տեքստ: Այս ատլասը համաշխարհային քարտեզագրական գլուխգործոցներից մեկն է համարվում և 17-րդ դարում բազմիցս հրատարակվել է տարբեր լեզուներով:

Քարտեզ 33-ը 1664–1665 թթ. այդ ատլասից վերցված «Թուրքիայի կայսրություն» կոչված քարտեզի արևելյան ծայրամասն է, որը ցուցադրում է Հայաստանը և նրա հարակից շրջանները: Դեղինով ներկված Թուրքիայի սահմաններից ներս է տեղադրված «Հայաստանը», իսկ նրա արևելքում՝ աջում են «Շիրվանը», այսինքն՝ հնագույն Աղվանքը և «Մարաստանը»՝ Մեդիա-Ատրպատականը, որոնք այդ ժամանակ մտնում էին Պարսկաստանի կազմի մեջ:

5.22. Պիեռ Դյու-Վալի (1619–1683) «Ասիական Թուրքիայի քարտեզը» պատկերում է նաև Պարսկաստանը, Արաբիան և Աֆրիկան: Քարտեզը 1676 թվականին պատրաստել է Սանսոնի փեսա և թագավորական աշխարհագետ

Պիեռ Դյու-Վալը՝ օգտվելով հռչակավոր արաբ պատմաբան և աշխարհագետ Իսմայիլ Աբուլֆեդայի (1273-1332) գրություններից (տե՛ս հավելվածի քարտեզ 34):

Քարտեզում Հայաստանի մեծ մասը Թուրքիայի գերիշխանության ներքո է: Հայաստանի քաղաքների շարքում նշված են «Երևանը», «Կարսը», «Նախիջևանը» և «Վանը»: Պարսկաստանում նշված է «Ադրբեջանը» (Adherbeyzan): Այս անունը գրված է «խոյի» (Chui), «Արդեբիլի», «Ջանջանի» (Sankan), «Մարաղայի» և «Սուլթանի» տարածաշրջանի վրա, որոնք Իրանի Ատրպատական նահանգի քաղաքներից են: Արաքսի (քարտեզում՝ Արախս) հյուսիսում գտնվող երկիրը կոչվում է «Շիրվան», որի քաղաքներից նշված է «Շամախին»:

Մեկ քարտեզ ևս, որը ցուցադրում է իրական պատմական Ադրբեջանի որտեղ լինելու պարագան:

5.23. Յոհան Դավիդ Կոչլերի (1684-1755) «Դպրոցական և ձամփորդական ատլասը» գծագրել է քարտեզագիր Ք. Վայգելը (1654-1725) Գերմանիայի Նյուռնբերգ քաղաքում, որտեղ ատլասը տպագրվել է 1718 թվականին: Այս ատլասից է քարտեզ 35-ը:

Հայաստանի այս քարտեզը «Հին ատլասի» համար 27 քարտեզն է: Այստեղ ցուցադրված են Հայաստանի նահանգներն ու կարևոր քաղաքները: Վանա լիճն անվանված է «Արճեչ», իսկ Սևանը՝ «Լիքնիտես»: Հայաստանի հարևան երկրների մեջ ցուցադրված են հյուսիսում «Աղվանքը»՝ Ալբանիան, արևելքում՝ «Ատրոպատեն-Մարաստանը»՝ Ատրպատականը:

Քարտեզ 35-ը ևս փաստում է հին և միջին դարերում այս երեք երկրների անկախ գոյությունը՝ առանց Արաքսից հյուսիս տեղադրված Ադրբեջանի:

5.24. Պետրոս Մեծ կայսրը ֆրանսիացի քարտեզագետ **Գիյոմ Դելիլին** (1675-1726) հանձնարարել էր չափագրել Կասպից ծովի ափերն ու պատրաստել մի արդի տեղագրական քարտեզ, որի արդյունքն էր նրա «Ռուսական ատլաս»-ը: Հավելվածի քարտեզ 36-ի մանրամասը Դելիլի 1730 թվականի ատլասի «Կասպից ծովի քարտեզ»-ից է: Քարտեզի այս մասը ներկայացնում է Կասպից ու Սև ծովերը և նրանց միջև ընկած տարածքները:

Քարտեզի մանրամասում կարելի է տեսնել Հայաստանի, Ատրպատականի և Նախկին Աղվանքի տարածքները, վերջինում ներկայացված են պարսկական գերիշխանության ներքո գտնվող մի քանի մահմեդական խանություններ: Աղվանքի անունը գոյություն չունի իսկ Ատրպատականը (Aderbijan) Իրանի Ադրբեջան նահանգն է՝ տեղադրված Արաքսի հարավային ափին:

Ներկա Ադրբեջանի Հանրապետության տարածքում տեղակայված են Դերբենդի և Շամախի խանությունները՝ ներկված վարդագույն, որոնց տրված է «Շիրվան» միասնական անվանումը: Հայաստանի անունը կարել է տեսնել քար-

տեղի մանրամասի կենտրոնի ճախ մասում՝ կանաչով ներկված տարածքում՝ որպես Արևմտահայաստանից մինչև Կապանի մոտակայքը հասնող մի երկիր:

18-րդ դարի այս ուռու-Ֆրանսական քարտեզն էլ նույնն է փաստում, ինչ բոլոր մյուսները, այսինքն՝ այն, որ Ադրբեջանի Առաջին Հանրապետությունը, հիմնադրվելով 1918 թվականին և նույնությունը ընդօրինակելով Իրանի հյուսիսարևմտյան նահանգի անունը, տեղադրվել ու գրավել է Շամախիի և Շիրվանի խանությունների զբաղեցրած տարածքները:

5.25. Յոհան Բատիստ Հոմանի (1663–1724) Օսմանյան կայսրության այս քարտեզի մանրամասը վերցված է նրա Նոր ատլասից: Սա ատլասի 13-րդ էջն է՝ հրատարակված Սանկտ Պետերբուրգում 1748 թվականին: Քարտեզ 37-ի մանրամասը պարունակում է Հայաստանը և նրա հարակից երկրները:

Այստեղ ևս Արաքսի երկու ափերին տեղադրված է Հայաստանը: Արաքսի հարավային ափին՝ դեպի արևելք, նշված է Ատրպատականը (*Adherbeizan*), իսկ Կուրից հյուսս նշված են Բաքուն, Շամախին և Դերբենդը, բոլորը՝ Շիրվան անվանված երկրամասում: Սրանց հյուսիսում էլ Դաղստանն է տեղադրված:

Այս գերմանական քարտեզն էլ գալիս է փաստելու մյուսների ցուցադրածը, այն, որ Շիրվանը հնագույն Ադվանքի գրաված տարածքն է, որը գտնվում է Արաքսից և Կուրից հյուսիս, իսկ Ադրբեջանը Արաքսից հարավ գտնվող Իրանի նահանգն է՝ Ատրպատականը: Այս քարտեզում, ինչպես նաև մինչև 1918 թ. պատրաստված բոլոր քարտեզներում Ադրբեջանի Հանրապետության այսպես կոչված «պատմաբանների» ու «աշխարհագրագետների» հորինած Հյուսիսային ու Հարավային Ադրբեջաններն ընդհանրապես գոյություն չունեն:

5.26. Ռոբեր Վուգոնդիի «Հին աշխարհի արևելյան թագավորությունները» Փարիզում 1779 թ. հրատարակված այս քարտեզը ցուցադրում է Հին աշխարհի միապետությունները, որոնցից են Մեծ Հայքը, Ալբանիան (Ադվանքը), Մեդիան (Մարաստանը), Պարթևաստանը, Իբերիան և Մեդիական Ատրոպատենը (Ադրբեջանը), որոնք Հայաստանի հարևան պետություններն են:

Ինչպես մյուս բոլոր քարտեզներում, 1779 թվականին պատրաստված 38 քարտեզում ևս Ադվանքը Կուրի հյուսիսային ափին է տեղադրված, իսկ Ատրպատական-Ադրբեջանը՝ Արաքսի հարավային ափերին, առանց հարավային ու հյուսիսային երկրամասերի բաժանումների:

5.27. Հավելվածի 39 քարտեզը կոչվում է «Ասիական թուրքիան, Անատոլիան, որը ներառում է Հայաստանը, Քուրդիստանը, Ալջեզիրան [Միջագետքը], Իրաք-Ալամին»: Քարտեզը վերցված է «Նոր ատլաս կամ աշխարհի բոլոր անկյունների քարտեզների հավաքածու»-ից՝ տպագրված 1793 թվականին Սանկտ

Պետերբուրգում: Այս ատլասը Փարիզում 1762 թ. տպագրված նույնանուն ատլասի ուսուցիչներին թարգմանությունից է:

Քարտեզում Հայաստանը ցուցադրված է Օսմանյան և Ռուսական կայսրությունների միջև բաժանված: Կարևորագույն քաղաքներից նշված են Երևանը, Արաբկիրը, Կարսը, Վանը, Բիթլիսը, Բայբուրթը և Խլաթը:

Հայաստանից արևելք՝ Կուրի հյուսիսի շրջանը՝ այսօրվա Ադրբեջանի Հանրապետությունը, անվանված է Շիրվան, որն ընդգրկում է Բաքու և Դերբենդ քաղաքները: Իսկ Ատրպատականի քաղաքները՝ Մարաղան, Թավրիզն ու Արգավիլը, ընդգրկված են բուն Իրանի սահմաններում:

5.28. Կասպից ծովի, Հայաստանի, Դաղստանի և Շիրվանի հավելվածի համար 40 քարտեզը պատրաստել է գերմանացի զինվորական Մարչալ Ֆոն Բեբերշտայնը և հրատարակել 1800 թվականին: Քարտեզի տիտղոսն է «Կուր և Թերեք գետերի միջև, մինչև Կասպից ծովն ընկած տարածքը»:

Քարտեզի ներքևում Արաքս գետն է, որը, միանալով Կուրին, հոսում է դեպի Կասպից ծով: Կուրի հյուսիսային ափին է Շամախի խանությունը, իսկ ավելի հյուսիսում են Շաքիի, Դերբենդի և Թաբասարանի խանությունները: Այս բոլորին տրված է «Շիրվան» ընդհանուր անվանումը: Այս անվանումը համապատասխանում է Դելիլի, Մինորսկու, Բաքիխանովի և ուրիշների՝ նույն շրջանին տրված անվանումներին, որը համընկնում է պատմական Բուն Աղվանքի գրաված տարածաշրջանին: «Ադրբեջան» կամ «Աղվանք» անվանումներն այստեղից բացակայում են, քանի որ առաջինը Արաքսից հարավ և քարտեզից դուրս է, իսկ երկրորդն այստեղ ներկայացված է իր ժամանակի խանությունների անուններով:

Այս տարածաշրջանում է, որ 1918 թվականին հիմնադրվեց «Ադրբեջանի Հանրապետություն» նորակոչ երկիրը:

5.29. Ուիլյամ Ֆեյզընի (1750–1836)՝ հավելվածի քարտեզ 41–ում վերատպված քարտեզը կոչվում է «Ասիական Թուրքիա»՝ վերցված Սկյուտարում (Պոլսի թաղամասերից) 1803–1804 թվականներին հրատարակված «Աշխարհի ատլաս»-ից, որն իր հերթին հիմնված է Լոնդոնում 1778 թվականին հրատարակված Ֆեյզընի «Ընդհանուր ատլասին»: Անգլերեն ատլասի 52 քարտեզի փոխարեն օսմաներենի թարգմանված ատլասն ունի միայն 24 քարտեզ, որոնց թարգմանողն է Մահմուդ Ռահիֆը: Քարտեզները մեծադիր են՝ խնամքով պատրաստված ու ներկված: Գիրքը թվագրված է՝ «Հիջրայի 1218» թվական: Ատլասն ունի նաև 78 էջ տեքստ, որը աշխարհագրական զանազան տեղեկություններ է տալիս երկրագնդի, արևի, լուսնի և մարդկային ցեղերի մասին: Այստեղ կան նաև բացատրություններ տարբեր երկրների և նրանց կարևոր քաղաքների վերաբերյալ:

Քարտեզը ցույց է տալիս Օսմանյան կայսրութեան արևելյան սահմանները: Քարտեզում գունավոր բաժանումները նշում են օսմանյան վիլայեթները, որոնց մի քանիսի տարածքի վրա նշված է Հայաստանը՝ բաժանված Պարսկական և Օսմանյան կայսրությունների միջև: Տրված է պատմական Հայաստանի նահանգների անունների մի մասը: Երևանը (այստեղ՝ Բևան) և Արարատը ընդգրկված են Պարսկաստանի սահմաններում:

Ինչպես վերը նշվեց, քարտեզում Վանի և Էրզրումի շրջանները նշված են որպես «Էրմենիստան», այսինքն՝ Հայաստան: Վանա և Ուրմիա լճերը ցուցադրված են ոչ ճշգրիտ տեսքով: Այս քարտեզում նույնպես Ազրբեջանը ցուցադրված է Արաքսի հարավային ափին՝ որպես Պարսկաստանի նահանգներից մեկը: Քարտեզում Աղվանք անվանումը գոյություն չունի, ինչպես նաև չկան Հյուսիսային և Հարավային Ազրբեջանները:

5.30. Կոնրադ Մալտե-Բրյունի (1775–1826) պատրաստած այս քարտեզը կոչվում է «Օսմանյան կայսրութեան ասիական մասը»: Քարտեզը վերցված է նրա «Ամբողջական ատլաս»-ից՝ հրատարակված Փարիզում 1812 թվականին:

Համար 42 քարտեզում Արևմտահայաստանը և Արևելահայաստանը նշված են առանձին՝ իրենց պատմական սահմաններով և որոշ նահանգների անուններով: Արևելյան կամ Ռուսական Հայաստանը նշված է Երևանից մինչև Շուշի ընկած տարածքում, որը ժամանակին գրավել էր Իրանը: Կուրից հյուսիս առկա են երկու երկրամաս՝ «Դաղստան» և «Շիրվան» անվանումներով: Առաջինն ընդգրկում է Դերբենդ քաղաքը, իսկ Շիրվանում են տեղադրված Շաքին, Շամախին և Բաքուն, ինչպես նաև ներկա Ազրբեջանի Հանրապետության կարևոր մի քանի այլ քաղաքներ:

Ատրպատականն այստեղ անվանված է Ազերբայջան և տեղադրված է Արաքսի հարավային ափերին՝ Մեդիայի (Մարաստանի կամ Պարսկաստանի) սահմաններում: Քարտեզում տրված են մանրամասնություններ շրջանի տեղագրության վերաբերյալ:

5.31. Հավելվածի քարտեզ 43-ը վերցված է գերմանացի աշխարհագրագետ և հնագույն քարտեզների մասնագետ Դր. Կառլ Ֆոն Սպրուների (1806–1892) «Հնագույն ատլաս» աշխատությունից: Քարտեզը ցույց է տալիս Կովկասից հարավ՝ մինչև Միջագետք հասնող տարածաշրջանի վաղմիջնադարյան ժամանակաշրջանի իրավիճակը³⁶³: Կովկասից անմիջապես հարավ տեղակայված են Կողքիսը, Վիրքն ու Աղվանքը (Colchis, Iberia, Albania): Սրանցից հարավ տեղակայված է Հայաստանը, իսկ նրանից հարավ՝ Միջագետքը և Ասորեստանը (Mesopotamia, Assyria): Մարաստանը, որին նաև տրված են Ատրոպատեն և Փոքր Մարաստան (Atropatene, Media Parva) անվանումները, տեղադրված է Հայաստանից հարավ-արևելք: Բոլոր քարտեզագետներն ու մասնագետներն

³⁶³ Karl von Spruner, *Atlas Antiquus*, Gotha, 1855, քարտեզ XVI:

իրենց պատրաստած հնագույն աշխարհը պատկերող քարտեզներում վերահիշ-
յալ տարածաշրջանը գծում են հավելվածի քարտեզ 43-ի նմանությամբ՝ նույն
երկրներով ու համարյա նույնանման բաժանումներով:

Իսկ Բուենիաթովի նշած երկու տարբեր՝ Հյուսիսային և Հարավային Ադրբեյ-
ջանների մասին այս քարտեզի վրա նմանապես ոչ մի նշում չկա: Այսպես
կոչված «Հարավային Ադրբեյջանի» առաջադրված շրջանում առկա է միայն
Մարաստան-Ատրպատականը:

5.32. Հավելվածի 44 քարտեզն անվանված է «Ռուսական և Օսմանյան պե-
տությունների 1877 թ. պատերազմի ռազմական քարտեզը»:

Քարտեզի վրա Սևանա լճից մինչև Արաքս և Երզնկա ընկած տարածքի վրա
արաբատառ թրքերենով գրված է «Էրմենիստան (Հայաստան)», իսկ Կուրից
Հյուսիս տարածքն անվանված է Շիրվան, ներառյալ Բաքու և Շամախի քա-
ղաքները: Դաղստանը և Դերբենդ քաղաքը տեղադրված են Կովկասից Հյուսիս:
Իրանի Հյուսիսում նշված է Ղարադաղ շրջանը, իսկ նահանգին «Ագերբայ-
ջանի» փոխարեն սխալմամբ տրված է «Արզնջան» անվանումը:

Սա օսմանյան վերջին քարտեզներից է, որտեղ ամբողջ հայկական տարածա-
շրջանների վրա նշված է «Հայաստան» անունը: Նույն քարտեզում Ադրբեյջա-
նի Հանրապետության տարածքն անվանված է ոչ թե Ադրբեյջան կամ Աղվանք,
այլ Շիրվան: Այստեղ էլ առկա է միայն մեկ Ադրբեյջան, որն է՝ Իրանի Հյուսիս-
արևմտյան նահանգը:

Մեկ ուրիշ հետաքրքրական երևույթ ևս, այս անգամ՝ Օսմանյան կայսրու-
թյան տարածքում և նրա անվանման վերաբերյալ, որը 20-րդ դարում փոխվեց:
Մեր օրերում ամբողջ Թուրքիայի տարածքն իրենք թուրքերն անվանում են
Անատոլիա, մի անվանում, որն իրականում պատկանում է միայն Փոքր Ասիա
թերակղզուն, այսինքն՝ Թուրքիայի տարածքի մի մասին: Կարելի է տեսնել,
թե ինչպես նույնիսկ թուրքական հին քարտեզներում (վերատպված այստեղ)
Անատոլիա անունը տրվում էր միայն Փոքր Ասիայի շրջանին, որը Արևմտա-
հայաստանից արևմուտք ընկած տարածքում էր: Նույնը կարելի է նաև տես-
նել 19-րդ դարի մեկ ուրիշ՝ քարտեզ 41-ի օսմանյան քարտեզում: Սակայն
Թուրքիայի Հանրապետության հիմնադրվելուց հետո՝ 1920-ական թվական-
ներին, այս անունը սկսեցին օգտագործել Թուրքիայի ամբողջ տարածքի հա-
մար՝ հավանաբար նպատակ ունենալով Թուրքիայի տարածքից ընդհանրապես
վերացնելու «Հայկական լեռնաշխարհ» անունը՝ ամբողջ պետության տարած-
քին տալով «Անագոլու» անվանումը: Սա լավ օրինակ ծառայեց Ադրբեյջանի
իշխանություններին, որոնք այսօր Հայաստանի Հանրապետության տարածքն
անվանում են Արևմտյան Ադրբեյջան:

5.33. Վերջում քննարկենք աշխարհահռչակ քարտեզագետների կողմից
պատրաստված երկու քարտեզ՝ 19-րդ դարի հանրահայտ քարտեզագետներ
Չարլզ Մյուլլերի և Հայնրիխ Կիպերտի ձեռքով, որոնք ցուցադրում են Միջին

և Մերձավոր Արևելքի երկրները Ալեքսանդր Մակեդոնացու և Տիգրան Մեծի օրոք:

5.33.1. Համար 45–ը Հայնրիխ Կիպերտի (1818–1899) քարտեզը ներկայացնում է Ալեքսանդր Մակեդոնացու գրաված Հին աշխարհի տարածքները: Ըստ Կիպերտի՝ նրա գրաված երկրների և դրանց հարակից երկրների մեջ են հետևյալ հնագրայան պետությունները.

- Հայաստանը՝ տեղակայված Արաքսի երկու ափերին և Վանա լճի շրջակայքում, Մալաթիայից մինչև Սևանա լիճ,
- Մարաստանը՝ Արաքսի հարավում, որի վրա Ատրպատական անվանումը դեռ չէր դրվել,
- Ալբանիան՝ Բուն Աղվանքը՝ տեղադրված Կուր գետից հյուսիս ընկած տարածքում:

5.33.2. Համար 46–ի Չարլզ Մյուլլերի քարտեզը ներկայացնում է Հին աշխարհը Միհրդատ VI Եվպատորի (մ.թ.ա. 134–63 թթ.) ժամանակաշրջանում, որը նաև համընկնում էր Տիգրան Մեծի (մ.թ.ա. 140–55) թագավորությանը: Քարտեզում պատկերված՝ Տիգրան Մեծի գրաված տարածքները հասնում էին մինչև Կուր, իսկ դրանց հարավ–արևելքում՝ Արաքսից հարավ, Մեդիա–Ատրոպատենն էր: Կուրի հյուսիսային ափերին էր տեղադրված Ալբանիան՝ Բուն Աղվանքը:

Այսպիսով՝ օտար քարտեզագետների պատրաստած հնագույն աշխարհը ներկայացնող քարտեզներում, ինչպես այլուր, առկա է հետևյալ իրավիճակը.

- Աղվանքը Կուրից և Արաքսից հյուսիս տեղակայված տարածքում էր:
- Ատրպատական–Ադրբեջանը Արաքսից հարավ էր և առանձին մի երկրամաս էր:
- Հայաստանն այս երկուսի հարևանությունը տեղակայված երրորդ երկիրն էր:
- Ադրբեջան անվանումը երբևէ Արաքսից հյուսիս ընկած տարածաշրջանին չի տրվել:

Իսկ այսօր Ադրբեջանի իշխանություններն ու գիտաշխատողները փորձում են ընդհանրապես հերքել ու ամբողջովին փոփոխել ամենուր առկա այս փաստերը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ինչպես նշվեց ներածութայն մեջ, Ադրբեջանի իշխանություններն ավելի քան կես դար աշխատում են «փաստել», որ հայերը Կովկասից հարավ տարածաշրջանում նորեկներ են, իսկ իրենք՝ բնիկներ՝ սերված աղվաններից ու թյուրքական օղուզ ցեղերից: Նրանք աշխատում են Կովկասից հարավ ընկած Ադրբեջանի, Արցախի և Հայաստանի տարածքներում առկա քրիստոնեական բոլոր հուշարձանները ներկայացնել որպես աղվանական, հետևաբար՝ ադրբեջանական: Ինչպես փաստվեց, այստեղ կա նաև այլ քաղաքական նպատակ՝ տեր կանգնել նաև Իրանի Ատրպատական նահանգին: Աշխատութայն բուն նպատակն էր պարզաբանել այս ծրագրին ծառայելու համար հորինված պատմությունը և բացահայտել հայտարարված ու իրականացված պատմական ու գիտական բնույթի կեղծիքներն ու նենգափոխումները և դրանց իրագործման մեջ դնելու հիմնական միտումները:

Ադրբեջանական էթնոսի/ազգի ձևավորման շուրջ մերօրյա գիտութայն մեջ առկա են տարբեր, հաճախ միմյանց հակասող տեսություններ: Սակայն ադրբեջանական հետազոտողների մեջ նշված հարցի վերաբերյալ գիտական բանավեճեր և տարածայնություններ կարծես թե չկան: Ադրբեջանում լույս տեսնող ուսումնասիրությունները փաստում են, որ երկրի մտավորականները ջանք ու եռանդ չեն խնայում ստեղծելու ազգային կուռ ինքնագիտակցություն, ընդհանուր անցյալի հիշողություն: Նման ձեռնարկումների նպատակն է, քաղաքական կարգախոսին համահունչ, հատկապես հարևան ազգերին փաստել իրենց իրականում հորինած պատմութայն ու մշակույթի վավերականությունը: Սակայն այս գործընթացում հաճախ տեղ են գտնում սայթաքումներ, ինչը դրսևորվում է միմյանց հակասող տեսությունների առկայութայն մեջ:

Ներկայումս Ադրբեջանի իշխանությունները պատմութայն հորինվածքներն ու խեղաթյուրումներն օգտագործում են նաև հանրութայն ուշադրությունը երկրի ներքին սոցիալ-քաղաքական բարդ իրավիճակից շեղելու նպատակով, ինչպես նաև այդ կերպ աշխատում են հաստատել իրենց ազգային ինքնությունն ու արժանապատվությունը՝ որպես տարածաշրջանի հնագույն մի ազգություն: Ադրբեջանական հերյուրանքները եվրոպացի և ընդհանրապես օտար ընթերցողին մատուցվում են որպես պատմական փաստեր և իրողություններ: Այս ամենը կատարվում է պետութայն բարձրագույն ղեկավարութայն, իշխանական վերնախավի ուղղակի հովանավորութայն ու ֆինանսական օժանդակութայն:

Աշխատութայն մեջ քննարկված և վերլուծված ադրբեջանական հակագիտական և հակահայկական հերյուրանքների դեմ Հայաստանի գիտնականներից շատերը ժամանակին պատասխան աշխատանքություններ են տպագրել

Հայերեն և ռուսերեն: Այդ հույժ կարևոր աշխատությունները, որպես կանոն, հրատարակվել են Հայկական գիտական պարբերականներում ռուսերեն կամ հայերեն և ունեն գերազանցապես նեղ մասնագիտական և, հետևաբար, համեմատաբար սահմանափակ շրջանառություն: Լեզվական գործոնի պատճառով այս աշխատանքների մեծ մասն առ այսօր անծանոթ է մնացել եվրոպական և ամերիկյան գիտական հանրությունը, պատմաբաններին ու բանասերներին, այսինքն՝ նրանց, ում մեր օրերում ուղղված է ադրբեջանական ներկայիս գիտություն հակահայկական քարոզչությունը, որոնց նպատակին Հասցնելու համար օգտագործվում են զանգվածային տեղեկատվության բոլոր միջոցները և տպագրված բազմալեզու գրականությունը ցրելու տարաբնույթ հանրավորությունները:

Եթե հայոց պատմության և աշխարհագրության հիմնահարցերի վերաբերյալ ադրբեջանական «գիտական» ներկայացվող խեղաթյուրումները գիտականորեն չհերքվեն, և լայն շրջանառության մեջ դրված նրանց կեղծիքները չբացահայտվեն, մեկ-երկու տասնամյակ անց արտասահմանյան գրադարանների ընթերցողները, ցուցակներում և գրադարաններում տեսնելով և ընթերցելով միայն պատմության՝ ադրբեջանական կողմի ներկայացրած տարբերակները, հատկապես դրանք քննադատող ու ճշգրիտը ներկայացնող օտարալեզու նյութերի բացակայության պատճառով դրանք կընկալեն որպես ընդունված «իրականություն», միակ «ճշմարտությունը» և «փաստը»: Ծիշտ այնպես, ինչպես վերջին տարիների քարոզչության հետևանքով Ադրբեջանի այսօրվա երիտասարդ և միջին սերունդն է համոզված, որ հայերն այս տարածաշրջանում նորեկներ են, և որ իրենց հանրապետության զբաղեցրած տարածքը հազարամյակներ շարունակ եղել և կոչվել է «Ադրբեջան»:

Այսպիսով՝ հայոց պատմական ժառանգությունը հայոց անկախության վերականգնումից հետո կարող է աղավաղվել, վերափոխվել ու անգամ պատմության էջերից իսպառ ջնջվել, որի արդյունքում համաշխարհային հասարակության համար ադրբեջանական տարբերակը կդառնա «իրական» և անհերքելի «ճշմարտություն»: Լավագույն դեպքում իրական պատմությունից տեղյակ կլինեն միայն հետազոտողների որոշ խմբեր, որոնք դիվանագիտական ասպարեզներում և քաղաքական որոշումների կայացման գործընթացներում, որպես կանոն, չեն ներգրավվում:

